



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։



ՅԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐ

ԱՐՅԱՆ
ԵՎ ԱՐՑՈՒՆՔԻ
ԵՐԿՐՈՒՄ

Տպավորություններ Միջազգետքից
աշխարհամարտի տարիներին
(1914-1918)

Im Lande des Blutes und der Tränen

Erlebnisse in Messopotamien
während des Weltkrieges

von

Jakob Künzler

1921
Tempel-Verlag in Potsdam

JEREWANER STAATSUNIVERSITÄT
Institut für armenologische Studien

JAKOB KÜNZLER

IM LANDE DES BLUTES
UND DER TRÄNEN

ERLEBNISSE IN MESOPOTAMIEN
WÄHREND DES WELTKRIEGES (1914-1918)

HERAUSGEgeben von
HANS-LUKAS KIESER

Aus dem Deutschen übersetzt von
Dora Sakayan
und
Evelina Makarjan

JEREWAN
VERLAG DER STAATSUNIVERSITÄT JEREWAN
2011

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՄԱՐԱՆ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ**

ՑԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐ

**ԱՐՅԱՆ ԵՎ ԱՐՑՈՒՆՔԻ
ԵՐԿՐՈՒՄ**

**ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԳԵՏՔԻՑ՝
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1918)**

**ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԵՑ՝
ՀԱՆՍ-ԼՈՒԿԱՍ ՔԻԶԵՐ**

**Գերմաներենից թարգմանեցին՝
Դորա Սաքայան
և
Էվելինա Մակարյան**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011**

ՀՏ 941 (479.25):950
ԳՄԴ 63.3(2Հ)+63.3 (5թու)
Ք 677

Քյունցլեր Յակոբ

Ք 677 Արյան և արցունքի երկրում: Տպագրություններ Միջազգետքից՝ աշխարհամարտի տարիներին (1914–1918) / Յ. Քյունցլեր: ԵՊՀ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ: Թարգմ.: Դ. Սաքայյան, է. Մակարյան: Վերահրատ. Հ.-Լ. Քիզեր.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011. 200 + 10 էջ ներդիր:

Գիրքը նվիրված է Հայոց ցեղասպանությանը: Քյունցլերը ականատես է եղել 1915 թ. Ուրֆայի Հայ բնակչության բնախճանը: Նրա նկարագրությունները հաստատում են, որ Հայ ժողովուրդը նահատակվել է օսմանյան կառավարության նախատեսած ծրագրի համարյան:

ՀՏ 941 (479.25):950
ԳՄԴ 63.3(2Հ)+63.3 (5թու)

ISBN 978-5-8084-1518-8

© ԵՊՀ հրատարակություն, 2011
© Թարգմանիչների Համար, 2011
© 1999 Chronos Verlag, Zürich, 2. Auflage 2004

Հանս-Լուկաս Քիզեր

ՑԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐԻ «ԱՐՑԱՆ ԵՎ ԱՐՑՈՒԽԻ ԵՐԿՐՈՒՄ» ԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԴԻԹՈՎ

80-ական թվականների սկզբին, երբ շատ մարդիկ թուրքիայից եւրոպա և Շվեյցարիա էին փախչում, իմ ուշադրությունն իր վրա հրավիրեց Հորիցս ժառանգություն մնացած մի փոքրիկ, խունացած գրքույկ: Հեղինակը՝ 1949 թ. մահացած շվեյցարացի Հիվանդախնամ Յակոբ Քյունցլերն էր, որին 1947 թ. վերջերին չնորհվել էր Բազելի Համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Հանձին Քյունցլերի ես տեսնում էի մի Հայրենակցի, որն ապրելով Հայերի, թուրքերի և քրդերի միջցեղային և միջկրոնական շփումների միջավայրում, ձեռք էր բերել տպավորիչ փորձառություն: Նա գրեթե քառորդ դար ապրել էր օսմանյան Ուրֆայում (1899-1922) և այնուհետև, մինչև իր կյանքի վերջը՝ Լիբանանում (1923-1949): Ուրֆա քաղաքը գտնվում է Հյուսիսային Միջազգետքում, ներկայիս Թուրքիայի Հարավարևելքում՝ սիրիական սահմանի մոտ: Ուրֆա քաղաքն ու գավառը օսմանյան շրջանում կրում էին մի քանի մշակույթների կնիք՝ թուրքական, Հայկական, քրդական, արաբական և քրիստոնեա-ասորական: Բացի դրանից, այնտեղ կային նաև հրեական և Հունական փոքրիկ Համայնքներ: 1919-20 թթ. ձմունը, Հայրենի Բազել քաղաքում անցկացրած արձակուրդի ընթացքում, Քյունցլերը գրի է առել պատերազմյան Ուրֆայից իր «տեսածն ու ապրածը»: Առաջնորդվելով պատասխանատվության զգացումով, որով նա Համակվեց որպես սոսկալի իրադարձությունների առանձնահատուկ վկա, 1920 թ. գարնանը Քյունցլերը՝ չնայած Հատուցումից վախեցող մտերիմների դիմադրությանը, որոշեց Հրատարակել իր գրառումները: Մեկ տարի հետո Պոտսդամի Թեմփել Հրատարակչությունը դրանք լույս բնայեց «Արյան և արցունքի երկրում»¹ գրքով, որը պատմում է պատերազմի և տառապանքի մասին Ուրֆայի

տարածաշրջանում: Այն՝ քաղաքականապես չեղոք դիտորդի անպաճոյն վկայությունն է առաջին՝ արդիական միջոցներով կազմակերպված ցեղասպանության մասին, որը 1915 թ. օսմանահապատակ Հայերի նկատմամբ իրագործվեց երիտթուրքերի ուազմական վարչակարգի ձեռքով։ Այս վավերագրի պատմական նշանակությունը մեծ է նրանով, որ Հեղինակը՝ որպես դեպքերը մոտիկից տեսած մարդ պարզաբանում է, թե որն է կանոնավոր Հեռագրերով ղեկավարվող և կենտրոնական իշխանության կոմիսարների կողմից Հակվող «տեղահանումներ» բառի բյուրոկրատական իմաստը։ Թուրքիայում՝ ճիշտ այնպես, ինչպես նացիստական Գերմանիայում այդ բառը չէր նշանակում մի ժողովրդի՝ իր ապրած բնակավայրից տեղափոխումն ու վերաբնակեցումը։ Այն պարզապես նշանակում էր նրա բնաջնջումը։ Քյունցլերի՝ որպես ականատեսի, վկայությունը աչալլջորեն փաստագրում է տարածքում և տեղում իրագործված՝ ոչնչացման քողարկված քաղաքականությունը։ Սակայն ի տարրերություն Շոահի, այսինքն՝ Հրեաների ողջակիզման (Holocaust), Հայերի ցեղասպանության փաստը եվրոպական տիրող պատմագրության մեջ Հանիրավի մինչև օրս չի ներկայացվել որպես ընդհանուրի կողմից ընդունված և բացեիրաց Հայութարարված իրողություն։ Մտաշոգիչ է Հայոց ցեղասպանության մասին տեղեկության դրեթե իսպառ բացակայությունը գերմանալեզու դպրոցական դասագրքերում։

Քյունցլերի ուղին դեպի ճգնաժամից ցնցված Թուրքիան

Յակոբ Քյունցլերը ծնվել է 1871 թ. Ափենցել ԱռևերՀողեն (Appenzell Ausserrhoden) կանտոնի Հունդվիլ (Hundwill) գյուղում։ Մագումով չքավոր ընտանիքից էր և մանկության տարիներին Հաճախ է աշխատել։ Վեց տարեկան Հասակում կորցրել է Հորր, տասնմեկում՝ մորը, որից Հետո մեծացել է ազգականների մոտ։ Սովորել է Հյուսնի արհեստը, ապա 1891-ին մեկնել է Բազել, որտեղ ստացել է Հիվանդախնամի (դիակոն) կրթություն։ 1898 թ. Ուրֆա մեկնած բազելցի քժիշկ Հերման Քրիստի միջոցով, ըեղինցի Հոգևորական Յոհաննես Լեփսիուսը ծանոթացել է Քյունցլերի Հետ և ներգրավել նրան «Հայ-

կական նպաստամատույց» կազմակերպության մեջ: Որպես այդ կազմակերպության աշխատակից, 1899 թ. Յակոբ Քյունցը լեռը ուղևորվել է Ռուֆա, որտեղ ստանձնել է բժիշկ Հերման Քրիստի օգնականի պաշտոնը: Նույն տարում Լեփիսիուսը՝ իր ղեկավարած «Հայկական նպաստամատույց» կազմակերպության հիման վրա ստեղծել է «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը՝ Բեռլինն ընտրելով որպես նատավայր: Քյունցը հիմնադրությունը, որը 1897 թ. հիմնել էր ցյուրիխում բժշկության ժողովին թարմանական առաքելությունների մի մասը, իսկ այնուհետև՝ մինչև 1922 թ. իր լուծարումը, դարձավ շվեյցարական հաստատություն: Դրանից առաջ ևս, այդ հիմնադրությունը կարողանում էր իր աշխատանքն իրականացնել շնորհիվ Շվեյցարիայից եկող նյութական օժանդակության, հատկապես Բազելի մարդասիրական շրջաններից:

Հայկական ջարդերը պատճառ դարձան, որ եվրոպացիները «Թուրքիայի խորքերում» բարեգործական աշխատանքներ ծավալեն: Դեռևս 1895 թ. վերջերին Ռուֆայում տեղի ունեցավ՝ այնտեղ ներկա գտնվող ամերիկացի միահիններուհի Կորինա Շաթուքի բնութագրմամբ՝ «Ողջակիղում», որի ժամանակ քարյուղով ողողված 3000 հայեր Հրկիղվեցին քաղաքի մեծ եկեղեցում: Նույն տարում, նույնքան մեծ թվով՝ գրեթե բացառապես տղամարդիկ, զոհվեցին Ռուֆայի փողոցներում և տներում տեղի ունեցող կոտորածների ժամանակ: Իսկ Հռեաներն ստացան դիակները քաղաքից զուրս տանելու և ընդհանուր գերեզմաններում թաղելու նողկալի պարտավորությունը³: Օսմանյան արևելյան նահանգներում իրագործված ջարդերը, որոնց գումարը 100.000 հայ, և որոնց մասին լուրը 1895 և 1896 թթ. եվրոպական և անգլոսաքսոնական աշխարհի բոլոր մասերում զայրույթի ալիք քարձրացրեց, թեև արևմտյան Երկրների արտաքին քաղաքականության վրա որևէ ազդեցություն չունեցավ, սակայն Գերմանիայի, Շվեյցարիայի և եվրոպական այլ երկրների հասարակայնության լայն շրջանակների համար հանդիսացավ Թուրքիայից ստացած առաջին խարանիչ տպավորությունը: Այդ իրադարձություններից առաջա-

ցած ցնցումը Լեփախուսի, Ցյուրլիսերի, Քրիստի և Քյունցլերի նման մարդկանց համար մղիչ ուժ դարձավ, որպեսզի այդ մարդիկ անխոնջ նվիրումով տևական գործունեություն ծավալեն օսմանական թուրքիայում մարդու իրավունքների, փոքրամասնությունների և կրոնական բախումների բնագավառներում: Այդ խմբի յուրաքանչյուր անդամ՝ նայած գտնված վայրում ձեռք բերած անձնական փորձին, մշակեց երևոյթների մասին Համեմատարար ուրույն ըմբռնումներ և ցմահ կապված մնաց Մերձավոր Արևելքին: 1895-ի ջարդերը շատ եվրոպացիների և ամերիկացիների ուղեղում դրոշմեցին «արյունաբրու սուլթանի», «բարբարոս խալամի» և «վայրագ թրքության» կարծրատիպ և Հարատես պատկերներ: Մյուս կողմից, մասնավորապես գերմանացի քարողիչները, Հայերին ներկայացնում էին որպես «այլասերված ցեղ», «Արևելքի Հրեաներ», որոնք դավեր էին լարում և միջազգային Հասարակայնության մեջ զրադշափած էին բանսարկություններով՝ ուղղղված Թուրքիայի կուռ և Հայրենասեր մեծամասնության դեմ:

1896 թվականին Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի Հասարակության պատշաճության չափանիշը միջլրունական բնույթ ունեցող Հայամետ շարժման մասնակից լինելն էր: Շվեյցարացի քաղաքական գործիչները և Եկեղեցական ու պետական Հաստատությունների անդամները Համապատասխանարար էին իրենց զրանորում երկրով մեկ կազմակերպվող բազմաթիվ միջոցառումների ժամանակ: Եկեղեցական և պետական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Հրեա անհատներ (նրանց թվում առնվազն մեկ ուարդի), Համայնավարներ ու մասոններ նույնպես իրենց Համերաշխությունն էին Հայունում այդ շարժմանը: Այդ ամենի ետևում թաքնված էին միասնական արժեքներ ու Հայացքներ, ինչպես նաև մարդու միջազգային իրավունքների գաղափարների միտումը՝ ուղղված ցեղատյացության, ազգայնամոլության և իմպերիալիզմի դեմ: Սակայն անմիջապես հիմնադրված բարեգործական կազմակերպությունների Թուրքիա ուղարկված ներկայացուցիչները 1896-1997 թթ. որևէ դիվանագետից, բացի բրիտանացիներից, իրենց գործունեության մեջ ազդու աջակցություն չստացան: Գերմանական դիվանագիտությունը Հրաժարվում էր որևէ Հովանավորություն ցույց տալուց այն

Հայրենակիցներին, որոնք զբաղվում էին Հայերի քաղաքականապես նուրբ թևմայով և ճանապարհորդում էին օսմանյան արևելյան նահանգներով: Սակայն պատկերը փոխվեց մի քանի տարի հետո: Այդ ժամանակ գերմանացիները մեծ ջանք էին թափում տիրանալու արդեն ստեղծված գերմանական միսիոներական հենակետերին, այդ թվում և Ուրֆայում եղածներին՝ դրանք թուրքիայի հետ իրենց քաղաքականության մեջ օգտագործելու նպատակով⁵:

Յակոր Քյունցլերը դարձավ գլխավոր Հենակետը Յոհաննես Լեփսիուսի փոքրիկ առաքելական կազմակերպության, որը 1896-ին ամերիկան բողոքական միսիոներության առաջարկով՝ որպես կենտրոն, ընտրեց Ուրֆան: Իր գործնականությամբ և վստահելիությամբ Քյունցլերը ներկայացնում էր Լեփսիուս անխոնջ իդեալիստի և Հրապարակախոսի Հակակլիոր: Վերջինս իր անձնական մեծ նվիրածությամբ երեք տասնամյակ շարունակ ոչ միայն օգնություն հասցրեց զոհերին, այլև անգնահատելի հրապարակախոսական գործունեություն ծավալեց Հանուն Հայ Դատի⁶: Քյունցլերը նաև չնորհալի գրող էր: Նրա ուժը՝ ապրածը անմիջապես նկարագրելու կարողությունն էր, մի բան, որի նշանակությունը դուրս է գալիս անձնականի շրջանակներից: Քյունցլերը բազմաթիվ հոդվածներ է հրատարակել, ինչպես միսիոներների օրգան «Der Christliche Orient» ամսագրում, այնպես էլ այլ թերթերում և ամսագրերում: Նա գրել է նաև տասից ավելի գրքեր ու գրքույկներ⁷: Նա խոսում էր թուրքերեն, քրդերեն, Հայերեն և արաբերեն: Որպես Հաղորդասեր մարդ, նա շփման մեջ էր Ուրֆայի աշխույժ և լարված տարածաշրջանի մարդկանց ամենատարեր խմբերի հետ: Օրինակ, 1901 թ. նրան տեսնում ենք Ուրֆայի գավառի սահմաններից էլ դուրս, քրդերի ազգեցիկ առաջնորդ իբրահիմ փաշայի վրանում որպես վերջինիս Հյուրը⁸: Ասորիների Համար նա հիմնել էր դպրոց (գլուխ 1): Նա մոտ ընկերներ ուներ քրդերի, թուրքերի, արաբների, ասորիների և ընականարար՝ Հայերի շրջանում, որոնք առաքելական իր աշխատանքում առաջին տեղն էին զբաղվում: Թեև նրա շարադրանքները զերծ չէին իր ժամանակներին Հատուկ կարծրատիպերից, դրանք ընդհանուր առմամբ աչքի են ընկնում իրենց բաց Հայացքով դեպի կրոնապես կամ աղգու-

թյամբ ուրիշը, ինչպես նաև կուսակցությունն ու գաղափարախոսությունը շրջանցող Հեռավատկերով և ընկալման քաղմագանությամբ: Նրա զրվածքները հարուստ են առօրյայի պատմության կարևոր մանրամասներով:

Չնայած ծայրահեղ արյունոտ դարավերջին և դրա հակահայկական տրամադրություններին, քրիստոնյաների ու մուսուլմանների համատեղ կյանքը Ուրֆայում, ինչպես և օսմանյան Թուրքիայի այլ տարածքներում, գոնես մակերեսորեն, կրկին բնականոն հունի մեջ էր մտել: Շվեյցարացիների տնօրինությամբ գործող միահոներական հիվանդանոցը իրեն որոշակիորեն հաստատել էր որպես միջկրոնական հաշտարար հանդիպումների, և ոչ թե կրոնափոխության վայր: Շուտով այն դարձավ հասարակության ամեն տեսակի խմբերի ու խավերի կանանց, տղամարդկանց և երեխաների հիվանդանոցը: Առաջին աշխարհամարտից առաջ Ուրֆայում հաշվվում էր մոտ 60.000 բնակիչ, որոնց երկու երրորդը մահմեդական մեծամասնությունն էր՝ բաղկացած թուրքերից, քրդերից և արարներից, իսկ քրիստոնյա փոքրամասնությունը հայերն ու ասորիներն էին: Նրանցից ավելի քան 2000-ը պատկանում էին բողոքական համայնքին, 1000-ը՝ կաթոլիկներին, իսկ գերակշռող մեծամասնությունը՝ Հայ Առաքելական (մոտ 13.000) կամ Ասորական եկեղեցուն (մոտ 4000)⁹:

1908 թ. երիտթուրքերը (միութենականները), որ մինչ այդ գործում էին ընդհատակում, սուլթանին զրկեցին իշխանությունից և վերահաստատեցին 1876 թ. օսմանյան սահմանադրությունը: Հայկական Դաշնակցություն կուսակցությունը, որի Հեղափոխական առանձին խմբերին Արդու Համբդը Հակազդել էր դաժան բռնությամբ, միանգամից դարձավ օրինական կուսակցություն: Այն միութենականների Հետ մտավ ընտրական դաշինքի մեջ, իսկ նրա հեղափոխական անդամները հանկարծ ճանաչվեցին որպես ազատության հերոսներ: Երիտթուրքերը հրապարակավ զղջում էին 1890-ական թվականների կոտորածների համար, մի բան, որ շատ ավելի ոյուրին էր, քանի որ դրանք կարելի էր նշավակել որպես «Հին վարչակարգի»-ի ոճրագործություններ: Նրանք երազներ էին կառուցում համատեղ, իրավահամասար ապագայի մասին՝ ժամանակակից, սահմանադրական Օսմանյան կայսրության մեջ: Հետադի-

մական իսլամական ուժերն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Նրանց անհանգստացնում էր Հարյուրամյակներ շարունակ ենթակա քրիստոնյա «իսնամարկալների» (zhimmi) Հավասարեցումը, նրանց ինքնավստահ վարքագիծը և տնտեսական-մշակութային աշխուժությունը. վախենում էին, որ ինչպես 1895-ին, նրանք կձգտեին տիրանալ արևելյան նահանգներին, ինչպես նաև Կիլիկիային (Աղանա): 1909 թ. գարնան ջարդերը սահմանափակվեցին Աղանայի շրջանով, սակայն քիչ էր մնում վերածվեին Համատարած աղետի, եթե երիտթուրքերը վճռական միջոցներ չձեռնարկեին Հետադիմականների դեմ՝ մայրաքաղաքում և Հատկապես Ուրֆայում: Մյուս կողմից, Աղանայի և այլ քաղաքների պաշտոնական վերաբերմունքը երկիմաստ էր և տագնապալի Հարցեր էր Հարուցում ապագա թուրք-Հայկական Համակեցության վերաբերյալ: Սակայն թեազետ և կային Հոգեմաշ կասկածներ, Հաղիկ թե որևէ մեկի մտքով անցներ, որ երիտթուրքերի կուսակցության կարծը կորիզը վեց տարի հետո պիտի գործի դներ ցեղասպանություն: Քանի որ միութենականները արդեն 1908-ին սահմանադրության և քաղաքացիական իրավունքների Համար աղատական մարտիկներ չէին, այլ իշխանամետ Հայրենասերներ, որոնք գնալով ավելի էին ձգտում անզիջում ազգայնամոլության և այլևս չահպրգոված չէին բազմազգ «օսմանիզմի» մեջ, կայսրության տարածքային կորուստները Բալկաններում և Մազրերում նրանց առաջնորդեցին վարչակարգի զգալի կոշտացման: 1913-ից միութենականներն սկսեցին կառավարել ինքնիշխան եղանակով: Կուսակցության շատ անդամներ, ինչպես և վկայում է Քյունցլերը (գլուխ 2), սկսեցին առանց քաշվելու խոսել «Հայերին վերացնելու անհրաժեշտության» մասին, քանի որ Հայերը խոչընդոտելու էին Փոքր Ասիայում միատարր ազգային տարածք ստեղծելու ծրագրին, որն իշխողները Համարում էին իրենց միակ ելքը:

Հայերի ցեղասպանության ժամանակակից վկան

Ահա այստեղ է, որ սկսվում է «արյան և արցունքի երկիրը»: Խոր մտահոգությամբ էին հետևում Քյունցլերն ու Հատկապես նրա ամերիկացի Համամիախոներականները կառավարության՝ պատերազմին ներգրավվելու մեծածավալ նախապատրաստություններին: Բնականարար նրանք դեռ տեղյակ չէին գերմանա-օսմանյան գաղտնի Համաձայնագրի մասին, որը երիտթուրքական վարչակարգը 1914 թ. օգոստոսի 2-ին ստորագրեց՝ լցված Հպարտությամբ այդպիսի պատվարեր ընկերակցության համար: Համաձայնագիրը նախատեսում էր, որ թուրքերը պատերազմի մեջ կմտնեն Գերմանիայի ու Ռուսաստանի միջև պատերազմի բռնկման դեպքում, պատերազմ, որը մեկ օր առաջ արդեն Հայտարարված էր: Վարչակարգը ձգտում էր պատերազմի, քանի որ նրա մեջ էր տեսնում մի շարք նպատակների իրականացում: Հիմնական նպատակներից էր՝ 1914 թ. սկզբներին միջազգային հավանություն ստացած՝ Հատկապես քրդերով և Հայերով բնակեցված արևելյան նահանգներում բարեփոխումների խափանումը: Այդ այսպես կոչված «Հայկական բարեփոխումները» Բենլինի վեհաժողովից ի վեր (1878) Արևելքի քաղաքականության մեջ մնացին մշտապես արծարծվող, սակայն երբեք լուծում չգտած Հարց: Քյունցլերի հիշատակած բարեփոխումների համար ուղարկված եվրոպացի գլխավոր տեսուչները արդեն օգոստոսին երկրից արտաքսվել էին (գլուխ 1): Ընդհանուր զորակոչի կողին, պատերազմի նախապատրաստությունների մաս էին կազմում բռնագրավումները, կապիտուլյացիաների (արտասահմանցիների առանձնաշնորհ) վերացումը և մանավանդ խստորեն կազմակերպված քարոզչությունը: Այդ միջոցառումները չնպաստեցին պատերազմի ժողովրդականացմանը: Դրա փոխարեն՝ շատ վայրերում, ինչպես Ուրֆայում, այդ միջոցառումները թունավորեցին միջցեղային մթնոլորտը: Պատերազմի քարոզչությունը Հենց սկզբից որդեգրեց Հակահայկական կեցվածք: Գերմանացիների դրդումով վարչակարգը 1914-ի Հոկտեմբերի վերջին սկսեց սաղրիչ գործողություններ՝ Հարձակվելով Սև ծովի ուսական քաղաքների վրա: Դեկտեմբերին էնվեր փաշան ձեռնարկեց Ռուսաստանի փառատենչ արշա-

վանքը, որը պիտի իրականացներ համաթուրքացման մեծ երազանքը՝ փոքրասիական և կովկասյան մուսուլմանների միավորումը: Արշավանքը վերածվեց ուազմական և մարդկային աղետի: Աղավաղված հաղորդումներով՝ 1915 թ. ապրիլի վերջի Վանի հայերի դիմադրության և նրանց ոռուաների հետ համագործակցության մասին, երիտթուրքական վարչակարգը մուսուլման մեծամասնությանը հրահրեց Հայկական Համայնքի ղեմ: Սպասվածից շատ ավելի դժվարին Արևելյան ճակատի թիկունքում ծայր առավ Հայերի՝ որպես ներքին թշնամիների, անխտիր բնաջնջում:

Ստամբուլի օսմանյան պետական արխիվներում միայն վերջերս ուսումնասիրման Համար մատչելի դարձած Ներքին գործերի նախարարության Հեռագրերը վկայում են ճեպագրերով հրահանգված կանոնավոր «տեղահանումների» մի ծրագրի մասին, որը ուժի մեջ մտավ 1915 թ. գարնանը և ընդգրկեց ամբողջ Փոքր Ասիան՝ ձգվելով պատերազմական գոտուց շատ ավելի Հեռավոր տարածքներ: Տասնամյակներ շարունակ թուրքական պետությունը փորձել է տեղահանումներն արդարացնել՝ ներկայացնելով դրանք որպես ուազմական, և նույնիսկ մարդասիրական անվիճելի անհրաժեշտություն: Մինչդեռ Ներքին գործերի նախարարության պաշտոնական փաստաթղթերը գրում են ընդհանուր տեղահանումների մասին, տեղում եղած ականատեսները, ինչպես Քյունցլերն էր, փաստագրում են, թե իրականում ինչ կատարվեց: Այդ իսկ պատճառով այդ վկայությունները առանցքային նշանակություն ունեն, քանի որ պատասխանատու միութենականների և նրանց «Հատուկ կազմակերպության» (Teschkilat-Mahsusa) արխիվները կամ ոչնչացվել են, կամ անհետ կորել: Գաղտնի ցուցումները, որոնք համակցվում էին աքսորի հրամաններին, կարելի է՝ ժամանակի հանգամանքները ի մի բերելով, մոտավորապես վերակառուցել: Սակայն ի տարբերություն Գերմանիայի, որը հրեաների ողջակիզումից հետո բացել էր իր արխիվների դռները, Թուրքիայում մինչև օրս երբեք արխիվների անարգել բացում տեղի չի ունեցել: Քյունցլերը լույս է սփռում միութենականների կենտրոնական վարչակարգի կողմից ուղարկած Հայիլ և ԱՀմեդ բեյ սպաների վճռական դերի վրա, որոնք կազմակերպեցին Ուրֆայում Հայ ժողովրդի բնաջնջումը՝ այն

իրագործելով ժանդարմների, զինվորականների և անկանոն ուժերի օգնությամբ (սկսած զլուխ 5-ից): Ականատեսների նմանատիպ Հաղորդումներ էին ստացվում նաև այլ քաղաք-ներից: «Տեղահանումները» ծրագրված էին որպես մաշեցնող երթեր, ուղեկցված զանազան, այդ թվում նաև՝ սեռական վայրագություններով, դիտմամբ ընտրված խճճված արահետներով, որպես վերջնակետ ունենալով Սիրիական անապատը: Ականատես կանայք, որոնց խոսքը Քյունցլերը մեջ է բերում որպես Հավասարի աղբյուր, եղելությունների որոշ մանրամասներ կարողանում էին պատմել միայն կանանց (զլուխ 8): Քյունցլերի և մյուս ականատեսների Համար մահվան երթերն ավելի սարսափելի, ավելի «ապամարդկայնացնող» էին, քան մահվան մնացած բոլոր ձևերը. զրանց զոհ գնացին Հատկապես տղամարդիկ, որոնց որպես կանոն երթից առաջ կանանցից ու երեխաներից բաժանում էին: «Կասկած չկար, բոլոր ուրֆացիները պետք է անապատում մահանային, դա ծրագիր էր և ցանկություն: Դրա Համար էին նրանց շարունակ այսուեղից այնտեղ քշում, մինչև այլևս ոչ մի տեղափոխվելիք մարդ չմնար» (զլուխ 19):

Հայերի ցեղասպանությունը տեղի ունեցավ Հիմնականում 1915 թ. ամռան և աշնան ամիսներին՝ արևելյան նահանգների տարածքում, Աև ծովի և Սիրիական անապատի միջև: Պատմաբան Առնորդ Թոյնրին, որն Առաջին աշխարհամարտի ժամանակ որպես երիտասարդ պատմաբան բրիտանական կառավարության Հանձնարարությամբ զրադգում էր Հայերի ճակատագրով, 1967 թ. խոր ծերության հասակում զրեց. «Տեղահանումները գործադրվում էին կամահոժար և հաշվարկված վայրագությամբ, որպեսզի Հնարավորին չափ չատ մարդկանց կյանքեր արժենային: Դա միութենականների հանցագործությունն էր: Այն ժամանակվա իմ ուսումնասիրությունը մտքիս մեջ թողել է այնպիսի անջնջելի տպագորություն, որը չկարողացավ մթագնել Երկրորդ աշխարհամարտի նացիստների ձեռնարկած ավելի սառնարյուն և լայնածավալ ցեղասպանությունն անգամ»¹⁰: Հաշվում են, որ 1915-16 թթ. ցեղասպանությունը ունեցել է մեկ միլիոն զոհի ուժգնություն:

Կյանքի զանգվածային ոչնչացումը իր սկիզբն առավ 1915 թ. ամռանը Խարբերդի մոտ, Գյոյջուկ լճի ափին, 150 կմ Ուր-

Փայից Հյուսիս: Միայն Հենց այդ վայրում տեղի ունեցավ ավելիքան 10.000 տղամարդկանց, կանանց ու երեխաների սպանող: Որպես ջարդարաբներ՝ իշխանությունները վարձեցին սառը զենքով զինված տեղացի սունի քրդերին, մինչդեռ Հյուսիսում գտնվող Դերսիմի ալևի քրդերը իրենց ինքնավար տարածքը դարձրին Հետապնդվողների առանձին խմբերի համար միակ ընդհանուր ապաստարան: Ոչ թե Քյունցլերը, այլ նրա ամերիկացի միսիոներ գործընկերները (որոնց հետ նա այդ տարիներին կապի մեջ էր), ինչպես նաև ամերիկացի Հյուպատոս Դեյվիսը, գրավոր և լուսանկարային փաստագրումներ ունեն Խարբերդի՝ իրենց անվանումով, բնաջնջման կամ մահվան ճամբարների մասին¹¹: Մի ամրող ժողովուրդ «զոհասեղանի» վրա էր, ինչպես Ուրֆայի գերագույն հոգևորականն էր արցունքն աշքերին Քյունցլերին ասել (գլուխ 5): Չնայած հրատոչոր ու հստակ կոչերին, որոնցով միսիոներները, այդ թվում և Քյունցլերը, ահազանգում էին՝ (Քյունցլերը ժամանակին դիմել էր Հալեպի Հյուպատոսներին, տե՛ս գլուխ 4), պատերազմով կլանված պետությունները չէին կամ հաղիվ էին արձագանքում:

Քյունցլերը, ինչպես ինքն է շեշտում իր գրքի սկզբում, միակ չեղոք ականատեսն էր պատերազմական շրջանի Ուրֆայում, որտեղով անցնում էին Հյուսիսից եկող տեղահանվածների քարավանները: Նա «սերտ շփման» մեջ էր ոչ միայն Հայերի հետ, ինչպես որ նրա դանիացի գործընկերուհի Կարեն Եփիկեն (նույնպես Գերմանական արևելյան առաքելության աշխատակցուհի) էր, այև իշխանությունների ներկայացուցիչների և քրդական, արարական, թուրքական ու քրիստոնյա ասորական շրջանակների հետ: Այդ բազմապիսի կապերն ու ներթափանցումները նրա վկայություններին անսովոր նյութ էին մատակարարում: Ճշգրտումների համար նա հենվում էր անձնական օրագրային նշումների, ինչպես նաև իր կնոջ գրառումների վրա (գլուխ 4): Նրա գործընկերների՝ միսիոներ Բրունո Էքարթի (գերմանական գորգագործարանի ղեկավար Ֆրանց Էքարթի եղբայրը) և քրիստոնյա ասորիների քահանա Եփրեմ Ճոնազյանի (որին զինվորական դատարանում պարտադրել էին կատարել Հայերենի թարգմանչի պաշտոնը) Հաղորդումների հետ միասին, Քյունցլերի վկայությունը հնա-

բավորություն է տալիս Հստակորեն պատկերացնել այդ տարիների Ուրֆան¹²:

Ուրֆան՝ Զեյթունի, Վանի և Զերել Մուսայի (Մուսա-լեռ) կողքին փաստորեն միակ վայրն էր, որտեղ Հայերը կարողացան զինված զիմադրություն ցույց տալ: Ի տարրերություն Վանի՝ նրանք այստեղ այդ քայլին զիմեցին, ելնելով Հուսահատ, անելանելի իրավիճակից: Առաջնորդների մեծ մասն արդեն սպանված էր: Իզուր էին ջանում միախոներները Հասկացնել այս Հանգամանքը իշխանություններին, Հատկապես գերմանացի սպա Վոլֆսկելին (Wolfskeel), որը ղեկավարում էր Հրետանային գնդակոծումը (գլուխ 18): Նրանք դեմ էին առնում խուզ ականջների: Գերմանացի սպաների ներկայությունը, ի դեպ, ոչ միայն Ուրֆայում, բնակչության մոտ այն տպավորությունն էր ստեղծել, որ վերջին Հաշվով գերմանացիներն էին պատասխանատու ինչպես թուրքերին պատերազմի մեջ ներքաշելու, այնպես էլ Հայերին վերացնելու Հարցում: Այդ ասեկուսեները կարող էին դուր դալ միայն երիտթուրքական ռազմական վարչակարգին:

Քյունցլերը, Ճոնապյանն ու Բրունո Էքարթը իրենց վկայությունները շարադրել են իրարից անկախ: Հսկայական տարրերություն կա նրանց վերաբերմունքի մեջ արևելյան ճակատից փախչող մուսուլման փախստականների հանդեպ: Եթե Ճոնապյանը նրանց նկարագրում է սառը և փոքր-ինչ անարգալից տոնով, ապա Քյունցլերը նրանց Հասցեին միայն ջերմ խոսքեր է ասում: Իրապես, վերջինս 1916 թ. սկսեց նաև Հիշարժան, մեծածավալ բարեգործական միջոցառում՝ նաև քրդերի տառապանքը մեղմելու համար: Ոչ նվազ նախատինքով նա նշեց, որ եվրոպական ոչ մի թերթ չէր անդրադարձել քրդերի աքսորներին (գլուխ 31): Քյունցլերի կապվածությունը քրդերի հետ, որը շարունակվեց նաև Ուրֆայից նրա հեռանալուց հետո, Համախ մոռացության է տրվել, գլխավորապես Հայերի Հարցում նրա ներգրավվածության պատճառով: Յակոր Քյունցլերն իրեն համարում էր «ամբողջ աշխարհ Հում Հալածված էակների օգնական»¹³:

Անգամ ամենատագնապալի օրերին մերժված Հայերին իրենց օգնությունը ցուցաբերելու ընթացքում Քյունցլեր ամուսինները, արար սպասավոր Ալին, Կարեն Եփիեն, Բրունո

Էքարթը, կապուցին վանականները և շատ ուրիշներ, իրենց կյանքը վտանգի էին ենթարկում: Հատկապես էլիդարեթ Քյունցլերը (1875–1968) պատկանում է այն անվեհներ «միսիոներուհիների» թվին, որոնք՝ որպես ուսուցչուհիներ, բուժքույրեր, բաժանմունքի ղեկավարներ, որբերի մայրիկներ, Առաջին աշխարհամարտի ընթացքում հանդես էին գալիս հույժ տպավորիչ նախաձեռնություններով: Յակոր Քյունցլերի համատարած ճանաչում գտած ծառայությունների թիկունքում թաքնված է նրա նվազ ճանաչված կողմանը վաստակը: Երբ նա վհատվում էր, կինն էր, որ ուժ էր ներշնչում նրան (գլուխ 15): Դեռ պատերազմի սկզբում նա անձնական նախաձեռնությամբ ուրֆացի հայ կանանց և մեկ թրքուհու, մեկ քրդուհու և մեկ արարուհու հետ ի նպաստ Կարմիր մահիկի դրամ հավաքեց: Դրանով Քյունցլեր զույգը դեղորայք ու վիրակապ գնեց և Արևելյան ճակատ հասցրեց¹⁴: Ինչպես Քյունցլերների՝ քուրդ վերաբնակների օգտին հետագայում իրագործած բարեգործական միջոցառումը, այս նախաձեռնությանը ևս նպաստեց, որ Եվրոպայի զյափուրների (ոչ մուսուլմաններ) հեղինակությունը բարձրանար, դրանով իսկ լայն ասպարեզ բացվեր իրենց գործունեության համար: Զէ՞՞ որ միսիոներները՝ քրիստոնյա փոքրամասնություններին ցուցաբերած իրենց բացառիկ ուշադրությամբ, մուսուլման մեծամասնության աշքում կասկածելի էին դարձել:

1915 թ. ամառվանից սկսած Յակոր և Ելիդարեթ Քյունցլերները՝ ինքնապաշտպանության նպատակով, գործում էին մեծ մասամբ իրարից անկախ: Ամուսինը՝ գտնվելով իշխանությունների շատ ավելի խիստ հսկողության ներքո, ուրախ էր, որ զաղափար չուներ կողմանը հաճախ արգելված ձեռնարկների մասին: Նրա կինն էր, որ կազմակերպել էր մահմեդական տներից փախած հայ աղջիկների տեղափոխումը Հայեավ: 1917-ին թուրք ընկերուհիների միջոցով երկու տուն վարձեց և այնտեղ ապօրինի որբանոց հիմնեց (գլուխ 33)¹⁵:

Մինչև հիվանդանոցի փակվելը իշխանությունների կողմից՝ Քյունցլերը իրեն նվիրել էր «բժշկությանը աղքատների շրջանում», ինչը 1915 թ. ամառվանից ի վեր «ահուելի մեծ չափերի» էր հասել¹⁶: 1916-ի ամառվանից նրա հիմնական խնդիրն էր օգնության կարուտ շուրջ 2500 տեղահանվածներին

պահելը, որոնք պատսպարփել էին Ուրֆայում և նրա շրջակայքում: Դրա վրա ծախսվող անհրաժեշտ ֆինանսական միջոցների գրեթե կեսը գալիք էր Բաղելից:

Ականատեսի ճնշող բեռն ու ապրումները, ուստիկանական Հետապնդումների վախը և Հանգատրաստից իրականացված բարեգործությունների մեծ թիվը ջատում էին Ուրֆայի միախներների ու միախոներու հիների մարմնական ու նյարդային ուժերը: Քյունցլերի բարեկամ, երիտասարդ ամերիկացի Ֆրանսիա Հ. Լեսլին առաջին զուն էր: 1915 թ. Հունիսից Ուրֆայում Հավաստիության աստիճանի խտացան Հայ ժողովրդին բնանիջեղու լուրերը, մի բան, որին մեծ մասամբ նպաստեց Դիարբեքիրից միախոներ թիվչկ Սմիթի արտաքսվելու լուրը: «Այդ օրվանից պարոն Լեսլին կորցրեց իր Հանգիստը»: Ոստիկանական Հարցաքննությունները Հայկական թաղամասի ավերումից Հետո, որի մեջ նա շրջափակված է եղել, իշխանությունների կողմից նրան վստահված Հայերի ունեցվածքի բռնագրավումը և Ուրֆայի փողոցներում ու Հրապարակներում ամեն օր Հայերի բնաջնջման տեսարանները, նորաթուխ Հայրիկ Լեսլիին մղեցին ինքնասպանության (զլուխ 17): Դանիացի Կարեն Եփիեն՝ մահվան վտանգի տակ, իր տանը թաքցնում էր երիտասարդ Հայ տղամարդկանց: Նույն Համարձակության Համար Ուրֆայի կապուցինները վճարեցին ձերքակալությամբ և արտաքսմամբ (զլուխ 24): 1917-ին Քյունցլերը զնաց Ստամբուլ՝ ուղեկցելով նյարդային Համակարգի լուրջ վնասվածք ունեցող Կարեն Եփիեին, ինչպես նաև բազեցի Բեսատրիա Ռուսներին, որի Հալեպում գտնվող որրանոցները իշխանությունները լուծարել էին: 1917-ին գերմանացի մի սպայի միջոցով Բեռլին՝ միախոներության տնօրինությանը ուղարկած իր նամակում Քյունցլերը հոգնած սրտով գրում էր. «Պատերազմի վերջին երկու տարիններին բավականաչափ Հալածվել եմ, վերջերս նաև չորս օր ձերքակալված եմ եղել, այնպես որ ես առաջին Հերթին կուզեի հեռանալ այս վայրից»¹⁷: Տուրք տալով Ուրֆայի կաղիի (զլխափոր դատավոր) Հիշատակին, Քյունցլերը սրբազրում է «վայրագ թուրքի», ինչպես նաև մուսուլմանի իմիջը (կերպարի ընդհանրացած կարծիքը): Այն մարդը, որին Քյունցլերը բնութագրում է որպես լավագույն բարեկամ կամ եղբայր, քաջություն էր ունեցել

Հրապարակավ դիրքավորվելու հայերի հանդեպ կիրառվող ոճագործությունների դեմ, ինչպես նաև ապօրինի կերպով իր մոտ տեղափորելու հայ փախստականների (գլուխ 24):

Նոր մոտեցումներ և հուսախարություններ

Պատերազմի ավարտը 1918-ին, թվում էր, հուսալի շրջադարձ էր լինելու Ուրֆայի և ամրող Անատոլիայի համար, որտեղ պատերազմից ամենաշատը տուժած հայ ժողովրդի ողջ մնացածների համար վերապահված էր լինելու կանոնավոր մի բնակատեղի (գլուխ 43): Քյունցլերը նույնպես դրա հույսն ուներ (Լեփսիտուսին ուղղված նամակը, էջ 191): Մերի հաշտության պայմանագիրը (1920) նախատեսում էր անկախ Հայաստան՝ Անատոլիայից նշանակալի հատվածով: Մինչ այդ, սակայն, զանազան գործոններ անհնարին դարձրին Փոքր Ասիայում միջազգայնորեն ընդունելի բազմացեղային կարգի ստեղծումը: Այդ գործոններն էին իմաստերիալիստական ագահությունը, Մեծ Հայաստանի անիրականանալի պահանջները և բոլշևիզմի դեմ ուժեղ թուրքիա ունենալու շահագրգությունը: Իսկ ամենից առաջ այն փաստը, որ արևելյան նահանգներում, չնայած աշխարհամարտում իրենց կրած պարտությանը, երիտթուրքերի գաղտնի կազմակերպությունների տրամադրության տակ դեռևս կային անխաթար մնացած ուղղմական և վարչական պաշարներ: Արևելքում՝ գեներալ Քեմալ փաշան (Աթաթուրք) կազմակերպեց թուրք ազգայնականների ազատագրական պատերազմը, որը նա՝ քրդերին սիրաշահելու նպատակով, ներկայացնում էր որպես մուսուլմանների պայքար օտար զավթիչների և ներքին դավաճանների դեմ: 1919 թ. մարտին բրիտանացիների կողմից Ուրֆայի գրավումն ապահովեց կես տարվա խաղաղ և արագ վերակառուցման շրջան (գլուխ 46): Բրիտանացիների փոխարինումը ֆրանսիական զորքերով արդեն դժգոհություն հարուցեց մահմեղականների մոտ: Քյունցլերի գիրքը չի պարունակում 1919 թ. աշնանից մինչև 1920 թ. գարունը ձգվող այն հուզումնալի ամիսները, երբ թուրք ազգայնականների դինված ուժերը ջախջախսեցին ֆրանսիական օկուպացիոն նվաստ

Հոկատները: 1919թ. ամառվանից սկսյալ Քյունցլերները մեկ տարի Նվեյցարիայում էին: Ընկալման այդ բացը լրացնում է միախոներության բազելցի բժիշկ Անդրես Ֆիշերի (Andreas Vischer), չվեյցարական հիվանդանոցի տեսանկյունից գրված տեղեկագրությունը, ինչպես և նրա կնոջ՝ Գերտրուդ Ֆիշեր-Օերի (Gertrud Vischer-Oeri) օրագիրը¹⁸: Նրանք ցույց են տալիս իրողություններ, որոնք ոչ ոքի չեն զարմացնում և ոչ էլ պատիվ են բերում ազգային հերոսապատմանը: Ինքնության կերտմանը ձգտող «ազատազրական պատերազմի» գլխավոր արդյունքը եղավ Ռուրֆայից և զրեթե ամրող Անսատոլիայից ոչ մուսուլմանական տարրերի վերջնական բացառումը, ինչպես նաև՝ մինչև օրս հակասություններով լի, միացեղ ազգայնականության հիմնումը:

Երբ Քյունցլերը 1920-ի օգոստոսին կրկին Ռուրֆա ժամանեց, քեմալական «ազատազնդի զինվորները» տեր ու տիրակալ էին, իսկ քրիստոնյաները՝ նորից աշարեկված: Քյունցլերը ենթարկվեց հետապնդումների՝ կարծեցյալ լրտեսության համար: Շնորհիվ այն վստահության, որ վաստակել էին Քյունցլեր ամուսինները ամրող տարածքում, նրանք կարողացան մեկ անգամ ևս տեղափորվել, սակայն միայն ժամանակավորապես: Քյունցլերի երազանքը՝ չարունակել Ռուրֆայում ինքնուրույն բժշկական գործունեությունը, փշրվեց Անկարայի կառավարության կողմից բարձրադիր արգելապատի պատճառով (գլուխ 64): Տարիներ շարունակ նա կատարել էր բժշկի աշխատանք և վայելել համապատասխան հեղինակություն: Ամենուրեք նրա մասին խոսում էին որպես «ող-ը Քյունցլեր», իր գրքում ձևնազյանը ևս նրան այդպես է անվանում: Իր անձնական նամակները նա ամեն անգամ ստորագրում էր «Br. Jakob Künzler»-ով, որի մեջ «Br.»-ը զարմանալիորեն նման էր «Dr.»-ին... Ամուսինների ապագան, սակայն, կապված էր ամերիկյան բարեգործական «Մերձարևելյան նպասամատույց» կազմակերպության հետ, որը Փինանսավորում էր Լիրանանում Ղաղիրի որբանոցների աշխատանքը: Այդ աշխատանքին Քյունցլերն իրեն նվիրեց մինչև 1931թ.: Այնուհետև նա ընդգրկվեց հայ այրիների խնամքի և առողջարանի կառուցման աշխատանքների մեջ: Զույգը ցմահ մնաց Լիրանանում: «Այն ոչ հայը, որի անունը ամենից հաճախ էր հնչում մեր հարցա-

զրույցներում, պապա «Քյունցլերն էր» - զրում են Դոնալդ Միկերն ու Լորնա Դուրյան-Միկերը իրենց գրքում, որոնք պատմագրում են Հայերի ցեղասպանությունը ելնելով վերապրող-ների բանավոր Հաղորդումներից: Նրանք համոզված են, որ Հայերը դեռ երկար պիտի Հիշեն այն սերն ու Հոգածությունը, որը Յակոբը ու Նրա կինը՝ Էլիզաբեթը, նվիրեցին այդ ժամանակների խեղճերից ամենախեղճերին¹⁹:

Սույն Հրատարակության ու Նրա լրացումների մասին

«Արյան և արցունքի երկրում» գրքի նոր Հրատարակությունը (1999/2004 թթ.) հիմնված է բնագրի վրա և լրացված է Լեփսիուսին ուղղված Քյունցլերի նամակով: Բացի դրանից, ավելացված են մի քանի լուսանկարներ և մի քարտեղ, ինչպես նաև Յակոբ Քյունցլերի չորս Հոդվածները, որոնք Հրատարակվել են Լեփսիուսի և «Der Christliche Orient» ամսագրերում²⁰: Հոդվածներից երկուսը որոշակիորեն գրքի շարունակությունն են: Ներկա Հրատարակության մեջ դրանք հերթական գլուխներ են, որոնց թվերը տեղադրված են փակագծերի մեջ (54-64): Այդ գլուխները ներկայացնում են Ուրֆայի շվեյցարական Հիվանդանոցի երկու վերջին տարիները (1920-1922), այսինքն՝ Քյունցլերների վերադարձի շրջանը Հայրենիքում անցկացրած արձակուրդից Հետո: Հիվանդանոցում համառ աշխատանքի Հետ միասին Քյունցլերն այդ շրջանում նվիրվել էր Մերձարևելյան նպաստամատույցի Հանձնարարության՝ քրիստոնյա որը երեխաների տեղափոխմանը թուրքիայից Սիրիա:

«Կարմիր մահիկի Համար» Հոդվածի մասին արդեն նշեցինք: Մինչև 1928 թ. անտիպ «Թուրքերը և Հայերը, նոր փուլ» Հոդվածում Քյունցլերը հաշտեցման Հարցը զետեղում է ցեղասպանության հարցից առաջ: «Der Orient» ամսագրի տվյալ Համարի իրավամբ մերժված նախագիծը, որից ծագել էր այդ Հոդվածը, կրում էր «Նվիրվում է թուրքերին և Հայերին» վերնագիրը: Ով որ այն կարդա, կնկատի, թե ինչքան դժվար էր, նույնիսկ քիչ թե շատ տեղեկացված Հեղինակների Համար, Համոզիչ կերպով ներկայացնել իրենց թեման՝ Հայ-թուրքական Հարաբերությունները, ցեղասպանությունը և մեղավորու-

թյան Հարցը: Ժամանակն այդ շրջանում, ցավոք, ոչ միայն Թուրքիայում, այլև Գերմանիայում դեռևս չէր հասունացել խորաթափանց քննարկումների համար: Նույնիսկ Քյունցլերի հողվածը պարունակում է մտքերի վիճելի զարգացում, որը լույս է սփոռում այդ ժամանակվա բանավեճերի բնույթի վրա: Նա օգտագործում է «պատիժ», «մեղսակցություն» և քաղաքական «հավատարմություն» հասկացությունները՝ տարակուսելի պարզեցմամբ և շարունակում է կիրառել ժամանակավրեպ, բազմացեղ «օսմաններ» հասկացությունը Թուրքիայի նկատմամբ, որը 1928-ին նշում էր ցեղազգային պետության իր նախնական վիճակը: Իրավացիորեն նա խոսում է «թուրքական քաղաքականությունը փոփոխելու խիստ անհամեշտության մասին», քաղաքականություն, որը «բացառելով իր ոչ դուարյուն թուրքական տարրերին» «նպաստել է ոչ թե կառուցելուն, այլ դարձյալ քանդելուն»:

Տարակուսելի, նույնիսկ սաղրիչ է՝ թուրքերին ու Հայերին որպես եղբայրներ և քույրեր տեսնելու նրա մոտեցումը: Ըստ Քյունցլերի նրանց Հարաբերությունը կարող է բարելավվել միայն այն դեպքում, եթե նրանք «մեղքի հարցին անկանխակալ պատասխան» տան և «անհամեշտ խոստովանությունն» անեն: Հատկանշական է, որ ինքը՝ առանց պատասխանի նշույն անգամ ունենալու, Թուրքիայում «նման խոստովանողների» հարցն է զնում: Թեև նա գիտակցում է դրա անիրականալիության աստիճանը, նա իր հավատն է արտահայտում, աշխարհամարտից ի վեր երկու «իրարից անսահմանորեն հեռացած» եղբոր և քրոջ հաշտեցման մասին: Անսպասելի է Քյունցլերի այն արտահայտությունը, որ իր բարձր գնահատանք ստացած ծառայությունը՝ 1921-1922 թթ. 8000 քրիստոնյա որբ երեխաների դեպի Սիրիա տեղափոխումը, «ճիշտուղին» չի եղել: Նա ինքը այդ աշխատանքը մի քանի տարի առաջ որակել էր որպես իր կյանքի ամենազեղեցիկը (տե՛ս զլուխ 57-62): Սակայն, ըստ իրեն, ճիշտ ուղին կլիներ անառողջական հողերում միասնական ապագայի կառուցումը և դրա հետ կապված՝ վստահության նոր հիմքերի ստեղծումը: «Ամեն ժողովուրդ ունի գոյության իրավունք. ըստ որում՝ այդ ժողովուրդը պետք է կարողանա ապրել այնտեղ, որտեղ ծնվել է: Ով որ ոտնահարի է այդ իրավունքը, գործում է անարդարություն, որը վաղ թե ուշ վրեժով է լուծվելու» (զլուխ 2):

ՄԱՆՈՒԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հստ պրոֆ. Հերման Գոլցի, Արյան և արցունքի երկրում վերնագիրը առաջարկված է եղել (զիսավոր) քարտուղար Ռիխարդ Շեֆերի (Richard Schäfer): Յուշաննես Լեփահուսի ամենանվիրված աշխատակիցներից մեկի կողմից, «Հայերի համար նպաստամատույցի» և «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության «Ներքին ծառայության» մեջ:
2. Ծվեյցարիայի կողմից պաշտոնական ճանաչման հարցի մասին Հմմտ. *ArbeitsKreis Armenien* (Hg.), *Völkermord und Verdrängung. Der Genozid an den Armeniern - die Schweiz und die Shoah* [Ցեղասպանություն և ժխտում. Հայերի ցեղասպանությունը. Ծվեյցարիան և Շոա], Zürich 1998.
3. Ուրֆայից Կորինա Շաթուքի (Corinna Shattuck) 24 Հունվարի, 1896 թվակիր նամակը Յուլյա Ս. Կոնկանտին (Julia S. Conant), American Board of Commissioners for Foreign Missions, Indiv. Biogr. 54: 21, Houghton Library, Harvard-University, Boston:
4. Հմմտ. *Hans Barth, Türke, wehre Dich! [Թուրք, պաշտպանվի՛ր]*, Leipzig 1898;
5. Հմմտ. 1999 թ. ամունը լույս տեսած Հատորը Hans-Lukas Kieser (Hg.), *Die armenische Frage und die Schweiz/La question arménienne et la Suisse* [Հայկական հարցը և Ծվեյցարիան], (1896-1923);
6. Նրա՝ որպես գերմանացու, Հատկապես 1914-ի Հայրենասիրական սայթաբումները չեն կարող նաեւացնել նրա ծառայությունները: Նրա կարևորագույն Հրապարակումների թվին են պատկանում *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland* [Հայաստանը և Եվրոպան; *Մեղադրական ընդդեմ քրիստոնյա մեծ տերությունների և կոչ քրիստոնյա Գերմանիային], Berlin 1896, *Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei* [Տեղեկագիր Հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում], Potsdam 1916, ինչպես նաև *Deutschland und Armenien 1914-1918*, [*Գերմանիան և Հայաստանը, 1914-1918*] Potsdam 1919.*
7. Հմմտ. Գրքի Հավելվածում տրված մատենագրության ընտրանի (էջ 194):
 8. *Der Christliche Orient*, 3. Jg., Potsdam 1902, S. 65-70.
 9. Հմմտ. *Der Christliche Orient*, 14. Jg., Potsdam 1913, S. 174, f. Ժողովրդական աղյուրները լի են զգալի անհտություններով: Հմմտ. Raymond H. Kevorkian-Paul p. Paboudian, *Les Arméniens dans l'Empirie ottoman a la veille du génocide* [Օսմանյան կայսրության Հայերը ցեղասպանության նախօրեին], Paris 1992 S. 325.
 10. *Aquaintances* [Մանոթություններ], London 1967, S. 241 f.
 11. Գրա մասին նորերս Հրատարակվել է. Leslie A. Davis, *The Slaughterhouse Province. An American Diplomat's Report on the Armenian Genocide. 1915-1917*, ed. with an introduction and notes by Susan K. Blair Ա. Թելլի Ա. Թելլիս, Սպանդանոցային նահանգը. Ամերիկան դիմանագեստի զեկուցագիրը Հայկական ցեղասպանության մասին. ներածական և ծանոթագրություններ՝ Հրատ. Այուղանք. Բլերի], new Rochelle and New York 1989; Henry H. Riggs, *Days of Tragedy in*

Armenia. Personal Experiences in Harpoot, 1915-1917 [Հենրի Հ. Ռիզը, Աղբերգության օրեր Հայաստանում, Անձնական փորձություններ Խարքերդում], Michigan 1997.

12. Ephraim K. Jernazian, *Jugdment unto truth. Witnessing the Armenian genocide* [Եփրայմ Ջենազյան, Իրաւունքը ճշմարտության Յուշը չորս կոտորածներէ], New Brunswick und London 1990; Bruno Eckart, *Meine Erlebnisse in Urfa* [Բրունստ Էքարթ, Աւրֆայի փորձություններս], Potsdam 1922 (նաև *Der Orient, Potsdam 1921*, S. 54-58, 119-126, 133-146, 154-160, նաև 1922, էջ 20-24).

13. Հմմտ. Քյունցիլի Ճոնը՝ 1951 թ. Փառլ Շյուցի (Paul Schütz) Հրատարակած ինքնակենսագրության մեջ: Նախնական վերնագիրը՝ «*Köbi, der Lückenbüsser, im Dienste des Lebens*» [Քյորին՝ նեղ օրերին հասնողը՝ կյանքի պաշտոնում], Հետագա Հրատարակություններում վերանվանվել է «*Köbi - Vater der Armenier*», [Քյորին՝ Հայերի Հայրիկը]: Քյունցիլի դուստրը՝ Իզան, իր զրում զրում է Հոր մասին. «With the Kurds he had always felt an affinity: like himself, they were of mountain stock; they were natural and unspoilt, a happy people, whose language he had learned and with whom he found it easy to go on» [Քրդերի Հետ նա միշտ զգացել է որոշ ազգականություն, իրեն նման, նրանք էլ լեռնցիներ էին: Նրանք բնական էին և ոչ շփացած, ուրախ մարդիկ, որոնց լեզուն նա սովորել էր և որոնց Հետ լավ Հարաբերության մեջ էր]: (Ida Alamuddin, *Papa Kuenzler and the Armenians* [Իդա Ալամուդին, Քյունցիլի Հայրիկը և Հայերը] London 1970, S. 41).

14. Հմմտ. «Կարմիր մահիկի Համար» Հոդվածը (1920), սույն զրում՝ էջ 188.

15. Այդ տարիներին վերելք ապրող պետական՝ որբերի Հետ աշխատանքի նպատակն էր երեխաններին, անկախ իրենց ծագումից, թրքացնել և խլամացնել:

16. *Der Christliche Orient*, 16. Jg., Okt. 1915, S. 76.

17. Լեփսիտումի արխիվը Հայեր քաղաքում, 9028, II. 3. Ծնորհակալություն պլոտֆ. Հերման Գոլցին՝ նամակը տրամադրելու Համար:

18. Andreas Fischer, *Erlebnisse eines Schweizerarztes bei den türkischen Nationalisten* [Անդրեաս Ֆիշեր, Շվեյցարացի թժկի տեսածն ու ապրածը Թուրք ազգայնականների մոտ], Basel: Baseler Nachrichten, 1921; Gertrud Fischer-Oeri, *Erinnerungen an Urfa* [Գերտրուդ Ֆիշեր-Օերի, Հուշեր Աւրֆայից], hektographiert, Riehen 1967, Universitätsbibliothek Basel [Առաջապատճենը՝ Բազելի Համալսարանի գրադարանում].

19. Donald E. Miller und Lorna Touryan Miller, *Survivors. An Oral History of the Armenian Genocide* [Վերապրողներ. Հայոց ցեղասպանության բանավոր մի պատմություն], Los Angeles 1999, S. 121 und 130-132.

20. „*Letzte Erlebnisse in der Türkei*.« [Վերջին տպավորություններ Թուրքիայից], in: *Der Orient*, Potsdam 1925, S. 60-64 und 85-91; «*Die Türken und die Armenier, eine neue Phase*» [Թուրքերն ու Հայերը, մի նոր փուլ], aus dem Entwurf der Nr. 5 von *Der Orient*, Potsdam 1928 (Universitätsbibliothek Basel, Lieb Z 256); «*Für den roten Halbmond*» [Կարմիր կիսալուսի Համար], in: *Der Christliche Orient*, Potsdam 1920, S. 42-44.

1. Պատերազմի սկիզբը

Եթե ստանձնում եմ Մեծ պատերազմի ընթացքում Ռուբայտում իմ տեսածն ու ապրածը գրի առնելու գործը, ապա դրա պատճառն առաջին հերթին այն է, որ ես միակ չեղոք անձն եմ, որն սկզբից մինչև վերջ ականատեսը եղավ բոլոր այն սարսափելի եղելությունների, որոնցով Ռուբան ավելի հարուստ է, քան Թուրքիայում որևէ այլ քաղաք:

Մինչև 1917 թ. վերջը Ռուբայում էր գտնվում նաև օրիորդ Կարեն Եփիք (Karen Jeppe) անունով դանիացի մի տիկին: Նա սերտ կապի մեջ էր տեղացի Հայերի հետ:

Պատերազմի բոնկման ժամանակ ընտանիքիս հետ ամառային արձակուրդի մեջ էի Գալիլեայում: Որոշակի նախազգացումով, որ մեծ իրադարձություններ են սպասվում և որ այդ պատճառով ավելի լավ պիտի լիներ գտնվել պաշտոնիս գլխին Ռուբայում, քան թե Գալիլեայում, որոշեցի արագ վերադառնալ:

Զերծ սխալվել, պատերազմն իսկապես բոնկվել էր: Թուրքիայում ևս հենց սկզբից մեծ ալեկոծություն բարձրացավ: Մասնավոր անձանց Համար փակվեց Հալեպի ու Դամասկոսի միջև երկաթուղային երթևեկությունը: Դամասկոսով անցնող վերջին գնացքով Հաղիվ կարողացա ընտանիքիս հետ Հասնել Հալեպ:

Հալեպից Ռուբա ուղևորվելիս Հանդիպեցի Ռուբայից պառակմենտական երկու պատգամավորի, որոնք արձագանքում էին պետության Հանկարծակի կանչին՝ ներկայանալու կայսերական գլխավոր կենտրոն: Նրանք կարծիքս Հարցրին, թե արդյոք Թուրքիայի Համար ճիշտ պիտի լիներ Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտնել: Պատասխանեցի, որ լավագույնն ընդՀանրապես պատերազմի մեջ չմտնելն է, լինի դա Գերմանիայի՝ թե Անտանտի կողմից:

1917 թ. դեկտեմբերին, երբ Կոստանդնուպոլսում այցելում էի այս երկու ազգային խորհրդականներից մեկին, վերջինս

Հիշեցրեց ինձ այդ խոսակցությունը՝ արտահայտելով նաև իր տեսակետն այն մասին, որ Թուրքիան ավելի լավ արած կլիներ, եթե վարչած լիներ իմ կարծիքի համապատասխան: Այդպես էր դատում ծայրահեղական մի երիտթուրք, որն իր բազմաթիվ համախուների հետ մեկտեղ՝ օգտագործել էր Թուրքիայի մեկուսացումը, որպեսզի անարգել կերպով իրագործի հայ ժողովրդի բնաջնջումը:

Աշխարհամարտի բռնկումը սկզբից ևեթ իմ մոտ արթնացրեց ներքին մի հակասություն: Որպես գերմանական ծագումով շվեյցարացի՝ ես ինձ գերմանացի էի զգում, և որպես մտածող անհատ մինչև պատերազմի վերջն էլ մնացի գերմանացի: Դրան երևի նպաստեց նաև այն հանգամանքը, որ պատերազմի ընթացքում գերմաներեն ու թուրքերեն ամսագրերից բացի ուրիշ նյութ ձեռքս չէր անցնում:

Երբ Ուրֆա հասա, այնտեղ մեծ թափով ընթանում էր զորահավաքը: Նորակոչիկները, այդ թվում քրիստոնյաները, արդեն զենքի տակ էին: Սկսվել էր 15-ից մինչև 50 տարեկան տղամարդկանց ընդհանուր հաշվառումը, որից խուսափողներին մահապատիժ էր սպառնում:

Այս համընդհանուր հաշվառմանը բնականաբար ենթակա էին միայն մշտական բնակություն ունեցող հպատակները: Թուրքիայի ներքին շրջանների քոչվոր ցեղերը, թեև զորակոչվում էին, իշխանությունների հրամանին կարևորություն չէին տալիս: Շուտով սկսվեց զինված ջոկատների տեղաշարժը: Որքան էլ ջանում էին՝ նման առիթներին մշտապես ուղեկցող երաժշտությամբ անհրաժեշտ տրամադրություն ստեղծել, դժվար է ասել, թե կազմավորված ջոկատների կամ ժողովրդի ոգևորությունը մեծ էր:

Երկու եվրոպացի զլսավոր հանձնակատարները, նորվեգացի Հոֆն (Hoff) ու բելգիացի Վեսթենենենք (Westenenk), որոնց մեծ տերությունները Թուրքիային պարտադրել էին ընդունել որպես արևելյան վեց նահանգներում օրինակելի կարգ ու կանոն ստեղծողներ, 1914 թ. գարնանը ժամանեցին Թուրքիա իրենց աշխատանքն սկսելու: Սակայն պատերազմի բոլցիկելուց անմիջապես հետո՝ նրանք վերադարձան իրենց հայրենիքը: Նրանցից մեկն անցավ Ուրֆայով: Նրան ուղեկցում էր քաղաքի պարետը: Հավանաբար թուրքերն այդ մարդկանց տուն էին

ուղարկում: Այժմ, երբ մեծ տերությունները միմյանց դեմ էին կովում, նրանք թուրքիայում այլևս անելիք չունեին:

1914թ. օգոստոսի վերջերին Ուրֆայում լուրեր տարածվեցին, որ Զեյթունի Հայերն ընդդիմացել են իրենց գավառի գորակոչին¹:

Այդ լուրերի նպատակը մահմեղական բնակչությանը շփոթեցնելն էր: Նրանք մտածում էին, որ եթե Ուրֆայի Հայերն էլ ապստամբության դիմեին, մահմեղականների վերջը վատ էր լինելու: Թեև մահմեղականներն Ուրֆա քաղաքում մեծամասնություն էին կազմում, թվով մոտավորապես քրիստոնյանների կրկնակին էին, նրանք գիտեին, որ քրիստոնյանները՝ քաջությամբ և մանավանդ գործիմացությամբ իրենց գերազանցում էին:

Երբ օգոստոսի վերջերին Ուրֆայում լուրեր Հրապարակվեցին գերմանացինների տարած Հաղթանակների մասին և մահմեղականները Հաղթանակի յուրաքանչյուր լուր ցնծությամբ էին ողջունում, նրանք սուր աչքով զննում էին Հայերին: Հետևում էին, թե արդյոք վերջիններս մասնակից էին իրենց Հրճվանքին, թե՝ նրանց մոտ նկատելի էր որոշ ներքին դժգություն: Դժգար չէր Հանգել այս կամ այն եզրակացության: Ի դեպ, առանձին Հայեր չէին էլ թաքցնում իրենց կարծիքը, ըստ որի գերմանացինները երբեք չէին կարող շահել պատերազմը, քանի որ նրանք շատ ավելի փոքրաթիվ էին: Դա չէր կարող բարեփոխել նրանց դեմ արդեն մինչ այդ իշխող անվտահության տրամադրությունը, և շուտով մահմեղականները Հայերի մասին խոսելիս նրանց միայն «ղավաճան Հայազգ» էին կոչում (*Melun ermeni Millet*):

Սեպտեմբերի 10-ին Ուրֆայում տարածվեց կապիտույացիանների վերացման մասին լուրը, որը Հաջորդ օրն իսկ մահմեղականներն այնպես տոնեցին, կարծես թուրքիայում եվրոպացինների իրավունքների վերացումով թուրքերի Համար արդեն մեծ Հաղթանակ էր ձեռք բերվել:

¹ Զեյթունի իրադարձությունների մասին, որով սկսվեց Հայ ժողովրդի արտաքսումը իր Հինավուրց բնօրբանից, տես դր Յու. Լեփիտոսի «Հայ ժողովրդի մահվան երթը» աշխատությունը (2-րդ Համալրված Հրատարակություն, 1919, Պոտսդամ, Թեմֆելֆերլագ): (Dr. Jwhannes Lepsius, 2. vermehrte Auflage 1919. Potsdam; Tempelverlag)

Քանի որ Ուրֆայի մեր գերմանական միսիոներական հիվանդանոցը, որն այդ ժամանակ ես էի զեկավարում, Հակառակ իմ բոլոր ջանքերի, մնացել էր առանց թուրքական կառավարության կանոնավոր թույլտվության, Հարկ Համարեցի նոր դիմումով պաշտոնական ճանաչում ձեռք բերելու փորձ կատարել: Մեր հիվանդանոցը գերմանական Հաստատություն էր: Ուստի սպասելի էր, որ բարեկամ և դաշնակից ազգի այս ձեռնարկությունը, որն արդեն փաստորեն մոտ երկու տասնամյակ գոյություն էր ունեցել, թուրքերը առանց այլեալլության կճանաչեին: Սակայն անմիջապես ասեմ, որ այդ սպասումը պատրանք էր: Եվ իրոք, թուրքական ատյաններից հիվանդանոցի արտոնագրման կամ փակման մասին այդպես էլ որևէ պատասխան չստացվեց, այնպես որ հիվանդանոցի բանեցնելը ո՞չ արտոնվեց, ո՞չ էլ արգելվեց: Համենայն դեպս մենք մեղ այնպես էինք պահում, կարծես թե հիվանդանոցն արտոնագրված է:

Այն օրը, երբ Հայեպի գերմանական հյուպատոսը Հեռագրով Ուրֆայի գերմանացիներին տեղեկագրեց Մազուրյան կղզիների մոտ Հինդենբուրգի Հաղթանակի մասին, ուրֆահայության առաջնորդները Հավաքված էին գերմանական հիվանդանոցի բակում: Ես նրանց ծանուցեցի Հաղթանակի լուրը, սակայն նրանք ինձ խորհուրդ տվեցին՝ նման տեղեկությունների Հավատար: Ըստ նրանց՝ Հնարավոր չէր պատկերացնել գերմանացիների որևէ Հաղթանակ, նույնիսկ այն դեպքում, եթե թուրքիան ևս նրանց կողմից պատերազմի մեջ մտներ: Ես իմ պարտքը Համարեցի այդ մարդկանց, որոնք բոլորն էլ իմ բարեկամներն էին, խորհուրդ տալ, որ նրանք որպես թրքահպատակներ այս կամ նման իրավիճակում զինվեին քաղաքական ավելի մեծ խոհեմությամբ: Այլապես դա կարող էր վատանդադառնալ և՝ իրենց վրա, և՝ իրենց ժողովրդի: Ասացի, որ Անտանտը Հեռու էր, թուրքական սուլթը՝ չափազանց մոտ, իսկ կասկածամիտ մուսուլմանները իրենց Հաղթական տրամադրության մեջ՝ շատ դյուրագրգիտ: Այդ պատճառով, ավելի լավ էր զգույշ և զուսպ լինել, քան թե ինչ-որ ձևով դրանորել, որ թուրքերի Հաջողությունները իրենց որևէ ուրախություն չէին կարող պատճառել:

Դեռևս նախքան Թուրքիայի պաշտոնապես պատերազմի

մեջ մտնելը, արդեն բազմաթիվ զինվորներ գորանոցներից փախսել էին: Սակայն վերջիններս սկզբնակամ շրջանում՝ գրեթե բացառապես մահմեղականներ էին: Հայ երիտասարդները, որոնք արդեն զենքի տակ էին, սկզբնական շրջանում մնում էին իրենց զորամասերում, որքան էլ նրանց համար դժվար էր՝ ատելությամբ լցված մահմեղականների շրջանակում մատուցել ամենաստորացուցիչ ծառայությունները: Ահա մի օրինակ այն մասին, թե ինչ տանջանքների էին ենթարկվում քրիստոնյաները թուրքական բանակում:

Զորակոչվել էր նաև իմ կողմից կյանքի կոչված դպրոցներից մեկի գերմաններնի ուսուցիչը: Նա՝ որպես Երուսաղեմի սիրիական որբանոցի նախկին աշակերտ, ստացել էր ուսումական դասընթացների մասնագետի նախնական լավ կրթություն: Իրականում նա կարող էր ի սկզբանե սպայական աստիճան ստանալ: Թեև նրան էին հանձնել նորակոչիկների մարդանքի դասերի ղեկավարությունը, զորանոցում նրան չարչըրկում էր կրտսեր ենթասպան, որը ո՞չ կարդալ և ո՞չ էլ գրել գիտեր, սակայն հատուկ հաճույք էր ստանում այդ ուսուցչին արտաքնոցի փոսր մաքրել տալուց: Բնական է, որ նմանօրինակ պայմաններում, քրիստոնյանների մոտ սպառվեց զինվորական ծառայության համար սկզբնական շրջանի պատրաստակամությունը, և չուտով նրանցից շատերը նույնպես սկսեցին ազատվելու կամ պարզապես դասալիք դառնալու փորձեր կատարել: Վերոհիշյալ ուսուցիչը գտնվում էր Այնթապի զորանոցում: Այնտեղից նա՝ որպես դասալիք, կարողացավ վերադառնալ Ուրֆա: Մի քանի օր մնաց թաքնված: Ապա ինձ հաջողվեց նրա համար աշխատանք գտնել Բաղդադի երկաթուղու շինարարությունում: Սակայն երիտասարդը իր մեկնումն անզգուշաբար այնքան ձգձգեց, որ ոստիկանությունը նրան ձերբակալեց և ազատ արձակեց միայն 200 ֆրանկ կաշառքով («բախչիչ»): Հետագայում նա Բաղդադի երկաթուղու շինարարության մեջ մեծ հաջողություն ունեցավ: Այսպես նա վստահարար իր երկրին շատ ավելի օգտակար եղավ, քան եթե զինվոր մնացած լիներ: Մինչև պատերազմի ավարտը նա Տավրոսի շինարարական գումարտակում աշխատեց որպես զիսավոր հաշվետար:

2. Դիվանագիտության Հետքերով

1914 թ. դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսին՝ թուրք սպաների և զինվորների ուղեկցությամբ, Ուրֆայում հայտնվեցին պարսիկ երկու արքայազներ: Զիավարության ընթացքում դուրս էր ընկել նրանցից մեկի՝ արքայազն Ռ. Էս-Սալտանե-էղ-Դովլեհ (R. es-Saltane-ed-Dovleh) ոտքը: Նրան բուժելու պարտականությունն ինձ էր տրվել: Հետագայում, երբ արքայազները պիտի շարունակեին իրենց ճանապարհորդությունը, ևս նրանց ուղեկցում էի որպես նրանց բժիշկը: Ինձ հանձնարարված էր ընկերակցել նրանց մինչև Բաղդադ: Նրանց գերմանացիներն էին Պարսկաստան ուղարկում: Որպես ղաջարների տուչմի ներկայացուցիչներ նրանք կոչված էին շահագրգուել Պարսկաստանին, և մանավանդ իրենց մեծ տուչմին, միանալու սրբազն պատերազմին Կենտրոնական պետությունների կողմից: Վերջին ութ տարիները արքայազները անցկացրել էին Շվեյցարիայում: Անցյալում ոռւսական կառավարությունը նրանց՝ որպես վտանգավոր տարրեր, վտարել էր Պարսկաստանից: Ամսական 4000 ֆրանկով², որ վճարում էին նրանց ոռւսները, նրանք Շվեյցարիայում կարողանում էին ապրել իշխանավարի: Ի դեպ, նրանցից մեկը՝ Սալեհ Էս-Սալտանե-էղ-Դովլեհը, 1912 թ. պարսիկների ազատագրական պատերազմի ժամանակ ոռւսներից թաքուն, ծպտված որպես դերվիշ, վերադարձել էր Հայրենիք: Տեղ հասնելուն պես ներկայացել էր ընկերներին և միապետության համակիր պարսիկներին կոչ արել պայքարել սահմանադրականության դեմ, որը ղեկավարում էր Հայազգի Եփրեմ Խանը: Սակայն արքայազնը իր միապետականների հետ անհաջողության էր մատնվել, չնայած որ իր 33.000 միապետականների դեմ դուրս էր եկել 3000 սահմանադրական:

Մեր ճանապարհորդությունը դեպի Բաղդադ շատ ղանդադ էր ընթանում, և դա վստահաբար գերմանացիների ուղած արագությունը չէր: Այդ ճանապարհորդության ընթացքում էր, որ մեր արշավախմբի ղեկավար մայոր Նեֆիս թեյր մի երեկո

¹ «Ֆրանկ» = շվեյցարական դրամական միավոր (ծնթ. թարգ.):

շոշափեց Հայկական Հարցը: Նա երիտթուրքերի առաջնորդներից էր, որ 1908 թ. Հոչակվել էր Կոստանդնուպոլսում Թաշղլայի գորանոցի վրա ձեռնարկած գրոհի ժամանակ: Այդ իսկ պատճառով նրա դատողություններն ինձ Համար Հատուկ հետաքրքրություն էին ներկայացնում:

— Մենք՝ թուրքերս, — Հայտարարեց նա, — պետք է Հայերին կա՞մ ամբողջովին բնաջնջենք, կա՞մ ստիպենք արտագաղթել: Նրանց հետ Համակեցությունը մեր կայսրության սահմաններում լիովին բացառվում է:

Քանի որ խոսակցությանը ներկա գտնվող արքայազն Սալեհը դրանից անմիջապես հետո նույն ձևով արտահայտվեց, Հավանաբար դեռ մտքում ունենալով Եփրեմ խանից կրած պարտությունը, ևս ևս ինձ թույլ տվեցի ըստ էության մի խոսք ասել:

— Ամեն ժողովուրդ, — ասացի ես, — ունի գոյության իրավունք. ըստ որում՝ այդ ժողովուրդը պետք է կարողանա ապրել այնտեղ, որտեղ ծնվել է: Ով որ ոտնահարի այդ իրավունքը, գործում է անարդարություն, որը վաղ թե ուշ վրեժով է լուծվելու: 1908-ից ի վեր, երբ երիտթուրքերը Համաձայնության եկան ազատասեր Հայերի հետ, նրանք պարտավոր էին, թե-կուզ Հանուն իրենց իսկ ինքնապահպանման՝ խաղաղություն պահպանել կայսրության բնակչության ամենամտավորական Հատվածի հետ: Իսկ Զեղ, Զերդ կայսերական մեծություն, — դիմեցի ես արքայազնին, — Զեղ ցանկանում եմ, որ Պարսկաստան չհասնեք, քանի որ Դուք էլ նման վարանոտ կարծիքներ ունեք Հայ ժողովրդի մասին: Զէ՞ որ Պարսկաստանը ևս Հար-յուր Հազարավոր Հայերի ծննդավայրն է:

Հաջորդ օրը արքայազնն ինձ խնդրեց, որ միասին ձիով վաղորդյա մի պտույտ կատարենք: Զիավարության ընթացքում նա արծարծեց Հայերի մասին մեր նախորդ օրվա խոսակցությունը:

— Ինքնին Հասկանալի է, — բացատրեց նա, — որ Հայերն իրավունք ունեն ապրելու այնտեղ, որտեղ ծնվել են, ինչպես թուրքիայում, այնպես էլ Պարսկաստանում: Երեկ ևս Հակառակ կարծիքն արտահայտեցի միմիայն, որպեսզի Հաճոյանամթուրք մայորին, որն իր կրթությամբ առանձնապես չի փայլում:

Այդ երկու արքայազներն այնպես էլ Պարսկաստան չհասն: Ֆելու ջայում, Բաղդադից առաջ վերջին կայանում, նրանց կանգնեցրին: Բաղդադից զինվորական պարետի Հրամանով եկած սուրհանդակը, արքայազներին չժույլատրեց շարունակել ճանապարհորդությունը և նրանց պարտավորեցրեց վերադառնալ: Թե այդ խոշնողությ ստեղծվել էր գերմանացիների իրազեկությամբ (Բաղդադի ճակատում արդեն մի քանի գերմանացի սպաներ կային), ինձ Հայտնի չէր: Ոչ էլ կարողացաւ հետո դրա մասին որևէ բան տեղեկանալ: Մայոր Նեֆիս բեյը, որը Հաջորդ օրը Բաղդադ մեկնեց և երկու օրից էլ վերադարձավ, երբեք չբացահայտեց, թե ով էր տվել ետղարձի Հրամանը: Արքայազների Համար շատ մեծ Հարված էր՝ իրենց Հայրենիքին այդքան մոտիկ գտնվելուց հետո, առանց տեղ Հասնելու ետ դառնալը: Երբ մենք այդ նույն ուղիով, որով եկել էինք, վերադարձի մեկ օրվա ճանապարհ էինք կտրել, արքայազներն անկեղծորեն իմ առաջ բացվեցին: Նրանք գաղտնի փախուստի ծրագիր էին մշակել: Ինձ տվեցին ընտրությունը՝ այդ ծրագրին մասնակցելու կամ գոնե դրա իրականացման Հարցում նրանց օժանդակելու: Թուրքերից խուսափելով և Բաղդադը շրջանցելով, նրանք ուղում էին ուղղակի տափաստանով Հասնել Պարսկաստան: Սակայն կար մի խնդիր. Սալեհ արքայազնին ուղեկցում էր նրա կինը, որը Հղի էր և նրան՝ տափաստանով անցնող նման դժվարին ճանապարհորդություն Հանձնարարելի չէր: Ուստի նրանք խնդրեցին, որ եթե ես որոշում ընդունեմ արքայազներին չմիանալ, ապա գոնե իշխանուհուն Հացնեմ Ռուբա, որտեղ նա կմնար մինչև ծննդաբերելը, որից հետո ավելի ուշ կտեղափոխվի Պարսկաստան: Հայտնեցին, որ այդ ծրագիրը իրագործելի պիտի լիներ նաև առանց իմ մասնակցության: Սակայն ես նորին մեծություններին Հորդորեցի ետ կանգնել նման ծրագրից: Պետք է ենթադրեինք, որ արքայազները ոչ թե թուրքերի, այլ գերմանացիների Հակողության տակ էին, այդ խակ պատճառով լավագոյն միջոցը իրավիճակին ենթարկվելն էր: Այս խորհուրդը ես նրանց տալիս էի ներքին մղումից դրդված: Ամրող ճանապարհորդության ընթացքում արքայազն Սալեհը գրեթե ամեն երեկո գեներալ-ֆելդմարշալ Հինդենբուրգի կենացն էր առաջարկում: Նա շարունակ բացականչում էր. «*Vive Hindenburg!*»: Եվ ամեն անգամ հենց ինձ էր

վիճակվում այդ լսել: Սա ինձ այն եղրակացության հանգեցրեց, որ այս արևելցին մի օր էլ Պարսկաստանում Հեղտությամբ անցնելու էր Անտանտի կողմը: Իրավիճակին ենթարկվելու իմ խորհուրդն ընդունվեց, և այսպես մենք նորից հասանք Դերես-Զոր: Այստեղ արքայազները պարտավոր էին սպասել հետագա ցուցումների: Քանի որ պարտավորությունս կատարել էի, ես հրաժեշտ տվեցի և վերադարձա Ուրֆա: Ավելի ոչ տեղեկացա, որ արքայազները Կոնիայում ներկալվել էին: Թե հետո նրանք ինչ եղան, այլևս չիմացա:

3. Բռնագրավումներ

Ուղղակի անհավատալի է, թե ինչեր էին բռնագրավում թուրք սպանները պատերազմի հենց սկզբից: Նրանցից շատերի համար հրաշալի ժամանակներ էին: Պահանջներում չկար մի րան, որ սպանները՝ որպես պատերազմին անհրաժեշտ նյութ, չբռնագրավեին: Տուժյանները որպես անզորրագիր ստանում էին ձեռքով պատրաստված գրություններ: Բռնագրավված ապրանքի մեծ մասը, սակայն, գնում էր սպանների անձնական տները: Այդ է պատճառը, որ առգրավվում էին ոչ միայն պատերազմին անհրաժեշտ առարկաներ, այլև այն ամենը, ինչ հրապուրիչ էր կամ արժեք ուներ, ինչպես օրինակ՝ գորգեր, դիմանկարներ և շատ ուրիշ նման առարկաներ: Այդ կապակցությամբ կպատճեմ փոքրիկ մի միջադեպ: Սպաններից մեկը մի պահանջներում բռնագրավել էր յոթ պարկ շաքար: Բեռնակիր է կանչել և հրամայել՝ ապրանքը իր բնակարանը տանել: Երեկոյան սպան տուն է վերադարձել, հարցրել կնոջը, թե յոթ պարկ շաքարը բերե՞լ են: Կինը պատասխանել է՝ ոչ, միայն վեց պարկ են բերել: Հաջորդ առավոտյան սպան նորից հանդիպել է բեռնակիրն և հարցրել, թե ուր է կորել յոթերորդ պարկը: Վերջինս պատասխանել է հեղնանքով. «Վեցը՝ քեզ, իսկ մեկը՝ ինձ, որպես տեղափոխման վարձ»:

Արքայազնների բաղդադյան ճանապարհորդությունը նույնպես ընթանում էր ամենօրյա բռնագրավումներով: Միայն թե այնտեղ իսկապես միայն անհրաժեշտ առարկաներ էին բռնագրավվում: Սակայն յուրաքանչյուր վաճառական գիտեր, որ

որպես անդորրագիր տրվող թղթի կտորը առանց մտածելու կարելի էր պատուել, քանի որ Հանձնված ապրանքի գինը երբեք չէր հատուցվելու:

Պատերազմի առաջին երկու տարիներին բռնագրավվեց Հատկապես մեծ քանակությամբ ցորեն և ամեն տեսակի Հացահատիկ: Հաճախ իրենց՝ գյուղացիներին էին ստիպում դրանք քարշ տալ դեպի կայարանները: Այնտեղ ապրանքը՝ պահեստների բացակայության պատճառով, կուտակվում էր բաց երկնքի տակ: Հետո գալիս էր ձմեռը, անձրեւ տեղում էր չծածկված վիճակում թողնված պաշարների վրա, Հացահատիկը ծլում էր, նեխում և ապականում ամրողջ շրջակայքի օղը: Այդ նույն ժամանակամիջոցին ճակատներում հացի պակաս էր տիրում: Միայն այն տեղերում, որտեղ գերմանացի սպաներ կային, Հոգ էր տարվում պարենի պատշաճ տեղափորման ու ուղմանակատում նրա օգտագործման համար:

4. Մոայլ Հեռանկարներ

Արքայազների Հետ վերոհիշյալ բաղդադյան ճանապարհորդության ժամանակ ինձ Համար պարզ դարձավ, որ պատերազմը Հայ ժողովրդի Համար լինելու էր օրհասական: Երիտթուրքերը նախատեսել էին այս ժողովրդի բնաջնջումը: Կասկածից դուրս էր, որ նրանք օգտագործելու էին պատերազմը, որի ընթացքում թշնամի մեծ տերությունները դրկվելու էին Թուրքիայի տարածքում ունեցած իրենց ազդեցությունից, կամ՝ բացառությամբ Ամերիկայի, լիովին ընդգրկված պիտի լինեին պատերազմական գործողությունների մեջ: Այսպիսով, ոչ ոք ժամանակ չէր գտնելու զրադվելու Հայկական Հարցով:

1915 թ. մարտին և ապրիլին Ուրֆայում թուրքերը տոնում էին իրենց Հաղթանակները՝ մեծ մասամբ մեծ շուրջով: Այդ տոններին Հայերը վերաբերվում էին զգալի սառնությամբ, մի քան, որ բնականաբար զրգում էր թուրքերին: Այդ միջոցին էր, որ տոնախմբություններին չմասնակցելու համար մի քանի Հայեր ձերբակալվեցին: Նրջահայաց թուրքեր ևս կային, որոնք առանց թաքցնելու նման Հաղթանակներին հավատ չէին

ընծայում, բայց նրանց ոչինչ չէր պատահում:

Դասալքությունը շարունակվում էր ոչ միայն թուրք, այլև Հայ զինվորների շրջանում: Այստեղ ուզում եմ իմ օրագրից մեջ բերել Հատկանշական մի Հատված:

«Փետրվար, 1915 թ.: Մի քանի օր առաջ չորս Հարյուր նորակոչիկ, որոնց թվում նաև բազմաթիվ Հայեր, ճանապարհ ընկան դեպի Այնթապ: Սրանցից Այնթապի գորանոց էր ներկայացել ընդամենը չորս մարդ, և նրանք բոլորը Հայեր էին: Նրանց ընդունող սպան ծիծաղել է և քաջարի քայլակին հանձնարարել՝ նույնպես գնալ»:

Այդ օրերին Ուրֆայի Հայերն ամեն կիրակի իրենց մայր տաճարում տղամարդկանց Հավաքներ էին անցկացնում: Խոսակցության նյութը պատերազմի իրադարձություններն էին: Ես այդ ժողովներում երկու անգամ զեկուցում եմ կարդացել: Բոլոր Հավաքույթներում Հայերը քննարկում էին նաև իրենց դժվար կացությունը: Ասում էին, որ թուրքերը Բալկանյան պատերազմում ջախջախիչ Հարված են ստացել չորս փոքրաթիվ ժողովուրդների կողմից, և իրավամբ Հարցնում էին, թե ինչպես էր այժմ նրանց հաջողվելու՝ դիմադրել մեծ տերությունների բանակներին: Քաղաքի թուրքերը գրեթե ամեն օր սպանում էին Հայերին: Նրանք բացահայտորեն ասում էին. «Վայ ձեզ, Հայեր, եթե թուրքիայի թշնամիներին Հաջողվի՝ որպես Հաղթողներ, իրենց ոտքը դնել թուրքական Հողի վրա: Ոչ մի Հայ երկրի ներսում կենդանի չի մնա, դրա մասին մենք կհոգանք»: Նման իրավիճակում Հայ ժողովրդի խնդիրը պետք է լիներ անհրաժեշտության դեպքում պաշտպանվել ընաջումից, թուրքիայի պարտության դեպքում՝ դիմակայել այնքան ժամանակ, մինչև Անտանտի բանակները մտնեին երկրի խորքերը: Ամենուրեք, որտեղ Հայեր կային, այս ուղղությամբ գաղտնի պատրաստություններ էին տեսնում: Մի՞թե դրա համար նրանց կարելի է մեղադրել: Սակայն թուրքերը այդ պատրաստությունների մասին տեղեկացան: Շատ Հայեր ողջունում էին իրենց երիտասարդների՝ որպես դասալիքների տունդարձը: Վախկոտները, սակայն, ողբում էին նրանց վերադարձը: Զէ՞՞ որ դրանց անպայման Հաջորդում էին ոստիկանական տհաճ հետաքննությունները:

Ապրիլյան մի երեկո Ուրֆայի Հայկական թաղամասում

մեծ անհանգստություն տիրեց: Հսել էին, որ Հաջորդ առավոտյան ձերրակալելու էին Հայ ուսուցիչներին: Անմիջապես եկեղեցում ժողով Հրավիրվեց: Երիտասարդությունը դիմադրության կոչ արեց, մեծահասակները, սակայն, դեմ էին դրան: Որոշեցին մի քիչ էլ սպասել:

Հաջորդ առավոտ, իսկապես, տեղի ունեցավ ուսուցիչների ձերրակալումը: Տեղի ունեցան նաև տնային զանազան խուզարկություններ: Նրանց փնտրածը զենք ու փաստաթղթեր էին:

Մի քանի օր անց ժանդարմները Գարմուջում՝ Ուրֆայի մերձակայքում գտնվող միակ Հայկական գյուղում, դասալիք Հայեր էին փնտրում: Վերջիններս փախել էին մոտակա լեռն ու այնտեղ ամրացել՝ իրենց հետապնդող ժանդարմներին դիմավորելով կրակոցներով: Ժանդարմները տեղում մի քանի զոհ տվեցին. միայն մոտակա քաղաքից օգնական ուժեր ստանալուց հետո է, որ կարողացան մի քանի դասալիք բռնել:

Այս միջադեպը զգայիրեն վատթարացրեց Ուրֆայի Հայերի վիճակը: Մայիսի կեսերին Ուրֆայի Հայտնի ընտանիքներից 18-ը աքսորվեց Բագա, մի փոքրիկ քաղաք Եփրատի ափին՝ Ուրֆայից 150 կմ Հարավ: Նրանց դեռ թույլ տվեցին ճանապարհ ընկնել իրենց իսկ վարձած կառքերով: Այդպես նրանք ողջ-առողջ տեղ հասան: Սակայն մի քանի օր անց այդ ընտանիքների տղամարդկանց բերեցին Ուրֆա ու բանտ նետեցին: Նրանց հետ հետզհետե ձերրակալվեցին քաղաքի երևելիներից շատերը: Բանտում նրանք ենթարկվեցին դաժան ճիպոտահարության (արևելյան պատժամե, որի ընթացքում բարակ ճիպոտներով խարազանում են մերկ ներրանները): Խոշտանգումները կրկին օրակարգի մեջ էին: Բարեկամներիցս մեկն ինձ բանտից լուր ուղարկեց՝ խնդրելով ցավը մեղմացնող բալասան, քանի որ իրար Հաջորդող երեք ճիպոտահարությունից բազմաթիվ վերքեր էր ստացել: Զերրակալված Հայերից պահանջում էին ցուցմունք տալ, թե որտեղ էին պահում իրենց զենքերը և պահանջում էին Հանձնել դրանք: Զէ՞ որ Հիմա ամեն Հայ զենք ուներ: Բայց և քաղաքի ամեն երկրորդ բնակիչ զենք ուներ: Հայտնի է, որ Արևելքում, նույնիսկ խաղաղ տարիներին, անզեն Հնարավոր չէ նույնիսկ Հաջորդ գյուղը գնալ: Ընդհանուր անապահովությունը, որը չի կարելի մոռանալ

Արևելքը բնութագրելիս, պարտավորեցնում է ամեն մի բանական էակի զենք ունենալ:

1915 թ. ապրիլի վերջին հիվանդացա բծավոր տիֆով: Դեռևս ապաքինման շրջանում էի և հաղիվ էի կարողանում մի քանի քայլ անել, երբ Հայ վարդապետը, որը Հայ համայնքի առաջնորդն էր, ինձ խնդրեց անհապաղ իրագործել Հալեպ մեկնելու իմ մտադրությունը՝ իրազեկելու տեղի եվրոպական Հյուպատոսներին Հայերի վիճակի մասին: Հունիսի կեսերին Հալեպում էի: Այնտեղ նախ ներկայացա Գերմանիայի Հյուպատոսին և նրան խնդրեցի՝ ի սեր գերմանացիների բարի Համբավի, անել ամեն Հնարավորը՝ կանխելու Հայ ժողովրդին սպառնացող բնաջնջումը: Հակառակ դեպքում՝ ողջ քաղաքակիրթ աշխարհը Գերմանիային պիտի մեղադրեր Հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճի մեղսակցության մեջ:

Նույն Հարցով ներկայացա նաև Ավստրիայի և Ամերիկայի Հյուպատոսություններ:

Հալեպում Հանդիպեցի նաև բարոն Մաքս ֆոն Օփենհայմին (Max von Oppenheim), որն ինձ ողջունեց բարեկամի պես: Նրան նույնպես իրազեկեցի Հայ ժողովրդի վիճակի մասին՝ զրավոր շարադրանքով: Գիտեի, որ բարոնը թուրքիա էր եկել դիվանագիտական Հանձնարարությամբ: Հետևարար Հուսով էի, որ իմ միջամտությունն անհետևանք չի մնա: Թեև բարոնին երկար տարիներ անձնապես ճանաչում էի, բայց ոչ որպես Հայերի բարեկամ:

Օփենհայմի այդ ժամանակվա առաջադրանքն էր՝ ի շահ կենտրոնական պետությունների, թուրքական պետության բոլոր մեծ քաղաքներում կապի կենտրոններ սարքավորել: Նա ինձ նույնպես մի գումար տվեց ՌուբՓայի Համար, որը ևս Հանձնելու էի գերմանացիներին՝ ՌուբՓայում ևս կապի կենտրոն սարքավորելու Համար, որտեղից առարկելու էին նկարներ, Հեռագրեր և թերթեր:

5. Օրհասական ժամեր

Հուլիսի սկզբին Ուրֆա վերադառնալիս՝ դեռ ճանապարհին տեսա հայերի հոշոտված դիակներ: Նրանք տեղահանվածներ էին, որոնք ընկել-մնացել էին ճանապարհին. Հավաստի նշան, որ սկսվել էր այդ խեղճ ժողովրդի մեծագույն աղետը:

Հասնելով Ուրֆա, ես այլևս չտա մեր ղեղագործին: Մի օր առաջ ոստիկանները նրան ղեղատնից տարել էին և բանտարկել: Որպես կառավարության խորհրդական՝ այդ մարդը պատերազմի սկզբից զլխավորապես գործում էր թուրքական պետության համար, իսկ այդ հնարավորությունը ես էի նրան ընձեռնել՝ թույլատրելով, որ նրա աշխատանքը ղեղատան մեջ սահմանափակվի օրական միայն մեկ ժամով: Եվ ես դա արել էի միմիայն նրա համար, որ պետությունն օգտվեր նրա հսկայական շրջահայացությունից ու բանիմացությունից: Բանտում նրան ոչ մի անգամ չհարցաքննեցին, ոչ էլ ճիպոտահարեցին, նա մնաց միայն բանտարկված, մինչև որ օգոստոսի 12-ին դանակի մի հարվածով նրան անշունչ գետին տապալեցին: Հետագայում մի առիթով լսեցի թուրքի բերանից, որ իրը թե նա՝ հայերի ծրագրած մի ապստամբության ժամանակ նախատեսված է եղել որպես Ուրֆայի ժամանակավոր նահանգապետ: Թե ինչքանով է դա համատասխանում ճշմարտությանը, չեմ կարող ասել:

Երկու հայտնի հայեր, պառամենտի անդամներ Վարդգեսն ու Զոհրապը, այդ օրերին՝ որպես թուրքական բանտարկյալներ, անցան Ուրֆայի մոտով: Նրանք իրավունք ստացան ճանապարհը շարունակել ձիակառքով: Սակայն Ուրֆայից մեկ ժամ դուրս վրա հասավ նրանց չար ճակատագիրը: Նրանց ուղեկցող թուրք սպան երկուսին էլ գնդակահարեց: Ուրֆայի քաղաքային բժիշկը ձիով շտապ տեղ հասավ և մահվան վկայական տվեց: Ըստ այդ վկայականի՝ երկուսն էլ իրը թե մահացել էին տիֆից: Ինչո՞ւ էր այս ղեպքում այդքան մեծ կարևորություն տրվում նման բժշկական փաստաթղթի: Մարդիկ ասացին, որ դա արվեց նրանց կյանքի ապահովագրության մեծ գումարների պատճառով, որոնք կառավարությունն ուղում էր յուրացնել:

Ուրֆայում արդեն հունվարից գործող ուազմական դատա-

բանը Հուլիսին փոխարինվեց մեկ ուրիշով: Առաջինի անդամ-ները ուրֆացի թուրքեր էին և այդ իսկ պատճառով Հայերի դեմ բավարար խատություն չէին բանեցնում: Նոր նշանակ-վածները դրսի թուրքեր էին և իրենց գործը՝ երիտթուրքերի հասկացողությամբ, ավելի լավ էին կատարում:

Համատարած բռնագրավումների ժամանակ Հայերի տնե-րում գտնված փաստաթյթերի ստուգման համար ուղղմական դատարանը կարիք ուներ երկու թարգմանչի: Այդ պաշտոնին նշանակվեցին ասորի բողոքական Աղնաթեոսը (*Aghnaththeos*) և ասորիների բողոքական պատվելի Եփրեմը: Առաջինը չզի-տեր ոչ մի եվրոպական լեզու, միայն Հայերեն: Վերջինս, սա-կայն, իր մայրենի Հայերենի կողքին խոսում էր նաև թուրքե-րեն, անգլերեն և մի քիչ Փրանսերեն: Բայց Հատկանշականն այն էր, որ այդ պատվելին՝ լինելով Հայ, ստիպված Համագոր-ծակցում էր թուրքերի հետ: Հայ ժողովրդի ղեմ կազմակերպ-ված եղեռնագործության ընթացքին դատավորներին կցվել էր մի Հայ, որը պետք է մասնակցեր իր ժողովրդի բնաջնջման պաշտոնական ծրագրի իրազորմանը: Թուրքերին շատ բնո-րոշ արարք: Պատվելի Եփրեմը կառավարության կողմից, ան-շուշտ, որպես Հայ չէր դիտվում: Քանի որ նա ասորի համայնքի կղերական էր, նրան Համարում էին ասորի: Բայց որպես փափկանկատ քրիստոնյա նա խոստովանեց ոստիկանապե-տին, որ ինքը Հայ է: Վերջինս Հովորտաց նրա վրա՝ պատվի-րելով, որ լեզուն իրեն քաշի, եթե կյանքը թանկ է նրա Համար:

Հուլիսին, երր արդեն գիտեին, որ ուրֆաՀայության Համար նույնպես Հասնում էր օրհասական պահը, կանանց դրդմամբ որոշ Հայ տղամարդիկ անցան եռանդուն քարոզչության, ըստ որի՝ Հայերի կյանքը փրկելու միակ միջոցը իսլամի ընդունումն էր: Սակայն այդ քարոզիչները շատ բանի չհասան: Հայերի մնշող մեծամասնությունը նախընտրում էր մահը, բան ատելի դավանափոխությունը:

Արդեն Հունիսի վերջին Ուրֆա էին Հասել տեղահանված-ների առաջին քարավանները Հյուսիսից՝ Խարբերդից և էրդ-րումից: Այդ ողորմելիներից ով որ կարողանում էր, թաքնվում էր քաղաքի քրիստոնյաների տներում՝ խուսափելու Համար անապատ ուղղվող երթից: Նրանք պատմում էին անցած ճանապատ հայության իրենց գլխին եկած փորձանքների մասին:

Ամենասարսափելին այն էր, որ Ուրֆա էին Հասնում միայն կանայք ու երեխաներ: Որտեղ էին մնացել այն տղամարդիկ, որոնք վստահարար եղել էին մարդկային այս շարասյունների ճանապարհ ընկնելու պահին: Դրա մասին ոչ մեկը չգիտեր, կամ ավելի ճիշտ՝ բոլորը գիտեին, սակայն կարծում էին, որ չնշելով զարհութելին, կանխվում էր իրականությունը: Իսկ իրականությունն այն էր, որ Հղփացած կառավարության ստոր գործակալները տղամարդկանց կանանցից անջատել էին և նրանց՝ Տավրոս լեռներում, Մալաթիայի ու Սամսատի միջև, գանգվածաբար սպանել: Խնչ ողբալի էին այդ կանայք, անպաշտպան մայրերն ու անօգնական երեխաները: Երանելինները նրանք էին, որ երթի ժամանակ մահանում կամ սպանվում էին:

Ուրֆայից նոր տեղահանումներ տեղի ունեցան Հուլիսի վերջերին: Սակայն այս աքսորականներին այլևս թույլ չէին տալիս ճանապարհ ընկնել իրենց սայլերով, նրանք պարտավոր էին ոտքով կտրել ճանապարհը դեպի տափաստան: Ովքեր քշվում էին դեպի Հյուսիս, այսինքն՝ դեպի Դիարրեքիր, Հեռու չէին գնում. քաղաքի պարիսպներից դուրս, վրա էր Հասնում թուրքական յամաղանը: Իսկ նրանք, ովքեր քշվում էին դեպի նահանգի մայրաքաղաքը (Հալեպ), գոնե մի փոքր Հույս ունեին, որ մի կերպ կենդանի տեղ կհասնեին:

Մինչև օգոստոսի սկիզբը Ուրֆայում հայերի Հոգեոր առաջնորդը դեռ կատարյալ աղատություն էր վայելու: Նա ինձ իր մոտ հրավիրեց, որպեսզի նկարագրի ներկա վիճակի աղետալիությունը: «Ամեն ինչ վերջացած է: Իմ ժողովուրդը դոհասեղանի վրա է: Մեկը չկա, որ ինձ օգնի: Բոլոր հայերս մահվան զավակներ ենք: Ինձ էլ կյանքի միայն մի քանի օր է տրված»:

Այս բառերն արցունքների տարափի տակ արտասանում էր կոտրված մի մարդ: Նա պաղատազին խնդրեց ինձ, որ գնամ Եվրոպա և ջանամ Համոզել եվրոպացիններին, որ մի բան անեն մահվան դատապարտված այս ժողովրդի համար: Նա Հույս ուներ, որ եթե եվրոպական պետությունները Հավաստի տեղեկություններ ստանային Հայ ժողովրդի սարսափելի իրադրության մասին, քայլեր կձեռնարկեին նրա վիճակը բարելավելու համար: Ուրեմն սկսեցի լրջորեն մտածել նման ճանապարհորդության մասին: Բոլորից առաջ ես կդնայի Հայ ժողովրդի

Հավատարիմ բարեկամ, պարոն դ-ր Լեփախուսի մոտ, քանի որ գիտեի, որ եթե Եվրոպայում մեկը ի վիճակի էր այս Հարցում ինչ-որ բան անել, ապա դա նա է: Այդպես էի մտածում խորհրդածությունների այդ պահին: Սակայն ճանապարհորդության Համար չունեի որևէ դրամական միջոց: Եթե անզամ թուրքերը թողնեին ինձ Եվրոպա մեկնել, մի բան, որ խիստ տարակուսելի էր, ես արդեն պիտի ուշացած տեղ Հասնեի: Բացի դրանից, իրադարձություններն իրար Հաջորդում էին անասելի արագությամբ: Խակ Հետազա ամիսների փորձը ցույց տվեց, որ Ուրֆայում մնալով ես տարաբախտ այս ժողորդի մնացորդներին ավելի օգտակար եղա, քան եթե Համարձակվելի Եվրոպա մեկնել՝ քիչ կամ ոչինչ ձեռք բերելու Հեռանկարով:

Հուլիսյան վերջին օրերին զարհութելի լուրեր տարածվեցին: Պատմում էին, որ մորթում են տղամարդկանց և 12 տարեկանից բարձր տղաներին:

Օգոստոսի 10-ին Ուրֆայում Հայտնվեց երկու բարձրաստիճան թուրք, երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներ՝ Աշմեղ և Խալիլ բեյերը: Նրանցից մեկը ուազմական գործերի նախարար էնվեր փաշայի ազգականն էր: Նրանց մասին պատմում էին, որ Կոստանդնուպոլիսից դուրս գալով, նրանք ոտքի տակ են առել ամբողջ Անատոլիան, որպեսզի ամենուրեք կազմակերպեն Հայ տղամարդկանց և դեռահաս տղաների սպանությունը և կարգադրեն Հետևում մնացած կանանց ու երեխաների տեղաշարժը: Ուրֆահայությունն էլ այժմ հանձնված էր այս երկու դաշիճների ձեռքը: Ուրֆայի խեղճ ժողովուրդը շուտով զգալու էր այն բոլոր արհավիրքները, ինչ որ Հայերն զգացել էին այլ վայրերում: Այդ երկու երիտթուրքերի առաջին գործը եղավ Ուրֆայի բանտերում ղեռ մնացած բազմաթիվ Հայերի տեղահանումը: Աշմեղ ու Խալիլ բեյերը դիրքավորվելով որպես վերակացուներ՝ ազատորեն շրջանցում էին Ուրֆայի իշխանություններին և գործում այնպես, կարծես իրենք էին տեր ու տիրականները: Քաղաքի Հայերը դիմեցին նրանց խնդրելով, որ էվակուացվող բանտարկյալները չալեալ տարվեն, և ոչ թե Դիարրեքիր: Մեծ գումարների դիմաց այդ երկուսը խոստացան նրանց խնդրանքը կատարել, և օգոստոսի 11-ի երեկոյան՝ որպես վճար, ստացան 60.000 ֆրանկ: Այսուհանդերձ՝ Հաջորդ առավոտյան բան-

տարկյալները քշվեցին Դիարբեքիրի ուղղությամբ, իսկ մեկ օր չանցած Ուրֆայում հայտնի դարձավ, որ նրանցից ոչ մեկը ողջ չի մնացել:

6. Աշխատանքային գումարտակների մաքրագործումը

Վերջին ամիսների ընթացքում թուրքերին հաջողվել էր քաղաքի հայերից աստիճանաբար դուրս տանել մոտ 1000 տղամարդ և նրանց օգտագործել քաղաքի մերձակայքի ճանապարհաշինության մեջ՝ որպես աշխատանքային գումարտակի զինվորներ: Գումարտակներից մեկը աշխատում էր Կարաքյուփիում, Ուրֆայից մեկ ժամ հյուսիս, մեկ ուրիշը՝ Ուրֆայից հինգ ժամ հարավ գտնվող Կուղեմայում: Այդ մարդիկ այնքան լավ աշխատեցին, որ արագորեն կառուցվեցին ճանապարհի նշանակալից հատվածներ: Այն ժամանակ էր, որ երկու երիտթուրքերը կարգադրեցին աշխատանքային այդ գումարտակների սպանդը: Նախ՝ Հերթը Կարաքյուփիինն էր: Այնտեղի հայերից մեկը կարողացել էր փրկվել: Դեպքի մանրամասները ես նրանից եմ լսել: Թողնում եմ, որ նա անձամբ պատմի.

«Մի քանի շաբաթ ի վեր աշխատում էի մոտավորապես 400 հայրենակիցներիս հետ Կարաքյուփիի ճանապարհը կառուցող աշխատանքային գումարտակում: Օգոստոսի 15-ին մեր զինվորներից երկուսը առանց թույլտվության գնացել էին Ուրֆա: Երբ հաջորդ օրը նրանք գումարտակ վերադարձան, հենց մեր վրանի մոտ նրանց վրա կրակ բացեցին քրդական Կարաքյուփի գյուղի բնակիչները: Մեկն անմիջապես մահացավ, մյուսը միայն վիրավորվեց և կարողացավ՝ մեր վրանների տակ պատսպարվելով, փրկվել: Նույն օրվա երեկոյան մեզնից 180 հոգու՝ անուններով կանչեցին և կարգադրեցին պատրաստ լինել՝ նույն գիշերը ճանապարհ ընկնելու, որպեսզի մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող ճանապարհի մի հատված թնդանոթների համար անցանելի դարձնենք: Ընթրիքից հետո մեզ հրամայեցին նվազել ու երգել, մի բան, որ հաճախ էինք անում, քանի որ դա մեր զինվորական կյանքի միակ ուրախությունն էր: Ժամը 9-ին հնչեց հանգստի փողը: Երկու ժամ չանցած ճանապարհ ընկանք: Մի սայլ բեռնված էր անհրաժեշտ

գործիքներով: Մեզ ուղեկցում էին մի քանի թուրք ժանդարմ-ներ, որոնք մեզ մշտապես հսկում էին ճանապարհների շինա-րարության ժամանակ: Երկու ժամ քայլելուց հետո կանգ առանք, մեզ թույլ տվեցին զլանակ ծխել: Մինչ այդ պահը դեռ գաղափար չունեինք, թե մեզ ինչ էր սպասում: Որ մեր ժո-ղովրդի ճակատագիրը օրեցօր վատթարանում էր, արդեն վա-դուց գիտեինք: Զէ՞ որ մենք ամեն օր աշխատանքի ժամանակ տեսնում էինք մեր մոտով անցնող տեղահանվածների երկա-րաձիգ քարավանները, հաճախ էլ ստիպված էինք լինում թա-ղել մոտակայքում սպանված հայերի դիակները: Հազիվ էինք մի քառորդ ժամ հանգստացել, երբ մեզ մոտեցան քաղաքից եկող մոտ 40 ձիավոր ժանդարմներ: Նրանց հետ էին իրար շղթայված 15 հայեր: Ժանդարմները մեզ շրջապատեցին: Ապա հրաման եկավ մեզ նույնպես կապկապել: Այդ ժամանակ հաս-կացանք, որ մեր վերջը հասել է: Ես իմ ընկերներին հայերենով շնչացի, որ թույլ չտան իրենց կապել: Սակայն քանի որ հրա-ցանները լցրել էին մեր աչքի առաջ, նրանք մտածեցին, որ դի-մադրելն իղուր է: Ի վերջո ոճրագործների պարանը չբավարա-րեց: Այդպիսով մեզանից մոտ 60 հոգի, այդ թվում և ես, մնա-ցինք չկապված: Ապա մեզ հրամայեցին շարունակել մեր երթը մահվան ճանապարհով: Առավտոյան հասանք Եղիկույու: Քրդական այս գյուղում մեզ բաժանեցին տարրեր տների վրա: Ինձ և մյուս չկապված ընկերներիս տարան մի մեծ բակ, որտեղ խիստ հսկողության տակ էինք: Կեսօրից առաջ քաղաքից եկան մի քանի վատահամբավ թուրքեր և մեզ զննեցին: Հավա-նարար նրանք պատրաստվում էին մասնակցել հրաձգու-թյանը: Մինչ այդ արդեն կեսօրն անցել էր, երբ հանկարծ հնչեց հրամանը՝ ոտքի:

Խիստ հսկողության տակ մեզ տարան գյուղից դուրս: Այն-տեղ կիսված էր հագուստեղեն, որն իսկույն ճանաչեցինք որ-պես մեր ընկերներինը: Այժմ մեզ հրամայեցին հանել մեր հա-գուստները: Թողեցին մնալ միայն շապիկով: Ապա արյունոտ պարաններով մեզ երկու-երկու կապեցին: Դեռ հազիվ էին դա ավարտել, երբ հնչեց երթի հրամանը: Մի քանի րոպե քայլելուց հետո, անցանք սպանված մեր ընկերների՝ դեռ հոգեվարքի մեջ ցնցվող մարմինների կույտի մոտով, որից հետո մեզ հանեցին ժայռի մի ելուստի վրա: Այսեղ ժանդարմներն ու քաղաքից

նրանց միացած թուրքերը այսպանում էին մեզ՝ կոչելով «պետության դավաճաններ»:

Նախ քանդեցին առաջին երկուսի կապերը ու հրամայեցին իրար Հետևեց ժայռից ցած նետվել, նախապես անցնելով երկար դաշույններով զինված երկու ժանդարմների միջով, որոնք զուհերին դանակի լրացուցիչ հարվածներ էին հասցնում: Երբ Հերթը հասավ ինձ, ես կարողացա աննկատելիորեն քանդել ընկերոջս հետ ինձ կապող պարանը, և երբ մեզ երկուսի հրաման տրվեց ցած նետվել, արագ վերցրեցի մի մեծ քար ու հարվածեցի ժանդարմներից մեկի կրծքին, այնպես որ նա գետին ընկապէ: Էլ չսպասեցի, որ մյուս ժանդարմն ինձ դանակահարեր, այլ անվնաս, արագ նետվեցի ժայռից: Իմ Հետևեց կրակեցին, բայց վրիպեցին: Ժայռի ելուստի տակ գետնին պառկած՝ ժամանակավոր պատսպարան գտա:

Իմ 60 ընկերներին ժայռից ցած զյորելուց հետո, ժանդարմներն ու թուրքերը իջան ստուգելու, թե մահացու գահավիժումից հետո ով է դեռ կենդանի մնացել: Յուրաքանչյուր զու՝ կապված ոտքերով, կույտից առանձնացվեց: Կացնի հարվածներն ու առանձին կրակոցները «Հոգացին», որ ոչ մեկը չկարողանար մահից խուսափել: Խսկ ես՝ պառկած երեսնիվայր, մեռած էի ձևանում: Երբ ինձ քարշ տալով հեռացնում էին, ժանդարմներից մեկն ասաց. «Սա կարծես թե էն շունն է, որ դիմադրեց»: Անմիջապես իմ վրա կրակեցին և ես զգացի, թե ինչպես է տաք արյունը թիկունքիս վրայով իջնում: Երբ տեղանքն ամրողջապես դիակներից մաքրվել էր և դահիճները պատրաստվում էին հեռանալ, նրանցից մեկն ասաց, որ զոհերից մեկը դեռ չնշում է: Վայրկենապես ծոծրակիս կացնի մի հարված ստացա, քանի որ խոսքն իմ մասին էր:

Վերջապես ոճրագործների ումակը բռնեց վերադարձի ճանապարհը: Քիչ անց հայտնվեց մի քուրդ՝ գոռալով. «Բեղո՞, Բեղո՞»: Բեղոն մերոնցից մեկն էր, որը դեռ ողջ էր և այդ ճայնի վրա թեթևակիորեն շարժվեց: Քուրդը շնչաց նրան, որ թաքնված մնար մի մեծ քարի ետևում, քանի որ ցերեկով նրան օգնելն անհնար էր: Թեեւ Բեղոն ծանր վիրափորված էր, քուրդը, որը նրա գործընկերն էր, ուզում էր փրկել նրան: Զգիտեմ, թե դա նրան հաջողվեց, թե ոչ: Երբ քուրդն այդտեղից հեռացավ, փորձեցի ոտքի կանգնել: Ի վերջո պարզվեց, որ մերոնցից 15

մարդ, թեև բոլորն էլ ծանր վիրավորված, բայց տակավին շարժունակ էին: Խորհրդածեցինք, թե ինչ կարելի էր անել: Ես առաջարկեցի՝ նոյն գիշերը վերադառնալ քաղաք: Սակայն մեծ մասը դրա ուժը չուներ: Այսպիսով, այդ գիշերը միայն երեք հոգի ճանապարհ ընկավ: Մոտակա մի պարտեզում սեխ ուտելով, փոքր-ինչ ամրապնդվեցինք:

Գիշերով մի քանի ժամ քայլելոց հետո, լսեցինք, որ մեզ ընդառաջ մարդկային մի մեծ քաղմություն է զալիս: Պատրսպարվեցինք մոտակա խաղողի մի այգում: Ովքե՞ր էին մեզ ընդառաջ եկողները: Ավա՞ղ, ճանաչեցինք նրանց: Մեր գումարտակի 200 ընկերներն էին, որոնք մնացել էին Կարաքյովիրիում: Նրանք գնում էին մեր անցած ճանապարհով:

Այդ գիշեր ես այլևս չկարողացա առաջ շարժվել, իմ երկու ուղեկիցների ուժն էլ սպառվել էր, և մենք որոշեցինք թաքնվել այգում, խաղողի վազերի տակ: Միայն հաջորդ գիշերն էր, որ կարողացանք Ուրֆա հասնել: Դա օգոստոսի 19-ին էր: Փողոցներում տեսանք փուփած դիմակների: Ուրեմն այստեղ նույնպես ջարդեր էին տեղի ունեցել: Երկար կանգնած մնացի իմ տան առաջ, ծեծում էի դուռն ու ձայն տալիս: Վերջապես կինս ձայնս ճանաչեց ու բաց արեց դուռը»: Այսքանը հայի վկայության մասին:

Աշխատանքային մյուս գումարտակին ևս, որը կուղեմանում էր գործում, ավելի լավ բախտ չվիճակվեց: Դրա կործանման օրը օգոստոսի 22-ն էր: Ցավոք, հետագայում այլևս այդ գումարտակից ոչ մի հայի չեմ հանդիպել, թեև լսել եմ, որ այնտեղից ևս մի քանիսը կարողացել են փրկվել: Կուղեմանի այդ գումարտակում եղել են նաև ասորիներ: Նրանցից մեկին պատմել տվեցի, թե ինչ էր այնտեղ տեղի ունեցել. «Երեկոյան,- այսպես սկսեց իր պատմությունը ասորին,- քաղաքից ժամանել էր ժանդարմների մինչև ատամները զինված մի մեծ խումբ: Նրանք կարգադրեցին անհապաղ բաժանել հայերին ասորիներից: Այնուհետև հայերին իրար կապեցին և տարան քաղաքից մոտ քառորդ ժամ հեռավորության վրա: Շուտով լսվեցին կրակոցներ: Հեռվից երեսում էր միայն մի խուռն ամբոխ: Սակայն մեզ համար պարզ էր, որ այդ պահին մորթում էին մեր հայ ընկերներին: Շրջակա արարական գյուղերից տեսանք արար ձիավորների, որոնք ուղղվում էին դեպի այդ

ամրոխը: Կրակոցների արանքում լսում էինք նաև արար կանանց բարձրածայն «*Lilililili*» կանչերը: Մեզ ծանոթ էին այդ կանչերը, որով հետև դրանք կովող մահմեղականների շրջանում սովորական են: Այսպես են սովորաբար մահմեղական կանայք ոգեշնչում իրենց տղամարդկանց քրիստոնյաների ջարդերի միջոցին: Մի քիչ հետո տեսանք դեպի մոտակա լեռները փախչող մի բազմություն, որի վրա թուրքերը կրակում էին: Միայն մութն ամբողջովին ընկնելուց հետո էր, որ կրակոցները դադարեցին: Երբ ժանդարմները զյուղ վերադարձան, մենք՝ ասորիներս, մտածեցինք, որ այժմ հերթը մեզ էր հասնելու: Մեզ հրահանգեցին՝ լապտերներ բռնած գնալ սպանդի հրապարակի ուղղությամբ: Տեղ հասնելով հրաման ստացանք՝ դեռևս ցնցվող դիակների կույտի միջից գտնել մի թուրք սպայի, ինչպես նաև երկու ժանդարմների դիակները և դրանք տանել զյուղ: Հաջորդ առավոտյան երեք թուրքերի դիակները մի սայի վրա բարձած, բերվեցին քաղաք: Մեզ նաև հանձնարարեցին սպանված Հայերին նետել մի խոր ջրհորի մեջ: Վերջիններիս մեջ կային շատերը, որոնք դեռ չնշում էին, նրանցից մեկը նույնիսկ ի վիճակի էր քայլելու, սակայն նա իր կամքով նետվեց ջրհորը: Երբ բոլոր մեռյալներն ու կիսամեռները սուզվել էին, մեզ հրահանգեցին քարապատել ջրհորը և հող ու մոխիր կիտել վրան:

Թե երեկ այստեղ ինչ էր տեղի ունեցել, մենք տեղեկացանք մեզ հսկող ժանդարմից: Երբ ջարդն սկսվել է և հերթը հասել կամուրջ զյուղից մի քանի ամրակազմ Հայերի, նրանք ազատ մնացած ձեռքով քարեր են նետել ջարդարարներից հրամաններ արձակող ժանդարմի վրա: Վերջինս վայր է ընկել: Հայերը վայրկենապես խել են նրա ձեռքից դանակը և կտրել իրենց պարանները: Ապա ժանդարմից վերցնելով լցված հրացանը, վերջ տվել մի սպայի և երկու ժանդարմի կյանքին: Հաջորդ վայրկյանին, սակայն, այդ Հայերն իրենք նույնպես սպանվել են ուրիշ ժանդարմների կողմից: Այդ անսպասելի միջադեպից օգտվել են հերթի դրված Հայերից շատերը, որոնք կտրելով իրենց՝ իրար հետ կապող պարանները, մեծ թվով փախել են դեպի մոտակա լեռները: Ահա սա էր այդ փախչող խումբը, որ մենք տեսել էինք հեռվից»:

7. Օգոստոսի 19-ը

Օգոստոսի 19-ին թուրք ոստիկանները քաղաքի Հայկական թաղամասի տներում խուզարկություններ սկսեցին: Փնտրում էին դասալիք հայերի: Այդ ընթացքում մի թաքստոցից Հանկարծ ոստիկանների վրա կրակեցին: Ոստիկաններից մեկն ընկավ, մյուս երկուսը փախան և աշաղանզեցին ոստիկանատուն: Կոստանդնուպոլիսից եկած կոմիտեի երկու անդամները հենց որ տեղեկացան դեպքի մասին, Հրամայեցին ամբոխին. «Կորչեն զյավուրները (անհավատները), Էլ ի՞նչ եք Հապաղում»:

Այդ կոչն ընդունվեց մեծ հոժարությամբ: Ով մոտը զենք չուներ, արագ շտապեց տուն՝ բերելու, ով ուներ՝ անմիջապես իր մասնակցությունը բերեց քրիստոնյաների կոտորածին՝ նշան առնելով հենց առաջին պատահածի վրա: Հիվանդանոցից տեսնում էի, թե ինչպես էին քրդերը շտապում իրենց թաղամասը, որը, ինչպես և մեր հիվանդանոցը, գտնվում էր քաղաքից դուրս, մի քանի ակնմարթ անց տներից դուրս էին գալիս զինված և վազում շուկայի կողմը: Արևի մայրամուտից առաջ նրանք պետք է Հնարավորին չափ չատ քրիստոնյաներ ուղարկեին մահվան գիրկը: Սակայն, բարեբախտաբար, Հայերի մեծամասնությունը, լսելով առաջին կրակոցները, անմիջապես փակել էին շուկայի իրենց վաճառանոցները: Ուրիշներին էլ բարեմիտ մահմեղականներ էին ստիպել անհապաղ տուն գնալ: Ցագոք, սակայն, բոլորը չէ որ ժամանակին տեղեկացել էին իրենց սպառնացող վտանգի մասին. ով տունդարձի ճանապարհին էր, դրա ականատեսը եղավ նախքան իր տուն հասնելը: Նողկալի մարդարու էր, զարչուրելի ջարդ:

Դերձակ Գևորգը իր չորս աշկերտների հետ շուկայի իր խանութում այնքան զրադված էր իր գործով, որ չէր էլ նկատել քրդերի ու թուրքերի ահարկու նախապատրաստությունները: Նրա աշխատատեղը գտնվում էր շուկայի ծայրամասում: Նրան բռնելու համար ոհմակը նախ պետք է հասներ այնտեղ: Բայց երկար չտեսեց, և ահա դահճները վրա հասան: Գեռ նախքան վտանգի լրջությունը գիտակցելը, սուր դանակը կտրել էր Գևորգի վիզը: Նրա չորս աշկերտներից և ոչ մեկը չկարողացավ փախուստ տալ: Ոչ մեկի մտքով չանցավ՝ գոնե-

մկրատով պաշտպանվել: Արյուն էր Հորդում դերձակի խաղաղ արհեստանոցի շեմով: Հաջորդ օրը ևս փողոցում արյան լճակի ականատեսը եղա: Իսկ հինգ մեռյալների մարմինները դեռ գետնին փոված էին ամբողջովին թալանված խանութում: Այդ օրը սպանվեցին նաև շատ ասորիներ, քանի որ մարդասպաններն ասորիների ու Հայերի միջև տարրերություն չէին զնում. երկուսն էլ քրիստոնյա էին, ուրեմն՝ «անհավատ»: Երբ փողոցներում այլևս քրիստոնյա չէր մնացել, ամրությունը շտապեց Հայկական թաղամաս: Այդ ընթացքում վրա էր հասել գիշերը: Հայերի տներից հնչեցին մի քանի կրակոցներ: Դրանով ավարտվեց այդ օրվա կոտորածը:

Մթնշաղ էր, ևս մնացել էի հիվանդանոցում, փոխանակերեկոյան սովորականի պես ձիով մեկ ժամ հեռավորության վրա գտնվող խաղողի այգի՝ ընտանիքիս մոտ գնալու: Այսօր Հայերը գերմանական միսիոներական հիվանդանոցում իմ պաշտպանության ու սփոփանքի կարիքն ունեին:

Միսիոներական հիվանդանոցի մոտ կանգնած էր մի մեծ, ամրոցանման տուն, որը պատկանում էր մաագործ Շիկոյի բազմանդամ ընտանիքին: Շիկոն ուներ վեց չափահաս որդի, որոնցից երկուսին ուղարկել էին Դիարրեքիրի ուղղությամբ դեպի մաշ: Այդ երեկո քուրդ խաժամումը, երբ վերադառնում էր շուկայում և քաղաքում կատարած իր արյունոտ գործից, Հարձակվեց նաև այդ տան վրա: Սակայն երկու հզոր և ամուր կողպված դարպասները դիմադրում էին ասպատակներին: Հրոսակախումբը գիտեր, որ տղամարդկանցից միայն ծեր Շիկոն էր տանը, իր՝ նույնքան ծեր եղբոր Հետ: Բայց քրդերն այնքան բարձր էին գոռում, որ մենք հիվանդանոցում սոսկումով էինք լսում նրանց: Նրանք պահանջում էին ոչ միայն ծերունիներին, այլև տանը եղած բոլոր կանանց, որպեսզի գիշերվա ընթացքում բռնարարեն: Նրանք ամրող ուժով ճռում էին՝ չորս կողմ մոլի անեծքների ու լուտանքների տարափ թափելով:

Ընդունեցի նահանգապետի ուղարկած երկու ժանդարմներին, որոնց խնդրել էի մեր հիվանդանոցի պաշտպանության համար: Նրանց Հետ ուրիշ ժանդարմներ էլ եկան քաղաքի այս թաղամասը: Նրանց բոլորին խնդրեցի՝ Հատուկ Հոգ տանեն, որ լուսություն իշխի: Նրանք այդպես էլ արեցին և քշեցին արյան

ու բիրտ կրքերի ծարավ ամբոխին:

Հաջորդ առավոտ ծերունի Շիկոյին իր տան առաջ մեռած գտա: Նա իրեն զոհել էր Հանուն յուրայինների՝ այն Հույսով, որ Հանգիստ կթողեն կանանց ու երեխաններին: Մյուս օրը եղբորը, որ թաքնվել էր, անձամբ Հանեցի մի նեղ թաքստոցից:

Մերոնց մոտ՝ խաղողի այգի գնացի միայն, երբ քաղաքը և մեր տան շրջակայրը Հանդարտվել էին: Բարերախտարար այգում մերոնք ոչինչ չէին լսել քաղաքի փողոցներում կատարվածի մասին: Սակայն Հաջորդ օրը, վաղ առավոտյան, նախքան քաղաք վերադառնալս, Հարեւան խաղողի այգում փոխադարձ հրաձգություն սկսվեց: Քաղաքից ձիավորներ էին եկել և ընկել Հարեւան այգում պատսպարված Հայերի ետևից: Հետո իմացա, որ փնտրում էին Կարաքյոփրիից փախած Հայերին: Նրանց սպանեցին: Կարելի է պատկերացնել վախն այն Հայերի, որոնք իմ այգում էին: Մեր այգում ապաստան գտած Հայերի թիվը ևս դեռ այն ժամանակ բավական մեծ էր: Բոլորն ինձ աղաքում էին՝ ինչ էլ լինի, այժմ մենակ չժմողնել իրենց: Սակայն իմ ներկայությունը քաղաքում շատ անհարժեշտ էր: Առանց ինձ ինչպե՞ս Հիվանդանոցում գլուխ Հանեին, և ի՞նչ կլիներ, եթե իմացվեր, որ ես տեղում չեմ:

Մինչ այդ նկատեցինք, որ ժանդարմները փախստականներին սպանելուց հետո քաղաք էին վերադարձել: Այսպիսով, առայժմ խաղողի այգում թաքնված իմ մարդկանց Համար վախենալու ոչինչ չկար: Իսկ երբ Հիվանդանոց Հասա, այնտեղ տեսա Շիկոյի տան բոլոր բնակիչներին: Նրանք ուզեցին մնալ Հիվանդանոցի պաշտպանության տակ: Ես չկարողացա նրանց ետ ուղարկել: Հետեւապես նրանց տեղավորեցի Հիվանդանոցում և իմ անձնական բնակարանում:

Կեսօրից առաջ այցելեցի թուրք նահանգապետին: Նրան շնորհակալություն Հայտնեցի, որ այդպես արագ ընդառաջել էր Հիվանդանոցը պաշտպանելու իմ խնդրանքին: Ապա Հայցեցի տևական պաշտպանություն, մինչև ժամանակները կրկին Հանդարտվեին: Արտահայտեցի նաև ապրումներս նախորդ օրվա իրադարձությունների կապակցությամբ: Նահանգապետը նույնպես ափսոսանք Հայտնեց այդ պատահարների կապակցությամբ և ասաց, որ նրան այժմ Հաջողվել է քաղաքում

Հանգիստը վերականգնել ու հավաստիացրեց, որ նման դեպքեր այլևս չեն կրկնվի:

Այդ օրն իրոք քաղաքում հանգիստ էր: Զարդը չվերսկսվեց, սակայն ահարեկված քրիստոնյաներին չէր կարելի մեղաղբել, որ նրանցից ոչ մեկը այդ նույն օրը և զրան հաջորդող օրերին տնից դուրս չէր գալիս: Երեկոյան կնոջս հետ գնացինք ասորիների թաղը՝ այնտեղ մեր բարեկամներին միսիթարելու: Սակայն ստիպված եղանք քայլել դիակների վրայով: Փողոցներում օղն արդեն սկսել էր գարշահոտությամբ լցվել: Չնայած թուրքերը քրիստոնյաներից պահանջում էին դիակները թաղել, նրանցից ոչ մեկը չէր համարձակվում դուրս գալ: Ի վերջո թուրքերն ստիպված եղան իրենք դիակները հավաքել: Պարաններով նրանց երեսնիվայր քարշ էին տալիս փողոցներով և թաղում ընդհանուր գերեզմանում:

Կարելի էր ենթաղրել, որ Հայկական թաղամասում որոշ վիրավորներ կային, որոնք չէին համարձակվում տնից դուրս գալ: Երրորդ օրը մեր կլինիկա ներկայացան վիրավոր Հայ կանայք: Իսկ վիրավոր տղամարդիկ եկան միայն մի քանի օր անց:

Զարդի օրը փողոցում երիտթուրք Ահմեդ բեյի ձեռքն ընկավ վարպետ դերձակ Հակոբը, որն աշխատում էր թուրքական արհեստագործական դպրոցում: Հակոբը նրա ոտքերն ընկավ և խնդրեց խղճալ իրեն: Բեյը հանեց ատրճանակն ու նրան մի կրակոցով գետին փոեց՝ հետեյալ բառերով. «Ահա՝ քեզ խղճալ, Հայ շուն»:

Դեղատան մեր օգնականը, որն օգոստոսի 19-ին, նախքան զրոհի սկիզբը, նամակատուն էր գնացել, չէր վերադարձել: Ենթաղրում էինք, որ նա էլ է զոհ գնացել: Սակայն հաջորդ առավոտ նա հայտնվեց: Թուրքը, որը թաքցրել էր նրան իր տանը, անձամբ բերեց:

Հաջորդ օրերին մեր տներում թաքնված հայերից ոչ մեկը չէր ուզում տնից դուրս գնալ, չնայած կառավարությունը հայտարարել էր, որ հայերին ոչինչ չի սպառնում: Այդ պատճառով անհրաժեշտ գնումները ինքս էի անում կամ մահմեղական-ներին էի ուղարկում:

Պետք է հայտնի լինի, որ Ուրֆայում, ինչպես գրեթե ամենուրեք թուրքական պետության մեջ, արհեստագործությունը համարյա բացառապես հայերի ձեռքում էր: Ուրֆայի կառա-

վարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց, գոնե առաջիկա օրերին հաց ունենալու համար, հայ հացթուխներին իրենց տներից ու թաքստոցներից դուրս բերել: Ուստի հաջորդ շաբաթներին հացի ամեն խանութի առաջ մշտապես մի ժանդարմ պահակ էր կանգնում ի պաշտպանություն հայ հացթուխների: Խսկ այլ մասնագիտությունների հայեր, որոնց դուրս գալը պարտադիր չէր, փողոցում շաբաթներով չերևացին:

8. Տարագիրներ հյուսիսից

Ուրֆան դարձել էր հյուսիսից՝ Սվագի, էրզրումի և Մամուրեթ ու Ազիզ նահանգներից եկող հարյուր հաղարավոր դժբախտ տարագիրներից բաղկացած քարավանների անցատեղին, որը տանում էր դեպի Միջազգետքի տափաստանները: Գնալով ավելի ցավալի ու անհույս էր դառնում Ուրֆա հասնող այդ քարավանների մարդկանց կերպարանքը: Տարագիրների մեջ այլևս տղամարդիկ չկային. շարասյունները բաղկացած էին միայն կանանցից ու 4-ից մինչև 12 տարեկան երեխաներից: Նկարագրություններն այն տարագիրների, որոնց հաջողվում էր ճամբարից ծլկել և մեզ մոտ կամ Հայկական թաղամասում ապաստան գտնել, այնպիսիք էին, որ նույնիսկ այն անասելին, որի համար լեզուն բառեր չուներ, իր ամբողջ զարհութելիությամբ պատկերվում էր լաղի աչքերի առաջ: Նրանք հաղարներով միաժամանակ ճանապարհ էին ընկնում, սակայն այդ հաղարներից միայն մի փոքր խումբ էր Ուրֆա հասնում: Եվ սա կանոն էր բոլոր շարասյունների համար: Տարագիրների յուրաքանչյուր քարավան իր հետ տեղեկություններ էր բերում իրադարձությունների մասին, որոնց հրեշտավորությունը շատ հաճախ հնարավոր չէր զգայարաններով ընկալել:

Այս իրադարձությունները պետք է որ ի չիք դարձնեին ուրֆահայության բոլոր հույսերը, թե իրենք կարող էին այս բոլորից անմասն մնալ: Գիշերներն իրենց տներում զաղտնի ժողովներ էին անում, որպեսզի այդ անմիտիթար վիճակում իրենց անելիքների մասին խորհրդակցեին: Ինչպես խեղդվողը ձեռքը մեկնում է ծղոտի քարակ շուղին, այնպես էլ աշարեկված մարդկանց՝ որպես փրկության թեկուղ խարուսիկ պարան,

դեռ մնացել էր մեկ հույս. Անտանտի բանակները: Իրենց կարծիքով նրանք միակն էին, որ կարող էին փրկության հասնել: Խորհրդակցում էին, թե ինչ կարելի էր անել, սակայն երբեք որևէ որոշման չէին հանգում: Բայց և ո՞րն էր նրանց ելքը: Դիմադրության մասին չէր կարելի մտածել: Մատաղ տարիքի երիտասարդությունը վերացվել էր: Հատկապես օգոստոսի 19-ը նրանցից կրկին խլել էր ավելի քան 100 տղամարդ, գումարած կոտորված աշխատանքային երկու գումարտակները: Մերթ ընդ մերթ դրսից հանկարծ մի դասալիք էր հայտնվում: Այդ դասալիքները միշտ համոզում էին իրենց հայրենակիցներին՝ դիմադրություն ցուց տալ ամեն մի տեղահանման՝ դեռ նախքան սկսվելը:

Տեղահանության եղանակը լուսաբանելու համար, կցանկանայի այստեղ վերաբարդրել իրադարձություններն այնպես, ինչպես ինձ պատմել են տարագիր այն կանայք, որոնք այնուշետև մտել են մեր ծառայության մեջ:

1. **Վարդար Ղազանճյանը** Աղիամանից հաղորդում է. «Երբ հրաման եկավ մեզ՝ կանանց ու երեխաններին, արտագաղթել, մեր տղամարդկանց արդեն տարել էին և, ինչպես իմացանք՝ սպանել: Կանանց մի մեծ խումբ գնաց նահանգապետի մոտ՝ խնդրելու, որ մեզ չարտաքսեն, այլ տեղնուտեղը սպանեն: Մենք մեզ իրավունք վերապահեցինք գոնե մահվան այս ձեզ որպես ողորմություն աղերսելու, սակայն այդ չնորհը մեզ չտրվեց, պարտավոր էինք աքսորի ճամփան բռնել:

Մեր Աղիաման քաղաքից մինչև Եփրատ, Սամսատի մոտ կարելի է հասնել տասը ժամում: Սակայն մեզ դիտմամբ այնպես էին ծուռումուռ ճանապարհներով տանում, որ մարդկանց քարավանը այդ ճանապարհն անցավ տասը օրում: Մինչև Եփրատ ընկած ճանապարհին մեր երիտասարդ կանանցից ու աղջիկներից շատերն արդեն անհետացան: Առաջին երկու գիշերները մեզ հանգիստ թողեցին, սակայն հետո ամեն գիշեր մեզ ստիպում էին իրենց դեռահաս աղջիկներ հանձնել, որոնք հաջորդ առավոտ վերադառնում էին պատվազրկված: Մի անգամ ոմանք համարձակվեցին այդ անառակներին աղջիկների փոխարեն երիտասարդ կանանց տալ: Հաջորդ առավոտյան այդ խարեռությունն իրենց թույլ տված մայրերը սպանվեցին:

Քրոջս 12-ամյա աղջկան փրկելու համար, ղեմքը սևացրեցի անձանաչելի դարձնելու աստիճան, գիրկը տվեցի ծծկեր երեխա: Այսպիսառվ կարողացանք մեզ շրջապատող ժանդարմ-ներին ու քրոգերին խարել. նրանք քրոջս աղջկան երիտասարդ կնոջ տեղ դրեցին: Երբ Ուրֆա հասանք, արդեն երրորդ ծծկեր երեխան էր նրա գրկում, նախկինները հիվանդությունից ու քաղցից մահացել էին:

Եփրատի ափին ստիպված էինք երկար մնալ: Այստեղ մեր դրամը վերցրին, մեր պատիվը խլեցին: Ով չէր կարողանում դրամ տալ, նրան նետում էին գետը: Մի կնոջ, որից Հովս ունեին դրամ կորզել և չկարողացան, մարմինը պարանով կապկապեցին ու այդպես ջուրը նետեցին: Քիչ անց դուրս քաշեցին ջրից ու Հարցրեցին, թե հիմա ուզո՞ւմ է դրամը մեջտեղ հանել: Սակայն նա այլևս դրամ չուներ և նրան կրկին կապկապեցին ու նետեցին ջուրը: Այստեղ նրան հաջողվեց պարանից աղատ արձակվել ու ինքնակամ ալիքների մեջ սուզվել: Ի վերջո սպառվեց քարավանի սննդամթերքը: Միայն վաշխառուական գներով էինք կարողանում քրոգերից ուտելու մի բան ստանալ: Ճանապարհը Սամսատից այն կողմ մինչև Ուրֆա կարելի էր նույնպես անցնել 10 ժամում, սակայն մենք դրան հատկացրինք ութ օր: Աղիամանից դուրս եկանք 2000 Հոգով, Ուրֆա հասավ միայն 400 մարդ: Այդ 400-ից գրեթե բոլորը հիվանդ էին կամ սովահարությունից գտնվում էին մահվան ճիրաններում:

Ուրֆայում ես աղքականներ ունեի: Ուզում էի փախչել նրանց մոտ: Դրա համար Հարմար բոպե էի փնտրում քարավանից Հեռանալու: Դա ինձ հաջողվեց: Սակայն ճանապարհին մի թուրք ինձ բռնեց և ուզում էր մոտակա քարայրը քարշ տալ: Սարսափահար հանեցի փողի իմ վերջին փաթեթն ու տվեցի սրիկային՝ ասելով, որ այնտեղ 50 ոսկի կա: Ապշած նա բաց թողեց ինձ, և ես վաղեցի քարավանի ետևից: Իսկ փաթեթում ընդամենը 50 քառորդ միջիդիկ (արծաթե ֆրանկ) էր: Երբ հաջորդ օրերից մի օր մեռելներ թաղելու հրահանգ ստացա, ինձ հաջողվեց փախչել զերմանական միսիոներական հիվանդանոց:

Սակայն երբ հիվանդանոցի հայությունը նույնպես տեղահանվեց, վերստին բռնեցի աքսորի ճամփան: Մինչև Ակջեկալե

միսիոներական տներից հանված կանանց ու երեխաների հետ լավ էին վերաբերվում: Շուտով տիֆը շատերի համար դարձավ զթասիրտ փրկիչ: Սակայն ով որ չէր վարակվել, պարտավոր էր երթը շարունակել: Ով որ հիվանդանում էր ճանապարհին, մնում էր նրա եղրին պառկած. ոչ ոք նրանով չէր զրադգում:

Խմբի հետ ես նույնպես քայլում էի դեպի Ռազա: Զարհուրելի մի ճանապարհորդություն էր դա: Ոչ ուտեղու բան կար, ո՞չ խմելու: Շատ օրեր անց միայն, հեռվում նշմարվեց Ռազա քաղաքը: Հույս ունեինք այնտեղ գետը նետվել: Սակայն քաղաք չհասած՝ հանկարծ հրաման եկավ, որ մեզ թույլատրվում է Ռուբա վերադառնալ, սուլթանը մեզ ներում է չնորհել: Վերջին մի հուս շողաց մեր մահատենչ սրտերում: Սակայն քչերը ձգեցին մինչև Ակջեկալե: Այնտեղ ես հիվանդացա: Մյուսները հասան մինչև Ռուբայի մոտակայքը, սակայն հաղիվ քաղաքը հեռվից տեսանելի էր դարձել, նրանց կրկին ստիպեցին Ռազա վերադառնալ: Դա զարհուրելի էր: Երբ հիվանդությունից ուշքի եկա, տեսա, որ մի արարի տանն եմ: Ինձ շատ լավ էին խնամում, ու երբ կարողացա մի քանի քայլ անել, արարը վերցրեց ինձ և էշին նստեցրած կրկին բերեց Ռուբայի հիվանդանոցը»:

2. **Ալմաստ Թամասյանը** պատմում է. «1915 թ. ջարդի ժամանակ ծնողներս ստիպված եղան Տերիկից տեղափոխվել Սվագ: Այնտեղ մենք իրավունք ստացանք ապրել ամերիկացի միսիոներունի օրիորդ Բյուերի (Miss Bewer) հովանավորության ներքո: Մորս համար դպրոցական լավ կրթությունը շատ կարևոր էր, և դրա համար նա իր բոլոր երեխաներին՝ թվով յոթը, ուղարկել էր միսիոներների դպրոց: Ես՝ կրթությունս որպես ուսուցչունի ստացել էի Խարբերդում, ամերիկացիների մոտ: Միակ եղբայրս դեղագործ դարձավ: Մեր բոլոր ազգականների հետ մենք կազմում էինք մի մեծ ընտանիք: Բոլորս միասին՝ հազարավոր մեր հայրենակիցների հետ, ստիպված անցանք աքսորի սարսափելի ճանապարհով: Ուղևորության առաջին մի քանի օրն անցավ լավ, մեզ ուղեկցում էին ամերիկացի միսիոներները: Սակայն կառավարությունը նրանց հետ ուղարկեց: Հազիվ էին նրանք մեզանից հեռացել, որ սկսվեցին մեր բյուր տառապանքները: Առաջինն այն էր, որ մեզանից

խլեցին մեր տղամարդկանց: Նախ՝ նրանց մեր աչքի առաջ ենթարկեցին սոսկալի շարչարանքների և ապա՝ հաճախ շատ դանդաղորեն սպանեցին: Հազարավոր կանանց ու երեխաների նետեցին Կիրկ Գյոզ (Kirk Gjöz) գետը: Այնուհետև մեզ տարան լեռներով, որտեղ հաղիվ մեկ ոտնաչափ քայլելու տեղ կար: Այլևս մեզ որևէ գյուղի մոտով չանցկացրին: Օրերով ո՞չ հաց էինք ստանում, ո՞չ ջուր: Սակայն մարդկային կյանքի ամենամեծ կորուստն ունեցանք Եփրատի ափին, Սամսատի մոտակայքում: Այնտեղ ավելի քան 10,000 Հոգի հանձնվեց Հորձանքին: Գետի մյուս ափին մեզ ստիպեցին մեկ շարաթ շարունակ սպասել: Այնտեղ կողոպտեցին մեր բոլորի փողն ու աղջիկների պատիվը: Մոայլվեց նույնիսկ ամենաբարեպաշտ մարդկանց Հոգին: Քանի դեռ փող ունեիր, կարող էիր պատիվդ փրկել, սակայն երբ փողդ սպառվում էր, դա էլ այլևս հնարավոր չէր:

Քանի որ հագուստները փոխելու կամ լվանալու հնարավորություն չկար, սկսեց իշխել կեղտն ու գարշահոտությունը: Մեզանից շատերն ունեին նաև սրի կամ դանակի հասցրած վերքեր, որոնք անխնամ էին մնացել: Այդ տարաբախտների մարմնի վրայով որդեր էին սողում: Դժվար էր այլևս այդ խեղճ մարդկանց նայել: Սակայն ի վերջո մեզ տիրապետեց այնպիսի մի անօրինակ բթացում, որ ոչինչ այլևս մեզ չէր տպավորում:

Երբ մեզ վերջապես հրամայեցին երթը շարունակել, մեկ շարաթ շարունակ քայլում էինք մեռած, քայլքայված մարմինների վրայով: Ի վերջո մեզ հանեցին մի լեռան վրա, որտեղ մեզ շրջապատեց քրդերի մի մեծ ամրոխ: Նրանք կողոպտեցին մեր ամրող հագուստը: Քույրս չէր կարողանում լեռը մազցել, նա ամրողջովին ուժասպառ և կիսամեռ վիճակում էր: Նա ինձ խնդրեց՝ փայտով սպանել իրեն, որ նորից շընկնի դահճների ձեռքը: Մազերի միջից հանեց իր վերջին փողն ու տվեց մորս: Սակայն մի քուրդ այդ տեսել էր և Հաջորդ ակնթարթին մայրիկից խլեց այն: Դա իսկապես մեր վերջին փողն էր: Ստիպված քրոջս ետևում թողեցինք, Հավիտենապես հրաժեշտ տալով նրան: Երբ անցանք լեռան մյուս կողմը, եղրորս կինը ծննդաբերեց: Հագուստի մի ծվեն անգամ չկար, որով կարողանայինք նորածինին բարուրել. նույնիսկ մեր մարմինների վրա ոչինչ չէր մնացել: Ճանապարհին անցանք մի ջրհորի մոտով, որը լեցուն էր մարդկային քայլքայված մարմիններով: Երբ

Հասանք Հաջորդ ջրհորը, մեղ նետեցին փոսի մեջ: Խորքում
բազմաթիվ մեռածներ կային, մի քիչ էլ ջուր էր մնացել, այն-
պես որ ցած նետվածներից ոչ բոլորն էին մաշանում: Վերևից
քարեր էին գլորում. ում դիպչում էր, փրկվում էր: Ցավոք ինձ
քար չդիպավ: Իմ քույրերիցս մեկն էլ այդ դժոխքում կենդանի
մնաց: Ամրող գիշերը մնացինք ջրհորի փոսում՝ անտանելի
գարշահոտության մեջ: Հաղար անգամ մեր մաշը ուղեցինք:
Երբ Հաջորդ առավոտ չերևաց մեկը, որ ավարտեր քարերը
փոսը նետելու գթասիրտ գործը, մտածնցինք՝ ինչ անել: Մե-
ռածների մոտ գտանք մի քիչ փող, որը փրկվելու դեսքում
կարող էր պետք գալ տառապանքի մեր ուղին շարունակելիս:
Գիտեինք, որ փողը մեծ մասամբ թաքցված էր լինում մաղերի
մեջ: Եվ այդպես մենք Հավաքեցինք մի քանի թուրքական ոսկի,
որը չխչիկացրինք, երբ վերևում կրկին մի քրդի գլուխ հայտնը-
վեց: Քուրդը Հասկացավ: Նա մեղ երկուական դուրս քաշեց, փողը
որպես վարձ վերցրեց, իսկ մենք ժամանակավորապես դժոխ-
քից ազատվեցինք: Ինչպիսի ազահությամբ էինք ներս քաշում
մաքուր օդը: Երեք օր թափառեցինք լեռների մեջ: Մի գիշեր
կորցրեցի քրոջա: Ինչ պատահեց նրան, չգիտեմ: Այժմ մնացի
մեն-մենակ: Ո՞ւր գնայի, ո՞ւմ դիմեի: Վերջապես Հանդիպեցի
մի Հովիվի, խնդրեցի, որ ցույց տա մոտակա քաղաքը տանող
ճանապարհը: Նա ասաց, որ այստեղ քաղաք չկա, իսկ այստե-
ղից ոչ հեռու աքսորյալների ճամփան էր: Նա ինձ ցույց տվեց
այն: Շուտով ես կրկին միացա աքսորյալներին: Խմբեր էին իմ
Հայրենակիցներից, որոնք այստեղ (վայրը կոչվում էր Մուհա-
մեդ խան) իրար էին գտել: Նրանց մեջ, սակայն, իմ ազգական-
ներից ոչ ոք չկար: Այստեղից մի երևելի մաշմեղական ինձ իր
հետ տարավ Ուրֆա: Նրա անունն էր Մուհամեդ Խալիլ, նա
քաղաքի մեծահարուստներից էր: Սակայն երբ տեղ հասա, ես
ծանր հիվանդ էի: Տեսնելով, որ վիճակս չի լավանում, նա ինձ
ուղարկեց միախոներական հիվանդանոց: Եվ քանի որ այնտեղ
տեղ չկար, գնացի ասորական եկեղեցու րակը, որտեղ ինձ
նման ուրիշ թշվառներ էլ տեխանքով մաշվան էին սպասում:
Ի վերջո մի կին ինձ խորհուրդ տվեց գնալ Քյունցլերների մոտ,
որոնք օգնում էին բոլոր Հայերին: Ճանապարհ ընկա և մինչև
պարոն Քյունցլերի տունը, որն ընդամենը քառորդ ժամվա ճա-
նապարհ էր, թուլությանս պատճառով անցա ամրող երեք

Ժամում: Զերմելով տեղ հասա, այնտեղ ստացա հագուստ, պաշտպանություն, օգնություն և զեղորայք: Դրանով վերջ դրվեց իմ ահավոր թշվառությանը: Աստիճանաբար կազդուրվեցի: Եվ երբ պարոն Քյունցիերը զինադադարից հետո որրանոց բացեց, ես այնտեղ ստանձնեցի ուսուցչունու պաշտոնը՝ ուսուցանելու այն փոքր հատվածին, որ մնացել էր իմ ժողովրդից»:

3. Եղսա Պետրոսյանի տառապանքները. «1915 թ. Հուլիսի 10-ն էր, երբ ես՝ մոտ 2000 տղամարդկանց, կանանց ու երեխաների հետ, հարկադրաբար թողեցի իմ հայրենի Խարբերդը: Ամուսինս ապրում էր Ամերիկայում: Ես կարողացա հետս մի քիչ փող, հագուստ, և ավանակի վրա բարձած՝ նաև անկողին տանել: Իմ երկու դուստրերը՝ 10 և 12 տարեկան, ինձ հետ աքսորվեցին: Առաջին մի քանի օրը՝ շրջակայքում բնակվող թուրքերը կամ մեզ ուղեկցող ժանդարմները մեզ որևէ նեղություն չտվեցին: Մալաթիայի շրջանում կանգ առանք: Երբ էրզրումից ու Սվագից տեղահանվածների շարասյուները մեզ միացան, շարժվեցինք առաջ, սակայն ոչ թե դեպի Մալաթիա, ինչպես Հույս ունեինք, այլ Տավրոսի դասիթափ լեռներով դեպի հարավ: Հաճախ ստիպված էինք լինում ժայռերի վրայով չորեքթաթ մազլցել: Այդ ընթացքին շատ երեխաներ ու տարեցներ ծայրահեղ ուժասպառությանը զոհ էին դառնում: Ընկածներին թաղելու մասին չէր կարելի մտածել: Նրանք մնում էին ընկած տեղում, որպես վայրի կենդանիների բաղադրի ավար: Մեր կապոցները վաղուց էինք զեն նետել, քանի որ դուրս գալուց՝ մեզ հետ վերցրած գրաստը ստիպեցին հետ ուղարկել: Մալաթիայի ու Աղիամանի միջև լեռնահովտի շրջակայքի քրդերը մեզ թալանեցին: Տղամարդկանց մեզնից խլեցին, փոքրինչ կողմ տարան ու սպանեցին: Մեզ այնտեղ հասցրին, որ մենք էլ հաճույքով մահվան կզնայինք, եթե միայն իմանայինք, թե ինչ կլիներ մեր երեխաների վիճակը: Հետագա ճանապարհին մինչև Սամսատ՝ մեր միջից երիտասարդ աղջիկների ու կանանց մեծ մասն անհետացավ: Տեղացի քրդերը իրենց ուղած կնոջն ու աղջկան առնում տանում էին:

Գետի մյուս կողմում, Ուրֆայի շրջանում մեր տառապանքներն իրենց գագաթնակետին հասան: Զուր երբեք չէինք ստանում, եթե դրա համար ուկով չվճարեինք: Հրացանի կոթերով

Էին մեղ քշում ջրհորների մոտից: Մի Հակա աղբյուրի մոտ, որտեղ մի քանի օր ընդմիջում արեցինք, մենք ամրողջովին զրկվեցինք դրամական միջոցներից և ամեն տեսակի զարգեղենից: Քարյուղի անթիվ թիթեղներ, Արևելքում հայտնի քարյուղ տեղափոխելու արկղներ, լիքը ուսկով և զարդեղնով, ընկան ավաղակների ձեռքը: Երբ մեղանից խլելու այլևս ոչինչ չէր մնացել, մեղ քշեցին մի քարաստան: Այստեղ շրջապատվեցինք քրդերի մի մեծ բազմությամբ: Նրանք մեղ մերկացրին և Հանված զգեստներից վերցրին այն ամենը, ինչը գեռ որոշ արժեք ուներ: Մերկացնելիս պարզվեց, որ մեր մեջ կային աղջկա Հագուստով ծպտված մի քանի դեռատի պատանիներ: Նրանց անմիջապես կտոր-կտոր արեցին: Ապա քրդերը մեղ՝ մոտ 2000 աղջկներից ու կանանցից բաղկացած մի մեծ, մերկ բազմություն, քշեցին մի նեղ տեղ, և աշա սկսվեց սարսափելին: Բոլոր կողմերից կրակ բացեցին մեղ վրա: Ստեղծվեց մի սոսկալի հրմշտոց: Ով որ եղրերին էր կանգնած, սպանվեց, ով որ հրմշտոցի մեջ մնաց՝ հեղամահ եղավ: Խսկ ես մահից խուսափեցի միայն այն պատճառով, որ կանգնած էի դիակների վրա: Իմ երկու զստրերին նույնակես կարողացա անասելի ջանքերով քաշել բերել ինձ մոտ՝ այդ բարձունքի վրա: Նրանց մարմինն ամրողջովին կապտել էր: Երբ քրդերը հեռացան, մեղանից կենդանի էր մնացել միայն մի քանի Հարյուր մարդ: Մեղ ուղեկցող ժանդարմներից նույնակես ոչ մեկը չէր երևում, և մենք մնացինք գետնին նատած՝ յուրաքանչյուրը տենչալով իր վերջին ժամը: Հաջորդ օրը ստիպված էինք շարունակել մեր երթը, որովհետև գարշահոտությունն անտանելի էր: Երեխաներս զօր ու զիշեր ցածրաձայն նվում էին. «Մայրիկ, Հաց, մայրիկ, Հաց» (բնագրում՝ *Mairik Haz, Mairik Haz!*): Երբ ճանապարհով անցնում էին մի քանի քուրդ ժիավորներ, խնդրեցի նրանց՝ տանեն իմ երկու դուստրերին: Թող Աստված լինի նրանց պահապան: Քրդերը աղջկներիս վերցրին իրենց հետ: Ինչ եղան նրանք, չզիտեմ, ես նրանց այլևս երբեք չտեսա: Լաց լինել էլ չկարողացա նրանց ճանապարհելիս, արցունքներս ցամաքել էին: Միայն մի քան էի խնդրում՝ շուտ մեռնել: Մահն այլևս ինձանից շատ հեռու չէր կարող լինել: Զէ՞ որ շարաթմներով ոչինչ չէի կերել: Երբեմն՝ մյուս, ինձ նման մահ փնտրող կանանց հետ մի քանի քայլ էի անում: Վերջապես Հասանք

քրդական մի գյուղ՝ ջուր խնդրելու: Չնայած բոլորս ոտից գլուխ մերկ էինք, զյուղի քրդերը մեզնից նախ փող պահանջեցին: Հետո տեսնելով, որ ոչինչ չեն կարող ստանալ, մեզ աղրյուրի մոտից քշեցին: Ուզեցի կեղտուտ մի ջրափոսից խմել, սակայն թերանս չմոտեցրած՝ թեմիս սրի հարված ստացա: Առանց խմելու, մեզ ստիպեցին երթը շարունակել: Միջագետքի օգոստոսյան արևը այրում էր մեր մերկ մարմինները: Հերկած հողի մեջ ձեռքերով փոսեր էինք փորում, որտեղ՝ մեզ հողով ծածկելով, պատսպարվում էինք կեսօրվա արևելից: Գիշերը նույն կերպ օգտագործում էինք այդ փոսերը, քանի որ շատ էր ցրտում, և հողը մեզ ցրտից պաշտպանում էր: Մարմնի վրա մեծ այրվածքներով վերջապես հասանք Ուրֆայի մոտակայքում գտնվող քրիստոնեարնակ մի գյուղ: Այնտեղ մեզ հաց, ջուր և նաև հագնելու մի բան տվեցին: Ինձ բաժին ընկավ մանկական մի կարճիկ շապիկ, որը թեև նվազագույն չափով, բայց 16-օրյա մերկությունից հետո, մի քիչ գոնե կարողացավ ծածկել մարմինս: Այդ գյուղում աստիճանաբար հավաքվեց մոտ 200 կին, մնացորդը 6000 հոգուց, որոնց հետ մենք Մալաթիայից դուրս եկանք:

Այդ գյուղում մենք շատ քիչ մնացինք: Ժանդարմները եկան և նորից խմբով քշեցին մեզ: Նույն օրը հասանք Ուրֆայի մոտ գտնվող տեղահանվածների մի ճամբար: Հաջորդ առավոտ ճամբար եկան խարրերդցիներ, որոնք խմբերով Ուրֆա էին եկել ավելի վաղ: Նրանք ուզում էին տեսնել, թե ովքեր էին նորեկները: Ես, ինչպես մեզնից շատերը, դարձել էի բոլորի համար անճանաչելի: Փնտրողների մեջ ճանաչեցի խարրերդցիների, որոնց իմ անունն ասացի: Խորհուրդ տվեցին փախչել. բայց դա հնարավոր էր միայն կաշառքի միջոցով: Մի կնոջից փոխ առա մի ոսկեղրամ, որը երեկոյան տվեցի պահակին. զրաշնորհիվ աղատվեցի: Բայց ո՞ւր էի ես հիմա գնալու: Միրով կդնայի գերմանական հիվանդանոց, բայց տեղը չգտա: Մի թուրք բռնեց ինձ ու քաշ տվեց իր տուն: Սակայն չուտով ճանր հիվանդացա: Դա հենց այն թուրքն էր, որն ինձ միսիոնեական հիվանդանոց թերեց: Այնտեղ ես կաղղուրվեցի: Ուրֆայի բնակչության հետ տեղահանումից խուսափեցի միայն այն պատճառով, որ ես այդ օրը, երբ ոստիկանությունը հայերին հանում էր հիվանդանոցից, պառկած էի բարձր ջերմությամբ:

Հետո ես դարձա պարոն Քյունցլերի տան խոհարարուհին:

Մանկական շապիկը, որով ես կարողացել էի ծածկել մերկությունս, պահել եմ և պահպանում եմ որպես մասունք՝ ամուսնուս ցույց տալու համար, եթե նրան կրկին հանդիպեմ»²:

9. Անդորր փոթորկից առաջ

Օգոստոսի 19-ից Հետո չատ մարդիկ փորձում էին Ուրֆայում ապաստան գտնել եվրոպացիների տներում: Հայցողների թիվն այնքան մեծ էր, որ Հնարավոր չէր անթիվ դիմումները հաշվի առնել: Գիտեինք նաև, որ եթե Ուրֆայի հայերի տեղահանության ժամը գար, դժվար թե կառավարությունը եվրոպացիների դռների առաջ կանգ առներ: Չնայած զրան, շարունակում էին տեղափորել ապաստան Հայցողներին, որքան որ տեղերի թիվը այդ Հնարավորությունը տալիս էր: Բոլոր տեղափորվածներն իրենք էին հոգալու իրենց սննդի հարցը:

Ուրֆայում կար գորգագործական ֆաբրիկա, որը պատկանում էր Գերմանական առևտորի և արդյունաբերության ընկերության արևելյան ճյուղին: Պարոն դ-ր Լեփսիփուսն էր, որ 1895 թվականի Հայկական կոտորածից Հետո այդ գորգագործական ֆաբրիկան Հարց լեռնաշղթայի մոտ գտնվող Ֆրիդդորֆ (Friesdorf) գյուղից տեղափոխել էր տվել Ուրֆա և տարիների ընթացքում էլ այն ընդարձակել էր: Առաջին ջարդերի ծանր ժամանակներից մնացած Հարյուրավոր այրիներ գորգագործությամբ կերակրեցին իրենց ու իրենց երեխաներին: Այդ գործարանը հենց պատերազմի սկզբին դադարեցրեց աշխատանքը, քանի որ արտահանումն անհնարին դարձավ: Զեռնարկության շենքում կար մի մեծ տարածություն, որի մեջ այս օրերին Հնարավոր եղագ տեղափորել ավելի քան 1000 մարդ: Նրանցից շատերը բերել էին իրենց ունեցվածքից մի շարք արժեքավոր իրեր, որոնք տեղ հասնելիս, չէին ցուցակա-

² 1919 թ. օգոստոսին այդ կինն ինձ Հալեպից գրեց, որ իր ամուսինը մահացել է Ամերիկայում: Մինչ օրս նրա երկու դուրստրերին գտնելու մեր փորձերը եղան ապարդյուն:

գրպում: *Տեղավորվածների մեջ կային որոշ թվով տղամարդիկ:* Նրանք գիտեին, թե իրենց ինչ էր սպասում:

Սեպտեմբերի կեսերին Ուրֆայի նահանգապետին կատարած իմ մի այցի ժամանակ նա ասաց, որ Հայերն այլևս չեն ցանկանում աշխատանքի գնալ: Հայտնի էր նաև, որ շատ Հայեր իրենց տները պատնեշավորել էին: Հետևաբար, Հայերն իրենց անպատկառ կեցվածքով իրավունք չունեին կառավարությունից զթասրտություն ակնկալելու:

Թուրքերի տներում հիվանդատեսի ժամանակ Հաճախ էի տեղեկանում, թե որքան լարված էր իրադրությունը: Թուրքերից շատերն ինձ տարրեր առիթներով ասում էին, որ առանց որևէ խղճահարության կկոտորեին Հայերին:

Տեղահանվածների երթերը, որոնք գալիս էին Հյուսիսից, շարունակվում էին: Մի անգամ Ուրֆա հասավ ավելի քան Հարյուր կանանցից բաղկացած մի խումբ՝ ամբողջովին մերկ վիճակում: Տարագիրների թվում տղամարդիկ այլևս ընդհանրապես չկային:

Այդ օրերին, եթե մարդ քաղաքից դուրս գար, ամենուրեք կտեսներ մարդկային դիակներ, որոնք փոխած էին դեսուդն: Նույնիսկ եթե երրեմն մեռածներին թաղում էին, ապա դա արփում էր այնքան թերի, որ վայրի գաղանների համար դժվար չէր դիակները քաշել հանել: Մարդկանց սպանված տեղերը այդպես էլ մնացել էին արյունով ներկված: Աղետ էր, ահավոր չարիք, որպիսին ես երրեք չէի տեսել, նույնիսկ այստեղ՝ տևական թշվառության երկրում: Այդ բոլորով հանդերձ, Ուրֆայի համար վատթարագույնը դեռ նույնիսկ չէր սկսվել: Ամեն մարդ գիտակցում էր, որ ահարկու օրեր էին սպասվում, բայց միաժամանակ բոլորին համակել էր գալիքից խուսափելու բացարձակ անզորության ջլատող զգացումը:

Բաղարում՝ քաղաքի շուկայում, առևտրի ու մարդկային հաղորդակցության կենտրոնում, Հայերն այլևս չէին երևում: Ո՞վ կարող էր իմանալ, թե երբ էր ոռոմքը պայթելու: Դիմադրելու համար Հայերին պակասում էր զենքն ու դինամիտերը: Իհարկե, ամեն տուն ուներ քիչ թե շատ կարգին զենք: Սակայն ժամանակակից զենքեր քչերն ունեին: Եվ ահա մի սառնարյուն, քաջարի հայ, որն ի վերջո պիտի դառնար դիմադրության ոգին, օգտվելով փոթորկին նախորդող անդորրից, գնաց նահանգի

կենտրոն Հայեալ, այնտեղ զինամթերք գնեց ու բերեց Ուրֆա: Այդ նպատակով նա ծպտվեց որպես թուրք սպա, մի քանի բարեկամների հազըրեց թուրք զինվորի համազգեստ, տվեց նրանց մահմեղականի անուններ և նրանց հետ ու Հայեալում ձեռք բերած զենք ու զինամթերքով անցավ երկրով մեկ: Խումբն անցավ միայն գյուղերով, խուսափելով փոքր քաղաք-ներից: Մայրամուտից առաջ խումբը հասավ Ուրֆա: Ով որ տեսնում էր այդ խմբի տեղաշարժը, ոչ մի վատ բան չէր մտածում. չէ՞ որ պատերազմի այդ տարիներին այդպիսի դորախմբեր շատ էին երկրում գնում-գալիս: Առաջնորդը՝ Մկրտիչը, միայն քաղաք մտնելու համար օգտագործեց մայրամուտին անմիջապես հաջորդող ժամանակը, երբ քաղաքի բնակչությունը ոչ թե փողոցներում էր, այլ տանը նստած՝ ընթրում էր:

Փոթորկին նախորդած օրերին արհեստավորներից ամենաշատը զբաղված էին դարրինները. նրանց գործը ձեռքի նոնակների պատրաստումն էր:

10. Մահվան սարսուն

Սեպտեմբերի 29-ի գիշերը Հայկական թաղամասում լսվեցին առաջին կրակոցները: Հաջորդ առավոտ տեղեկացա, որ տներից մեկում խնջույք են ունեցել, և հարրած մի քանի մարդ զվարճության համար կրակել են գիշերվա օդի մեջ: Կեսօրվա կողմը ոստիկանությունը եկել է պարզելու կրակոցների պատճառը: Ոստիկանությունը կանչված է եղել հայկական կողմից այն մտավախությամբ, որ առանձին զգայազուրկ Հայրենակիցների արարքը կարող էր նոր փորձանք դառնալ առանց այն էլ նեղության մեջ գտնվող ամրողջ մի ժողովրդի համար, և որ նման զգայազրկությունը պետք է իր արժանի պատիժն ստանար: Ոստիկանները տեսնելով, որ այն տունը, որտեղից կրակել էին, դրաից կողազեքով փակված է, փորձել են տուն մուտք գործել տան ոչ այնքան բարձր, հարթ տանիքից: Սակայն ոստիկաններին դիմավորել են կրակոցներով, և նրանք ստիպված են եղել նահանջել: Բնականաբար, օգնական ուժեր բերելու անհրաժեշտությունը պատճառ դարձավ, որ այլ գեպքերում այս աննշան միջաղեպն անհրաժեշտաբար դառնա

թուրքական իշխանությունների կարևորագույն պետական խնդիրը:

Կեսօր էր, երբ ես կառքով ուզում էի մեկնել քաղաք, որպեսզի ամերիկացի հիվանդ միսիոներ Լեսլիին քաղաքի նեղվածքից մի քիչ դուրս բերեմ: Նրա դռան առաջ արդեն կանգնած էր պահակ, որը բոլորին, նաև ինձ, արգելեց ներս մտնել, այնպես որ ես չկարողացա հիվանդին փոխադրել: Երբ ոստիկանները հայտնվեցին օգնական ուժերի ուղեկցությամբ, նրանց վերստին դիմավորեցին կրակոցներով, որոնք իրենց դիպուկ նշանառությամբ մեծամասամբ մահացու էին: Մեծ կորուստներ կրելուց հետո, ոստիկանները ստիպված եղան նահանջել: Քաղաքի հայկական մասում հայերն սկսեցին կրակել ամեն պատահած մահմեղականի վրա: Գիշերը թուրքերը փողոցներում բարիկադներ կառուցեցին և այդպիսով Հայկական թաղը բաժանեցին թուրքականից: Հայերը գրավեցին իրենց թաղամասի շրջանակում գտնվող բոլոր կարևոր տները: Այստեղից նրանց համար ցանկացած թուրք, քուրդ կամ արար, հենց որ հայտնվում էր, հարմար նշանակեատ էր դառնում:

Գրգոված թուրքերը սկզբում հայերի գեմ ոչինչ չէին կարողանում անել: Սակայն դեպքերից բորբոքվել էր մահմեղականների մոլեուանդությունը, քանի որ մոլլան չէր կարողանում մինարեթ բարձրանալ՝ սովորականի պես աղոթքի կանչելու, քանի որ հայի անվրեպ գնդակը կարող էր կարճել մուսուլմանի կյանքը: Սակայն հայերը հիմնականում իրենց պահում էին պաշպանողական դիրքերում: Միայն մի քանի օր էր, որ աջուձախ կրակում էին, հատկապես գիշերները: Երրորդ օրը, ճիշտ այն ժամին, երբ ես մահմեղական մի հիվանդի այցելության ճանապարհին էի, մահմեղականների թաղում հանկարծ խուճապ առաջացավ: «Գյավուրները գալիք են, գյավուրները գալիք են», - գոռգոռում էին նրանք բոլոր փողոցներում: Վաճառողները շտապով փակեցին խանութներն ու փախան իրենց տները: Ուրիշները փողոցում հայտնվեցին զենքերով: Սակայն ի վերջո ոչինչ չպատահեց: Հավանաբար ինչ-որ տեղ փողոցում մի քանի զինված հայ էին տեսել:

Այդ օրերին Ռուֆայում թուրք զինվորներ բնավ չկային: Իսկ ժանդարմները դրսում զրաղված էին շարասյուններում տեղահանվածներին թալանելով ու խոշտանգելով: Ուստի

կառավարությունը հեռագրեց Հայեալ՝ օգնություն խնդրելու; Այնտեղից ժամանեց մի գեներալ՝ մի գունդ զորքով: Սպառազինեցին նաև շրջակայքի քրդերին, որպեսզի նրանք պատրաստ լինեն մասնակցելու անհնազանդ հայերի դեմ զործողությունների: Երբ քրդերից հեծյալ մի մեծ խումբ փորձեց Ուրֆա մտնել, Հայերը օրը-ցերեկով կրակոցներով դիմավորեցին նրանց: Զարտուղի երկար ճանապարհ բռնելով՝ քրդերն ի վերջո հասան քաղաք: Ընդ որում՝ մի փոքր Հատված՝ կրակադաշտում գտնվող արտերից մեկը նրանք անցան քառատրուի: Իմ պատուհանից դիտում էինք փոխհրաձգությունը: Զիավորներից մեկը ձիուց ընկավ՝ նշանառուի շեշտակի մեկ կրակոցից: Մեկ ժամ հետո վիրավորին էշի վրա տեղափոխում էին մեր տան մոտով: Քրդերի խաժամումը հայերի ամրացված թաղի դեմ ոչինչ չկարողացավ անել: Ով որ Հանդգնում էր թեկուղ երևալ, ոու էր գնում խիստ աշալուրջ հայերի կրակոցներին: Նույնպես թուրքական հետևակը, որ պաշարման երրորդ օրը միացավ քրդերին, չկարողացավ չափվել խրամատավորված հայերի հետ: Ստիպված եղան ծանր հրետանի բերել:

11. Գերմանական արդյունաբերական տարածքի գրավումը

Վերոհիշյալ գորգագործական ֆարբիկան՝ իր պահեստներով և մանածագործական, ներկարարական ու ձեռագործական աշխատանքների տարածքներով գտնվում էր թշնամի երկու թաղերի միջև: Հսկա շենքերը վեր էին խոյանում քաղաքի ամրող մուսուլմանական թաղամասից: Այդ իսկ պատճառով շինությունների այդ Համալիրին տիրանալը մեծ նշանակություն ուներ կովող երկու կողմերի Համար: Հատկանշական է, որ Հայերն առաջինն էին, որ մտածեցին ֆարբիկան գրավելու մասին, որի տանիքից կարելի էր զյուրությամբ գնդակութել մուսուլմանական ամրող թաղամասը: Բացի դրանից, չէ՞ որ ֆարբիկայի սրահներում գտնվում էին ավելի քան Հազար հոգի իրենց Հայրենակիցներից: Արդյունաբերության դեկավար պարոն էքարթին Հայերը տեղյակ էին պահել իրենց մտադրության մասին: Իսկ ի՞նչ կարող էր նա անել դրա դեմ:

Թողնելո՞ւ էր նա, որ գրավումը հանդիստ տեղի ունենա: Մի՞թե դրա հետևանքով հաստատությունը ավերվածության չէր ենթարկվելու: Հավանականությունը մեծ էր, որ թուրքերին ի վերջո պիտի հաջողվեր հայերին հաղթել: Բացի զրանից, նախատեսվող ոմբակոծումը կարող էր վնաս հասցնել շենքերին: Մի այլ մտավախություն էլ թալանն էր, որի ընթացքում բնականարար խոսք լինել չէր կարող զերմանացիների ու հայերի սեփականությունների զանազանման մասին: Այսպիսով, պարոն էքարթը ճարահատ թուրքական կառավարությանը խնդրեց՝ գրավել ֆարրիկայի կալվածքը, նախքան հայերի գալն ու այն զրաղեցնելը:

Սակայն թուրք զեներալը՝ փոխանակ շենքերն անմիջապես գրավելու, հույսը դրեց հաջորդ առավոտվա վրա: Ֆարրիկայի սրահներում ապաստան գտած հայերը պարոն էքարթի փոքր եղորից տեղեկացան կալվածքը թուրքերին հանձնելու մտադրության մասին: Այս լուրը իսկական սարսափ աղղեց այնտեղ ապաստանած հայերի շարքերում: Մեծ մասը պատրաստ չէր այդպես անպաշտպան վիճակում ընկնելու թուրքերի ձեռքը: Հաջորդ գիշեր նրանց մեծամասնությունը՝ դուրս գալով պատուհանի մի բացվածքից, փախուստի դիմեց դեպի Հայկական թաղը: Թե ինչու հայերը, տեղեկանալուց հետո, որ թուրքերը զրաղեցնելու են կալվածքը, իրենց հերթին այն գրավելու քայլեր չարեցին, մի բան է, որ ես երբեք չկարողացա ըմբռնել:

Հաջորդ առավոտ թուրք զեներալը տիրացավ զերմանացիների շենքերին: Մոտ 400 հոգի, մեծ մասը կանայք ու երեխաներ, ներկայացվեցին որպես ֆարրիկայի բանվորուհիներ: Գեներալը կարգադրեց տեղափոխել նրանց քաղաքից դուրս գտնվող զերմանական որբանոցը: Իսկ յոթ տղամարդու, որոնք նույնպես զերմանական գործարանային արդյունաբերության և զերմանական որբանոցի ծառայողներ էին, բանտ նետեցին, ըստ որում՝ զերմանացի պարոն էքարթին խոստացան, որ այդ տղամարդկանց վնաս չէին հասցնելու: Թեև պարոն էքարթը խնդրեց՝ իրեն թույլ տան, որ նրանց իր սեփական տանը պահի, թուրք զեներալը մերժեց, ասելով՝ ինքն այդ տղամարդկանց հետ կապված այլ մտադրություններ ունի: Նախ հարկավոր էր հետաքննել, թե նրանք իրոք մեղսակից չէին, ինչպես պնդում էր պարոն էքարթը:

Նույն օրը սպասված հրետանին հասավ Ուրֆա: Մրագիր կար հրետանին դեռ ցերեկը քաղաքը բերել, սակայն Հայերն աշալուրջ էին: Քանի որ փողոցի մոտ 500 մ հատվածը գտնվում էր կրակի գծի տակ, թուրքերը ստիպված եղան իրենց թնդանոթները կես ճանապարհին տեղափորել: Զոկատները շտապ փախուստի դիմեցին: Միայն մթնելուց հետո էր, որ Հնարավոր եղավ մահարեր գործիքները քաղաքը բերել: Սոսկալի հրետանակոծություն սկսվեց: Մի քանի անվեհեր և գործիմաց Հայեր դուրս եկան, զողանալու թնդանոթների փակաղակները: Սակայն դա նրանց չհաջողվեց: Չնայած կես ժամ տևողություն ունեցող Հումկու կրակոցներին, որ տեղի էին ունենում մեր տնից մոտ 300 մ հեռավորության վրա, ակներևարար այդ փոխհրաձգության ընթացքում ոչ ոք չզոհվեց: Թուրքերի գնդակները Հաղիվ Հասնում էին մինչև ցից կանգնած մուսումանական գերեզմանաբարերը, որոնցով շրջափակված էր փողոցի այդ ամբողջ հատվածը:

12. Ամերիկան միսիոներական կայանը

Հայկական թաղամասի ամենաբարձր դիրքում գտնվում էր Ամերիկյան միսիոներական հաստատությունը՝ բաղկացած մի քանի իրար կից շենքերից: Դրանցից, դեռ պաշարում ից առաջ, հատուկ ուժգնությամբ սկսվել էին գնդակոծումները: Կասկած չկար ուրեմն, որ Հայերը գրավել էին նաև այդ շենքերն ու իշխում էին դրանց վրա: Սակայն հաստատության պետ՝ ամերիկացի պարոն Լեսլին, ինքն էլ ներկա էր: Բացի նրանից, այնտեղ էին բնակվում նաև, այսպես կոչված «Belligerenten», եվրոպացի քաղաքացիական ներկալվածներ, որոնց մասին կարելի է ենթադրել, որ նրանք հենց սկզբում ապաստանել էին ամերիկյան տանը: Այդ եվրոպացիների ու ամերիկացիների վիճակը, անկասկած, նախանձելի չէր, հատկապես այժմ, քանի որ սկսվելու էր ոմրակոծումը: Պարոն Լեսլին հասցրել էր նահանգապետին նամակ ուղարկել: Նա նամակը նետել էր մահմեդականների թաղը, իսկ այնտեղից այն իր ճամփան գտել էր դեպի նահանգապետը: Իր նամակում Լեսլին ազատագրում էր Հայցում իրեն և մյուս եվրոպացիների համար: Գեներալը

գրությունը ստանալուց հետո ինձ կանչել տվեց: Քանի որ ես պարոն Լեսլիի բարեկամն էի, ասաց նա, ապա պետք է փորձեի ազատազրել նրան ու ներկալված քաղաքացիներին: Այդ նպատակով նա կարգադրել է՝ չկրակել որևէ մեկի վրա, որ դուրս գալով Ամերիկյան Հաստատությունից՝ հեռանում է Հայկական թաղից:

Ես առաջարկեցի, որ գեներալն ինձ թույլտվություն տա՝ Հայկական թաղ գնալու և մարդկանց դուրս բերելու: Սակայն այս փոքր-ինչ հապճեպ և անխունեմ արված առաջարկը Հավանության չարժանացավ: Գեներալն ասաց, որ քանի որ ես չվեյցարացի եմ, ինքը չի ցանկանա իր վրա վերցնել նման ձեռնարկի պատասխանատվությունը: Իսկ Հաջորդ առաջարկիս՝ պարոն Լեսլիին նամակ հասցնել, նա հավանություն տվեց: Ընկերոջս անմիջապես նամակ գրեցի և խնդրեցի նրան, մնացած եվրոպացիների հետ, թողնել Ամերիկյան տունը և ներկայանալ նշանակված փողոցում:

Նամակը ձեռքիս անցա պատնեշի մյուս կողմը: Մի քանի անգամ ու բարձր ձայնով կանչեցի Հայկական մի անուն: Վերջապես մի տնից պատասխան եկավ: Ո՞վ էի ես, Հարցրեցին: Հայտնեցի անունս. «Յակոր է ֆենդի»: Հարց տվողին խնդրեցի մոտենալ պատնեշին՝ նամակը նրան հանձնելու համար: Ասացի, որ չվախենա, նրան ոչինչ չի սպառնում: Սակայն Հայր խնդրեց, որ ես մտնեմ թաղը, քանի որ իրենց կողմից վտանգ չկար: Վերջապես մի տան դռնից մի դեռատի պատանի դուրս նայեց և մեկ անգամ ևս խնդրեց ինձ՝ ներս գալ: Ես նրան հանձնարարեցի՝ գնալ նշած տունը, ուր նետելու էի քարով ծանրացած մի նամակ, որը ինքը պիտի հանձներ ամերիկացի միախոներ պարոն Լեսլիին:

Բայց երբ ավելի քան երեք ժամվա ընթացքում պարոն Լեսլին չերևաց, ես կրկին գնացի պատնեշի մոտ ու ձայն տվեցի: Դարձյալ բավական երկար ժամանակ անցավ: Ի վերջո լսեցի ինչ-որ մեկի ձայնը, որն ասում էր՝ Լեսլիի պատասխանը գրված էր նրա շենքի վրա:

Այժմ հեռադիտակով ու ոստիկանների հսկողությամբ բարձրացա քաղաքից դուրս գտնվող մի բլրի վրա, որտեղից կարողանում էի տեսնել ամերիկացիների շենքերը: Մի պատի վրա մեծ տառերով գրված էր. «Ուզում ենք գալ, բայց մեզ չեն

թողնում»: Նույն երեկոյան ամերիկյան այդ հաստատությունը երեք կողմից ոմբաշարվեց:

13. Դիմադրության ջախջախումը

Օրեր շարունակվող ոմբակոծումից հետո էլ ծայրամասում գտնվող ամրացված տարրեր տներ պետք է զրոհով վերցվեին: Քանի որ այդ կապակցությամբ վիրավորների մեծ թիվ էր սպասվում, ես՝ որպես Գերմանական միախոներական Հիվանդանոցի պետ, հրաման ստացա՛ բոլոր Հիվանդներին անմիջապես Հիվանդանոցից հեռացնել և մահճակալներն ազատ պահել վիրավորների համար: Արդեն մի քանի օր առաջ թուրքերը քաղաքային Հիվանդանոցներում գտնվող Հայերին արտաքսել էին, Հիմնավորելով, որ անիմաստ է լավություն անել ապրուտամբների Հայրենակիցներին: Արտաքսված Հիվանդներից շատերին ինձ մոտ էին ուղարկել: Ես ընդառաջեցի թուրքերի պահանջին և տեղափոխսվելով Շիկոյի մեծ տունը, իմ Հիվանդներին այնտեղ պառկեցրի: Մահճակալային անհրաժեշտ պարագաները բերեցի գորգագործական ֆարրիկայից, որտեղ դուրս քշված Հայերը շատ մահճակալներ էին թողել:

Առաջին զրոհով Հնարավոր չեղավ զրավել ամրացված տները: Գրոհայինները ստիպված էին լինում ամեն տեղից մեծ կորուստներով նահանջել: Յավոք, Հարձակման ժամանակ դուշեց նաև մի քանի քրիստոնյա, աշխատանքային գումարտակի ասորի զինվորներ, որոնք կացիններով ուղարկված էին առաջին շարքերը՝ դռները ջարդելու համար: Գրոհից հետո մեր Հիվանդանոց բուժման եկան՝ մեծ թվով վիրավոր թուրքեր: Նրանցից մեկը պատմեց, թե ինչպես 23 հոգով Հարձակվել են մի Հայի տան վրա, սակայն մի քանի րոպե հետո ստիպված են եղել դառն ու դատարկ նահանջել: Սպանվածներին չհաշված, բոլորը, բացի հինգ հոգուց, վիրավորվել էին: Հայերի նետած ձեռքի նոնակները Հարձակվողներին մեծ վնաս էին հասցրել:

Հայերն անկասկած ի վիճակի էին ամիսներով դիմանալ, քանի որ նրանք ունեին սննդի բավարար պաշարներ: Այն հանդամանքը, որ թուրքերը հենց սկզբից կտրել էին քաղաք գնացող ջուրը, մեծ վնաս չեր, որովհետև գրեթե ամեն տուն, բացի

ջրատարութ հոսող ջրից, ուներ նաև ջրհոր: Ինը սանտիմետրանոց նոնակները քարե ամուր շինություններին շատ մեծ վնաս չէին տալիս: Մեծ տրամաշափի թնդանոթներ տեղում չկային: Իսկ հրդեհաձիգ նոնակները շատ վառելանյութի չէին հանդիպում հայերի տներում, որտեղ փայտեղենը քիչ էր կամ բնավ շինության մաս չէր կազմում: Իսկ եթե երբեմն էլ իսկապես առանձին մի տուն կամ սենյակ այրվում էր, դրանից շատ բան չէր փոխվում:

Կասկած չկա, որ որոշակի սերտ միության դեպքում հայերը թուրքերին ամիսներով կարող էին հեռու պահել: Սակայն հայերի վաղեմի չարիքը՝ անմիաբանությունը, նրանց համար դարձավ օրհասական, իսկ թուրքերին՝ մեծ օգնական: Բավական է կարդալ այս արտակարգ խելացի ժողովրդի պատմությունը: Կուռ համախմբվածությունը միշտ բացակա է: Ծվեյցարացիների կարգախոսը՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի», չգիտեն նրանք:

Մենք արդեն խոսեցինք առաջնորդի՝ Մկրտչի, մասին, որը մնաց դիմադրության ոգին: Երբ պաշարման 15-րդ օրը եկեղեցում խորհրդակցության ժամանակ նոնակի բեկորը դիպավ Մկրտչին, հայերի մի մեծ խումբ՝ տղամարդ, կին ու երեխա, ուղեց, որ անձնատուր լինեն: Իսկ Ամերիկայում աստվածաբանական կրթություն ստացած հայ բողոքական քահանան դեռ փորձում էր թուրքերի հետ բանակցել և այդ նպատակով գեներալի մոտ ուղարկեց սպիտակ դրոշակով մի քանի կին: Սակայն վերջինս պահանջեց, որ անվերապահորեն հանձնվեն: Այժմ այլևս հայերը կորցրել էին չնորհ ստանալու հույսը: Տղամարդկանց սպասում էր ստույգ մահ: Նույնքան ստույգ էր կանաց ու երեխաների աքսորը: Ինչո՞ւ ուրեմն չդիմադրել մինչև մահ: Կանաց ու երիտասարդ աղջիկների մի մեծ խումբ նույնպես չէր ուղում զենքը ցած դնելու մասին լսել: Նրանք նախընտրում էին կովելով մեռնել, քան թե թողնել, որ իրենց պատիվն արատավորվի և սովամահ լինեն: Այնուամենայնիվ, նրանք չկարողացան կանխել անձնատուրությունը, որը տեղի ունեցավ դիմադրության 16-րդ օրը: Վերոհիշյալ քահանան թախանձեց սարսափահար մարդկանց, որ չհանձնվեն: Նա իր խոսքերն ուղեկցեց հայտարարությամբ, որ ուսաներն արդեն Դիարքերի ուղում են, Ուրֆայից երկու օրվա հեռավորության վրա:

14. Անձնատուրություն

Հոկտեմբերի 16-ին, կեսօրից առաջ, տեղի ունեցավ թուրքերին հանձնվելու կարգը: Կանայք ու երեխաները, այդպես չնչեց հրամանը, պետք է շարվեին սահմանված փողոցներում՝ ձեռքները դատարկ: Ով որ ձեռքում որևէ իր կունենա, անմիջապես կգնդակահարվի, սա էր գեներալի հրամանը: Հանձնվելու ընթացքում տղամարդիկ պարտավոր էին այլ տեղում ներկայանալ, իրենց ձեռքերը վեր: Ես հուսով էի, որ պարոն Լեսլին ու նրա ընկերները առաջինը պիտի հայտնվեին և զնացի ոստիկանատուն նրանց, հնարավորության դեպքում, տեսնելու և կամ իրենց հետ խոսելու: Այնտեղ գնալիս դեմս եկավ կանանց ու երեխաների մի երկար, երկար շարասյուն: Աստված իմ, ինչ սարսափելի էր, զարհուրելի, հուսահատական: Պետք էր տեսնել բոլոր այդ սարսափահար, հուսահատ, ինձ քաջածանոթ դեմքերը և նրանց դիմագծերում կարդալ հուսահատության այդ դառն արտահայտությունը: ԶԵ՞ որ նրանք այժմ ավելի քան առաջ մահվան ճանկերում էին: Ձեռք ու ոտք ընկած, ձայն էին տալիս ինձ. «Օ, Յակոր եղբայր, փրկի՛ր մեզ, փրկի՛ր մեզ»: Բայց ի՞նչ կարող էի ես նրանց համար անել: Ոչինչ: Ես ինքս էի հուսահատված, որ նրանց փրկելու ոչ մի միջոց չկա: Նախ կանանց ու երեխաներին խցկեցին երեք մեծ շենքի մեջ: Այնտեղ նրանք պարտավոր էին առայժմ սպասել: Տղամարդկանց բաժանեցին երկու խմբի. որևէ կարևորություն ունեցողներին տարան բանտ, իսկ մյուսներին, որոնք հեղափոխականի տեսք չունեին, տեղափոխեցին մզկիթի բակը, որտեղ նրանք մնացին խիստ հսկողության տակ:

Պարոն Լեսլիին և մյուս եվրոպացիներին, ինչպես նաև նրա հայ աշխատակիցներին, հանդիպեցի ոստիկանատանը: Ծնորչիվ ոստիկանության հետ իմ մշտապես ունեցած լավ հարաբերության, ինձ թույլ տվեցին պարոն Լեսլիի հետ կարծ խոսակցություն ունենալ: Նա ինձ տվեց իր մոտ եղած դրամը: Հազիվ էի այն գրավանս դրել, երբ մի ոստիկան եկավ ու պահանջեց, որ ցույց տամ գրավանիս պարունակությունը, մի բան, որին ես խկույն ենթարկվեցի: Նրան թվացել էր, որ պարոն Լեսլին ինձ ատրճանակ էր հանձնել: Տեսնելով, որ իմ ներկայությունն այստեղ ցանկալի չէ, ես հեռացա: Կառավարության շենքի

առաջ մեծ խոնվածք էր առաջացել: Հենց նոր բերել էին մի ոռուսի՝ երկար, ծածանվող մազերով: Նա ներկալվածներից մեկն էր, բնակվում էր Հայկական թաղամասում և այնտեղ էին նրան գտել: Նա ո՞չ քայլել էր կարողանում, ո՞չ խոսել, իսկ այս-տեղ նրան քարշ էին տվել էշի վրա բարձած: Նա փոված ըն-կած էր ոստիկանական շենքի փոքրիկ հրապարակում: Ոստի-կանները նրան ոտքերով հարվածում էին: Առաջին հայացքից ես տեսա մի ծանր հիվանդի, որը ոչինչ չի հասկանում իր շրջա-պատում կատարվածից, և նրան անմիջապես պաշտպան կանգնեցի: Դրա վրա ոստիկանները նրան հանգիստ թողեցին: Խնդրանքս ոստիկանապետին՝ հիվանդին բուժարան տանելու, բավարարվեց. սակայն նա արդեն մահամերձ էր և տեղ չհա-սավ: Այնու հետեւ ես փորձեցի շարունակել ճանապարհս՝ թա-փանցելու քաղաքի խորքերը, ուր մահմեղական թաղամասում հիվանդների պիտի այցելեի: Սակայն տագնապը փողոցներում ահավոր էր, ամեն քայլափոխին ներկայացող տեսարանները՝ սոսկալի: Ամեն կողմից զինվորների ուղեկցությամբ մոտովս էին անցկացնում ինձ ծանոթ Հայերի, որոնց հետևից կատաղի անեծքներ էին թափում՝ միաժամանակ քարեր նետելով նրանց վրա: Ես Հարմար նկատեցի շրջվել՝ վերադառնալ հիվանդա-նոց: Այնտեղ Հենց նոր թուրքերը 17 տարեկան մի աղջկա էին բերել, որի փորը կրակոցից ծակված էր: Նրա վրա կրակել էին, որովհետեւ նա չէր ցանկացել անձնատուր լինել: Թե ինչու զինվորները, փոխանակ աղջկա կյանքին միանգամից վերջ տալու, դեռ մեղ մոտ էին նրան քաշ տվել բերել, ես չհասկացա: Հավանաբար աղջիկն իր քաջությամբ նրանց հիացմունք էր պատճառել. նա ուներ նաև կուրացնող գեղեցկություն: Բարե-բախտաբար նա շուտով մահացավ և փրկվեց հետազա փոր-ձանքներից:

Երբ երեկոն իջավ և պարոն Լեալին ոստիկանատնից չվե-րադարձավ, մի քիչ ուտելիքով այնտեղ գնացի: Պատահել էր այն, ինչ ենթադրում էի. նա բանտում էր: Շնորհիվ իմ ջանքերի, նաև երաշխափորությամբ, որ թույլ չեմ տա նրան փախչել, ես նրան կալանքից հանեցի և իմ տունը տարա: Ճանապարհին անցնում էինք մի մղկիթի առաջ գտնվող հրապարակով, որը զինվորներով շրջափակված էր: Նրանք հրամայեցին, որ արագ հեռանանք: Հաղիվ էինք հասել 200 մ հեռավորության վրա

գտնվող իմ տան մոտ, երբ մղկիթի հրապարակում գնդակա-
հարեցին մի խումբ Հայերի: Ուրիշ կողմերից էլ կրակոցներ
լսվեցին: Պարզ էր, որ սկսվել էր ուրֆահայության սպանդը:

15. Հակոբ

Մարդկանց այդ կոտորածները տևեցին մի քանի օր. դրանք
տեղի էին ունենում մայրամուտից առաջ ժամերին: Մեռածնե-
րին, որպես կանոն, թաղում էին ընդհանուր գերեզմաններում:
Մեր խաղողի այգի տանող ճանապարհին, մի փոքրիկ հովտում
նույնպես սպանեցին մեծ թվով մարդկանց և դիակները
ծածկեցին հողի բարակ շերտով: Երբ գարնանը Հորդառատ
անձրև տեղաց, ջրի երես դուրս եկավ կիսաքայլքած դիակ-
ների մի մասը: Իսկ ավելի ուշ, հովտի խորքում կարելի էր
տեսնել ամենուրեք սփոված մարդկային ուսկորներ, որ քչել
տարել էր ջուրը:

Մի այդպիսի զանգվածային ջարդի օր, երեկոյան ժամը 10-
ին դուռը ծեծեցին: Ես արդեն անկողին էի մտել: Տան դռան
ապակե պատուհանի միջով գիշերային մթության մեջ նշա-
րեցի մարդկային մի մերկ կերպարանք: Դուռը բացեցի: Իմ
առաջ կանգնած էր մի մարդ՝ արնաշաղախ վիճակում. «Օ, Յա-
կոր էֆենդի, Աստծո սիրուն, խղճա՛ ինձ, ինձ մի տեղ տուր, ուր
կարող եմ մեռնել»: Սաստիկ ցրտից դողդողացող մարդը հի-
վանդանոցի բեռնակիր Հակոբն էր: Ամբողջ դեմքը խաթարված
էր: Կարիք չկար Հարցնելու, թե ինչ էր պատահել, անկասկած
նա մեկն էր նրանցից, որոնց այն երեկո մեր տան մոտա-
կայրում մահվան գիրկն էին ուղարկում, բայց որը Աստծո բա-
րեխնամությամբ խուսափել էր մահից: Նրան՝ մեռած կարծե-
լով, թողել գնացել էին, իսկ նա ծանր վիրավորվել և ուշագնաց
էր եղել: Ի՞նչ անեմ: Այդ պահին իսկապես չգիտեի: Զէ՞ս որ Հենց
այդ նույն օրն էր, որ թուրք գեներալը սպառնացել էր ինձ, որ
եթե այսուհետև Հայերին խնամեի, ինձ Հետ կվարվեր այնպես,
ինչպես վարվում է Հայերի Հետ: Խեղճին տեղավորեցինք մի
փոքրիկ սենյակում ու վրան ծածկեցինք: Ապա շտապ վերա-
դարձա ննջասենյակ, որտեղ կինս արդեն վախսվորած ինձ էր
սպասում: Թող ինձ հավատան, եթե ասեմ, որ այն օրերին, երբ

ամենուրեք օդում գնդակներ էին սուլում և ամեն ծակուծուկի մեջ մահն էր դարանակալել, կանայք միշտ մտահոգվում էին, երբ ամուսինը ոտքը դռնից դուրս էր դնում: Այս անգամ էլ քանի որ ես էի շվարել, կինս էր, որ ինձ կրկին հունի մեջ գցեց. «Խեղճ մարդը վիրավոր է, և պատերազմի ժամանակ բժիշկը պարտավոր է օգնություն ցույց տալ բոլորին՝ լինի դա բարեկամ թե թշնամի: Այս մարդը նույնիսկ բարեկամ է: Պարզապես քո պարտքն է՝ նրան հիվանդանոց ընդունել»: Բարեհոգի կինս իրավունք ուներ: Ես հագնվեցի և թշվառ մարդուն տարա բուժարան, որը նույնիսկ մեր տան մոտ էլ չէր գտնվում: Այնտեղ մենք կարեցինք նրա բոլոր բաց վերքերը: Նա կրկին ապաքինվեց:

16. Թուրքական խոստումներ

Բոլոր այն կանանց, որոնց թուրքերը տարել էին իջևանները (խանները), ինչպես նաև բանտում եղած տղամարդկանց, մենք՝ եվրոպացիներս, ամեն օր մի փոքր սննդամթերք էինք տանում: Այն յոթ տղամարդիկ, որոնց տարել էին գործարանյին շենքերից և գեներալի հրամանով բանտ նետել, իրենց սնունդն ստանում էին նույնպես մեր միջոցով: Ընդհանուր անձնատուրության ժամանակ, սակայն, նրանց բերել էին այսպես կոչված Քարյուղի խանը, որը գտնվում էր քաղաքից դուրս: Այնտեղ նույնպես մենք նրանց ուտելիք էինք հասցնում: Սակայն այդ մարդկանց հետ երբեք տեսակցություն չէինք ստանում: Մի առավոտ ես անձամբ տարա այնտեղ կերակուրները: Այդ առիթով ինձ հաջողվեց բոլորին տեսնել ու խոսել նրանց հետ:

Նրանց տեսքը սոսկալի էր՝ հաղիվ ճանաչելի: Նրանք պատմեցին, որ իրենց հաճախ գանահարում են: Քահանան, մեր որբերի հայրը, ցույց տվեց իր ուռած թեր, որի վրա մի մեծ թարախակույտ էր գոյացել: Ուրեմն այսպես էր վարդում թուրք գեներալն այն մարդկանց հետ, որոնց համար գերմանացի արդյունաբերության ղեկավարին խոստացել էր, որ նրանց վնաս չի հասցվի: Տունդարձի ճանապարհին փորձեցի մտնել գեներալի մոտ, մի բան, որ ինձ հաջողվեց: Խնդրեցի

նրան ինձ հանձնել մեր որբանոցի հորը՝ նրան հիվանդանոց տանելու համար, քանի որ վիրահատության կարիք ուներ: Զէ՞ որ նա խոստացել էր խնայել այդ մարդկանց:

Իսկ նա ուղղակի հարձակվեց իմ վրա. «Ի՞նչ է, Դուք հանդինել եք Հաղորդակցվե՞լ այդ դավաճանների հետ: Ո՞վ է Զեզ դա թույլ տվել: Մեկ անգամ ևս փորձեք, և ես կկարգադրեմ, որ Դուք էլ արժանանաք նույն վերաբերմունքին, ինչ որ այդ մարդիկ: Ես հիմա անմիջապես կհրամայեմ, որ Զեզ այլևս նոր այցելություններ չթույլատրվեն»:

Նման խոսքերը, որ գալիս էին մի մարդուց, որի քմահաճույքին էր հանձնված Ուրֆայի բնակչությունը, բնավ հուսադրող չէին: Այդ եղավ նաև այդ յոթ մարդկանց վերջին առավոտը: Կեսօրից հետո նրանք՝ քաղաքից դուրս մի րլի վրա ուազմաղաշտային դատարանի վճռով գնդակահարվեցին: Գեներալը նույնիսկ Հարկ չհամարեց պարոն էքարթին դրա մասին տեղեկացնել: Վերջինս գնդակահարության մասին տեղեկացավ մի թուրք բժշկից, որը պարոն էքարթի գերմանական տանը ներտուղուրս էր անում: Բժիշկը Հանգես էր եկել մահվան քննիչի պաշտոնով և զոհերի նրա նկարագրությունից գերմանացին զիլսի էր ընկել, որ նրանք իր յոթ ծառայողներն են, որոնց համար նա ստացել էր թուրք գեներալի խոսքը, որոնց հավաստիության մասին նա կասկած էլ չէր ունեցել:

17. Պարոն Լեսլիի մահը

Ամերիկացի միսիոներ Ֆ. Հ. Լեսլին իմ լավագույն բարեկամն էր: Ընդամենը երեք տարի առաջ, նա դեռևս երիտասարդ տղամարդ, եկել էր Թուրքիա և Ուրֆա: Մենք երկուսս բոլոր Հարցերում իրար շատ լավ էինք հասկանում: Ես հաճախ էի նրան օգնում իմ փորձով և իմացությամբ: Իսկ նա, երբ ես գարնանը բծավոր տիֆով մահմերձ պառկած էի, կնոջս հավատարիմ պաշտպանը եղավ: Այն ժամանակ էր, որ նա, երբ մեր Հայ բժիշկը չէր կարողանում պարզել իմ վիճակը, իր նախաձեռնությամբ իմ մահճակալի մոտ կանչեց նշանավոր միսիոներ բժիշկ դ-ր Շեփարդին (Dr. Shepard): Միայն մի կետում մենք տարակարծիք էինք՝ քաղաքականապես մտածում էինք ոչ

նման: Ես գերմանացիների կողմն էի, իսկ նա՝ Անտանտի: Այնուամենայնիվ դա երբեք մեզ պառակտուման առիթ չտվեց: Եվ ինչո՞ւ դա խնդիր դարձնել:

Քանի որ նրա մանկամարդ կինը իր առաջին ծննդաբերությունն էր ունենալու, գարնանը Լեսլին նրան Այնթապ ուղարկեց. այնտեղ կար մի միսիոներ բժշկուհի: Այսպիսով, Լեսլին Ուրֆայի բոլոր սարսափելի իրադարձությունները միայնակ ապրեց: Աշխատանքում միայն Հայ օգնականներն էին կանգնած նրա կողքին: Հունիսին մոտ 500 քաղաքացիական ներկալվածներ եկան Ուրֆա: Հալեպի ամերիկացի Հյուպատոսը բոլոր այդ մարդկանց Հոգսը բարդեց պարոն Լեսլիի վրա: Հսկայական մի աշխատանք: Թեև երկու օգնական էր նրան կցված, սակայն դարձյալ այդ գործը չափազանց մեծ էր արդեն գերծանրաբեռնված մարդու համար: Հուլիսի սկզբին Հալեպից նրան բերեցի Հյուպատոսարանի ցուցանակն ու դրոշը, որոնք պարոն Լեսլիի համար ինձ տվել էր ամերիկացի Հյուպատոսը: Նամակում, որը Հյուպատոսը տվել էր ինձ Լեսլիին հանձնելու, ասվում էր, որ պարոն Լեսլին նշանակվել էր Հյուպատոսության գործակալ: Ասվում էր նաև, որ Բարձր դուռն արդեն անհրաժեշտ ցուցումներ է տվել Ուրֆայի կառավարությանը, ըստ որի պարոն Լեսլին արդեն հաջորդ կիրակի պիտի բարձրացներ ամերիկյան դրոշը:

Հետեւյալ կիրակի վաղ առավոտյան ամերիկյան շենքի վերևում իսկապես ծածանվում էր աստղագարդ դրոշակը, իսկ դռան վերևում կախված էր Հյուպատոսարանի ցուցանակը: Սակայն փառահեղությունը երկար չտևեց: Կեսօրվա կողմ ոստիկանությունը հայտնվեց ու պարոն Լեսլիից պահանջեց անմիջապես իջեցնել դրոշակը, քանի որ այն բարձրացնելու թույլտվություն չկար: Ոչինչ չէր մնում անելու, քան Հնազանդվել: Այն օրերին Ուրֆայով էին անցկացնում մի ամերիկացի բանտարկյալի՝ Դիարբեքիրից միսիոներ քժիշկ դ-ր Սմիթին: Հավանաբար այդ պարոնը Դիարբեքիրում Հայերի տեղահանումների դեմ իր ելույթներով անբաղձալի էր դարձել, դրա համար էլ թուրքերը նրան տեղափոխում էին Բեյրութի ափամերձ շրջանը: Պարոն Լեսլին կարողացավ մի պահ ոստիկանության ներկայությամբ խոսել բանտարկյալի հետ:

Այդ օրվանից պարոն Լեսլին կորցրեց իր հանգիստը,

Հնայած այն արդեն մայիսին խանգարվել էր: 1915 թ. մարտին Ուրֆայում երկու ամերիկացի հայտնվեց: Հալեպի ամերիկացի հյուպատոսի պահով պարոն Լեսլին փոստային մի բացիկով, ծածկագրի օգնությամբ, հյուպատոսին ծանուցեց հյուրերի ժամանման ու մեկնման մասին: Մայիսին հյուպատոսը նրան պատասխանեց, որ ստացել է բացիկի պատճենը միայն, իսկ բնագիրը փոստը պահել է:

Օգոստոսի սկզբին Ուրֆա ժամանեց ամերիկացի փոխհյուպատոսը: Մտածում էի, որ այլևս պարոն Լեսլիի հոգար կթեթևանա: Սակայն օգոստոսի 19-ի կոտորածից հետո փոխհյուպատոսը վերադարձավ Հալեպ՝ աշխատանքի ամրող ծանրությունը կրկին թողնելով միայն պարոն Լեսլիի վրա:

Սեպտեմբերին պարոն Լեսլիի մոտ արդեն ի հայտ եկան ախտանշաններ, որոնք հատուկ են Հալածանքի մտագարության: Ես Համոզեցի նրան Այնթապ մեկնել՝ այցելելու այդ ընթացքում ծնված իր շառավիղին և նրա երիտասարդ մայրիկին: Իմ խորհրդով նա ուրիշի փոխանցեց ներկալվածների Համար տարփող աշխատանքը: Ինձ Համար շատ դժվար եղավ նրան համոզել, որ այդ քայլին դիմի: Քանի որ ես մտադիր էի այսուհետև որբանոցում օրական միայն մեկ ժամ ընդունելություն անցկացնել, նրա խորհրդով որբանոցի դրամարկղի պարունակությունը իմ տունը տարա, որտեղ այն ավելի ապահով տեղում կլիներ: Բարեկամս, սակայն, ինձ խնդրեց իրեն մինչև Այնթապ ուղեկցել, քանի որ նա վախենում էր, որ ճանապարհին թուրքերը իրեն կսպանեին: Ճիշտն ասած, ես բնակ գնալու հնարավորություն չունեի, սակայն մտածեցի, որ երր դուրս գանք քաղաքից, խեղճը մի քիչ կհանգատանա և այն ժամանակ ես արագ Ուրֆա կվերադառնամ՝ թողնելով նրան մենակ շարունակելու ուղևորությունը: Ինչպես արդեն նշել էի, սեպտեմբերի 30-ին էր, որ ես Հիվանդի հետ ուղում էի դուրս գալ քաղաքից, ցավոք, դարպասի մոտ տեղակայված պահակը դա արգելեց:

Այնուամենայնիվ ես մեկ անգամ ևս, այս անգամ առանց կառքի, ոտքով շրջանցեցի այն բարձունքը, որի վրա գտնվում է Ամերիկան միսիոներական հաստատությունը և աղպես տեղ հասա: Պարոն Լեսլիին խնդրեցի, որ ինձ հետ գար: Սակայն նա հեռանալու մասին այլևս չէր ուզում լսել:

- Չե՞ս յուրմ: Սկսվել է, այժմ պետք է միասին ապրել կամ միասին մեռնել: Ինչպե՞ս կարող եմ, ի՞նչ իրավունքով ես հիմա իմ որբերին մենակ թողնեմ: Դու դա կանեփ՞ր: Ոչ, դու էլ չէիր անի: Ինչպե՞ս ես ուրեմն դա ինձնից պահանջում: Ես կապրեմ կամ կմեռնեմ նրանց հետ:

Անշուշտ, ես կարող էի նրան հասկանալ, բայց չէ՞ որ նա հիվանդ էր: Եվ այսպես ստիպված էի գործն անավարտ թողած վերադառնալ: Այնուհետև ես այդ քաջարի մարդուն 16 օր չպիտի տեսնեի:

Հալեափի ամերիկյան հյուպատոսն այդ օրերին ինձ հեռագրեց, հարցնելով, թե ես արդյոք կուղեի՞ ստանձնել ներկալ-վածների համար տարվող աշխատանքը: Անհրաժեշտ օժանդակ ուժերի պակաս չէի ունենա: Երկար մտմտալու կարիք չունեի, քանի որ դա հնարավոր չէր: Բավական էր մտածել, թե այդ աշխատանքը որքան թանկ էր նստել պարոն Լեսլիի վրա: Ընդհանրապես, ինչպե՞ս կարող էր պարոն էղելմանը՝ փոխ-հյուպատոսը, որն օգոստոսի սկզբին էր ժամանել Ռուֆա, նույն ամսին նորից հեռանալ քաղաքից: Մի՞թե նրա պարտականությունը չէր՝ մնալ և այդ աշխատանքը կատարել: Ի՞նչ ուներ նա Հալեպում անելու, որտեղ արդեն հյուպատոս կար: Ես այն ժամանակ նրան, իրավացիորեն, թե անիրավարար, մեղադրեցի վախկոտության մեջ: Նրա ոտքերի տակ հողը վառվում էր, և նա արագ փախափ Հալեայ, որտեղ նա իրեն ավելի ապահով էր զգում, քան Ռուֆա կոչվող դժոխային կաթսայում: Հեռազրեցի ուրեմն կարճուկտրուկ. «Impossible» (անհնարին):

Հասկանալի էր, որ 16 օրվա պաշարումը թանկ նստեց պարոն Լեսլիի նյարդային համակարգի վրա: Երբ ես նրան ոստիկանատանը վերստին տեսա, սարսափեցի նրա մոլորված հայացքից, չնայած նրա մոտ նման մի քան առաջներում էլ էի տեսել: Հայերի հանձնվելուց հետո մի քանի օր Լեսլին, ինչպես արդեն նշել եմ, իմ հյուրն էր: Կիրառեցի նրան համոզելու ամեն տեսակի միջոց, բերեցի հազար ու մի հիմնավորում՝ հանելու նրա միջից այն մտավախությունը, որ թուրքերը նրան կախելու են: Երանի թե կարողանայի նրան իսկույն Այնթապ ուղարկել: Սակայն այլևս դա հնարավոր չէր, քանի որ նա այժմ թուրքերի քանտարկյալն էր: Ամեն օր Լեսլին պարտավոր էր ներկայանալ թուրքական ուղամական դատարան: Եթե առավոտ-

յան նա որոշ չափով հանգստացած էր դուրս գալիս, ապա ամեն անգամ վերադառնում էր ամրողջովին ջարդված:

Կեսօրից հետո էր, երբ մի օր ինձ կանչեցին ուազմական դատարան: Ես՝ որպես վկա, պետք է ներկա լինեի պարոն Լեսլիի տնօրինության տակ գտնված Հայերի ունեցվածքի հանձնմանը: Այդ առիթով թուրքերի ձեռքն անցավ մոտ 2000 ոսկեղբամ և գրեթե նույն բարձր արժողությամբ զարդեղեն: Հանձնման ժամանակ տեսա, թե ինչպես մի սպա, որ մասնակցում էր ոսկու հաշվարկին, ոսկեղբամի մի անտիկ նմուշ խցկեց գորգի տակ, որի վրա նստած էինք: Նոր էինք ավարտել հաշվարկը, երբ ներս մտավ գեներալը և տեսավ փայլուն ոսկեղբամի երևացող ծայրը: Այդ ոսկեղբամն էլ մտավ պարկի մեջ, որն այնու հետև հանդիսաւթյամբ կնքվեց:

Երեկոյան Լեսլիի հետ տուն վերադառնալիս, կրկին գործի դրեցի ամենայն պերճախոսություն՝ կոտրված այդ մարդուն սփոփելու նպատակով: Հայերի իրեն վստահված թանկարժեք ամրողջ ունեցվածքի հանձնումն էր, որ նրան այսօր այդքան ընկճում էր:

Հոկտեմբեր ամսվա վերջերին մի երեկո պարոն Լեսլին ինձանից ստրիխնին (ծնթ. թարգմ. *Strychnin* = թարգ.՝ բնամորմ) խնդրեց, որովհետև ինչպես ինքն էր ասում, չէր թողնելու, որ թուրքերն իրեն կախեին: Միայն երկար-բարակ զրույցից հետո, որի ընթացքում նրան հիշեցրի իր մանկամարդ կնոջ ու երեխայի մասին և վկայակոչեցի նրա միահինների կոչումը, որն անհամատեղելի էր նման մտքերի հետ, Հաջողվեց ինձ նրան կրկին մի քիչ հանդարտեցնել: Ի դեպ, իրեն համար կախվելու որևէ հեռանկար՝ ուրեմն և անհանգստալու պատճառ չկար: Պարոն Լեսլիի դեմ դատաքննության ընթացքի մասին մշտապես տեղեկանում էի, քանի որ ուազմական դատարանում բարեկամ ունեի: Վերջինս ասում էր, որ պարոն Լեսլիին որևէ բանում մեղադրելու հիմք չկա:

Հոկտեմբերի 30-ին պարոն Լեսլին սովորականի պես ուազմական դատարանում էր: Արդեն շատ օրեր ի վեր ուազմական դատարանը նրան չարչարում էր ինչ-որ դրամապահարանի բանալու Հարցով, որը նա թուրքերին պետք է հանձներ, քանի որ Հայի ունեցվածք էր: Դատարանի Հարցին, թե այդ բանալին նրա՞ մոտ էր, նա տվել էր անորոշ պատասխան՝ ասելով, որ չի

Հիշում: Նա հանձնել էր բոլոր ունեցած բանալիները, սակայն ոչ մեկը չէր հարմարվել: Քանի որ այդ դրամապահարանը պատկանում էր ամենահարուստ հայ վաճառականին, կառավարության համար կարևոր էր՝ Հնարավորին չափ չուտ տեղեկանալ, թե որքան դրամ կար դրա մեջ: Դրա համար էին անվերջանալի այդ չարչարանքները:

Այդ առավոտ, ուրեմն, չար դիպվածով ձիերի շուկայում կախաղան էին պատրաստել, որից կեսօրից հետո մի խումբ հայերի կախելու էին: Դեպի իմ տունը վերջին հարվածը հասցրեց: Իմ իննամյա որդին էր տեսել, թե ինչպես էր նա ընկել փողոցում՝ նախքան իմ տուն հասնելը: Անմիջապես ձայն է տվել մորը, որն արագ շտապել-հասել էր: Պարոն Լեսլին երեսի կնոջս հասցրել է ճանաչել, որովհետև նրան այնպես է նայել, կարծես ինչ-որ բան է ցանկացել ասել, սակայն նույն պահին կորցրել է զիտակցությունը: Բերանից կարրոյան թթվի ուժեղ հոտ է եկել, կզակն էլ այրված է եղել այդ թթվից: Կինս ուշագնաց Լեսլիին մի տղամարդու օգնությամբ արագ հիվանդանոց է հասցրել, որտեղ մենք իսկույն քացախաթթվի լուծույթով ստամբախ լվացում կատարեցինք: Սակայն նրա զիտակցությունը ետ չեկավ. կես ժամ անց բարեկամիս չնչառությունը կանգ առավ: Ոստիկանությունը տեղեկացվեց: Այն ներկայացավ ուղմական դատարանի մի անդամի հետ: Պարոն Լեսլիի գրապահից գտնվեց անգերենով մի գրություն, որի թարգմանությունը հետևյալն է.

«Սուպնով ուզում եմ հայտնել, որ իմ մահվան հարցում իմ բարեկամներ պարոն էքարթը և հատկապես պարոն Քյունցիերը որևէ մեղք չունեն: Թույնը ես իմ ձեռքով եմ վերցրել իմ որրանոցի գեղատնից:

Ուրֆա, 30 հոկտեմբերի, 1915 թ.

Ֆրանսիս Հ. Լեսլի»:

Մղձավանջային այս օրերին սա ինձ համար մի նոր, երեսի ամենածանր հարվածն էր: Նա ինձ համար թանկագին բարեկամ էր, եղրայր՝ բառիս բուն իմաստով: Նա այժմ դարձել էր ժամանակների զոհը, իսկ ես նրանից հետո պիտի շարունակեի ապրել: Իմ աղոթքները չկարողացան փրկել նրան: Նա չափա-

դանց փիսրուն հոգի ուներ այս չար երկրի համար:

Ստիպված էի դեպքի մասին լուր տալ երիտասարդ կնոջը: Ինչպես պիտի նա տաներ այս հարվածը: Նա, որն այժմ մննակ էր մնացել հաղիվ երեք ամսական դստրիկի հետ:

Հոկտեմբերի 31-ին, կեսօրից հետո տեղի էր ունենալու Լեսլիի հուղարկավորությունը: Բողոքականների գերեզմանոցում նրա համար գերեզման էի փորել տվել: Բոլոր եվրոպացիները, հատկապես ներկալվածներից շատերը, եկել էին մասնակցելու համեստ հանդիսությանը: Սակայն դրա սկսվելուց քիչ առաջ մի ոստիկան հայտնվեց և ինձ արգելեց հանգույցալին գերեզմանոցում թաղել: Ասաց, որ նա կառավարության սեփականությունն է: Իմ միջամտությունը կառավարության մոտ օգուտ չտվեց: Գեներալը, որը նահանգապետն էր, նույնպես վրա բերեց.

— Ինչպես եք դուք հանդնում միջամտել: Դուք պարզապես պարտավոր եք ենթարկվել մեր հրամանին: Մի՞՛թե կարծում եք, որ Ձեր այստեղ ներկայանալով կարող եք հրամանը փոխել:

Ինձ ուրիշ ոչինչ չէր մնում, եթե ոչ հապճեպորեն քաղաքից դորս գտնվող մի քարաստանում նոր գերեզման փորել տալ և այստեղ թաղել բարեկամիս աճյունը:

18. Ռազմադատական հետաքննություններ

Այդ օրերի ընթացքում ինձ ենթարկեցին ուազմադատական հետաքննության: Երբ հունիսին մեր դեղագործին հիվանդանոցից տարան և բանտարկեցին, դրան անմիջապես հաջորդելու էր նրա եղբոր, Արմենակի բանտարկությունը: Բայց քանի որ նա այդ ժամանակ թոքերի ծանր հիվանդությամբ պառկած էր գերմանական հիվանդանոցում, ժամանակավորապես զերծ մնաց կալանքից: Ամուսն ընթացքում նա իրեն վերագտավ: Սակայն նկատի ունենալով, որ հայերի վիճակը քաղաքում օրորի վատթարանում էր, ևս նրան պահեցի հիվանդանոցում, թեև հիվանդանոցն այլևս նրա տեղը չէր: Ազատազրկված հայերից կորզված վկայությունները ծանրացրել էին Արմենակի վիճակը, այնպես որ մի առավոտ ոստիկանները եկան հիվան-

դանոց՝ նրա հետևից: Պարզվեց, որ այս մարդը ապստամբության նախօրեին փախել էր Հիվանդանոցից և գնացել Հայկական թաղ՝ մասնակցելու ապստամբությանը: Ավագ բուժքույրը նրա փախուստի մասին ինձ չէր տեղեկացրել: Այնպես որ ես ոչինչ չգիտեի: Սակայն այս դեպքն ինձ մեկ անգամ ևս չնորհազրկեց դատարանի առաջ: Ինչեւ, ես արդեն թուրքիայում բավական երկար ժամանակ էի եղել, որպեսզի նման բաների վրա հանգիստ կորցնեի: Իմ կաշին ավելի հաստ էր, քան հանգույցալ ընկերոջս՝ Լեսլիի կաշին:

Արմենակը նրանցից մեկն էր, որը անձնատուրության ժամանակ չէր հանձնվել: Երբ պարոն էքարթը հայերի հանձնվելուց չորս օր հետո գնացել էր ամերիկյան հաստատություն, այդ նույն Արմենակը հանկարծակիորեն թարսոցից դուրս էր պրծել, ընկել նրա ոտքերն ու օգնություն աղերսել: Պարոն էքարթը վախսեցել էր: Մի դիմում՝ տեսնելով Արմենակին, գերմանացու աչքի առաջ նրան մի գնդակով գետին էր փուել:

Ռազմական դատարանի հետաքննությունները պարզել էին նաև, որ տեր Գարեգինը, մի հայ վարդապետ, թաքնվել է եվրոպացիների մոտ: Դրա համար ինձ կրկին դատարան կանչեցին: Այն հարցին, թե տեր Գարեգինն ինձ մո՞տ էր, ես բացասական պատասխան տվեցի: Իսկ մյուս հարցին, թե նա գերմանացիների կամ դանիացի տիկնո՞ջ օրիորդ Եփիեխը մոտ է, պատասխանեցի, որ դա ինձ հայտնի չէր: Դրանից հետո, զերմանացի սպան, թուրքական ծառայության մեջ գտնվող գեներալի, կոմս Վոլֆաքելի (*Graf Wolffskeel*) համհարզը, վերջինիս հրամանով պիտի հարցաքններ պարոն էքարթին, օրիորդ Եփիեխին ու ինձ և մեզ պիտի երդվեցներ, որ մենք իրոք չզիտեինք, թե որտեղ է գտնվում տեր Գարեգինը: Երդումը մենք կարողացանք փոխարինել ազնիվ խոսքով, որի մեջ հետևյալն էր ասվում, «Մենք չգիտենք, թե ներկայումս որտեղ է գտնվում տեր Գարեգինը»:

Այս բանակցությունից քառորդ ժամ անց կոմս Վոլֆաքելը մեկնեց Հալեպ՝ ասելով, որ Հիվանդ է: Իրականում, Ռուֆայի իրավիճակը, որի մեջ նա ի պաշտոնե էր ընդգրկվել, նրան տհաճություն էր պատճառել. նա չէր կարողացել տեսնել, թե ինչպես էին վարդում հայերի հետ՝ առանց հաշվի առնելու

նրանց մեղավոր կամ անմեղ լինելը:

Այսուհանդերձ, Հաջորդ օրը տեղի ունեցավ օրիորդ Եփիկեի տան խուզարկությունը, որի ժամանակ ոստիկանությունը օրիորդ Եփիկեի տանը Հայտնաբերեկ է մարդկանց մեծ բազմություն, բոլորն էլ Հայեր: Հաջորդ օրը մեր տներում անձամբ ներկայացավ դատարանի նախագահը և արձանագրեց մեզ մոտ դեռ ներկա Հայերի անունները:

19. Տարհանում

Այն բանից հետո, երբ մզկիթների բակերում և բանտերում առանձնացված բոլոր Հայ տղամարդկանց, առանց բացառության, սպանեցին, սկսվեց կանանց ու երեխաների տարհանումը: Նրանց հոգեկան վիճակն այդ ընթացքում ծայրահեղորեն խանգարված էր: Ո՞վ պիտի կարողանար այդ ամենը բառերի վերածել: Կինս, որն ամեն օր այցելում էր այդ ճամբարները, ականատես էր լինում աննկարագրելիին: Սկզբնական շրջանում ես նույնպես ամեն օր լինում էի ճամբարներում, մեծ մասսամբ, դեռ պաշարման ժամանակ վիրավորված մարդկանց խնամելու նպատակով: Երբ մի անգամ այնտեղ Հաց տարա, կանայք ճայն տվեցին ինձ. «Հա՞ց ես մեզ բերում: Մե՞ղ, որ մաշվան զավակնե՞րն ենք: Ո՛չ, մեզ Հաց մի՛ բեր, թույն բեր, շամ թույն: Ախ, մի՛ թող, որ մեզ քշեն, այնպես արա, որ մենք այստեղ մեռնենք: Ինքդ գիտես, թե ինչ է նշանակում անապատ քշվելը»:

Կանանցից ոմանք էլ ինձ ցույց էին տալիս թույնով լի շներ և ուզում էին իմանալ, թե ինչքան պետք է դրանից ընդունել մեռնելու համար. չէին ուզում շատ ընդունել, որպեսզի եղած թույնը Հնարավորին չափ ուրիշներին էլ բավարարեր:

Իսկ մայրերն իրենց ծծկերներին հետ: Նրանց կաթը վաղուց ցամաքել էր, իսկ ուրիշ սնունդ չկար: Սակավաթիվ էին այն մայրերը, որոնք քաջություն էին գտնում, իրենց երեխաներին կողքից վաղող հեղեղատը նետելու, որպեսզի նրանք ժամ առաջ ազատվեին: Ուստի մայրերն իրենց ծծկերներին բակերում կողք-կողքի շարում էին: Այնտեղ նրանք թող ճշային, որքան կարող էին: Իսկ երբ ճիշը կտրվում էր, նրանք մի քանի

անգամ օդ էին ծծում, որից հետո մահը նրանց փրկում էր: Վերոհիշյալ հեղեղատը առավոտյան միշտ լցված էր լինում կանանց ու աղջիկների դիակներով, որոնք ընտրել էին տարհանումից խուսափելու այս ձևը: Ի վերջո կառավարությունը կտրել տվեց նաև այդ ջուրը:

Իսկ բուն մահվան այս նվիրյալների տեղափոխումը: Մի՛թե որևէ զրիչ կարող է նման բան նկարագրել: Կանայք չեն ուզում փողոց դուրս գալ: Ժանդարմները մտրակների հարվածներով նրանց դուրս են քշում: Դրսում, ճանապարհի վրա մի կին իրեն նետում է գետին: Չի ուզում այլևս ոտքի կանգնել: Ժանդարմը նրան տեղնուտեղը սպանելու փոխարեն, սվինով խոցահարում է: Սակայն նա էլի չի ուզում ոտքի կանգնել: Ոստիկանը կրկին է սվինահարում, բայց այնպես, որ կինը ոչ թե մեռնի, այլ միայն վիրավորվի: Վերքերից արյունը հորդում է: Ի վերջո, կինը որոշում է ոտքի կանգնել ու քայլել: Ահա՝ մի ուրիշ կին, որը խելազարվել է: Նա վազվզում է արձակ մազերով, երգում է ու ծիծաղում: Եվ ահա՝ երկրորդը, որ փորձում է փախուստի դիմել կողքի նրբանցքով: Մի ոստիկան նկատում է նրան ու գնում է նրա հետևից: Մի կրակոց, և նա փրկվեց: Նա իր քույրերից ավելի բախտավոր է: Քաղաքից դուրս կանգնած են բազմաթիվ մահմեղականներ: Հայուհիներից մեկը իրեն ճանաչել է տալիս, մահմեղականները խլում են նրան ու անհետանում: Երթի մեջ քայլում է նաև մի հայ վաճառականի տասնչորս տարեկան աղջիկը: Մի թուրք, որը նրան հետապնդում է, հափշտակում է նրան: Վերջինս, սակայն, դիմադրում է թուրքին: Նա նախընտրում է անապատում մեռնել, քան որևէ մահմեղականի տունը տարվել: Մոտենում է մի ժանդարմ, ոչ թե թուրքին օգնելու մտադրութամբ: Բայց ահա թուրքի ձեռքին փայլվում է ոսկեղրամը: Ժանդարմը տեղի է տալիս: Դիմադրող աղջիկն անհետանում է թուրքի հետ: Նրան հարեմում սև ճակատագիր է սպասում:

Թե ճանապարհին ինչ փորձանքներով են անցել այս տարարախտները, ես արդեն պատմել եմ: Կասկած չկար, բոլոր ուրֆացիները պետք է անապատում ոչնչանային, դա ծրագիր էր և ցանկություն: Դրա համար էին նրանց շարունակ այստեղից այնտեղ քշում, մինչև այլևս ոչ մի տեղափոխվելիք մարդ չմնար:

Դեռ մինչև տեղահանության ավարտը, մեր՝ եվրոպացիների տներից, միևնույն օրն ու միևնույն ժամին, տարան մեր բոլոր պաշտպանյալներին: Իսկ մենք հույսեր էինք փայփայում, որ նրանց կթողնեն մեզ մոտ: Այդ մարդկանց նախ տարանկանգնեցրին տների առաջ, և մի անգամ ևս մեր տները խուզարկեցին: Կարծելով, որ իմ բոլոր պաշտպանյալները դրսում են, տան խուզարկությամբ զրադշած ոստիկանի ներկայությամբ ես միամտարար բաց արեցի մի զգեստապահարան, և ահա նրա միջից դուրս թռավ մի երիտասարդ Հայուհի: Նույնիսկ իր համար իրավիճակը ծիծաղելի էր: Իհարկե նա էլ պարտավոր էր բոլորի հետ գնալ:

Իսկ դրսում իմ իննամյա որդին արցունքն աչքերին աղերսում էր ոստիկանին՝ խնայել իր «տատիկին»: Թող նա չգնա, խնդրում էր տղան՝ համբուրելով ձեռքը ոստիկանապետի, որն ինքն էլ արտասվելու մոտ էր: Սակայն անօգուտ էր, տարեց կինը պարտավոր էր գնալ բոլորի հետ: Իսկ ո՞վ էր այդ տատիկը: Նա 65 տարեկան մի այրի կին էր, որը 16 տարի ի վեր մեզ մոտ ծառայության մեջ էր: Իմոնց Համար, սակայն, նա շատ ավելին էր, քան մի աղախին: Նա Համարվում էր իմ երեխաների տատիկը, և ինքն էլ իրեն այդպես էր զգում:

Հաջորդ առավոտյան կինս մեկ անգամ ևս գնաց պարետի մոտ՝ նրանից մի կերպ կորզելու ծեր կնոջ մնալու թույլտվությունը: Պարետը, որը ճամբարներից արդեն ընտրել-տարել էր ամենագեղեցիկ աղջիկներին, իսկ ում որ չէր ուզում պահել, բաշխել էր սպաներին, կնոջս տվել էր հետևյալ պատասխանը. «Տուր ինձ նրա աղջկան, և իրեն ետ կստանաս»: Սակայն այդ քայլը կնոջս կարողությունից վեր էր: Ի դեպ, աղջիկն էլ արդեն դրսում ճամբարում էր գտնվում:

Կանանց ճանապարհելիս, ես նրանց միսիթարեցի ասելով, որ նրանք գնում էին ոստիկանատուն պարզապես զրանցվելու համար և որ հաջորդ օրը կրկին ետ էին գալու: Սակայն ծեր Մարիամը՝ մեր բարի տատիկն ասաց. «Oghlum, daha geltem!» (Որդիս, ես այլևս չեմ վերադառնա): Նա թուրքերին ավելի լավ էր ճանաչում:

Մեր տներից հանված բոլոր մարդիկ, եթե կանայք էին ու երեխաներ, պարտավոր էին աքսորի երթին մասնակցել: Իսկ տղամարդկանց, որոնցից շատերը հովանավորյալներն էին,

մյուսների նման չսպանեցին, այլ Հալեպ ուղարկեցին՝ զինվորության:

Մեր Մարիամը տարհանման նույն գիշերը ետ եկավ: Նրան թույլ էին տվել մի քանի կանանց հետ միասին կառք վարձել: Ուսկին իր անելիքն արել էր, և կաշառված կառապանը նրանց քաղաքի մոտակայքում թողել էր՝ իջնեն: Կեսօրից առաջ, Մարիամն իր աղջկա հետ նորից Հայտնվեց մեր տանը: Սակայն Հաղիվ էին տեղ հասել, երբ նրանց ետևից կրկին հասավ ոստիկանությունը: Կանայք ետնադոնից փախսան և փորձեցին թաքնվել մոտակա խաղողի այգու տնակում: Բայց քանի որ ոստիկանը նրանց տեսել էր մեր տուն մտնելիս, նախ խուզարկեց տունը, այնուհետև՝ շրջակա այգիները ու գտավ նրանց: Երրորդ անգամ նրանք չվերադարձան:

20. Գլխացավանքներ

Այն օրերին գեներալն այցելեց նաև մեր գերմանական հիվանդանոցը: Մանրակրկիտ տեղեկություններ հավաքեց առանձին հիվանդների անունների, նրանց հիվանդությունների մասին և այլն: Հավանաբար լսել էր, որ Հաստատությունը դեռ լի է հիվանդներով, որոնց մեջ անպայման կային նաև Հայեր: Հիվանդանոցում՝ Հայերի կողքին, որոնց վրա կրակել էին օգոստոսի 19-ին, նա տեսավ րուժվող մահեղականների, որոնք վիրավորվել էին Հայկական թաղամասի վրա գրոհելու ժամանակ: Ես նրան նաև պատմեցի, թե ինչպես էր Հակոռը, որը սպանվածների մեջ էր եղել, հիվանդանոց վերադարձել: Գեներալն այցելեց նաև իմ Հաստատած օժանդակ հիվանդանոցը: Հեռանալիս նա շինծու ժպիտով չնորհակալություն Հայտնեց այն մեծ աշխատանքի Համար, որ ես մինչ օրս կատարել եմ անթիվ հիվանդների Համար: Որպես թերություն նա միայն նշեց, որ երկու հիվանդանոցում էլ մահեղականներն ու Հայերը միասին էին բուժվում:

Նրա այցելությունն ունեցավ երկու չարագուշակ հետևանք: Նույն օրը երեկոյան, նահանգապետն ինձ հրաման ուղարկեց՝ անմիջապես ազատել օժանդակ հիվանդանոցի շենքը, քանի որ կառավարությունը ինքն էր ցանկանում այդ

տունը որպես Հիվանդանոց սարքավորել:

Արդեն գիշեր էր, և այդ պատճառով Հնարավոր չէր սկսել շենքի դատարկումը: Գնացի նահանգապետի մոտ և խնդրեցի ժամանակ մինչև Հաջորդ առավոտ, սակայն նա չուզեց դրա մասին լսել: Ես խոստացա Հաջորդ օրը վաղ առավոտյան ժամը յոթին բանալին նրան Հանձնել: Ի վերջո նա մեծ դժկամությամբ իմ այս առաջարկին ընդառաջ գնաց:

Վաղ առավոտյան ձեռնամուխ եղա փոխադրումներին: Մահմեղական Հիվանդներից շատերին կարելի եղավ դուրս գրել, որի չնորհիվ մի քիչ տեղ ազատվեց: Մի քանի Հիվանդի էլ ժամանակավորապես նկուղ տեղավորեցի: Համենայն դեպս, ժամը յոթին բանալին Հանձնելու խոստումս կատարեցի:

Իսկ թուրքերը միայն շարաթներ անց իրենց առաջին Հիվանդին ընդունեցին այդ տանը, որն ինձ պարտադրել էին այդքան արագորեն աղատել:

Քեներալի այցելության երկրորդ հետևանքն այն էր, որ Հաջորդ առավոտ ունեցանք թուրքական զինվորական բժշկի այցելությունը՝ քաղաքային բժշկի ներկայությամբ, որն այն ժամանակ վերահսկողություն ուներ մեր Հիվանդանոցի վրա: Հաղիվ էին բժիշկները Հիվանդանոցից հեռացել, երբ ոստիկաններ Հայտնվեցին և Հավաքեցին ու տարան բոլոր Հայ տղամարդ Հիվանդներին, որոնք ի վիճակի էին քայլելու: Նրանց թվում էր նաև վերը նշված Հակոբը, որն այլևս երկրորդ անգամ չվերադարձավ, քանի որ դահիճները այս անգամ ավելի հիմնովին էին կատարել իրենց գործը:

21. Սփոփանք

Քանի որ կառավարությունը օգոստոսի 19-ից հետո Հասկացավ, որ առանց Հայերի պարզապես չի կարող գոյատել, մի փոքր ջոկողություն արեց: Թողեց, որ մի քանի Հացթուխ ու դարրին Ուրֆայում մնան: Նաև մեր Հայ բժշկին իրավունք տրվեց մնալ, իհարկե միայն այն բանից հետո, երբ ուազմաղատական հետաքննությունը նրա անձի կամ նրա գրությունների կապակցությամբ որևէ կասկածելի բան չկարողացավ ի Հայտ բերել: Բայց նոյնիսկ այդ բոլոր մարդկանց, որոնց նախապես

թողել էին մնալու, մի քանի օր անց ստիպեցին հեռանալ: Երեխ եղել էր ինչ-որ նոր հրաման, որով Հայեր ամբողջովին մաքրագործելու էին: Եվ միայն մեր թմիշկը մնաց, որովհետև այդ ընթացքում բժավոր տիֆով անգիտակից վիճակում պառկած էր:

Դեռևս Ուրֆայի պաշարման ժամանակ Համաճարակը ծայր էր առել: Այն աշուղի չափերով տարածվել էր րոնագաղթվածների ճամբարներում և մաշ տեխչացող Հազարավոր տարագիրների Համար մեծ սփոփանք էր: Ով որ վարակվում էր, երկրորդ օրն արդեն կորցնում էր գիտակցությունը, և ով որ անխնամ էր մնում, ինչպես օրինակ թափառման դատապարտվածները, գետ գիտակցության չեկած, մի քանի օր անց մեռնում էր: Բոլոր նրանք, որոնց ճանապարհին բաժին էր ընկնում տառապանքներից ազատվելու այս ելքը, մնում էին ճամփեղերին ընկած, մինչև որ վրա էր Հասնում փրկարար մահը: Մեր Մարիամը նույնպես, Հաղիկ երկու օրվա ճանապարհ անցած, Հիվանդացել ու մահացել է:

Համաճարակը, սակայն, կանգ չառավ մահմեղականների դռների առաջ: Եթե այն սփոփանք էր աքսորյալների Համար, ապա նրանց Հալածողների Համար քաղաքում և երկրում՝ անողոք թշնամի: Զկար տուն, ուր Համաճարակը մուտք չգործեց, չկար տուն, որտեղից դուրս չհանվեցին այդ Հիվանդությանը զոհ դարձած մարդիկ: Հիվանդության զոհերի թիվը պետք է որ Հսկայական եղած լիներ, քանի որ այն աստիճանարար ընդգրկեց թուրքական պետության ամբողջ տարածքը: Հարանի Հարթավայրի մի քանի զյուղերի ամբողջ ընակչությունը, բացի երեխաններից, ոչնչացավ:

22. Թուրքական որբանոց

Հիշատակենք թուրքերի գթասրտության մի պոոթկում: Երբ ճամբարներում, որտեղ խոնված էին Հայ կանայք ու երեխաններ, լայիս ու ճչում էին անթիվ ծնողազուրկ երեխաններ, կառավարությունը որոշեց թուրքական որբանոց հիմնել: Այդ որբերից մոտ Հազար Հոգի ընդունվեց այնտեղ: Որպես խնամակալներ նշանակվեցին Հայուհիներ, քանի որ ոչ մի մահե-

դական կին պատրաստ չէր նման աշխատանք տանելու: Այսպիսով, գոնեն Հայ կանանցից մի փոքրիկ թիվ մնաց Ուրֆայում: Հավաքել էին նաև ծծկեր երեխաներ: Բայց նրանց համար ստուտուներ էին հարկավոր: Ուրֆայում կային շատ կանայք, որոնց ծծկեր երեխաները մահացել էին և որոնք կարող էին ստանձնել այդ պարտականությունը: Երբ պահանջվեցին ստուտուներ, կրկնվեց այն, ինչ պատահել էր Մովսեսի առաջնորդությամբ Հրեաների՝ Եզիստոսից փախուստի ժամանակ: Մայրերը լքում էին իրենց ծծկերներին, որպեսզի նրանց գտնեին ու տանեին: Այստեղ էլ՝ երբ երեխային որրանոց տարած թուրքը գալիս ու դայակ էր փնտրում, Հայտնվում էր ծծկերի մայրը՝ առաջարկելով իր ծառայությունը: Սակայն այդ որրանոցում շուտով թափ առավ մահացությունը: Հազարի չափ Հավաքված որրերից, կես տարի հետո կենդանի էր մնացել միայն 200 հոգի: Քրիստոնյա բոլոր երեխաներին տալիս էին մահմեղական անուններ: Ավելի ուշ մեծահասակ երեխաներին կրթում էին իսլամի Հավատով: Երբ 1917-1918 թթ. ձմռանը ահավոր սով բռնկվեց, մեծ թվով երեխաներ ազատ արձակվեցին: Միայն նրանք, որոնք լավ մահմեղական դառնալու հույսեր էին ներշնչում, կարող էին մնալ և ապա տեղափորվել նախապատերազմյան ժամանակներից մնացած արհեստագործական վարժարանում:

Կառավարության վիճակը պետք է որ շատ ծանր ելած լիներ, որ 1918 թ. դեկտեմբերին ստիպված եղավ աղատ արձակել Հայ ժողովրդի մնացորդներից՝ մոտ 20 երեխա: Հետագայում նրանք բոլորը եկան մեր որրանոցը, որի հիմնադրման մասին կիսունք ավելի ուշ:

23. Դավաճաններ

Ինչպես ամեն ժողովրդի մեջ լինում են վատ տարրեր, Հայերի մեջ ևս նրանք բացակա չեն: Այդ օրերին, երբ մահը զոհեր էր որոնում, Ուրֆայում կար տղամարդկանց ու կանանց մի խումբ, որը ստորանալով դավաճանում էր իր եղբայրներին: Գուցեց դա կարելի էր Հասկանալ, քանի որ Ուրֆայի Հայ բնակչության մեծամասնությունը Հավանություն չէր տվել

ապստամբությանը, այլ Հարկադրաբար ամեն ինչի, լավ թե վատ, ականատեսն էր գարձել: Դավաճանելով, նրանք փորձում էին իրենց Հայրենակիցներից վրեժ լուծել: Շատերի մոտ, սակայն, մղիչ ուժը վրեժը չէր, այլ միայն իրենց սեփական կյանքը կորցնելու վախը: Բոլոր այն Հայերը, որ Հոկտեմբերի 16-ին չէին Հանձնվել, կամ չէին ցանկացել զենքն իրենց ձեռքին մահվան դեմքին նայել, ստիպված եղան թաքնվել: Առ ջրհորները, գաղտնի գետնափորները և փողոցային ջրանցքները սովորաբար անհասանելի թաքստոցներ էին:

Նման թաքստոցների տեղերը մատնելով, մոտ կես երկվեցյակ տղամարդ ու կին փրկեցին իրենց ողորմելի կյանքը: Այդ նրանք էին, որ Ուրֆայում մնալու թույլտվություն ստացան, անշոշտ այն պայմանով, որ մուսուլմանություն ընդունեն, մի բան, որ նման արարածների համար ամենսին դժվար չէր:

Այդ ընթացքում դավաճաններից մեկը Հայտնվեց դժվար վիճակում: Նա մատնել էր, որ ջրհորներից մեկում Հայեր կային: Նրա կանչին, որ դուրս գան ջրհորից, որ ոչ մեկին ոչինչ չի սպառնում, ներքեցից որևէ պատասխան չեկավ: Սակայն ոստիկանները կարգադրեցին, որ նա մտնի ջրհորը: Պարանով կապեցին նրան և իջեցրին փոսը: Հասնելով Հատակ, նա սկսեց աղիողորմ ճշալ և նրան անմիջապես վերև քաշեցին: Ներքեռում՝ դանակի բազմաթիվ Հարվածներով նրան լրջորեն վիրավորել էին: Դրա վրա թուրքերը այդ ջրհորը քարապատեցին, և այնտեղ թաքնված Հայերը ողջ թաղվեցին: Նույն ձևով թուրքերը քարապատեցին բոլոր այն ջրհորները, որոնց մեջ կարող էին Հայեր թաքնված լինել:

24. Զանազան ապաստարաններ

Բնաջնջումը, այնուամենայնիվ, այնքան արագ չընթացավ, ինչպես նախատեսվել էր, և մի քանի շաբաթ տևեց, մինչև որ Ուրֆան ամբողջովին Հայերից մաքրվեց: Ավելի քան 15.000 մարդ աքսորելը, նրանց մորթելը կամ տեղահանելը ակներևարար դյուրին գործ չէր: Նոյեմբեր ամսվա վերջերին էր, որ քաղաքը կրկին խաղաղվեց: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ

լավում էր եղակի մի կրակոց: Ինչ-որ տեղ, զինվորները թալանով զրադշվելիս կրկին գտել էին թաքնված մի հայի և նրան այն աշխարհ ուղարկել:

Քաղաքի հայերից շատերը մահմեղականների մեջ բարեկամներ ունեին: Վերջիններից ոչ բոլորն էին այնքան անզութ, որ նույն աներևակայելի անպատկառությամբ, ինչ որ իրենց կառավարությունը, մասնակցեին մի ամրող ժողովրդի բնաջնջմանը:

Տարագիրների ճամբարներից ամեն օր անհետանում էին Հայ կանայք ու երեխաներ, որոնք սակայն չէին սպանվում: Նրանք ապաստան էին գտնում մարդասիրական մտայնությամբ մուսուլման բարեկամների մոտ: Զե՞՞ որ կանոն էր դարձել, որ ամեն մահմեղական ճամբարներից կարող էր տանել սրտի ուզած կնոջը կամ աղջկան: Բոլոր այդ Հայուհիները մուսուլմանական ընտանիք մտնելիս պարտավոր էին մահմեղական անուն ստանալ, մի բան, որ չէր նշանակում նաև մահմեղականություն ընդունել: Կառավարությունը, որը սկզբում տեղյակ էր փախուստի այդ եղանակի մասին, տեսնելով, որ այդ կերպ Հայ ժողովրդի ավելցուկը երկրում մեծանում է, ի վերջո այդ գործին փականք դրեց՝ Հայտարարելով, որ ամեն քաղաքացի, որը Հայ կպատսպարի, նույնպես աքսորվելու վտանգին կենթարկվի: Ուրֆայի քրիստոնյա ասորիներն, ինչպես նաև կաթոլիկները, որոնք թեև քանակապես նվազ էին, սակայն նույնպես ապաստան էին տվել Հայ կանանց, Հասկանալիորեն ենթարկվեցին թուրքերի հրամանին, թեև կուզայն պատճառով, որ նրանք որպես փոքրամասնություն բնակվում էին մահմեղականների շրջապատում:

Թուրքերի մեջ միայն մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ հնազանդվեցին Հրամանին: Քաղաքի ներսի ու շրջակայրի թուրք, քուրդ և արար բնակչության մեծ մասը կարևորություն չտվեց կառավարության ցանկություններին: Եվ ուղղմական դատարանը նույնիսկ քաղաքի պավագ դատավորին պահանջ ներկայացրեց՝ Հանձնելու իր մոտ եղած Հայ քրիստոնյաներին: Այդ մարդը նախապես պաշտոնավարել էր Երզնկայում, և Հայերի արտաքսման դեմ բողոքելու պատճառով նրան որպես պատիժ 1915 թ. Հուլիսին տեղափոխել էին Ուրֆա: Այստեղ նա այն չարարաստիկ օրերին նախագահել էր

մի ժողովում, որտեղ դիրքորոշվել է Հայերի նկատմամբ կիրառվող դաժանությունների գեմ: Այդ մարդը իր Հարկի տակ պատսպարում էր Հայ կանանց մի խումբ: Գեներալը ժողովից հետո նրան իր մոտ է կանչել ու ասել.

«Ո՞վ ես դու, որ Հանդգնում ես զեմ գնալ կենտրոնական կառավարությանը, այդ ժողովներում Հանդես գալ պահանջելով Հայերի նկատմամբ մեղմ վերաբերմունք և մանավանդ՝ Հակառակ իմ Հրամանի Հայու Հիներ թաքցնել քո տանը: Եթե այս բոլորը շարունակվի, ապա գիտցի՛ր, որ մենք ուժ ու կարողություն ունենք քեզ խելքի բերելու»:

Առանց որևէ առարկության սպասելու, գեներալը ավագ դատավորին նշան է արել, որ անմիջապես հեռանա: Արժե այստեղ նշել, որ ավագ դատավորը որպես «կաղի» քաղաքում երկրորդ բարձրաստիճան պաշտոնյան էր:

Հազիվ էր ավագ դատավորը տուն Հասել, երբ ոստիկանները գեներալի Հրամանագրով եկել և նրանից խլել էին Հայու Հիներին: Չնայած դրան, նա մի քանի օր անց իր տան մեջ կրկին գաղթականներ էր պատսպարել: Ես մահմեղականների մեջ չեմ ճանաչել ավելի ազնիվ հոգու տեր մի մարդու, ինչպես այս Կաղին է: Ոչ էլ երբեք այդքան մտերմացել եմ Մուհամեդի որևէ կողմնակցի, ինչպես նրա հետ: Հետագայում մենք իրար Հրամեցտ տվեցինք որպես լավագույն բարեկամներ, ես կասեի եղայրներ:

Ուրֆան տասնյակ տարիներ ի վեր նաև Փրանցիսկյան մի միսիոներության նստավայրն էր: Փրանսիական ծագում ունեցող Հայրերը (Pères) պատերազմն սկսվելուն պես Ուրֆայից հեռացան: Խսկ այն Հայրերը, ովքեր օսմանահպատակներ էին, մնացին:

Վերջիններս Համարձակվել էին իրենց մոտ թաքցնել մի Հայ կաթոլիկ քահանայի: շատ վտանգավոր մի ձեռնարկ: Մինչև 1916 թ. ձմեռը Հայրերի այդ խիզախ գործը Հաջողություն ուներ: Այնուհետև, սակայն, կառավարությունը կարողացավ, կրկին վերը նշված դավաճանների միջոցով, բռնել քահանային: Նրան գտան կաթոլիկ եկեղեցում՝ պատարագ մատուցելիս: Որպես պատիժ, բոլոր Հայրերը ձերբակալվեցին և, քանի որ այդ ժամանակ Ուրֆայում այլևս ուազմական դատարան չկար, նրանց տարան Աղանայի բանտը: Այնտեղ նրանցից

մեկը բժավոր տիֆից մահացավ: Միայն զինադադարից Հետո նրանք կրկին աղաս արձակվեցին: Խսկ Հայ կաթոլիկ քահանան, իր ներումից մեկ օր առաջ, Աղանայում կախաղան բարձրացավ:

Արևելքում գերմանական միսիոներության ծառայության մեջ գտնվող դանիուհի՝ օրիորդ Եփին, այդ օրերին քաջություն ունեցավ իր տան մեջ թաքցնելու յոթ տղամարդու: Նա ավելի բախտավոր եղավ, քան Հոգևոր Հայրերը: Չնայած որ նրա տունը երեք անգամ հիմնովին խուզարկության ենթարկվեց, ոստիկաններն այդ յոթ տղամարդկանց չկարողացան գտնել: Բնականաբար, այդ փրկարար կինը՝ մշտապես Հուզումների ենթարկվելով, խստորեն ծանրաբեռնել էր իր Հոգեկանը, և որպես այդ սոսկալի օրերի հետևանք, վեց ամիս շարունակ նյարդային հիվանդությամբ զամվեց անկողնին:

1916 թ. ամռանը տնային վերջին խուզարկությունների կապակցությամբ ոստիկանությունը ձերրակալել էր մեր արար ծառայողին՝ նրանից ցուցմունք կորզելու նպատակով: Նրան ահավոր ծեծի էին ենթարկել, սակայն քաջարի մարդը չէր մատնել այն փաստերը, որոնց մասին նա քաջատեղյակ էր: Նա էլ մահմեղական էր: Ամենայն հարգանք նման հավատարմությանը:

25. Լուծարման Հանձնաժողով

1915 թ. դեկտեմբերի սկզբներին գործի լծվեց լուծարման Հանձնաժողովը, որն առաջինն էր Ուրֆայում: Այն իր աշխատանքն սկսեց Հայերի այն ունեցվածքի վաճառքով, որ մնացել էր զինվորների ու ամբոխի թալանից Հետո: Հայերի վաճառնոցները, տները, այգիներն ու կալվածքները պետք է դատարկվեին կամ կառավարվեին: Այդ աշխատանքի Համար պահանջվեց երկու տարի, և այդ ժամանակամիջոցում իրար Հետեւից պաշտոնավարում էին տարրեր Հանձնաժողովներ: Հենց որ մեկ Հանձնախումբը Հայերի ունեցվածքով բավարար չափով Հարստանար, նրա պաշտոնյաները փոխարինվում էին նորերով, որոնք ինչպես իրենց նախորդները՝ անմիջապես ագահարար Հարձակվում էին արտաքսվածների և սպանվածների ունեցվածքի վրա:

Ռազմական դատարանի վերը նշված թարգմանիչը այդ Հանձնաժողովներում կատարում էր գրագրի պաշտոն: Նա ինձ պատմեց, թե ինչ էր տեղի ունենում Հայերի խանութներից ամբարված ապրանքների վաճառքի ժամանակ: Նախքան աճուրդի սկսվելը, լավագույններն ու ամենաարժեքավորները ուղղակի տարփում էին Հանձնաժողովի անդամների անձնական տները, եթե իհարկե այդ անդամները թուրք էին:

Մի արար տեր էր դարձել աղամանդե մի դարդի, որն անկասկած խլված է եղել ինչ-որ Հայուհոց: Արարն այն ցոյց է տվել Հարուստ մի թուրքի: Վերջինս դրա Համար առաջարկել է մի քանի ֆունտ, սակայն արարը ցանկացել է նախ գոհարավաճառի խորհուրդը Հարցնել: Թուրքն անհապաղ գնացել է գոհարավաճառի խանութն ու վաճառականին Հայտնել աղամանդի մասին: Թուրքը նրան մի գործարք է առաջարկել, որի հետ գոհարավաճառը Համաձայնվել է: Նա վաճառականին վճարել է 13 ֆունտ և երր արարը երևացել է, նա անհետացել է: Գոհարավաճառը 13 ֆունտով զարդ արարից գնել է: Երր ավելի ուշ թուրքը Հայտնվել է վաճառականի մոտ զարդը տեսնելու, վերջինս իր դրամարկղից Հանել է 13 ֆունտ և այն վերադարձրել է թուրքին՝ ասելով, որ գնումը տեղի չի ունեցել: Սակայն թուրքն աղմուկ է բարձրացրել, տեղի է ունեցել վիճարանություն, ընդհուպ մինչև ոստիկանության միջամտություն: Երր վերջինս տեսել է զարդը, վիճողներին վոնդել է այն հիմնավորումով, որ այդ իրը Հայի ունեցվածք է եղել և հետևարար պատկանում է կառավարությանը:

Հետագայում ես ավելի մանրամասն տեղեկություններ Հավաքեցի և պարզեցի, որ այդ արժեքավոր զարդը երբեք չի հասել Հանձնաժողովի ձեռքը: Վստահորեն այն գնորդ է գտել՝ նախքան «պաշտոնական պաշտպանության» տակ դրվելը: Ծատ Հավանական է, որ ոստիկանապետն ու Հանձնաժողովի նախագահը իրար մեջ բաժանել են ունեցվածքը:

26. Բրիտանական հոգեզպարություն

Բծավոր տիֆը, որի համաճարակի մասին արդեն քանիեւ-
րորդ անգամ հիշատակել ենք մեր գրքի էջերում, սովորաբար
վարակվելու երկրորդ օրն արդեն հիվանդին զրկում է գի-
տակցությունից: Այնուհանդերձ, 15-17 օր տևող ամրողջ հի-
վանդության ընթացքում հիվանդի միտքը թեև անգիտակից,
սակայն միշտ գործուն է: Ճիշտ այնպես, ինչպես նարկողի տակ
գտնվող մարդը, զառանցելիս՝ եթե աղոթող է, չի անիծում, այլ
աղոթում է, կամ եթե անիծող է, չի աղոթում, այլ անիծում է,
այդպես է նաև բծավոր տիֆի ժամանակ: Ինչ որ մարդու
մտքում ապրում է, ողջ է մնում է նաև տիֆի ցնորքի մեջ: Երբ
տագնապից հետո հիվանդը դանդաղորեն վերադառնում է
նորմալ գիտակցության, նա հավատում է իրական գոյությանը
իր երևակայության մեջ եղած բոլոր պատկերների, որոնց
մասին նա խոսել է անգիտակից վիճակում: Այսպես, ես ինքս էլ
չեի կարող հավատալ, որ հաշտությունը դեռ չեր կնքվել,
որովհետև հիվանդ վիճակում տեսել էի, թե այն ինչպես էր
Հանդիսավոր պայմաններում ստորագրվել: Ավելի ուշ, տիֆով
իմ հիվանդների մեջ կար զտարյուն մի անգլիացի: Երբ մի
առավոտ հիվանդանոցում իմ ամենօրյա այցն էի կատարում,
նա նոր էր գիտակցության վերադառնում: Ճառագայթող աչ-
քերով նա ինձ հարցրեց. «*O dear, do you not hear?*» (*Մի՞թե չեք
լսում:*) «*Ի՞նչ է պատահել*», հարցրի ես: «*All the bells in the whole
world are ringing*» (*Աշխարհի բոլոր զանգերը զողանջում են:*),
պատասխանեց նա և շթողնելով ինձ նոր հարց տալ, բացա-
կանչեց իր դեռ թույլ ձայնով. «*Thanks God, the whole world is now
English!*» (*Փառք Աստծո, այժմ ամբողջ աշխարհն անգլիական
է դարձել:*) Նրա մտքում նույնպես պատերազմը վերջացել էր,
բայց ամրողջ աշխարհը անգլիական էր դարձել: Համաշխար-
հային իմպերիալիզմի անգլիական մեծ գաղափարը վեր էր
հառնում առաքինի այս միախոների հիվանդ ուղեղում:

Այսօր, այս տողերը գրելիս, աշխարհամարտն իսկապես
վերջացել է: Զպե՞տք է ընդունենք, որ ամեն ինչ գրեթե այն-
պես եղավ, ինչպես տեսել էր այդ հիվանդը: Հարցը մնում է,
թե արդյո՞ք աշխարհում բոլորը պատրաստ են դրա համար
Աստծուն չնորհակալություն հայտնելու:

27. Բժիշկ առանց վկայագրի

1915 թ. նոյեմբեր ամսից մեր գերմանական միսիոներական հիվանդանոցի հայ բժիշկը հիվանդացել էր, և ամբողջ աշխատանքը ընկած էր միայն ինձ վրա: Ի դեպ, պատերազմի սկզբից աշխատանքի մեծ մասն խկապես ես էի կատարում, քանի որ հայ բժիշկը ամեն օր զրաղված էր լինում ուաղմարուժական աշխատանքներով: Ուրֆայի քաղաքային բժիշկը, որը հրեա էր, իմ խնդրանքի համաձայն ստանձնել էր մեր հիվանդանոցի վերահսկողությունը, որի համար ես նրան վարձատրում էի: Քանի Ուրֆայում գոյություն ուներ վկայագրված որևէ բժիշկ, ես իրավունք չունեի անարգել կերպով բժշկի աշխատանք կատարել, որովհետև ես չունեի օրինական այդ վկայականը: Հրեան դրամը սիրով վերցնում էր, բայց ինձ չէր օգնում: Նա թողնում էր ինձ տեր-տիրական լինել: Տվյալ իրադրության պայմաններում դա լավ էր: Նա ինձ խնդրում էր՝ հիվանդանոցի և քաղաքի հիվանդների համար անել ինչ որ Հնարավոր էր, կատարելապես վստահելով իմ գիտելիքներին, իսկ այն մեծ պահանջների նկատմամբ, որ իր անձի հանդեպ պարտավոր էր ունենալ, նա անտարբեր էր: Տիֆի համաճարակի ժամանակ ես հաղթահարեցի այնպիսի հսկայական մի աշխատանք, որը գրեթե վեր էր մարդկային ուժից: Անհամաժեշտ էր հոգալ ոչ միայն 25 մահճակալանոց մեր հիվանդանոցի մասին, որը մեծ մասամբ 40 հիվանդ էր ընդունում, այլև այցելել քաղաքի հիվանդներին: Հազվադեպ չէին այն օրերը, որոնց ընթացքում ես քաղաքում ավելի քան հարյուր այցելություն էի կատարում: Դրա կողքին, մի քանի շարաթ շարունակ, մեր տանը՝ կինս ու որդիս, տիֆով հիվանդ պառկած էին:

Եթե նույնիսկ միշտ Հնարավոր չէր այդ հիվանդությանը դեղորայք հասցնել, հիվանդներին ուշադիր հետևելը հրամայական էր: Քանի անգամ կարողացել ենք խուսափել մեծ չարիքներից: Շատերը, որոնց հիվանդության ընթացքում անհրաժեշտ էր լինում կտրել մահացած ծայրանդամները, տուժում էին միայն այն պատճառով, որ նրանց վրա ժամանակին բացակայել էր բժշկի զգոն աչքը: Որտեղ առկա էր կարգին խնամք և ճիշտ առաջնորդություն, երբեք այդպիսի բան չէր պատահում: 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մայիսը ավելի

Քան 2000 հիվանդի համար եղել եմ օգնական, իսկ շատերի համար՝ սփոփանք:

28. Գերմանական միսիոներական հիվանդանոցի փակումը

1916 թ. մայիսի առաջին օրերին քաղաքի հրեա բժշկին, որի ձևական հովանավորության ներքո կատարում էի վերը նկարագրված աշխատանքները, տեղափոխեցին Մոսուլ: Դեռևս նա Ուրֆայում էր, սակայն նրա պաշտոնն արդեն անցել էր առողջապահության նորեկ մի տեսուչի՝ չարանենք մի թուրքի: Վերջինիս մոտ գնացի՝ խնդրելու, որ ստանձնի մեր հիվանդանոցի վերահսկողությունը, ինչպես դա արել էր նախորդ քաղաքային բժիշկը: Ես նրան տանը չգտա և երբ որոշեցի կեսօրից հետո կրկին վերադառնալ նրա մոտ, նա ինձ կանխսեց: Նա ինձ մոտ հայտնվեց կեսօրվա ժամին և պահանջեց ներկայացնել ավարտագիրը, որի հիման վրա ես ծավալում էի բժշկական գործունեություն: Քանի որ նման փաստաթուղթ չկար, նրան ցույց տալու ոչինչ չունեի: Ես խնդրեցի նրան՝ ստանձնել հիվանդանոցի ղեկավարությունը, քանի որ 60.000 բնակչություն ունեցող այս մեծ քաղաքը, չէր կարող մնալ առանց բժշկի ու հիվանդանոցի: Սակայն նա ոչինչ չէր ուզում լսել այդ մասին, այլ կնքել տվեց վիրահատարանն ու դեղատունը, շրջայց կատարեց հիվանդանոցում և հրամայեց՝ մինչև երեկո բոլոր հիվանդներին դուրս գրել:

Որքան էլ խորն էր ինձ համար այդ վերաբերմունքի վիրավորանքը, մանավանդ որ համոզված էի, որ այս մարդն ինքը այս խեղճ հիվանդների համար քիչ բան կամ ոչինչ էր անելու, մտածեցի, որ իմ անձն էլ վերջապես հանգստի խիստ կարիք ունի: Եթե այս բոլորը ղեռ շատ տևեր, նույնիսկ իմ ամրակազմ մարմինը չէր տանելու հսկայական աշխատանքի այս բեռը:

Հուլիսին Ուրֆա էր ժամանելու գերմանացի մի մայոր՝ գերմանացի մի ավագ լեյտենանտի հետ: Դեռ նախքան նրանց տեղ հասնելը, գնացի նահանգապահետի մոտ և նրան՝ հիվանդ զինվորների համար մեր հիվանդանոցն առաջարկեցի: Զէ՞ս որ, միևնույնն է, հիվանդանոցը բոնագրավելու էր. ուստի ավելի

լավ կլիներ, եթե ես այդ կերպ կանխեի Հարկադրական փոխանցումը: Առաջարկս ընդունվեց, միայն թե դեղատունն ու վիրահատարանը մնացին կնքված:

Գերմանացի մայորի ժամանումից անմիջապես Հետո ինձ Հրամայեցին ազատել գերմանական կլինիկայի գլխավոր բժիշկ դ-ր Ֆիշերի սեփական տունն Ռուֆայում: Բժիշկը գտնվում էր իր Հայրենիք Շվեյցարիայում զինվորական ծառայության մեջ: Թուրքերն այդ տունն ուղղում էին օգտագործել որպես Հիվանդանոց: Անմիջապես գնացի գերմանացի մայորի մոտ, որն իջևանել էր ֆրանցիականների մոտ, և խնդրեցի նրան տեղափոխվել իրեն միակ արժանի դ-ր Ֆիշերի տունը, որը Հրաշալի դիրք ուներ և անհամեմատ ավելի առողջարար էր, քան ներկայիս իր բնակարանը: Առաջարկս ընդունվեց: Նա ինձ մի զինվոր տվեց, որն սկսեց տունը հսկել, և երբ մի քանի ժամ անց թուրքերը եկան և ուղղում էին այդ տունը տեղափոխվել, այն արդեն զրադեցված էր զինվորականներով: Սա ինձ Համար որախալի լուծում էր: Որովհետև նախ՝ այնտեղ էր բնակվում օրիորդ Եփփեն՝ դանիացի Հիվանդ միախոներու հին, իր թաքցրած յոթ տղամարդկանց հետ, որոնց նա խնամքով շարունակում էր պահել. չէ՞ որ այնտեղ դեռ մի քանի օր առաջ խուզարկություն էր տեղի ունեցել: Ապա՝ գեղեցիկ ու մաքուր տունը զերծ մնաց թուրքական աղքաման դառնալու վտանգից: Ի՞նչ պիտի լիներ, եթե օգտագործեին մեր գլխավոր բժշկի ամրող ունեցվածքը: Ի՞նչի՞ կվերածվեր այն, եթե թուրքերը կարողանային այդ տան մեջ բնակություն հաստատել:

Այսպիսով, տեղափոխվեց մայորը, որը ցավոք այդ ժամանակ սրտի Հիվանդ էր: Նա գեղնախտ ուներ: Չնայած որ նրան ծառայում էին տեղացի զինվորականն ըմբշկներ, այնուամենայնիվ նա խնդրեց, որ ես բուժեմ իրեն: Եվ քանի որ այժմ նա իմ Հիվանդն էր, ես պետք է նրա Համար ժամանակ առ ժամանակ դեղատնից դեղորայք վերցնեի: Մայորի Հրամանով ամեն անգամ հանգում էր դեղատան կնիքը, սակայն անմիջապես նորից ետ էր դրվում առողջապահության տեսուչի կողմից: Նշեմ, որ կնիքը հանգած ժամանակ ես միշտ կարողանում էի նաև ուրիշ՝ գերմանական գաղութի Համար էլ անհրաժեշտ դեղորայք հանել, և խոստովանում եմ, որ այնտեղից մեծ քանակությամբ դեղ եմ օգտագործել:

Մայորի հիվանդությունը համառ էր, սակայն ի վերջո նա ամբողջովին ապաքինվեց: Հիվանդանոցից դուրս գալուց անմիջապես հետո նա գնաց գեղատուն և այնտեղ կանչված առողջապահության մի պաշտոնակցի միջոցով պոկել տվեց գեղատան ու վիրահատարանի կնիքը՝ հիմնավորելով, որ առանց ղեղատան ու վիրահատարանի անկարելի է հիվանդանոց պահել:

Սակայն, երբ մայորը 1917 թ. օգոստոսին կրկին տեղափոխվեց և այդ ընթացքում Ուրֆայում առողջապահության մի նոր տեսուչ էր նշանակվել, վերջինս վերստին կնքել տվեց գեղատունն ու վիրահատարանը: Քանի որ ես ներկա էի, աննկատ կերպով բաց թողեցի պատուհանի բոնակը, այնպես որ հետո ես դուրսմաքանչ առանց դուռն օգտագործելու կարողանում էի դեղատուն մտնել դեղորայք վերցնելու համար: Մրանք, անշուշտ, չզրված լուծումներ են, որոնց օգնությամբ թուրքիայում ստիպված ես գործել: Զէ՞՞ որ թուրքական անմտության դեմ՝ տեղին և ժամանակին օգտագործված խորամանկությունները մարդուս տրամադրության վրա բուժարար ուժ ունեն:

Երբ մեր նախկին հայ բժիշկը հետագայում բանտարկությունից վերադարձավ, պարտավոր էր մնալ սպա և որպես այդպիսին իրավունք չունելու թուրքական կամ գերմանական ծառայության մեջ: Սակայն նա ուզում էր դրամ վաստակել: Ուրեմն ես սկսեցի նրա հետ աշխատել: Դ-ր Ֆիշերի տանն աստիճանաբար տեղափորեցի կլինիկա, դեղատուն և վիրահատարան: Այսպիսով, պատերազմական այդ ժամանակներին, երբ միսիոններական դրամարկղից եկող վճարումները պակասել էին, իմ աշխատանքով ունեցա որոշ եկամուտ: Այնուհետև ինձ հաջողվեց հրավիրել նաև մեր բոլոր բուժքույրերին և նրանց մշտապես տալ առձեռն վարձատրություն: Նրանք երկու տարի շարունակ հիվանդանոցում խնամում էին միայն թուրք զինվորների՝ առանց պետությունից վարձատրություն ստանալու:

Հատուկ չնորհակալ գործ կատարեցի հարյուրավոր հիվանդների համար 1917 թ. աշնանը, երբ երկրում տարածվեց աչքերի չարորակ մի բորբոքում: Մեր հայ բժիշկը ո՛չ ցանկություն ուներ, ո՛չ էլ ժամանակ՝ զրադվելու ներկայացող

Հիվանդների բանակի հետ: Հետևաբար ես ստանձնեցի խեղճերի բուժումը: Եվ քանի որ բժշկի օգնականն էի Համարվում, առողջապահության տեսուչը չէր Համարձակվում ինձ մոտենալ: Ի դեպ՝ ժամանակին նույնիսկ իմ եվրոպացի շեֆերի, իսկ վերջում նաև դ-ր Ֆիշերի ներկայությամբ, ակնաբուժական գործն իմ ասպարեզն էր: Ուստի այն ժամանակ ևս Ուրֆայում չկար մեկը, որ այդ մասնագիտության մեջ ավելի մեծ փորձ ունենար քան ես:

29. Տեղահանումներից վերջինը

Միլիոնանոց ժողովրդի ոչնչացումը բնավ էլ ոյուրին գործ չէր երիտթուրքերի Համար, որոնք ծրագրել էին Հայերի աքսորն ու նրանց պլանավորված բնաջնջումը: Տեղահանումները տևեցին մի ամրող տարի: Վերջին տարավիրները Ուրֆայով անցան 1916 թ. Հունիսին: Այդ քարավանի ամենահատկանշականն այն էր, որ այն, ի տարրերություն մյուս բոլորի, զլսավորապես հավաքագրված էր երիտասարդ տղամարդկանցից: Ինչպես էր դա պատահել:

Բաղդադի երկաթուղու ինժեներները պատերազմի ընթացքում գծի շինարարության վրա աշխատում էին արագացված թափով: Զէ՞՞ որ այդ երկաթուղին կենսական նշանակություն ուներ Թուրքիայի և նրա դաշնակիցների Համար: Սակայն խնդիրն այն է, որ Թուրքիայում երկաթուղու կառուցումն առանց Հայերի նույնքան անհնարին, որքան նույն գործը Եվրոպայում առանց իտալացիների: Հայերը աշխատավոր այն տարրն է, որ ընդունակ է իրագործելու ամեն տեսակի մեծ ծրագիր: Նույնիսկ երկաթգծի շինարարության Համար մասնագետներ պահանջող կարևոր պաշտոնները գրեթե բացառապես զրադեցնում էին Հայերը: Մահմեդական Հաշվապահ պատկերացնել անհնար է: Երբ ուրեմն 1915 թ. ամռանը այս գործունյա աշխատավորներին նույնպես աքսորն էր սպառնում, երկաթուղու ինժեներները՝ գերմանացիներ ու շվեյցարացիներ, ամրող ուժով դիմադրեցին դրան: Այդ պարոններից մեկն ինձ պատմեց, որ գրեթե մի ամրող տարի ստիպված են եղել պայքարել թուրքերի՝ այդ աշխատողներին մաքրագոր-

ծելու ծրագրի դեմ: Սակայն նրանք, այսուհանդեռձ, 1916 թ. Հունիսին աշխատանքից հանեցին մի քանի հազար մարդ: Ահա դրանք էին այն տղամարդիկ, որոնք որպես վերջին քարավան անցան Ռւրֆայով: Այլևս պետք չեղավ, որ նրանք շատ հեռուները գնան: Վերանցելիրում նրանց վիճակվեց նույն ճակատագիրը, ինչ դրանից առաջ վիճակվել էր հարյուր հազարավոր իրենց եղբայրներին: Նրանց բոլորին դանակահարելով սպանեցին:

Դերէս-Զորում՝ Եփրատի ափին մի փոքրիկ քաղաքում, գտնվում էր Համակենտրոնացման մի մեծ ճամբար՝ Հայաստանի և Անատոլիայի բոլոր շրջաններից աքսորված հայերի մնացորդներով: Երեկի մոտ 60.000 հոգի լինեին, մեծ մասը դեռ թափառող կմախքներ: Սովոր աղավաղել էր նրանց դիմագծերը, մարդկային շատ քիչ բան էր մնացել այնտեղ: Աղքակույտի վրա սոված շների հետ նրանք կովում էին Հացի կամ այլ ուտելիքի որևէ մնացորդի համար: Այո՛, պատահում էր, որ նրանք իրար գրեթե սպանում էին վարունգի մի կեղեկի կամ նման մի բանի համար: Նահանգապետը վերջապես հասկացավ, որ այդ տարարախտները, որոնց ճամբարներին մարդ չէր համարձակվում մոտենալ՝ այնտեղից տարածվող սարսափելի գարշահոտության պատճառով, այլևս կյանքի համար պիտանի չլինելուց բացի, նաև մշտական համաճարակի աղբյուր էին: Ուստի առանց երկար մտածելու նա կարգադրեց նրանց ոչնչացումը: Ու այսպես նրանց ժամանակ առ ժամանակ փոքր խմբերով քաղաքից դուրս էին տանում, սպանում և ապա նետում Եփրատի ալիքների մեջ, որպեսզի աղատվեին նրանց թաղելու աշխատանքից:

Բազմամյա կոտորածներից ու սովամահությունից հետո, մինչ այժմ մուսուլմանական տներում թաքնված հայերն ի վերջո վերստացան իրենց կյանքի համար ապահովություն ունենալու հույսը: Արդյո՞ք թուլացել էր իշխանությունների բազուկը, որն այդպիսի սոսկալի հարվածներ էր հասցրել իր հապատակներին: Թէ՞ նրանց խելքը գլուխներն էր եկել: Համենայն դեպս այլևս ուժի մեջ չէր հայերի՝ մինչև այժմ գործող օրենքից դուրս լինելու օրենքը, թեև նրանց նկատմամբ դեռևս շարունակվում էին բռնարարությունները, անարգանքները և պղծումները, հատկապես տղաներինը:

30. Կարապետ Գարաղաշյանի ճակատագրի խաղերը

ԱՀա առանձին մի օրինակ ևս: Երբ Հայերի համար մոտենում էին աղետալի ժամանակները, Կարապետ Գարաղաշյանը՝ ուրֆացի մի Հարուստ վաճառական, դիմեց ինձ թախանձանգին խնդրանքով, որ նրան իր ընտանիքի Հետ իմ տունն ընդունեմ: Թեև ինձ զուր չեկավ, որ նա դրա դիմաց ինձ դրամ առաջարկեց, այնուհանդերձ ես չկարողացա դիմադրել նրա սրտաբեկ խնդրանքին և ընդունեցի նրան: Որպես Հոժարակամ փոխատուցում, այսպես էի ես մտածում, նա կարող էր, եթե գալիք օրերից ողջ-առողջ զուրս գար, նպաստ տալ մեր հիվանդանոցի դրամարկղին:

Երբ Հայերն Ուրֆայում իրենց օրհասական վերջին մարտն էին մղում, Կարապետը Հայտնեց ինձ, որ ուզում է գնալ իմ տնից, քանի որ իրեն այստեղ անպայման կրոնեն: Նա կարող էր արարների մոտ գնալ, որոնց մոտ որոշ Հայեր արդեն ապաստանել էին: Նրանք փախստականների համար ամենաապահով ապաստարաններն էին: Այսպիսով Կարապետը թողեց իմ տունը և գնաց իրեն ծանոթ քրդերի մոտ, որոնց նա իր կարծիքով կարող էր իր կյանքը վստահել: Կինն ու երեխանները սակայն մնացին ինձ մոտ, մինչև նրանց՝ իմ տանը եղած բոլոր Հայերի Հետ միասին, ոստիկանությունը տարավ: Նրա կինն ի վերջո միայն մեկ որդու Հետ Հասավ Դեր-Էս-Զոր: Այնտեղից ևս Հաճախ տեղեկություն էի ստանում նրանից: Սակայն մի օր Կարապետը նորից Հայտնվեց ինձ մոտ, և դա ճիշտ այն ժամանակն էր, երբ թուրքերը փնտրում էին մինչև վերջին թաքնված Հայը: Որպես քուրդ Մուհամեդ պառկեցրի նրան հիվանդանոցի մահմակալներից մեկում: Այնտեղ նա առայժմ ապահով էր, քանի որ մյուս Հայերին դրանից քիչ առաջ հիվանդանոցից Հանել տարել էին:

Երբ նա առողջ վիճակում շարաթներով որպես հիվանդ շնչել էր հիվանդանոցի օդը, ես նրան խնդրեցի, որ նորից գնա, և նախընտրելի էր քրդերի մոտ, որոնք մինչ այդ էլ պաշտպանել էին նրան:

Նա Հեռացավ: Ամիսներ անց, կրկին եկավ քաղաք, որտեղ նա ներկայացավ նահանգապետին: Վերջինիս նա պատմեց, թե ինչպես է մինչև օրս կենդանի մնացել և նրա Հայեցողությանը

թողեց իրեն Հետ վարվելու այնպես, ինչպես որ ուզում է, քանի որ նա ամեն օր մահվան վտանգի տակ է եղել և այլևս չէր կարողանում տանել այս կյանք կոչվածը: Պաշտոնյան նրան աղատ արձակեց, սակայն Հանձնարարեց ժամանակավորապես պահել իր մահմեղական անունը:

Իմ միջոցով Կարապետը տեղեկացավ, որ իր կինն ու մեկ երեխան Դեր-Էս-Զորում դեռ ապրում են: Նա ուզեց գնալ նրանց մոտ: Սակայն ես նրան թափանձեցի ետ կանգնել այդ մտքից: Նրա կնոջ մասին գիտեի, որ նա երեւլի մի մահմեղականի աղախինն էր դարձել և որոշ չափով վտանգից զերծ էր: Բայց սերն ավելի ուժեղ է, քան ամեն տեսակի փաստարկ: Կարապետը նահանգապետից իր ճանապարհորդության Համար զինվորական պաշտպանություն ստացավ: Այսպես նա բարեհաջող հասավ մինչև Դեր-Էս-Զոր: Այնտեղ նա գտավ իր մահը:

Զինադադարից Հետո նրա կինը երեխայի Հետ վերադարձավ Ռուբա: Մահմեղականը, որի մոտ նա ծառայել էր, չէր հանձնել նրան:

31. Քրդերի տեղահանումները

Թերևս եվրոպական ոչ մի թերթ չի հաղորդել այն մասին, որ նույն երիտթուրքերը, որոնք իրականացնում էին Հայերի քնաջնջումը, իրենց Հավատակից, բուն Բարձր Հայքում ապրող քրդերին նույնպես քշեցին իրենց տունուտեղից: Ինչպես սկզբում Հայերի կապակցությամբ, դա արգում էր այն պատճառաբանությամբ, որ նրանք անվստահելի տարրեր են և Հետևաբար ուսւների կողմն անցնելու վտանգ էին ներկայացնում: Թե որքան առիթ էին տվել քրդերը նման տեսակետի համար, վրիպել էր իմ ընկալումից: Ես միայն այնքանը գիտեմ, որ տեղահանվածների մեջ տեսել եմ նաև քուրդ բարձրաստիճան սպաներ, որոնք պատերազմի սկզբին դաշտում քաջարար կովել էին ուսւների դեմ, և որոնք այժմ թուրքերի վերաբերմունքը դիտում էին որպես ստորագույն ապերախտություն:

1916 թ. ձմռանը տեղի ունեցավ քրդերի արտաքսումը՝ ճապաղջուր, Բալու, Մուշ գավառներից, այսինքն՝ էրզրում և

Բիթլիս նահանգներից: Մոտավոր Հաշվարկով գրեթե 300.000 քուրդ քշվեց Հարավ: Նախ նրանք տեղափորվեցին Վերին Միջագետքում, Հատկապես Ուրֆայի շրջանում, ապա նաև արևմուտքում՝ Այնթապի ու Մարաշի մոտ: Այնուհետև 1917 թ. ամռանը շարունակվեց վերջիններիս տարհանումը Կոնխայի սարահարթի ուղղությամբ: Երիտթուրքերի մտադրությունն էր քրդական այդ տարրերին այլևս թույլ չտալ, որ վերադառնան իրենց բնօրրանը: Ներքին Անատոլիայում քրդական այս տարրերը աստիճանաբար պիտի միաձուլվեին թուրքերի հետ:

Աքսորի երթի ընթացքում քրդերի հանդեպ վերաբերմունքը էապես տարրերվում էր Հայերի նկատմամբ ցուցարերվածից: Ճանապարհին նրանց ոչ մի վնաս չէին հասցնում, և ոչ որ իրավունք չուներ նրանց տանջնելու: Սակայն սոսկալին այն էր, որ նրանց աքսորը տեղի ունեցավ ձմռան մեջտեղում: Հենց որ քրդերի այդպիսի մի քարավան երեկոյան թուրքական մի զյուղ էր Հասնում, նրանցից վախենալով բնակիչներն արագորեն փակում էին իրենց տան դռները: Այսպիսով խեղճ աքսորյալները ստիպված էին լինում ձմեռային գիշերն անցկացնել դրսում՝ անձրևի ու ձյան տակ:

Հաջորդ առավոտ զյուղի բնակիչները ստիպված էին լինում սառածներին թաղել ընդհանուր գերեզմաններում: Վերջ չէին գտնում նաև այն մարդկանց տառապանքները, որոնք ի վերջո հասնում էին Միջագետք: Քաղաքներում, որտեղ նրանք տեղափորվում էին Հայերի կիսավեր բնակարաններում և որտեղ կառավարությունը հացի բաշխումով փորձում էր չարիքը մեղմացնել, վիճակն սկզբում դեռ մի կերպ տանելի էր: Սակայն այլ էր զրությունը զյուղերում, որտեղ տեղի բնակչությունը միայն սարսափ էր զգում քրդերի հանդեպ, և նրանց վախցից թաքցնում էր պաշարները, որոնք մեծ մասամբ արդեն սպառվելու վրա էին: Ահա այդ ժամանակ է, որ դժբախտ տարագիրների համար սկսվեց սովոր: Քանի որ Հօգուս Հայերի տարած իմ փրկարար աշխատանքը կառավարության կողմից խեթ աչքով էր նայվում և իմ նկատմամբ բազմիցս չարակամություն էր առաջացրել, և քանի որ այդ քրդերի, որ նույնական մեր եղայրներն են, սարսափելի թշվառությունն ինձ խորապես հուզում էր, 1916 թ. դեկտեմբերին ճանապարհեցի Հալեպ: Իմ նպատակն էր՝ դրդել այնտեղի հյուպատոսներին, քրդերին օգնու-

թյան արշավ սկսել: Նման արշավն ինձ խոստանում էր զրական արդյունք նաև Հայերին տրվող օգնության համար: Իմ դիմումը սիրալիր ընդունելություն գտավ և՝ գերմանացի, և՝ ամերիկացի Հյուպատոսների կողմից: Վերադարձին ես անցա Սուրուջի և Հարանի սարահարթերի գյուղերով՝ պատկերացում ստանալու համար այդ շրջանի օգնության կարիք ունեցողների թվի մասին: Այդպիսիների թիվը մոտ 30.000 էր, թեև ամեն օր ավելանում էր Հյուսիսից ներգաղթողների պատճառով:

Դեկտեմբերի վերջին ես արդեն ստացա Հյուպատոսների դրական պատասխանը, և շուտով Հայտնվեց մի ոմն պարոն Բ. ամերիկյան Հյուպատոսարանից՝ 150.000 ֆրանկով: Գերմանիայի Հյուպատոսն ինձ նույնպես 300 Ltq. (7.000 ֆրանկ) ուղարկեց: Ընդունվեց առաջարկս՝ տարրեր մարզերից գնելու ցորեն ու գարի, որն այնու հետև բաժանելու էի սովորական ներին:

Հունվարին և փետրվարին վստահելի իմ մարդկանց միջոցով շատ գյուղերում հացամթերք բաժանեցի: Դա զյուրին գործ չէր: Շատ անգամ ես անձամբ էի գնում գյուղերը՝ կարգ ու կանոնը հսկելու:

Մի գյուղում Հայտնարերեցի, որ գնված ցորենի մնացորդը չի Համապատասխանում պայմանագրով խոստացված որակին: Ուստի խնդրեցի սովորական ներին գնալ չորս ժամ հեռավորության վրա գտնվող մեկ այլ գյուղ, որտեղ լեցուն մի պահետ ունեինք: Սակայն սոսկալի մի լացուկոծ բարձրացավ: Կիսամերկ, փոս ընկած աչքերով մարդիկ ընկան ոտքերս, աղերսելով, որ նրանց տամ հենց այդ, թեկուղ և վատորակ ցորենը: Նրանք այն սիրով կուտեին: Ես ստիպված տեղի տվեցի նրանց ձնչմանը: Համենայն դեպք վատորակ ցորենի մի նմուշ հետև տարա քաղաք, որտեղ այն ցույց տվեցի վաճառողին և նրանից մի տոննա լավորակ ցորեն կորցեցի՝ որպես վնասի հատուցում:

Ցավոք, շատ արագ վերջացավ գնված ցորենը: Սակայն մինչ այդ գարունը եկավ, և սպասվում էր առատ հունձք: Գյուղերում քրդերը խոտ ուտելով սովորի դիմացան, խակ եր բերքը հասունացավ, ստեղծվեց աշխատանք, որը քրդերն ավելի լավ էին կատարում, քան արարները: Նրանք օգնեցին բերքահավաքին: Սակայն 1917-1918-ի ձմեռը նոր պատուհաս բերեց: Չնայած առատ բերքին, ծայր առավ մի նոր սով, որին զոհ

գնացին գրեթե բոլոր աքսորյալ քրդերը:

Ոչ միայն Հայերն ու քրդերը, այլև արարներն էին նախատեսված երիտթուրքերի բնաջնջման ծրագրում: Նրանք նույնպես պիտի ոչնչանային սոսկալի կոտորածների միջոցով: Միայն թե այդ ծրագիրը շիրականցվեց, քանի որ դպուրին չէր արարներին ձեռք տալ: Գիտեին նաև, որ նրանց թիկունքում կանգնած էին անզլիացիները: Ոստիկանական մի սպա ինձ ասաց, որ պատերազմից Հաղթական դուրս գալուց հետո, թուրքերը արարների Հաշիվը պիտի տեսնեին, և որ ինքն արդեն անհամբեր սպասում էր, որ պիտի մասնակցեր նրանց կոտորածներին:

32. Ռազմ

Եփրատի ափին գտնվող Ռազմ գյուղաքաղաքը, Ուրֆայից Հարավ և Դեր-էս-Զորից վերև, դարձել էր աքսորված Հայերի մի մեծ ճամբար: Երրեսն այդ թշվառականներին Հալեպից՝ ամերիկյան Հյուպատոսարանում ծառայող մի գերմանացու միջոցով, օգնություն էր գալիս: Երբ վերջինս այնու հետև ինքը դիմումում դարձավ, ինձ խնդրեցին այդ տարաբախտներին ինչքան Հնարավոր է մեծ օգնություն Հասցնել:

Առաջին անգամ Ռազմ գնացի 1917 թ. ապրիլին: Այդ ժամանակ այդտեղ դեռևս կային 6.000 Հայեր՝ ծայրահեղ անմխիթար վիճակում: Ճիշտ է, նրանք աղատ էին, սակայն աշխատանք չկար: Նախքան բերածս դրամը բաժանելը, ներկայացանական գերազանց անդամությունները սպասում էին այդ անդամությունների համար առաջարկում տալ: Նա դրան դեմ չեղավ: Այսպիսով, երկու օրվա ընթացքում ես ավարտեցի իմ Հանձնարարությունը, անմիջապես ուղեսորվեցի կրկին դեպի տուն:

Նույն տարվա օգոստոսին երկրորդ անգամ գնացի այնտեղ: Կրկին այցելության գնացի բարեհամբույր նահանգապետին: Այս անգամ էլ նա ոչ մի առարկություն չարեց՝ ինձ թույլ տալով անարգել կերպով նվերները բաժանել Ռազմի Հայերին, որոնց թիվն արդեն խստորեն պակասում էր:

Նոր էի դուրս եկել նահանգապետի մոտից և իջևանել կեսարիայից (Փոքր Ասիայում) այստեղ աքսորված բողոքական

մի քահանայի տանը, երբ իմ հյուրընկալի տուն այցելեց մի ոմն Ալի էֆենդին: Նրան ինձ ներկայացրին որպես մատուտակի արմատի ամերիկան ընկերության աշխատակից: Նա Հնդիկ մահմեղական էր, որը սահուն անգլերեն էր խոսում և միայն չնորհիվ թուրքական կառավարության շրջանակներում ունեցած իր մեծ ազդեցության, նա՝ բրիտանական մյուս հպատակների նման, չէր աքսորվել:

Ալի էֆենդին ինձ խնդրեց իր տունը գնալ և իր հյուրը լինել: Սակայն դրա համար ես չունեի նվազագույն ցանկությունը, ոչ էլ որևէ պատճառ՝ Հանդես բերելու հյուրընկալ տնից Հեռանալու աննրանկատությունը, մի տուն, որը, որքան էլ որ խղճուկ էր, ինձ արդեն ընդունել էր: Սա բարկացրեց Ալիին:

Նա կարուկ հրաժեշտ տվեց: Քահանան ինձ ասաց, որ այդ մարդու ձեռքն արդեն վաղուց խառն էր Հալեպից ստացվող օգնության դրամների մեջ: Շշուկներ կային, որ նա այդ փողերից շատը տալիս էր իր թուրք ընկերներին՝ պետական պաշտոնյանների, որոնց հետ լավ հարաբերությունների մեջ էր և որոնք նրան փոխադարձ ծառայություն էին մատուցում, թողնելով, որ նա՝ որպես բրիտանահպատակ, մնալու իրավունք ունենար այդ քաղաքում, որտեղ դեռ պատերազմից առաջ էր աշխատում: Իմ այդ մերժումը ինձ շատ թանկ էր նստելու:

Ալիի հեռանալուց քիչ անց սենյակ մտավ մի ժանդարմ և Հարցրեց Ուրֆայից եկած օտարականի մասին: Նա ասաց, որ այդ պարոնն անհապաղ պետք է ներկայանա ժանդարմների պարետին: Անտեղի չէր, որ քահանան անմիջապես հասկացավ, որ այստեղ Ալի էֆենդու մատը խառն էր: Թե ինչ էր ուղում ինձից պարետը, պարզ չէր: Բայց երբ գնացի նրա մոտ, իսկույն տեղեկացա:

Թուրք պարոնը սկզբում ինձ ընդունեց թուրքական Հայտնի սիրայիրությամբ: Ինձ սուրճ առաջարկելուց հետո, խոսակցություն սկսեց միջազգային ընդհանուր դրության մասին: Հետո պարոնը Հարցրեց անունս, թե որտեղից էի, քանի և որ լեզուները գիտեի և թե ինչ գործով էի եկել Ռազա: Ես ասացի, որ երեսի նրան Հայտնի է, որ Ուրֆայից եմ եկել և որ անցյալում արդեն մեկ անգամ այստեղ եղել էի, որտեղ նահանգապետի թույլտվությամբ դրամ էի բաժանել կարի-

քավոր հայերին: Եվ այսօր էլ կրկին եկել էի և արդեն ստացել էի նահանգապատի թույլտվությունը: Նրա հաջորդ հարցին, թե ունե՞մ արդյոք այլուրեքություն (ալիրի), անձնագիր, պատասխանեցի՝ ոչ՝ քանի որ ամեն մարդ կարող է առանց դրա ճանապարհորդել նույն վիլայեթի (նահանգի) սահմաններում: Այժմ արդեն պարոնն սկսեց ուրիշ զավեր լարել: «Լսե՛ք, քանի որ ալիրի չունեք, ես Զեղ չեմ ճանաչում: Ստիպված եմ ենթադրել, որ Դուք լրտես եք: Առանց ուղեկցող պահակախմբի Ուրֆայից հասել եք այստեղ՝ մեր նկատմամբ թշնամորեն տրամադրված արարների տարածքով: Բացի դրանից, խոսում եք մեր թշնամիների լեզուներով՝ անգլերենով, ֆրանսերենով և արաբերենով: Դրա համար պիտի մնաք Ռազմայում, մինչև որ մեզ Զեր ալիրին ներկայացնեք: Որպեսզի իմանաք իմ ասածի լրջությունը, հիմա մի ծառա կուղարկեմ Զեր ձիասարքի հետևից, և Դուք այլևս չեք կարող վերադառնալ»:

Այսպիսով ես նրա բանտարկյալն էի: Ինչ հիանալի պատմություն: Սակայն ես նախ այդ պատմությունը շատ լուրջ չընդունեցի: Չնայած արդեն երեկոյան ժամը ինն էր, գնացի նահանգապատի մոտ, որին քնից հանել տվեցի, որպեսզի նրան տեղեկացնեմ դիպվածի մասին: Ասացի, որ ընդունում եմ միայն նրա որոշումները և խնդրեցի, որ եթե կարելի է՝ պարետին իր դիտավորությունից հրաժարեցնել: Իսկ նա ինձ խորհուրդ տվեց՝ թողնել, որ գործն առ այժմ իր ընթացքն ստանա: Ասաց նաև, որ նա ոչինչ չի կարող անել զինվորական պարետի գեմ, քանի որ պատերազմական վիճակ է:

Այսպիսով ես կրկին վերադարձա իմ հյուրընկալի տունը: Այստեղ նորից հանդիպեցի Ալի էֆենդիին, որը լսել էր իմ խոսակցությունը պարետի հետ, քանի որ, ինչպես երևում էր, նրա հյուրն էր:

Ալի էֆենդին այնուհետև նաև հուշեց, թե ինչի մասին էր իրականում խոսքը. փոխանցվելիք մի քանի ոսկեղբամի մասին, որ իրեն պետք է տայի՛ վագրին հանգստացնելու համար: Ես զայրույթով մերժեցի այդ անպատշաճ առաջարկը, քանի որ այդ նպատակի համար չէր, որ ինձ հանձնված էին օգնության դրամները:

Գիշերվա ընթացքում ես վերլուծեցի իրավիճակը: Եթե այստեղ ավելի երկար մնայի, կնոջ դրանով շատ կվախեցնեի,

քանի որ ես նրան խոստացել էի՝ Հինգ-վեց օրից վերադառնալ Ուրֆա: Եթե մինչ այդ չվերադառնայի, նա կկասկածեր, որ ընկել եմ ավաղակների ձեռքը: Հնարավոր էր, որ Հեռազիրս տեղ չէր հասնի:

Արաբների տարածքը, որտեղով պետք է անցնեի, հայտնի էր իր անապահովությամբ, և արդեն շատերն էին ավաղակների ձեռքն ընկել: Դեպի այդ վայրը գալու ճանապարհին, մոտ կես ժամ, մեր իրավիճակն էլ բավականին տագնապալից էր: Երբ Հանգստանում էինք մի առվակի մոտ, Հորիզոնում, որոշ Հեռավորության վրա, երևաց ձիավորների մի խումբ, որոնք շրջապատն էին զննում, փնտրելով որևէ ցանկալի ավար: Հենց որ մեզ նշմարեցին, խմբից մեկը ձիավարեց մեր ուղղությամբ: Իմ կառապանն առաջարկեց անմիջապես ճանապարհ ընկնել: Սակայն դրանից ի՞նչ օգուտ: Խումբը մեզ կհասներ և անպայման կթալաներ: Ես առաջարկեցի Հանգիստ սպասել: Երբ մեզ արարից միայն խոր առվակն էր բաժանում՝ նա բարենց: Մենք նույնպես բարենով պատասխանեցինք, իսկ ես նրան սիրաշահեցի Հավի տապակած զիատով, որը ջրի վրայով նրան նետեցի: Նա այն կերավ: Այնուհետև Հարցուփորձ արեց, թե որտեղից ենք գալիս, ուր ենք գնում: Ասացի նրան, որ Ռազա էի գնում՝ այնտեղի Հայերին տեսնելու, որոնց Հետ թուրքերը շատ վատ էին վարդում: Դրա վրա նա նշան արեց Հեռվում գտնվող իր ընկերակիցներին, ՀայՀոյեց թուրքերին և Հրամեշտ տալով Հեռացավ: Վտանգն անցած էր, չուտով բոլոր ձիավորներն անհետացել էին:

Այսպիսով ես Հաջորդ առավոտյան Ռազայում արդեն պատրաստ էի Ալիին, - եթե կրկին գար, - ակնարկելու, որ այստեղ առաջադրանքս վերջացնելուց Հետո, պարետին մի քանի ոսկեղրամ էի տալու: Հույս ունեի, որ դրանք կրկին ետ էի ստանալու, քանի որ որոշել էի Ուրֆայում ունեցած իմ կապերի միջոցով այդ պարետի Հաշիվը տեսնել: Ուրֆայում դեռ կար գերմանացի մի մայոր, որն ինձ անպայման կօգներ ետ ստանալ ինձանից խլված գումարը:

Հաջորդ օրը Ալի էֆենդին կրկին Հայտնվեց: Իմ մոտից նա գնաց պարետի մոտ: Գործը ճիշտ բռնելու համար, ես պետք է դրամը նրան անմիջապես տայի: Սակայն ես անփորձ էի նման գործերում: Քիչ անց Ալին նորից Հայտնվեց և Հայտարարեց,

որ արդեն ուշ է: Պարետն արդեն հեռազրել էր Ուրֆա, ուրեմն պետք էր այնտեղից պատասխանի սպասել:

Երկու օրվա ընթացքում բաժանել էի օգնության դրամները, և արդեն պատրաստ էի կրկին ճանապարհ ընկնելու, եթե միայն ձիասարքս ունենայի: Այժմ ես փորձեցի մի այլ միջոց: Դեռ պարսիկ արքայազների հետ իմ ճանապարհորդության ժամանակներից, ես ծանոթ էի Ռազայի կաղիի հետ: Գնացի նրա մոտ և խնդրեցի, որ ինձ աղատելու փորձ աներ, եթե ցանկանում էր իմ բարեկամը լինել: Կաղին ինձանից աղնիվ խոսք խնդրեց: «Երբ դու առաջին անգամ այստեղ էիր, նահանգապետին փող տվե՞լ ես և որքա՞ն: Քո վերադարձից հետո լուրեր էին շրջում, որ դու նրան մեծ գումար ես տվել: Այս անգամ էլ ոստիկանության պարետն է ուզում ինչ-որ բան ձեռք գցել»:

Դա լույս սփոց գործի վրա: Կաղին անհավատալիորեն զարմացած մնաց, երբ ես նրան ասացի, որ ոչ միայն կաշառք չէի տվել, այլև նահանգապետն ինքն էլ ինձանից նման բան չէր պահանջել: Պարոնը շատ ավելի բարի էր, քան կարծում չէր պահանջել: Պարոնը շատ ավելի բարի էր, քան կարծում էին ժողովուրդն ու կաղին: Հինգերորդ օրվա կեսօրից հետո էին ժողովուրդն ու կաղին: Անհապաղ ճանապարհ ընկա, ավագակների վտանգավոր տարածքը կտրել անցնելով զիշերով:

1917թ. ամռանը նահանգապետը բազմաթիվ հայերի՝ կանանց, տղամարդկանց ու երեխաների, Ռազայից հանեց՝ դեպի Ուրֆա տանող ճանապարհի շինարարության վրա աշխատելու: Նրանք դա պետք է ընդունեին որպես իրենց վիճակի բարեկամում, և այդ իսկ պատճառով միայն նա կհասներ Ուրֆա, բեկավում, և այդ իսկ պատճառով միայն նա կհասներ Ուրֆա, կանայք ու երեխաներ էին: Որպես վարձատրություն նրանք ստանում էին միայն մեկ օրվա հացի օրապահիկ: Հաջորդ մեեռ նրանք իրավունք ունեին ապրելու վրաններում: Ցուրտ էր, հազուստ ունեին դեռ քչերը: Սուրութի հովտում մես-մերկ կանայք հենց որ տղամարդ էին տեսնում, համեստորեն շրջվում էին: Մեծ ուրախություն զգացի, երբ կարողացա այդ մերկ մարդկանց՝ մեր ուրֆացիների կողմից պատրաստված համարականց՝ մեր ուրֆացիների կողմից պատրաստված:

33. Զանազան փրկարար աշխատանքներ

Մահարեր տեղահանությունների վերջավորության հետ մեկտեղ ծայր էր առել աքսորյալ կանանց ու երեխաների ետղարձի դանդաղ հոսքը դեպի հարևան քաղաքները: Գյուղերում, որտեղ նրանք մահմեղական բնակիչների մոտ ապաստան էին գտել և այսպիսով մահից խուսափել, արդեն 1916 թ. աշնանից, նրանց համար սկսվել էր հացի պակասը: Նրանց սպառնում էին նաև բարոյական բնույթի վտանգները: Հատկապես արարների մոտ, որտեղ բազմակնությունը ավելի է տարածված, քան թուրքերի ու քրդերի մոտ: Երիտասարդ կանայք և տասը տարեկանից վեր աղջիկները պարտավոր էին մահմեղականություն ընդունել, որպեսզի կարողանային արարների հետ ամուսնանալ: Ով ինչ կերպ որ կարողանում էր, փորձում էր ամուսնությունից խուսափել: Վերադարձողները հույս ունեին, որ քաղաքներում ավելի մեծ ապահովություն կունենան, մի քան, որ միշտ չէ որ այդպես էր: Որպես կանոն, նրանց վիճակը, ովքեր զյուղերում արարների տներում էին, ավելի տանելի էր՝ քան նրանց, ովքեր քաղաքներում թուրքերի ձեռքն էին ընկնում: Հատկապես թուրք սպաները անհավատալի ու աննկարագրելի սակարկություններ էին անում հայ աղջիկների առուծախի ժամանակ: Խոկ թե ինչեր էին պատահում հարյուրավոր, նույնիսկ հազարավոր հայ տղաներին հակարնական և հանցագործ պայմաններում, մարդու մտքով էլ չի կարող անցնել:

Մեր քաղաքում հայտնված բոլոր կանանց ու երեխաներին պաշտպանություն տալը՝ սկսած 1916 թ. հուլիս ամսից, դարձավ մեր գլխավոր խնդիրը: Ցավոք, այդ օրերին անհնարին էր կրկին մտածել քրիստոնեական որբանոց բացելու մասին: Քանի դեռ կառավարությունը հայերի միայն մահն էր ցանկանում, դրան երբեք հավանություն չէր տա: Նման նախաձեռնություն չէր կարող սպասվել նաև եվրոպացիներից, որոնց՝ պատերազմում իրենց տարած հաղթանակից հետո, թուրքիայում այլևս հազիվ էին հանդուրժում:

Այսպիսով մենք առայժմ պետք է սահմանափակվեինք՝ Ռուբա հասած բոլոր կարիքավորներին ապրուստի համար դրամական փոքրիկ օգնություն տալով: Այլապես իրենք պիտի

իրենց ապրուստի մասին հոգային: Աշխատանք, թեկուղ և փոքր վարձատրությամբ, կանանց համար միշտ էլ կարելի էր գտնել: Իսկ երեխաները՝ նրանք էլ էին աշխատում: Շուկան լի էր փոքր տղաներով, որոնք ինչ ասես չէին վաճառում: Հայերը տոկուն և ջանասեր ժողովուրդ են, մի բան, որում այդ օրերին կրկին բոլորը համոզվեցին:

Վերահսկողությունը չկորցնելու համար՝ երեխաներին, որոնց ես ամսական օգնություն էի կարողանում տալ, գրանցում էի՝ նշելով նրանց անունը, տարիքը և ծննդավայրը: Դա անհրաժեշտ էր, քանի որ հաճախ շատ երեխաներ ու մայրեր փորձում էին երկու անգամ գրանցվել, որպեսզի հնարավորության դեպքում ամեն ամիս կրկնակի դրամ ստանային: Ո՞վ կարող էր նրանց այդ բանի համար մեղադրել: Զէ՞՞ որ տվածս չափազանց չնշին էր:

Հայ աղջիկներից ոմանք, որոնց սպառնում էր մահմեղականի հետ ամուսնություն, փախչում էին կնոջս մոտ: Պատահում էր, որ թուրքի օրինական կինն ինքն էր օգնում վտանգի տակ եղող աղջկան փախչելու: Զէ՞՞ որ մի երկրորդ կին, և այն էլ քրիստոնյա քովնտի կին, նրա համար այնքան էլ բաղձալի չէր: Այդ աղջիկներին, եթե մի անգամ կնոջս պաշտպանության ներքո էին, այլևս բաց չէին թողնում: Եթե նրանց մինչայժմյան տերերը գալիս էին կնոջս մոտ (այդ օրերին կարիք չկար երկար հարցնելու, թե ուր են փախել այդպիսի երեխաները), նա նրանց երեխին փակում էր դուռը: Ոչ էլ այդ մարդիկ էին մի բանի հասնում, օրերով տան շուրջը հսկողներ կարգելով: Մի քանի օր անց, աղջիկները՝ ծպտված, մերթ արարական, մերթ քրդական հագուստներով, և մուսուլման բարեկամուհիների ուղեկցությամբ, որոնց կինս մշտապես ձեռքի տակ ուներ, ուղարկվում էին Հալեա:

1917 թ. կինս քաջությունն ունեցավ, խնամքով թարցնելով ոստիկանության աշբից, վարձել երկու փոքրիկ տուն և դրանք լցնել որք երեխաներով: Երբ դրանից հետո ոստիկանությունն ինձ Հարցրեց, թե որևէ տեղ ունեի՞ արդյոք որրանոց, ինձ անտեղյակի տեղ դրեցի, իսկ կնոջս էլ նրանք արդեն հանուն պատշաճության չէին կարող հարցնել: Ի դեպ՝ չպետք է մոռանալ, որ ես՝ երկար աշխատելով որպես թժիշկ և հիվանդախնամ, կառավարության և ոստիկանության շրջանակներում

ամենուրեք օգնող բարեկամներ ունեի:

Մոտ 1,3 միլիոն ֆրանկով, որ ինձ տարիների ընթացքում վաստահվել էր Շվեյցարիայից, Գերմանիայից և Ամերիկայից, կարողացել եմ փրկել Հարյուրավոր Հայ երեխաների և կանանց:

Ես խոսեցի արդեն կնոջս մահմեղական ընկերուհիների մասին: Նրանց թվում կային ազնիվ Հոգիներ, ինչպես օրինակ՝ մի արարուհի, որը տանը ուներ կույր ամուսին և չորս երեխա և որոնց Համար նա օրնիրուն ապրուստ էր վաստակում: Այդ բարի կնոջ սիրտը չէր տանում, որ Հայ ծծկեր երեխաները սփռված էին ճանապարհներին, և նա նրանց իր տունն էր բերում: Թեև նա երբեք բարեբախտությունը չունեցավ՝ թեկուզ մեկին ողջ պահելու: Երբեք անգամ նա փորձեց, և ամեն անգամ երեխաները մի քանի շարաթից կամ ամսից մահանում էին:

Կային նաև կաղիի նման շատ մահմեղականներ, որոնք եղնելով զուտ մարդկային գթասրտությունից, Հայեր են փրկել: Մի այրի թրքուհի իր մոտ թաքցրել էր մի խումբ Հայուհիների և նրանցից երբեք նույնիսկ չէր պահանջել, որ մուսուլմանական անուններ ընդունեն: Քաղաքում տղամարդկանց թաքցնել, իհարկե, չէր համարձակվում ոչ մի մահմեղական: Իսկ զյուղերում եղել են շատերը, որոնք փրկել են նաև Հայ տղամարդկանց կյանքը: Այս Հարցում մեծ մասամբ գեր էր խաղում եսասիրությունը: Մի ազդեցիկ աղա ինձ ասաց, որ ինքն այնքան հիմար չէր, որ սպաներ Հայ տղամարդկանց, թե չէ ի՞նչ էր նա անելու հետո առանց նրանց: Նրանք իրեն Համար կատարում էին ամեն տեսակի աշխատանք և նպաստում, որ իր Հարատությունն ավելանա:

Ուրֆայի կաղին, որն ամեն ինչ անում էր, որպեսզի մեղմի Հայերի տառապանքը, վաստակել էր ծաղրանուն: Նրան անվանում էին «Ermeni Papasy» (Հայ քահանա):

34. Քննութ ձին

Ուրֆայի իշխանությունները պարտավոր էին բանակի Համար, միայն իրենց շրջանից, հինգ միլիոն կգ Հացահատիկ Հանձնել: 1917 թ. աշնանը՝ լավ բերք ունենալուց հետո, դա

շատ մեծ բան չէր: Ուրժայի մարզը, որն առաջնակարգ հացահատիկային շրջան էր, ոյուրությամբ կարող էր դա մատակարարել: Սակայն ցորենը խոշոր հողատերերի ձեռքին էր: Ակզրում կառավարությունը ստացավ իրեն հասանելիք բերքի ընդհանուր հասույթի մեկ ութերորդը կամ մեկ տասներորդը, ըստ որում՝ անվճար: Մնացածը պետք է գնվեր: Գինը որոշեց կառավարությունը, սակայն, տերերի կարծիքով՝ այն չափազանց ցածր էր: Դրան գումարած՝ վճարումը կատարվում էր թղթադրամով, որի արժեքը չատ ընկած էր: Հետևանքն այն եղավ, որ հարուստ գյուղացիները իրենց ցորենը թաղեցին: Կառավարությունը գյուղերն ուղարկեց բանիմաց պաշտոնյաների, որոնք փորփրեցին և գտան ընդհատակյա պահեստները: Այժմ այլևս հողատերերը չուղեցին վաճառել իրենց թաքցրած ցորենը: Այսպիսով ցորենի գինը զգալիորեն բարձրացավ: Եթե 1917 թ. աշնանը 12 ֆրանկ հնչուն զրամով կալից կարելի էր ստանալ մեկ մալտեր (ծնթ. թարգմ. Mälter = հացահատիկի չափման միավոր, որի չափը փոխվում էր նայած շրջանի), ձմեռվա ընթացքում նույն քանակի համար պետք էր վճարել 80 ֆրանկ հնչուն դրամ, որը թղթադրամով 400-500 ֆրանկ էր: Ով որ աշնանը, ըստ սովորության, ամբարել էր ամբողջ տարվա ցորենի պաշարը, ձմռանն իր հացն ուներ, իսկ ով այդ րանն անելու ի վիճակի չեղավ, ինչպես օրինակ բռնագաղթվածները, սովամահ էր լինում: Այն ժամանակ քաղաքում դեռևս բնակվում էին քուրդ գտարանդիներ: Սրանք էին, որ սովին ամենաահավոր տուրքը տվեցին: Սովամահ եղածներին չարաթներով հավաքում էին փողոցներից և հայերի այն կիսավեր տներից, որտեղ նրանք բնակվում էին: Լինում էին օրեր, երբ 70-ից ավելի մարդ էր թաղվում: Ահավոր էր՝ այս ամբողջ աղետը տեսնելն ու օգնել չկարողանալը: Մեկ տեսնում էիր մի մուրացիկ, աղբակույտի վրա պառկած, շների հետ հացի մի չորուկի համար կոփէ է անում, մեկ էլ՝ մի քանի ժամ անց, տեսնում ես նրան նույն տեղում անշունչ փուփած. մահը նրան ազատել էր տանջանքներից: Մի այլ տեղ փողոցներով շրջում է՝ աչքերը փոսն ընկած մի աղջիկ, ամբողջովին մերկ. նրա շարժուձևը մատնում է, որ խելազարվել է: Մի քանի օր ևս, և մահը նրան կփրէի: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո մուրացիկների մի ամբոխ թափառում էր քաղաքի փողոցներում,

բոլորի դռները բախսելով, և ամենուրեք միշտ նոյն բառերը կրկնելով. «*Heiran, Kurban, Allahin Chatyry udjun, bir partscha ekmek werin!*» (Խղճացե՛ք, մատաղ, մի կտոր Հա՛ց տվեք, Աստծո սիրույն:) Նույնիսկ մութ գիշերին այդ սովորակաները չէին հեռանում դռներից, և լուսանալուն պես, նույն երգն էր Հնչում, բայց միայն այն բերաններից, որոնք Հաղթահարել էին գիշերը: Մյուսները մեռած-ընկած էին այն դռան առաջ, որտեղ երեկոյան վերջին անգամ լինելով՝ Հաց էին աղերսել: Կառավարության կողմից մարդիկ էին նշանակված, որոնք ամեն առավոտ հավաքում էին այդ մահով փրկվածներին:

Հայ ժողովրդից մնացած բեկորների Համար Հատկանշանական էր, որ այդ սովահար ձմռանը Համեմատարար քիչ Հայեր Ուրֆայում քաղցից մահացան: Դա տեղի ունեցավ չնորհիվ նրանց ժրածանության: Նրանք ուզում էին և կարողանում էին աշխատել: Իսկ տեղահանված քրդերը մեծ մասամբ ի վիճակի չէին աշխատելու. Հենց որ իրենց Հայրենիքից քշվում էին, նրանց մաս էր սպառնում, թենիվ առանց սովահարության: Նրանք չունեին պետքական դառնալու կարողությունը, ինչպես դա Հայերն ունեին:

Այդ օրերին կադին իդուր էր թուրքերին քարոզում՝ ներս առնել լքված քուրդ երեխաններին ու կանանց, նույն ձևով, ինչպես նրանք այդքան մեծ թվով Հայերի էին ապաստան տվել: Սակայն, ինչպես ինձ հետո կադին ասաց, Հասկանալի էր, որ փաստորեն ոչ ոք չէր հետևում նրա խոսքին: Նա անձամբ էր փորձել իր տունը երկու քրդուհու բերել, որոնք որպես գող էին իրենց դրսեորել և բացի դրանից սարսափելի անմաքրասեր էին: Այդ մարդկանց հետ Հնարավոր չէր որևէ բան ձեռնարկել: Այլ բան էր, երբ մի Հայ կին էր ներս բերվում: Որտեղ որ նրան զնեին, այնտեղ կարգուկանոն, մաքրություն էր տիրում, իսկ իրենց Հովանավորներին՝ նրանք գերազանց ծառայություն էին մատուցում: Նույնիսկ Հայ մանչուկն ուզում էր աշխատել և կարողանում էր օգտակար դառնալ: Մեկը՝ թուրքական Հիվանդանոցի գլխավոր շտարի քժիշկը, կադիի քարոզը սրտին մոտ ընդունեց: Նրա մոտ Հիվանդապահուհիները, ինչպես ամենուրեք թուրքական պետության մեջ, գրեթե բացառապես Հայուհիներ էին: Մի օր քժիշկն արձակեց այդ բոլոր Հայ կանանց և նշանակեց քրդուհիների: Մեր Հիվանդանոցում

նույնպես, որտեղ բուժքույրերն այն ժամանակ նրան էին ևնթարկվում, փորձեց նույն բանն անել, չնայած որ մենք էինք բուժքույրերին նշանակել և ոչ թե նա: Սակայն ես միջամտեցի և կանխեցի նրանց հեռացումը:

Ինչո՞վ վերջացավ պատմությունը այդ քուրդ բուժքույրերի հետ: Ի դեպ՝ նրանք հիվանդ զինվորների խնամքի համար ստանում էին օրական միայն մի փոքր կտոր սև հաց, չափազանց քիչ՝ ապրելու համար, իսկ մեռնելու համար՝ չափազանց շատ: Տրվելիք խնամքից նրանք բացարձակապես ոչինչ չէին հասկանում: Շուտով ամրող հիվանդանոցում տարածվել էր սուկալի գարշահոտություն: Պարզվեց, որ քուրդ կանայք միայն մի բան էին լավ հասկանում՝ տանը իրենց ամբողջ տոհմին հիվանդանոցի սպիտակեղենը հագցնել: Ե՞վ զինվորների, և՛ հիվանդանոցի համար մեծ բարերախտություն էր, որ այդ գլխավոր շտարի բժիշկը չուտով Ուրֆայից հեռացավ, և աշխատանքի ետ կանչված հայ բուժքույրերը կարողացան կրկին կարգուկանոն ստեղծել:

35. Կառապան Էլիասը

Այն օրերին, երբ ուրֆացի կանայք սպասում էին տարհանման, կառապան Էլիասին, որ ալրանացի մահմեղական էր, մոտեցավ նրան ծանոթ մի հայ կին: Կինը համոզեց նրան, քանի որ ամուրի էր, ամուսնանալ իր հետ, ասելով, որ ամուսինը պատերազմում զոհվել է: Էլիասը համաձայնվեց: Զէ՞՞ որ նա՝ որպես մահմեղական կարող էր կին առնել միայն շատ դրամ վճարելով, իսկ այսպես՝ առանց զրամի, նա կին էր ունենում: Նաև երկու փոքր երեխաներին, որ իր հետ բերեց հայ կինը, նա ընդունեց ու նրանց նկատմամբ մեծ սեր էր տածում: Նա կաղիի միջոցով օրինականացրել էր իր ամուսնությունը և հայուհու հետ ապրում էր շատ երջանիկ:

Սակայն 1918 թ. կնոջ առաջին ամուսինը հանկարծ հայտնվեց: Նա պատերազմի սկզբում գերի էր ընկել ուսւներին և այժմ վերադառն էր: Նա իր կնոջը գտավ Էլիասի հետ ամուսնացած: Նա տեսավ նաև իր երեխաներին, և նրանք էլ ճանաչեցին իրենց հորը: Ամենայն հանգստությամբ նա Էլիա-

սին խնդրեց վերադարձնել կնոջը, սակայն վերջինս չէր համաձայնվում: Նա չէր ուզում հրաժարվել այդպիսի երջանիկ կյանքից: Սակայն Հայը գործը հասցրեց կաղիին: Վերջինիս Համար պարզ էր, որ այստեղ պետք էր կայացնել նոր որոշում: Սակայն դեպքն այնքան էլ դյուրին չէր: Երանի թե այդ ամուսնությունը, ինչպես նման շատ ուրիշներ, անօրինական լիներ:

Դատավորը իր մոտ կանչել տվեց այդ երկու տղամարդկանց, կնոջը և երեխաներին: «Էլիսա, պարզ է, որ կինը քեզ է պատկանում: Եթե կինը ասած չիներ, որ իր առաջին ամուսինը մահացել է, անշուշտ, դու նրան կնության չէիր առնի: Ես էլ իր ժամանակին քեզ չէի պասկի: Սակայն նայի՛ր երեխաներին, թե ինչպես են նրանք փաթաթվել իրենց օրինական Հորը: Իսկ կինը իր մեծ թշվառության մեջ, վախենալով որ այլապես քշվելու էր մահվան ճանապարհ, ասել է, որ իր ամուսինը մահացել է: Քանի որ ինքն էլ, չնայած որ քեզ նույնպես սիրել է, կնախընտրեր վերադառնալ իր առաջին ամուսնու մոտ, քեզ խորհուրդ կտայի՛ նրան թույլ տայիր, որ գնա: Աստված կօրհնի քեզ քո արարքի Համար...»

Դատավորի այդ խոսքին էլիսաը՝ արցունքու աչքերով Հետևյալ պատասխանը տվեց. «Ես այս կնոջ Հետ ապրեցի մի քանի երջանիկ տարի, նրա երեխաներին սիրեցի, կարծես իմ սեփական միսն ու արյունը լինեին: Լինելով նրա օրինական ամուսինը՝ զիտեմ, որ որևէ քրիստոնյա երբեք իրավունք չունի նրան ինձնից ետ պահանջելու: Սակայն ես զիտակցում եմ, որ ավելի լավ է՝ նրան վերադարձնեմ իր առաջին ամուսնուն: Թող նա երկար տարիներ նրա Հետ երջանկության և ուրախության մեջ ապրի»:

36. Մարտիրոս

Հիվանդների թվում, որոնց ոստիկանությունը մնացած Հայերի Հետ Հիվանդանոցից չտարափ, Մարտիրոս անունով մի Հայ պատանի էր: Տարը տարեկան Հասակում, նա Հիվանդ վիճակում եկել էր մեր Հիվանդանոցը գերմանական որբանոցից: Անրուժելի մի Հիվանդություն նրան այլևս չթողեց ոտքի կանգնել: Նա շարունակեց մնալ Հիվանդանոցում, նույնիսկ այն

բանից Հետո, երբ այն սկսեց օգտագործվել՝ որպես թուրքական զինվորական հիվանդանոց, միայն այն տարրերությամբ, որ նրա խնամքը, ինչպես միշտ, մենք էինք տանում: Պատանին ոչ մեկին չեր խանգարում, քանի որ նա մնում էր իր անձնական փոքրիկ սենյակում:

Սակայն 1918 թ. ամռանը մեր հիվանդանոց տեղափոխվեց արդեն մեղ Հայտնի թուրքական գլխավոր շտարի բժիշկը: Նրա համար Մարտիրոսը մի Հայ, մի արհավիրք էր: Իր ընթերականի միջոցով ինձ Հայտնեց, որ հիվանդը պետք է հիվանդանոցից հեռացվի: Սակայն ես դա չարեցի: Ապա նա այդ հիվանդին, որը իր իիիկի պես բարակ թևերից բացի ոչինչ շարժելու ի վիճակի չէր, իր մաշճակալով Հանդերձ Հանել տվեց հիվանդանոցից և զնել տվեց դռան առաջ: Դրսում՝ ի ամոթ բժշկի, երկու օր մնալուց հետո, ես ստիպված եղա նրանով զրադշել և նրան տեղափոխեցի ուրիշ շենք:

Մարտիրոսը դարձել էր մի երիտասարդ, որն իր հիվանդությունը տանում էր ապշեցուցիչ Համբերությամբ և նոյնիսկ շատ հիվանդների Համար օրհնություն էր: Նախկին հիվանդներ՝ նաև մահմեղականներ, նրան Հաճախ էին այցելում:

Քանի որ նա չեր կարողանում շարժել նաև վզի հողը, Հարմար մի տեղ պահում էր զրպանի մի փոքրիկ Հայելի, որի միջոցով դեռ Հեռվից տեսնում էր, թե ով էր ելումուտ անում հիվանդանոցում: Երկու անգամ գիշերով գողեր էին մտել, և այդ նա էր, որ դա նկատելով, աղմուկ բարձրացրեց, այնպես որ մենք գողերին կարողացանք դուրս քշել:

Այդ Մարտիրոսը իսկական Հայի տիպար է: Չնայած իր շարժվելու անկարողության, անցյալ տարի նա 2.000 ֆրանկ վաստակեց: Նա գործարքներ էր անում: Դեռահաս պատանիների միջոցով մշտապես տեղյակ էր շուկայի բոլոր անցուդարձերին: Եթե մի բան էժան էր, ապա նա զնել էր տալիս, իսկ երբ այն կրկին մի քիչ թանկանում էր, փողի էր վերածում: Ով որ ուղում էր որևէ բան էժան զնով ձեռք բերել, բավական էր, որ Մարտիրոսին ասեր, որն իր միջնորդության դիմաց չնշին տոկոսներ էր առնում: Այսպես էր նա վաստակել այդ 2000 ֆրանկը: Երբ ես 1919 թ. գարնանը անզիացիների առաջադրանքով աղքատների Համար ցորեն էի զնում, ապա Մարտիրոսի շնորհիվ լավ և էժան զնում կատարվեց:

37. Գերմանա-թուրքակա՞ն, թե՞ թուրք-գերմանական

Ես արդեն պատմել եմ, որ թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո, թուրքական և գերմանական Հաղթանակները տոնվում էին մեծ աղմուկով: Ուրֆա քաղաքը ուներ պատահիների նվազախումբ, որի կատարման որակը որքան ողորմելի, այնքան ավելի եռանդուն էր: Գերմանացիների հետ եղրայրական դիմակցությունը արտահայտվում էր դրանում, որ մեր գերմանական հիվանդանոցում ևս Գերմանիայի մեղեդիներ էին հնչում: Անշուշտ առաջին հերթին՝ «Գերմանիա, Գերմանիա ամեն ինչից վեր»:

Անկեղծ ասած, այդ ցնծությունների ժամանակ ես ինձ երրեք լավ չէի զգում: Ամեն անգամ հիշում էի մի դեպք, որ տեղի էր ունեցել ղեռևս 1915 թ, զարնանը: Կինս զրուսնելիս է եղել Ուրֆայի պարտեղներից մեկում: Ընդհանրապես նա ճանաչված էր որպես գերմանուհի, քանի որ տեղի բնակիչները մեզ՝ չվեցարացիներիս, գերմանացի էին համարում: Մի քուրդ կին, կտրելով կնոջս ճանապարհը, բռունցքները սեղմած՝ ասել է. «Տեսնենք ե՞րբ է գալու պահը, որ մենք էլ կարողանանք ձեզ՝ գերմանացիներիդ, հատուցել այն վնասը, որ դուք ներկայումս մեզ եք պատճառում: Մեր որդիներին ուղարկում ենք ձեր պատճառով, իսկ նրանք ետ չեն դառնալու»:

Ուրֆայում կային մի քանի թուրքեր, որոնք ամեն զնով գերմաններեն էին ուղում սովորել: Ես ինձ պարտավորված զգացի նրանց՝ մեր լեզվից գոնե որոշ նախնական գիտելիքներ հաղորդել: Այդ աշխատանքի ընթացքում տեսա այն, ինչ արդեն նախօրոք գիտեի, այն է՝ որ թուրքը ստեղծված չէ լուրջ աշխատանքի համար: Նրանցից մեկը՝ Հազիկ լեզվի մեջ մի քիչ հմտացած, արդեն ճամփա էր ուղում ընկնել՝ Գերմանիա զնալու: Նա հասավ մինչև Կոստանդնուպոլիս: Այնտեղից՝ նա մի քանի ամիս անց, քանի որ այդ ընթացքում պատերազմն ավարտվել էր, վերադարձավ Ուրֆա, անշուշտ առանց գերմաններեն սովորելու:

Բուն թուրքերի շրջանակներում լուրջ բնույթ ուներ համաթուրքացման շարժումը: Այդ մտայնությունն ունեցող շատ աղքայնամոլներ չէին թաքցնում, որ պատերազմի բարեհաջող

ավարտից Հետո Հոգալու են այն մասին, որ ոչ մի օտարերկրացի, այդ թվում գերմանացի, թուրքերի երկրում չի հաստատվի: Թուրքերին այլևս չպետք է մեղադրել, եթե Հիշենք ելույթը գերմանացի մի սպայի, որը կիսալուսի երկրում ուրախ Հանդիսությունների ժամանակ Հետևյալ բառերով է փորձել ամրապնդել գերմանա-թուրքական բարեկամությունը. «Ներկայումս՝ պատերազմի ժամանակ, մենք պետք է լինենք թուրքերի բարեկամը, որպեսզի պատերազմից Հետո նրանց կարողանանք մեզ ավելի լավ ծառայեցնել»:

Չեմ ուզում ասել, որ այժմ, երբ Անտանտը Հաղթանակել է, վերջինս ծառայեցման ձևերը չգիտի: «Փոքր ժողովուրդների ազատագրման» մասին բոլոր գեղեցիկ բառերի կողքին, ամենուրեք գերիշխում է մերկ ու սառը ևսամոլությունը. որի մշտապես քողարկված, սակայն չափազանց խոր նստած նպատակը գերմանացի սպայի ասածն է. «Մառայեցում»:

38. Գերմանացիները Ուրֆայում

Մենք արդեն Հաճախ խոսել ենք Ուրֆայի գերմանացիների մասին: Արդարացի կլինի՝ նրանց մի քանի բառ ևս նվիրել: Արդեն բազմիցս Հիշատակված պարոն Ֆրանց Էքարթը՝ գորգագործարանի տնօրենն ու Հայ երեխաների գերմանական որբանոցի վարիչը, պատերազմի տարիներին կարողացավ օրհնառատ գործունեություն ծավալել: Պատերազմի սկզբին նա իր ելույթներում Հորդորում էր Հայերին, որ իրենց գործելակերպի մեջ ավելի խելամիտ լինեն: Քաղաքական խելամտությունը միակ միջոցն էր, որով նրանք պիտի կարողանային շրջանցել պատերազմի՝ նրանց համար ստեղծած վտանգավոր խոյընդուտները: Ցավոր, սակայն, նրա ասածները նույնքան օգուտ տվեցին, ինչքան իմ նախապես նշած խորհուրդներն ու խնդրանքները:

1917-1918 թթ. ձմռանը պարոն Էքարթը հարյուրավոր մարդկանց ապահովեց Հագուստեղենով, որը տեղահանված Հայերից մնացել էր իր Փարրիկայում: 1917-1918 թթ. սովահարձուանը նա կարողացավ՝ որպես թուրքական ուազմական Հագուստի ձեռնարկության վարիչ, շատ Հայերի աշխատանք

տալ, այսպիսով փրկելով նրանց սովամահությունից:

Սակայն Անտանտին կողմնակից Հայերը, որոնք ավելի ուշ Ուրֆա և կան, պարոն էքարթին՝ որպես գերմանացու, չեին Համակրում: Նրան նույնիսկ մեղադրում էին Հայերի գույքի յուրացման մեջ, մեղադրանք, որից զերծ չմնաց երկրում մնացած ոչ մի եվրոպացի կամ ամերիկացի:

Թուրքական բանակի ջախջախման ընթացքում էր միայն, որ պարոն էքարթին Հաջողվեց ընտանիքով Ուրֆայից Հեռանալ: Բարեհաջող կերպով նրանք հասան մինչև Կոստանդնուպոլիս: Այստեղ երեխաններից մի քանիսը հիվանդացան, այնպես որ ուղևորության շարունակությունը դեպի Գերմանիա զգալիորեն հապաղեց: Երբ վերջապես ընտանիքը նսպ նստեց, նրանց Հորը վերջին վայրկյանին շոգենավից իջեցրին: Անտանտի Հանձնախմբի կարգադրությամբ նա այլ գերմանացիների հետ ներկալվեց Պրինկիպո կղզում: Կինը և երեխանները առանց նրան շարունակեցին ճանապարհորդությունը: 1919 թ. մարտին էքարթը զերությունից փախուստի դիմեց, սակայն թուրքուղարական սահմանի վրա սահմանապահի կողմից գնդակահարվեց:

Նրա կրտսեր եղբայրը՝ պարոն Բրունո էքարթը, պատերազմի առաջին երկու տարիներին նույնպես գտնվում էր Ուրֆայում: Նա զիտեր, որ Փարրիկայի ջրհորում երեք հայ կարթարնված: Չնայած որ թուրք զինվորների մի մեծ խումբ շարաթներով իջևանում էր Փարրիկայում, նա Հայերին ապահովում էր ապրուստի ամենաանհրաժեշտ միջոցներով: Հետագայում նա նրանց նաև օգնեց փախչել և աղատություն ձեռք բերել:

Արդեն հիշատակվել է, որ գերմանացի մի մայոր և մի ավագ լեյտենանտ Ուրֆայում մի տարի շարունակ թուրք նորակոչիկների էին մարզում: Այդ երկու պարոնները մի անգամ արդեն բնակչությանը ճաշակել էին տվել սպայական փորրիկ Հրաձգության ահը: Հրաձգային վարժություններն ինքնին արդեն հազվագյուտ երևույթ էին, առավել ևս՝ քաղաքի անմիջական մոտակայքում՝ Հրաձգային տոնակատարությունը: Ռազմական ջոկատները Հաճախակիորեն ջահերով գիշերային երթերի էին դուրս գալիս՝ Ուրֆայում նույնպես չտեսնված մի քան:

Մինչ այդ մշտապես կեղտուտ փողոցները մայորի հրամանով մաքրվեցին: Եթե մայորը ավելի երկար մնար Ուրֆայում, քաղաքը կատանար Հանրածանոթ պրուսական տեսք, անշուշտով է ի վնաս իրեն:

Երբ այդ սպաները Ուրֆայից գնացին, ժամանեց մի կարձահասակ, գերմանացի ենթասպա մեքենաների իր շարասյան Հետ, որին պատկանում էր տասը գերմանացի զինվոր: Սրանք ցորենը Ուրֆայից պիտի տեղափոխեին այլ վայրեր: Այդ օրերին ցորենի զինը, ինչպես արդեն նշվել է, աներեսակայելիորեն բարձրացել էր:

Գերմանացիների երեխաների Համար, ուրեմն և իմոնց Համար, այդ ամիսները, որոնց ընթացքում այդ զինվորները կանգ էին առել Ուրֆայում, գեղեցիկ ժամանակներ էին: Ռազմաճակատային զինվորները մեր տները ներսուղուրս էին անում: Շատ էինք երգում, իսկ անձրեսի ժամանակ, երբ բեռնատար մեքենաները գործի չէին դրվում, մեր երեխաների Համար անպակաս էին ուրախ խաղընկերները:

Զմեռային մի օր, երբ անձրևն ու ձյունը ծեծում էին պատուհանները, իմ տանն ապաստանեց ամբողջովին թրջված և սառած գերմանացի մի սպա: Կիս նրան չոր Հագուստ տվեց և նստեցրեց տաք վառարանի մոտ: Պարոնը սկսեց ուժգնորեն քաշել իր մեծ ծխամորճը: Տաքությունը, չոր Հագուստը, լավ սենյակը, դրան գումարած նրա ծխամորճը, նրան մոռացնել տվեցին, որ նա «Հեռավոր Թուրքիայում էր»: Երբ կեսօրին աշխատանքից տուն եկա, նա ներկայացավ ինձ որպես թուրքական ծառայությունում զլսավոր շտարի թժիշկ դ-ր Ֆուրման (Dr. Fuhrmann), Քյոլնից կանանց թժիշկը, որը խաղաղ տարիներին զլսավորել է այնտեղի կանանց Հիվանդանոցը: Մենք ուրախ էինք, որ ձեռնային եղանակը մեր հյուրին թույլ չտվեց շուտով նորից մեկնել:

1918 թ. ամռանը Ուրֆա եկավ վերջին գերմանացի զինվոր: Ես կլինիկայում էի: Մի Հայ կին Հաղորդեց ինձ, որ ջրաղացում ինձ սպասում է մի զինվոր, որը շտապում է ինձ Հետ խոսել: Ջրաղացը գտնվում էր կլինիկայի ետևում: Եվ ո՞ւմ եմ այնտեղ Հանդիպում: Լիովին բարոյալքված, իմ առաջ կանգնած էր ավտոշարասյան զինվորներից մեկը, որը նախկինում եղել էր Ուրֆայում: Նվարցվալդցի Հուրերն էր, որն այստեղ

դասալիք էր եղել: Խնդրում էր, որ իրեն ապաստան տամ: Ես նրան ժամանակավորապես ուղարկեցի խաղողի իմ այգիները, որտեղ կինս ու երեխաներս էին, որովհետև ես պետք է իմ աշխատանքին վերադառնայի: Հաղիք էր անցել երկու ժամ, կինս հայտնվեց՝ սոսկալի հուզված: Անկարելի էր, որ մենք դասալիքի ընդունեինք: Դա մեզ վրա շատ թանկ պիտի նստեր: Նա պահանջեց, որ ես նրան ետ ուղարկեմ: Սակայն խնդիրն այնքան էլ լուրջ չէր: Որպես շվեյցարացի ես ազատ էի: Խորհրդակցելուց հետո, նաև գերմանացի մեկ այլ հյուրի՝ դ-ր Բրեդեմանի (Dr. phil. Bredemann) հետ, որոշեցինք Հուրերին առայժմ պահել խաղողի այգում: Այնտեղ նա նախ կհանգստանար: Զէ՞՞ որ նա խղճալի վիճակում էր: 14-օրյա հանգիստը Խաղողի այգում վերականգնեց վհատված մարդու արիտոմյունը. ինչպես շատ շատերը, ինքն էլ սոսկալի զզվել էր պատերազմից: Ապա ես նրան համողեցի վերադառնալ իր շարասյունը: Վերը նշված՝ Հալեափի գլխավոր շտարի բժշկին ուղղած իմ մի նամակով, Հուրերը մեկնեց: Գլխավոր շտարի բժիշկը նրան դարձյալ մի քանի օր պահեց, որից հետո միայն դասալիքը վերադարձավ իր շարասյունը, որտեղ նա ընդունվեց առանց որևէ տույժի: Սակայն, ցավոք, մի քանի օր անց նրան ուղարկեցին բժշկի մոտ՝ տրոպիկա (Tropika) կոչվող մալարիայով, որից նա մի քանի օր հետո մահացավ: Այժմ նա ընդմիշտ ազատվեց զինվորական ծառայությունից:

Գլխավոր շտարի բժիշկը ցանկանում էր ինձ առաջազրել որպես Ռազմական օգնության արժանյաց խաչի թեկնածու (Verdienstkreuz für Kriegshilfe), մոլորյալ զինվորին ընդունելու, ինչպես նաև մյուս գերմանացի զինվորներին բարեկամական վերաբերմունք ցույց տարու համար: Ես նրան խնդրեցի հրաժարվել այդ մտքից, քանի որ մենք սոսկ մեր սովորական պարտականությունն էինք կատարում, մի բան, որ նույն կերպ ցուցաբերում էինք նաև Գերմանիայի թշնամիներին:

Վերջում այստեղ թող խոսվի մի այլ սպայի մասին: Նա ո՞չ սուր էր կրում և ո՞չ նույնիսկ համազգեստ: Մենք նրան անվանում էինք «Մորեխաների գեներալ»: Երկար ժամանակ նա հյուր էր մեր տանը: Նրա հետ էր նաև նրա սիրարժան տիկինը: Այդ պարոնը, որը վերը նշված դ-ր Բրեդեմանն էր, Միջազգետքում ծավալել էր օրհնառատ գործունեություն: Նա ոչնչացրել էր

մարդկանց միլիոնավոր թշնամիներին: Քանի ևս Արևելքում եմ, տեսել եմ, թե ինչպես են այդ թշնամիները, ցորենի դաշտերում իրենց գործած սոսկալի ավերածություններով, ամեն տարի մարդկանց զրկում հացից: Քայլ քանի այդ «գեներալը» սկսել էր կանոնավոր պայքար մղել նրանց դեմ, «Մորեխների աղետը» զգալիորեն նվազել էր: Այդպիսի արդյունավետ պայքարի մեջ տարի ևս, և մորեխները՝ որպես Միջագետքի մեծագույն աղետ, կղաղարեին գոյություն ունենալուց: Սակայն «գեներալը» ինքն էլ պարտավոր էր նաև անջել, և լավ է, որ ճիշտ ժամանակին կարողացավ վերադառնալ իր գերմանական Հայրենիքը: Այն, ինչ մորեխների ոչնչացման համար տասնամյակների աշխատանքով և միլիոնների ներդրումով չէր հաջողվել թուրքական կառավարությանը, քիչ էր մնում երեք տարում իրագործելի դառնար երեք գերմանացիների կողմից, որոնք գործում էին Անատոլիայում, Սիրիայում և Միջագետքում⁴:

39. Դրամանիշը

Թուրքիան առաջին անգամ դրամանիշեր մտցրեց 1877 թ. վերջին՝ Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ: Սակայն օսման ժողովուրդը այդ թղթի արժեքին հավատ չէր ընծայում: Դրա արժեքինը գնալով ավելի ընկափ, մինչև որ պատերազմից հետո մեկ թղթադրամն ունեցավ ուկեղրամի արժեքի միայն մեկ վեցերորդը: Ապա հաջորդեց պետության սնանկացումը: Կառավարությունը բոլոր դրամանիշերը հայտարարեց արժեգործքած, և երկիրը վերադարձավ իր սիրելի Հնչուն դրամին: Կային վաճառականներ, որոնք այդ օրերին իրենց սենյակները դրամանիշերով էին պաստառապատում:

Աշխարհամարտը դրամանիշը նոր կյանքի կոչեց: Խիստ կարգադրությունների շնորհիվ թղթադրամը սկզբնական շրջանում լավ վիճակում էր: Դա 1916 թ. ապրիլին էր: Հրաման կար բոլոր ոսկեղրամները հանձնել պետությանը, սակայն ոչ

⁴ Ով որ հետաքրքրվում է մորեխների ոչնչացման եղանակով, թող կարդագետամանի «Մորեխների հարձակումը և պայքարը դրա դեմ» մենագրությունը (Բեռլին, 1918):

որ դա չէր անում: Այսուհետեւ ոսկին անմիջապես շրջանառությունից անհետացավ: Ուրֆայում մի Հարուստ թուրք, որը չէր ցանկացել որպես վճարման միջոց դրամանիշ ընդունել, կոնիա աքսորվեց: Այլ վայրերից նույնպես անհնագանդներն աքսորվեցին: Այն Հանգամանքը, որ ոստիկանները Հանկարծ խուժում էին վաճառատները, բացում դրամարկղները, վերցնում այնտեղ եղած ոսկին ու փոխարինում դրամանիշով, չնըպաստեց թղթադրամի արժեքի բարձրացմանը: Ոսկեղրամը շարունակում էր զաղտնիորեն շրջանառվել: Ի վերջո, կառավարությանը նույնպես այդ գործից վնաս հասավ: Մի քանի ամիս հետո դրամանիշի արժեքն ընկավ, իսկ ոսկին առաջվապես շրջանառության մեջ մնաց: Սակայն դրամատներին արգելված էր վճարումները կամ գործարքները ոսկով կատարել: Ինչքան ձգձգվում էր պատերազմը, այնքան իշնում էր դրամանիշի արժեքը, և ինչքան մոտ էր երկրի սահմանին, այնքան էժան էր դրա գինը: Կոստանդնուպոլիսում այն մշտապես ավելի բարձր էր, քան մարզերում, և այնտեղ էլ նրա գինը ամենուրեք տարրեր էր: Սրա չնորհիվ հակայական գումարներ էին չարաշահվում: Մի վաճառական Հալեպում ոսկով թղթադրամ էր գնում, մի ոսկեղրամի դիմաց ստանալով վեց թղթադրամ, որը կոստանդնուպոլիսում վերավաճառելով, մեկ ոսկեղրամի դիմաց երեք կամ չորս թղթադրամ էր տալիս: Դեռ զինադադարից հետո, երբ բրիտանացիները արդեն գրավել էին Մոսուլն ու Հալեպը, թուրքական թղթադրամի գինը Մոսուլում ավելի ցածր էր, քան Հալեպում: Մի հրեա վաճառական Մոսուլում գնել էր 120.000 ֆրանկի թղթադրամ, Հալեպ թուզող ինքնաթիռով տեղափոխվելու համար վճարել էր 1200 ֆրանկ, իսկ այնտեղ վաճառել իր թղթադրամները՝ շահելով 150 000 ֆրանկ:

Ուրֆայի համար հատկանշական էր, որ բրիտանական գրավման սկզբում, թուրքական թղթադրամի արժեքը բարձրացավ: Ապագան ցույց կտար, թե արդյո՞ք վաճառականներն իրենց սենյակները մի անգամ ևս թղթադրամով պիտի պաստառապատեին: Արաքներն արդեն պատերազմի ընթացքում հոգացել էին այն մասին, որ այդ վիճակի մեջ չընկնեն: Ի դեպ՝ նրանք սենյակներ էլ չունեին, որ պաստառապատման կարիք ունենային:

Երբ ես մի արարից մի լիտր մածում էի ուզում գնել և նրան ասացի, որ դրա դիմաց վճարելու եմ 200 թղթադրամ, նա ցոյց տվեց իր լայն վերարկուն ու ասաց. «Եթե դու իմ վերարկուն լցնես թղթադրամներով, ես քեզ կաթ չեմ տա, բայց եթե դու ինձ մեկ մետաղադրամ (5 պֆենիդ հնչուն դրամ) տաս, կարող ես ուզածիղ չափ կաթ ունենալ»:

Գերմանացի սպաները թուրքիայում, Հատկապես պաղեստինյան ճակատում, նույնպես շուտով հասկացան, որ թղթադրամով ոչինչ չես գնի: Այդ իսկ պատճառով հետազայում թեոլինում ուսկե ու արծաթե դրամներ հատվեցին և միլիոններով թուրքիա բերվեցին: Ինչ պետքական պիտի լիներ այսօր այդ ուսկին իրեն՝ Գերմանիային:

40. Մննդամթերքի գները

Միջազնութը պատերազմի երկրորդ տարում այն երկրներից էր, որտեղ սննդամթերքը դեռ էժան էր: 1915 թ. աշնանը մեկ քիլե (Kilé), ցորենի համար, որը հավասար էր 160 կգ, վճարում էին 10 ֆրանկ: Սակայն 1918 թ. գարնանը նույն քանակի գինը՝ թղթադրամով հաշված, բարձրացավ 3200 ֆրանկի. իսկ եթե մարդ ի վիճակի էր ոսկով վճարել, գինը 650 ֆրանկ էր: Իմ Բաղդադ գնալու ճանապարհին չորս ձուն գնում էի մեկ մետալիքով (Metallik), որը հավասար էր հինգ պֆենիդի: Իսկ վերջին տարվա հունվարին մեկ հատին վճարում էինք 2,25 ֆրանկ: Մաս գինը նույնպես, որի մեկ օքան (ծնթ. թարզ. Okka= 1225 դրամ) դեռ պատերազմի առաջին տարին արժեր 60 պֆենիդ, հիմա բարձրացավ 16 ֆրանկի: Հալած յուղը, որի մեկ օքան սովորաբար արժեր երեք ֆրանկ, հիմա հասավ 50 ֆրանկի: Անհավատալի էր նաև նավթի գինը: 18 լիտր նավթ պարունակող թիթեղյա անոթը, որ սովորաբար հինգ ֆրանկով հասանելի էր, վերջում 2000 ֆրանկով հազիվ էր ձեռք բերվում: Ներմուծված բոլոր ապրանքները միջին հաշվով ավելի թանկացան, քան տեղականները: Դա հասկանալի էր, քանի որ ներմուծումն ամրողջովին վերացել էր: Միայն Բաղդադի անկումից հետո, Ուրֆայում հնարավոր դարձավ այնտեղից բերված մաքսանենգ ապրանքներ գնել, թեև դեռ անմատչելի:

գներով: Հատկապես թանկացել էին բամբակյա բարակ կտորները, ինչպես օրինակ այնպիսիք, որ գործածվում էին դիակներ պատանելու համար: Պատճառն այն էր, որ դրա պահանջարկը մեծացել էր, քանի որ համաճարակներն այստեղ հսկայական մեծ թվով զուհեր էին խլում: Շատերը ստիպված էին իրենց հանգուցյալներին հողին հանձնել առանց պատանելու:

41. Լուսաբաց

Տարագիր Հայերի փոքրաթիվ մնացորդը դեռ երկար պետք է ապրեր լավ ժամանակների սպասումով: Քանի դեռ պատերազմը շարունակվում էր, Հույս չկար, որ նրանք պիտի կարողանային իրենց հայրենիքը վերադառնալ կամ իրենց գտնված վայրում՝ աղատ տեղաշարժվել: Սակայն ինչպես ամեն բանն իր ժամանակն ունի, պատերազմն էլ ի վերջո պետք է հասներ իր ավարտին:

Մենք Ուրֆայում հաճախ զարմանում էինք, թե ինչն էր պահում թուրքական ճակատները: Ուրֆայում վիստում էին դասալիքները, այդ թվում շատերը, որոնք քանիցս փախել և կրկին բռնի զինվորագրվել էին, սակայն նորից ու նորից փախուստի ճանապարհն էին վերագտնում: Այդ էր պատճառը, որ մենք բնակ չղարմացանք, երբ 1918-ի սեպտեմբերին հայտարարվեց Նարլուղի և Նազարեթի անկումը, որին անմիջապես հաջորդեց Դամասկոսինը: Այդ ժամանակ ես Հայեպում էի: Ծտապ վերադարձա Ուրֆա, որովհետեւ չառ չուտով անզլիացիները մտնելու էին Հայեպ: Ուրֆա բերած իմ լուրերը տեղի գերմանացիներին ոտքի հանեցին: Պարոն դ-ր Բրեդեմանը և իր տիկինը անմիջապես ճանապարհ ընկան, ժամանակին հասան Հայեպ, այնտեղից էլ Կոստանդնուպոլիս:

Ուրֆայի թուրքերի հակագերմանական տրամադրությունը վերադարձավ միայն զինադադարից հետո: Արդեն լուրեր էին շրջում, որ թուրքերն ուզում էին բռնազրավել գերմանացիների գորգագործական ֆարբիկան ու մեր Հիվանդանոցը: Երկու հիմնարկություններն էլ այդ ժամանակ գտնվում էին իմ տնօրինության տակ, քանի որ առաջինը պարոն էքարթը հեռանալիս ինձ էր հանձնել, իսկ վերջինը ետ էի ստացել

զինադադարից քիչ առաջ: Ֆարբիկայում՝ թուրքերը մտադիր էին տեղափորել արհեստագործական դպրոցը, որը մինչ այդ գտնվում էր ամերիկյան Հաստատության մեջ, քանի որ վերջնա նույնպես զինադադարից հետո վերադարձվելու էր ինձ՝ որպես ամերիկյան Հաստատության ներկայացուցչի:

Բարերախտարար թուրքերը վերջին պահին ավելի լավ բան մտածեցին: Նրանք նախընտրեցին իրենց դպրոցը այնպիսի մի շենք տեղափոխել, որտեղից նրանց շուտով դուրս չէին քչելու: Իսկ մեր Հիվանդանոցը Հայտարարեցի շվեյցարական Հաստատություն, քանի որ սեփականությունը գրանցված էր մի շվեյցարացու անունով: Այսպիսով, ինձ Հաջողվեց իմ բոլոր շենքերով Հանդերձ Հաղթահարել նոր դժվարությունները: Թուրք ամրությ շրջաններում լայնորեն տարածվել էին գերմանացիների Հասցեին Հայոյանքները: Առավել լավ խավի ներկայացուցիչները բնականարար չէին կարող մեկ-երկու օրում բարեկամից թշնամու վերածվել: Դեռ Հազիի էր Անտանտը Կոստանդնուպոլիս մտել, երբ գավառներում արդեն ուրիշ քամի էր փշում: Եկան Հրամաններ, ըստ որոնց՝ մահմեդականների տներում գտնվող բոլոր Հայերը պետք է ազատ արձակվեին, նույնիսկ այն կանայք, որոնք ամուսնացած էին մահմեդականների հետ:

Այժմ արդեն ազատ էին նաև բոլոր այն Հայ զինվորները, որոնք պատերազմի բռնկումից ի վեր՝ որպես Հավատարիմ օսմաններ, աներեր մնացել էին ուղմաղաշտում: Նրանց թվում մոտ 200 ուրֆացի վերապրել էր պատերազմը: Սկզբում մեծ մասը մնաց Հալեպում, քանի որ Ուրֆան նրանց Համար դեռ անապահով էր: Միայն երբ բրիտանացիները Ուրֆան գրավեցին, բոլորը Համարձակվեցին վերադառնալ ԱրրաՀամի քաղաքը, որտեղ սակայն նրանք իրենց Հարազատներից ոչ մեկին այլեւս չգտան: Անհետացել էր նաև նրանց ամրող ունեցվածքը:

Լավ էր, որ ես կրկին ստանձնել էի ամերիկյան շենքերի տնօրինությունը: Չնայած որ շենքերն ամրողջովին դատարկ էին, երբ ինձ Հանձնվեցին, ես կարողացա դրանք անմիջապես վերափոխել որբանոցների: Դեռ 1916-ին ինձ Հաջողվեց վերացնել տալ ոմբակոծությունների պատճառած վնասները:

Պետք է ասել, որ թուրքերը շատ չէին շտապում իրենց

տներում գտնվող Հայերին ազատ արձակել: Միայն նրանց, որոնք Հիվանդ ու անկար էին, փողոց էին ուղարկում: Այդպիսիները գալիս էին մեզ մոտ, և մենք նրանց բոլորին տեղափորում էինք որբանոցում: Ուրիշները՝ լսելով իրենց ազատության լուրը, մեզ մոտ էին փախչում: Ի դեպ, այդ կապակցությամբ մենք ականատեսն էինք լինում ամեն տեսակ արտառոց դեպքերի: Այսպես, եթե գալիս էր մի հայուհի, որը դեռ որպես աղջիկ տարվել էր թուրքի տուն, Հասկանալի էր, որ նա հայտնվում էր իր բոլոր զարդեղնենով և Հաճախ էլ շատ գեղեցիկ հագուստներով: Նրա ետևից գալիս էին թուրքերը, որոնք նվիրել էին այդ իրերը, և պահանջում, որ դրանք վերադարձվեին: Կամ, մի կին փախչում էր մեզ մոտ, թողնելով թուրքի մոտ իր ծծկեր երեխային, որի մասին այլևս լսել չէր կամենում: Այնուհետև գալիս էին երեխաների հայրերը, բերում էին երեխաներին և խնդրում հոգ տանել, որ փախած մայրերը շարունակեն կերակրել նրանց: Սակայն մայրերը դիմադրում էին, որովհետև գիտեին՝ երեխաներն ի վերջո պատկանելու էին թուրքերին: Նուտով հասկացա՝ որրանոցը, որի մեջ ինքս չէի ապրում, չէր կարելի թողնել առանց պաշտոնական հսկողության: Խնդրեցի ուրեմն նահանգապետին՝ մեզ մի ժանդարմ տրամադրել, որը մեր օձիքը կազատի երրեմն չափից շատ ընչասեր մահմեղականներից:

Թուրքերի տներից Հայերի ազատագրումը երրեմն մեծ դժվարությունների հետ էր կապված: Հայ ազգը չէր կարող վերակերտվել միայն տկար մարդկանցով: Այդ իսկ պատճառով մենք ուզում էինք թուրքերի տներից դուրս հանել Հնարավորին չափ մեծ թվով առողջ մարդկանց: Հենց որ տեղեկություն էինք ձեռք բերում Հայ երեխայի կամ կնոջ անունների ու նրանց տան տեղի մասին, Հայտնում էինք ոստիկանությանը և խնդրում՝ նրանց մեզ մոտ բերեն, մի բան, որ մեծ մասամբ կատարվում էր: Պետք է ասել, որ Հաճախ մենք Հաստատ չգիտեինք, թե տվյալ անձը իսկապե՞ս ուզում էր թուրքի տնից դուրս գալ: Երեխաների դեպքում գործը կարճ էր կապվում: Խնչքան էլ որ նրանք դիմադրեին, նաև զոռային՝ «Ես ոյավուր չեմ, մահմեղական եմ», միևնույն էր, ոստիկանը բերում էր նրանց: Մեծ մասամբ նման երեխաները հազիվ մի քանի օրից որբանոցում իրենց երջանիկ և ուրախ էին զգում: Այլ էր

սակայն, երբ իր կամքին հակառակ հայ կին էր բերվում: Նա հետո փորձում էր փախչել որրանցից: Ի դեպ, չպետք է մոռանալ, որ նրանցից շատերի վիճակը մահմեղական տներում այնքան էլ վատ չէր՝ լավ սնունդ, լավ հագուստներ և մահճակալ: Տներից հանելու ժամանակ՝ նրանցից ետ էին վերցնում լավ հագուստեղենը: Իսկ որրանոցում պակասություն կար ոչ միայն սննդի, այլև հագուստի ու մահճակալի: Հաճախ երեք կամ չորս հոգու համար ունենում էինք մեկ մահճակալ: Զինադարձարի կնքմանը զուգընթաց՝ ցամաքեցին մեր դրամական աղբյուրները, որովհետև ոչ մի դրամատուն այլևս դրամ չէր տրամադրում: Այդ պատճառով ես նախ ստանձնեցի գորգագործական ֆարբիկայի դրամարկղի կանխիկ խոչոր գումարը, ապա գնացի Հալեպ բրիտանացիների մոտ՝ դրամ խնդրելու, սակայն նրանք ինձ սպասեցնել տվեցին: Նրանք նախ ուզում էին իմանալ, թե ես ով եմ:

Մեծահարուստ թուրքերից մեկի տանը գտնվում էր մի կրթված և շատ գեղեցիկ հայ աղջիկ, որին ամուսնացրել էին խոլուհամբ մի թուրքի հետ: Այդ աղջկա վերաբերյալ հետաքննությունը սկիզբ էր առել Շվեյցարիայից: Գիտեինք, որ նա գժրախատ է և չէինք ուզում նրան թողնել ճակատազգի քմահաճույքին: Չնայած որ մեր պահանջով շարունակ դիմում էինք ոստիկանությանը, նրան չէին բերում: Թուրքն իր հարստությամբ ավելի զորեղ էր, քան ոստիկանությունը:

Մի օր ինձ ներկայացավ մի բարեկիրթ թրքուհի, բարձրաստիճան մի պաշտոնյայի տիկինը: Արցունքն աչքերին խնդրում էր՝ ոստիկանության միջոցով պահանջել մի ոմն հայունու Սվագից: Ամուսինը լքել էր նրան և ամրողովին նվիրվել այդ հայունուն: Մինչդեռ նա իր ամուսնուն պարզեել էր երեք կայտառ երեխա: Իսկ ամուսինը, ընդհանրապես բարի մի մարդ, ընկել էր այդ «պոռնիկի» ծուղակը: Թրքուհին ոտքերս ընկած խնդրում էր՝ աղատել իրեն այդ «պոռնիկից»: Սակայն հայունին, որին ճանաչում էինք, այդքան էլ վատ կին չէր կարող լինել: Նա հավանաբար նախընտրում էր, փոխանակ շատերի պես փողոցն ընկնելու, մնալ թուրքի մոտ: Թուրքերը, որոնց հայ կանայք մեղ մոտ էին գալիս, փորձում էին երբեմն այդ կանանց մեղադրել գողության մեջ: Մեկը՝ իրեն թե տնից 1000 պիաստեր (Piaster= Թուրքիայի դրամական միավոր) էր

տարել, մյուսը՝ երկու կամ ավելի հազար պիտաստեր: Նրանք հույս ունեին նման մեղադրանքներով վերստին տիրանալ այդ կանանց: Իրականում կանայք գողեր չեին: Նրանց հավատարմությունն Արևելքում առած էր դարձել: Հենց նրանց առավելություններն էլ նկատի ունենալով էր, որ թուրքերն ամեն ինչ անում էին՝ նրանց վերստանալու համար: Որպեսզի ցոյց տրվի, որ կառավարությունն ինքը լրջորեն զրադշում էր հայուհիների աղատագրման հարցով, հարկ է այստեղ պատմել հետևյալ տարօրինակ դեպքը: Հրամանից հետո, որով արգելվում էր հայ կանանց որևէ մնաս հասցնել, և որ նրանց բոլորին պետք էր աղատ արձակել, թուրքերից մեկը մեղանչել էր մի աղջկա զեմ, որին երեք տարի որպես աղախին իր տանն էր ունեցել, բայց մինչ այդ հանգիստ էր թողել: Աղջկան հաջողվել էր փախչել և ապա գանգատ էր ներկայացրել բռնարարողի դեմ: Նահանգապետի հրամանով թուրքը պարտավոր էր աղջկան վճարել 100 ոսկեդրամ, որը հավասար էր 2300 ֆրանկի:

Որբանոցում օրեցօր ավելացող երեխաների ու կանանց բազմության համար ես այլս զրամ չունեի: Անզիացիները չպահեցին Մննյան տոների առթիվ դրամական օգնություն ուղարկելու իրենց խոստումը: Ուստի փետրվարի վերջին կնոջ ուղարկեցի Հալեպ, որպեսզի ջանա անզիացիներին հիշեցնել իրենց խոստման մասին: Ի վերջո կնոջս հաջողվեց օգնություն ձեռք բերել: Ես հաճախ էի ինձ հարցնում, թե ինչու էին անզիացիներն ինձ այդքան սպասեցնում, մինչդեռ Հալեպում տեղի կարիքավոր հայերի համար մեծ գումարներ էին տրամադրում: Իրավունք ունեմ ենթադրելու, որ դա զրապարտության հետևանք էր: Մննյան տոներից առաջ, Ուրֆայում իրեն անապահով զգալով, որպես փախստական Հալեպ էր հասել հենց այն հայ ընթերակա բժիշկը, որը նախկինում աշխատում էր մեր հիվանդանոցում: Այդ պարոնը հավանարար ինձ սևացրել էր անզիացիների մոտ: Վերջինս, ինչպես և նրա նման շատ հայեր, ինձանից վիրավորված էին, որ ես պատերազմի ողջ ընթացքում չէի թաքցրել գերմանացիների հանդեպ իմ ունեցած համակրանքը: Գերմանացիների բարեկամը՝ նրա կարծիքով, հայերի թշնամին էր, թեկուզ և նա այդքան շատ բան էր անում այս տարարախտ ժողովրդի համար: Բայց և այն

մասին, որ ես իմ տանը պահում էի Ուրֆայում ներկալված չորս ֆրանսիացի և մեկ անգլիացի, դրա մասին բժիշկը ոչինչ չեր հայտնել: Հայերի այդ Հոգեբանությունն ըմբռնելի է միայն այն դեպքում, եթե մարդ տեղյակ է, որ թուրքերը շարունակ Գերմանիայի կայսրի կարգադրությանն էին վերագրում հայ ժողովրդի տեղահանումը: 1919 թ. մարտին Ուրֆա ժամանեց ամերիկյան մի հանձնախումբ, որն ուսումնասիրելու էր Հայերի կարիքները և նրանց համար մինչև օրս կատարված բարեգործական աշխատանքները: Այդ պարոնայք իջևանում էին մեր տանը: Ես նույնպես նրանց ներկայացրի իմ հաշվեմատյանները և բավականություն մեծ էր, երբ նրանք իմ աշխատանքը շատ բարձր գնահատեցին և հարկ համարեցին ասել, որ իրենց կարծիքով կայսրության մեջ օգնության աշխատողներից ոչ մեկը դրամն այդպես լավ իր նպատակին չի ծառայեցրել, ինչպես ես: Հազիվ էին այդ պարոնայք Հալեպ հասել, որ անգլիացիները դրամ ուղարկեցին՝ առանց իմ խնդրանքին սպասելու: Այժմ աղղեցիկ տեղերում գիտեին, թե ում հետ էր նրանց գործը:

42. Ավերված թաղամասը

1915 թ. նոյեմբերին քաղաքի Հայկական թաղն ամբողջովին թալանվել էր: Դրա ժամանակ շատ տներ հիմնովին այրվել և քանդվել էին: Քանի որ տանիքները մեծ մասամբ կավից և խիճից էին կառուցված, անձրևների շրջանն սկսվելուն պես դրանք խնամքի կարիք ունեին: Ում տանիքը որ չէր խնամքում, շուտով քանդվում էր: Այսպիսով հենց առաջին ձմռանը շատ տանիքներ փլվեցին: Պատերից նույնպես միայն որոշ հատվածներ էին կանգուն մնացել: Ինչ-որ չափով դեռևս անվնաս մնացած տները շուտով նոր բնակիչներ ունեցան, և դրանք այն քրդերն էին, որոնք Ուրֆա էին եկել որպես վտարանդի: Նրանք շահագրգուված չէին տները կարգի բերելու, քանի որ կարծում էին, որ շուտով վերադառնալու էին իրենց Հայրենիքը: Ուստի նրանք կողոպտեցին փայտի ու երկաթի եղած ամեն մի կտորը: Հանեցին բոլոր գերանները: Ինչ փույժ, որ տունը փլվում էր: Այսպիսով զրեթե ամբողջ թաղամասը

վերածվեց ավերակների: 2300 տներից հազիվ հիառնն էր մասամբ թնակելի: Դրանց մեծ մասը թուրքական թաղին սահմանակից տներն էին, որոնց մեջ ոմբակոծումից անմիջապես չետո տեղափորկեցին տեղացի թուրքերը:

Բարեհոգի կաղին, իր կարողության սահմաններում օգնում էր Հայերին: Նա առաջարկ էր մտցրել՝ Հայերի ունեցվածքը, որքան որ այն դեռ առկա էր, վերադարձնել ողջ մնացած Հայերի Համայնքին, սակայն նահանգապետը ընդդիմանում էր դրան: Հետևաբար կաղին կարողանում էր գործել միայն դեպքից դեպք, օրենքի սահմաններում որոշ Հայցվորների խնդիրը կարգավորելով և բարյացակամորեն միջամտելով: Օրինակ, իրավունք էր տրվում որոշ Հայերի՝ անհետացած Հորեղբոր տան կամ այգու տերը դառնալ՝ այլ ժառանգների բացակայության պայմաններում: Իսկ ամբողջ ունեցվածքը պարզապես Հայ աղքային կոմիտեին վերադարձնելու մասին, որպեսզի այն Հանձնվի իրավասուներին, նահանգապետը լսել չէր ուզում:

Մեր որբանոցում շատ շուտով իրեն զգացնել տվեց տեղի պակասությունը: Ուստի ես խնդրեցի մեզ վերադարձնել քաղաքից դուրս գտնվող Հայկական վանքը, որը մինչև վերջերս թնակեցված էր թուրք աղքատներով: Հույս ունեի, որ կկարողանանք անմիջապես այնտեղ տեղափոխսկել: Դեռ մի քանի ամիս առաջ եղել էի այնտեղ և ուրախացել, որ պատուհաններն ու դռները տեղում էին: Սակայն երբ հիմա ինձ ներս առաջնորդեցին, որպեսզի ես կամ այն Հայերը, որոնց ներկայացնում էի, տիրանայինք այդ շենքին, ես սարսափահար եղա: Ոչ պատուհան կար այլևս, ոչ դուռ, իսկ նրանց փայտե վերին նեցուկները հանված էին, որի հետևանքով շատ տեղերում փլվել էին քարե պատերը: Ուստի փոխանակ անմիջապես տեղափոխսկելու, այնտեղ նախ անհրաժեշտ էր ամենահրատապ վերանորոգումներն անել տալ: Փայտի և ապակու պակասի պատճառով առայժմ հնարափոր չէր դռներ ու պատուհաններ տեղադրել, սակայն քանի որ դիմացը գարուն էր, կարելի էր այստեղ երեխաներին այսպես էլ տեղափորել: Ամերիկացիները իմ պահանջով Ամերիկայից ապակի և փայտ էին ուղարկելու, ոչ միայն այս տան համար, այլև ամբողջ թաղամասի: Դրանով իսկ հույս ունեինք մինչև Հաջորդ ձմեռ ինչ-որ քանի հասնել:

1919թ. մարտին մենք Հայ երեխաներով փանքը դրաղեցրինք: Բանից պարզվեց, որ մեծ որբանոցում իրավունք չունեինք կանանց ու երեխաներին միասին քնակեցնել: Մուսուլմանական տներում տարիներ շարունակ մնալով՝ մարդիկ այնքան էին այլասերվել, որ նրանց բաժանումը բացարձակ անհրաժեշտություն էր: Հանձնված կանանց մեջ կային նաև այնպիսիները, որոնք չուտով ծննդաբերելու էին:

Այդ օրերին դրամի մեծ պակասությունից բացի՝ մենք օգնական ուժերի կարիք զգում էինք: Այստեղից-այնտեղից Հավաքված այդ բոլոր մարդ արարածներին՝ ևս պարտավոր էի ոչ միայն Հսկողությամբ ապահովել, այլև աշխատանքի մղեի: Ուրֆայի ֆրանցիսկյան կին կրոնավորները օգնության խնդրանքիս անմիջապես ընդառաջեցին: Մեզ իրավունք տրվեց նրանց Հանձնել 100 կին ու մի քանի երեխա, որոնց նրանք անմիջապես դրաղեցրին ձեռագործի օգտակար աշխատանքով:

Մեր մանածագործարանում նույնպես եռուն աշխատանք սկսվեց: Նախկինում այդ արհեստով Ուրֆայում դրաղվում էին միայն տղամարդիկ, սակայն վերջին աղետալի տարիներին կանայք ևս մասնագիտացան:

Կոչկակարությունը նույնպես արագ թափ առավ: Ֆրանցիսկյան կրոնավորները նման մի արհեստանոց ստեղծեցին, Հետն էլ մի հյուսնոց:

Բողոքական եկեղեցին, որը մենք ետ ստացանք առանց դուռ ու պատուանի, վերածեցինք դպրոցի: Ալմաստը, որի տարհանման պատմությունն արդեն վերը շարադրել եմ, դարձավ դրա ավագ ուսուցչուհին: Շատ ծանր աշխատանք էր՝ բոլոր այդ վայրենացած երեխաներին կրկին դպրոցի և կանոնավոր կյանքի վարժեցնելը: Թուրքերից նրանք սովորել էին անգործությունը, որը նրանք իրենց վարժապետներից ավելի լավ էին կիրառում: Երեքից չորս տարի մուսուլմանական տներում անցկացնելը չէր կարող աղղեցություն չունենալ ընկալունակ Հայերի վրա, և վախենում եմ, որ այդ բացասական աղղեցությունը դեռ երկար կմնա նրանց վրա:

43. Զանգի Հնչյուններ և այլն

Բողոքականների եկեղեցին ոմբակոծումների ժամանակ որոշ չափով զերծ էր մնացել վնասվածքներից: Միայն զանգակատունն էր զանգի հետ ոմբահարվել: Գմբեթներից մեկն էլ վնասվել էր գնդակի հարվածից: Սակայն անցքը թուրքերն իրենք էին վերանորոգել, երբ նրանք եկեղեցին վերածել էին նորակոչիկների համար զորանոցի: Շարժական ամրողջ գույքը՝ դուռն ու պատուհանները ներառյալ, կողոպտվել էր: Եթե զանգն այդքան ծանր չլիներ, այն վատահարար չորս տարի ցեսի մեջ ընկած չէր մնա: Միայն լեզվակն էին գողացել և զանգի թիկնակի երկաթյա մասերը: Հայկական մեծ Մայր տաճարն ավելի վատ վիճակում էր: Ռմբակոծության հետևանքով շենքի մի քանի անկյունը ամրողջապես հարթեցված էր: Եկեղեցում բնականարար այլևս շարժական ոչ մի իր չէր մնացել, իսկ շինության փայտեղենը, նույնիսկ հատակի ու մեծ հարթ տանիքի քարե սալիկները պոկել-տարել էին: Իհարկե, ուրժահայերի այսօրվա մնացորդների համար անհնար կլիներ Մայր տաճարը վերականգնել, և ես վախենում եմ, որ պատմական այս հուշարձանը չուտով վերածվելու էր ավերակների կույտի:

Քանի որ 1919 թ. փետրվարից բողոքական եկեղեցում կրկին ժամերգություններ էինք կատարում, ինձ համար կարևոր էր, որ զանգակի ձայնը չուտով քաղաքի վրա կրկին դողանջեր: Ասորիներն ու կաթոլիկները, որոնք նույնպես փոքրիկ զանգեր ունեին, 1915 թ. աշնանից ի վեր թուրքերի աշխց չէին համարձակվում դրանք Հնչեցնել:

Ես զանգի համար փայտյա հենարան պատրաստել տվեցի և զանգը տեղափորեցինք իր տեղը: Մարտ ամսվա առաջին կիրակին, այն առաջին անգամ լինելով, կրկին դողանջելու էր: Հայկական բոլոր տներին լուր էինք ուղարկել, ինչպես նաև մահմեղական տներում դեռ մնացած քրիստոնյաներին: Այսպիսով մենք կիրակի առավոտյան մի մեծ, մոտ 2000 մարդուց քաղկացած, հավաք էինք ներկայացնում: Երեխայի ուրախությամբ սպասում էի այն պահին, երբ զանգը քրիստոնյա ժողովրդի բոլոր հոգեառներին պիտի ծանուցեր, որ Հայերը վերածնվել էին, նրանք ապրում էին և կրկին հավաքվում էին Աստծո տանը:

Հայ աղքային կոմիտեի ցանկությամբ դանգն առաջին անգամ Հնչեցնելու առանձնաշնորհը դրվեց աճուրդի: Ամենարած զինն առաջարկողը դեղագործի որդին էր, որը սիրով 200 ֆրանկ վճարելով՝ իրավունք ստացավ տանիք բարձրանալու և երկաթյա մեծ մուրճով զանգին հարվածնելու:

Երբ զանգի առաջին հնչյունները քաղաքի վրա տարածվեցին, լեփ-լեցուն եկեղեցում մի ուժգին լացուկոծ բարձրացավ: Ցավի և ուրախության արցունքներ էին դրանք, և հավաքվածների մեջ չկար մեկը, որ խորապես զգացված չլիներ:

Ինչ փոսդ, որ այդ ընթացքում չարամիտ մահմեղականները անեծքներ էին թափում քրիստոնյաների գլխին: Ուրֆայի քրիստոնյանները նույնպես պիտի ապրեն, այն էլ չուտով, կամոք Աստծո, առանց վախի Մուհամեդի սրից, և հուսով եմ, որ ի սեր Արևելքի՝ մահմեղականներն այսուհետև պիտի գործեն իրենց Տիրոջ և Փրկչի ճշմարիտ հավատքով:

Երկու օր հետո հայկական աղքային տոնն էր: Հայերն ուղեցին այն եկեղեցում տոնել: Հիշարժան օր էր: Ցնծություն էր, երբ Փարիզում Հայ պատվիրակության հեռագրերն ընթերցվեցին: Նրանք իրենց արդեն անկախ Հայաստանի տերն էին զգում. «Hayastan yeghaf, Hayastan yeghaf»: Այսպես էին բացականչում տառապյալ ու հալածյալ մարդիկ միասնական, անձկալի հույսով և աննկարագրելի հրճվանքով: «Փառք Աստուծո» [Park asdudzo!], այս խոսքերը կրկին ու կրկին հնչում էին ամրող սրահով մեկ: Ես ուրախանում էի նրանց հետ, հուզվում, թեպես ուրախությունն ինձ վաղաժամ էր թվում: Դժվար չէր հասկանալ, որ երիտթուրքերի յաթաղանի վարչակարգից ազատազրվելու ամենաշնչին հեռանկարն անգամ անմարդկային տանջանքների ենթարկված այդ սրտերից յուրաքանչյուրը պիտի լցներ ուրախությամբ: Թեկուզն հայ չեմ, սակայն անցած քսան տարիներին նրանց հետ շարունակ տառապել ու սգացել եմ, մի՞թե իրավունք չունեի այժմ նրանց հետ ուրախանալու:

Հաջորդ օրը Ուրֆա եկան Հայեր Հայեափից: Նրանց բերած լուրը ճմկեց Հայերի սրտերը, որոնք դեռ մեկ օր առաջ պայմանում էին հրճվանքից: Հալեպում մի քանի օր առաջ բրիտանական կայազորի աչքի առաջ թուրքերը վերստին կոտորել էին մոտ Հարյուր հայի: Ուրեմն կոտորածները դեռ չէին ավարտվել:

Եթե այնտեղ անզիմացիների աշքերի առաջ Հնարավոր էր կոտորած սարքել, ինչե՞ո չէին կարող տեղի ունենալ Ուրֆայում, որտեղ բրիտանացիներ չկային:

Հաջորդ կիրակի եկեղեցում ինձ մեծ դժվարությամբ էր հաջողվում Հավաքվածներին Հանգստացնել: Եթե ազգային տոնին խոսել էի Հայ ժողովրդի վրա բացվող արշալուսի ու արևի մասին, ապա այժմ ես պետք է ասեի, որ բնության մեջ նույնպես՝ փոթորկից հետո, երբ արևը փառահեղորեն փայլում է, Հաճախ ամպեր են գալիս՝ ծածկում արևը: Բայց չէ՞ որ ի վերջո արևը հաղթում է ու քշում ամպերին: Այդպես էր և Հիմա: Ամպերը գալիս են ու մեզ ուզում են Հավատացնել, որ արևն այլևս չկա, բայց չէ՞ որ նա այստեղ է, և մենք այնուամենայնիվ հիմք ունենք ուրախանալու: Հայաստանը հարություն է առնելու: *Park asdudzo!*

44. Դավաճանի մահը

1918 թ. դեկտեմբերի 31-ին Ուրֆայում հայտնվեց բրիտանացի առաջին սպան: Նա իջևանել էր մի թուրքի տանը, և ոչ, ինչպես սովորաբար պատերազմից առաջ, մեր եվրոպական տներից մեկում: Ես այցելեցի նրան և առաջարկեցի իմ տունը: Քանի որ նա ցանկություն ուներ Հանդիպելու Հայերի առաջնորդների հետ, դա նրան արդեն բավարար հիմք էր տալիս՝ իմ տունը տեղափոխվելու: Հայերը չպիտի ցանկանային թուրքի տուն գնալ նրան տեսնելու համար: Ուստի նա ընդունեց իմ հրավերը:

Այդ օրերին Ուրֆայում Հայերի առաջնորդներ էին Համարվում միայն մի քանի հոգի. Եփրեմ քահանան, որի մասին այստեղ Հաճախ է խոսվել, ղեղագործ Գարեգինը, որը ջարդերի ժամանակ Հալեպում էր, հետո Ուրֆա գալով բանտ էր նետվել և այնտեղ ստիպողաբար մահմեղական անուն ընդունելուց հետո, ի վերջո կրկին ազատ էր արձակվել, երրորդը՝ Մինաս էֆենդին էր, որը պատերազմի ամբողջ ընթացքում թուրքական հրահանգիչ սպա էր եղել: Նա եկվոր էր, չէր պատկանում ուրֆահայությանը, բայց զինադադարից հետո քաղաքում որոշակի դեր ուներ: Բրիտանացի սպան նշված անձանց

պատվիրեց՝ թուրքերից ետ պահանջել իրենցից Հափշտակված ունեցվածքը: Բացի դրանից, Հայերը չպետք է թույլ տային, որ թուրքերը, նույնիսկ եթե դա ինքը՝ կառավարությունն էր, շարունակեին քարեր տանել ավերված Հայկական թաղերից:

Բրիտանացի սպան, որը գնդապետ էր, Հայերին կարդաց թուրք նահանգապետին ուղղված մի Հուշագիր, որտեղ նրանցից պահանջվում էր՝ բոլոր առումներով սատարել մնացած Հայերին, Հոգալ, որ վերադարձվեր նրանց ունեցվածքը և ազատ արձակվեին մահմեդական տներում գտնվող նրանց Հայրենակիցները: Հայերի Հանդեպ ամեն տեսակի սպառնալիք պետք է խստագույնս պատժվեր:

Սակայն առաջնորդները ոչ միայն պետք է տեղյակ լինեին այդ Հուշագրի մասին: Սպան միևնույն ժամանակ նրանցից պահանջեց Հսկել, որ նահանգապետը գործի ըստ այս Հրամանների:

Այն Հարցին, թե ինչու անզիփացիները Ուրֆան նույնպես չզրավեցին, մայորը պատասխանեց, որ դրա Համար նախ անհրաժեշտ էր ունենալ Հարգելի պատճառ:

Երրորդ օրը գնդապետը ճանապարհ ընկավ: Պարզ էր, որ անզիփացիները Ուրֆա մտնելու առիթ էին փնտրում: Այդ առիթը շուտով պիտի ներկայանար:

1919 թ. Հունվարի 7-ի առավոտյան Հայկական կիսավեր եկեղեցում գտնվեց սպանված մի մարդ: Դա Մուհամեդ Շյուրին էր, Հայ դավաճաններից մեկը, որոնց մասին մենք արդեն խոսել ենք: Թուրքերն անմիջապես սկսեցին ոստիկանական հետաքննություն, որի ընթացքում վեց Հայեր, որոնց թվում էր նաև Մինաս Էֆենդին, բանտ նետվեցին: Հայերը փորձում էին մեղքը բարդել թուրքերի վրա, իսկ թուրքերը շարունակում էին պնդել, որ մարդասպանները միայն Հայերը կարող էին լինել: Պատմությունը աղմուկ բարձրացրեց և շատ մտքեր մթագնեց, այնպես որ ես նպատակահարմար գտա, կարճ Հաղորդագրություն ուղարկել այդ օրերին Ուրֆայից 60 կմ Հեռավորության վրա գտնվող անզիփացիներին:

Մի քանի օր անց գնդապետը կրկին Հայտնվեց և խկույն իջևանեց իմ տանը: Իմ Հաղորդագրությունը նա չէր ստացել, սակայն Հայերից ստացել էր որոշ լուրեր: Ես նրա առաջ դրեցի

իմ Հաղորդագրության պատճենը: Մանոթանալով վերջինիս՝ ասաց.

— Այսպես է խնդիրը: Սա բոլորովին այլ բան է ասում, քան Հայերի տված տեղեկությունը:

Գնդապետի Համար պարզ էր, որ ղեպքը հրահրվել էր Հայերի կողմից: Ոչ թե թուրքերը, այլ միայն Հայերը կարող էին սպանել իրենց ժողովրդի դավաճանին, որն ի ղեպ՝ դրան արժանի էր:

Հայերի Համար այնքան ցանկալի Ուրֆայի անգլիական գրավումը տեղի չունեցավ: Նրանք մեղադրեցին ինձ, որ իրը թե ևս մաս ունեի գրավման ճգնապետություն: Ինձ Համար մի բան պարզ էր, որ անգլիացիներին Ուրֆա կանչելու Համար այսպիսի պատճառ էր պետք, որով հետագայում կարելի լիներ գրավումն արդարացնել:

45. Ալի Ահսան փաշա

Չունվարին Մօրինից Ուրֆա Հասան թուրքական գորամասեր: Դրանք զինադադարի պայմանագրի Համաձայն զորացրվելու էին, մասամբ էլ նահանջելու էին Անատոլիայի խորքերը: Զորքի մեջ էր Մոսուլի ռազմաճակատի նախկին զիսավոր Հրամանատար Ալի Իհսան փաշան:

Վերջինս Հավանաբար ցանկանում էր Ուրֆայի պաշտոնյաներին ցույց տալ, թե ինչպես կարելի է կրակել ժամանակակից Հրետանիով, որովհետև մի երեկո նա ղեպի մոտակալուն արձակեց Յօն կրակոց: Ահարկու որոտ էր: Տեսնելով Հարվածի խորշերը՝ կարելի էր գիտակցել նրա սարսափելի ուժգնությունը:

Այդ Հրաձգությունը Ուրֆայի բնակչության մեջ մեծ տագնապ առաջացրեց: Ոչ միայն Հայերը, այլև թուրքերը Հաջորդ առավոտ լուր ուղարկեցին անգլիացիներին: Ես էլ էի մտածում նույնն անել, որովհետև իսկապես նման կրակոցներ արձակելու ժամանակը չէր:

Ալի Իհսան փաշան Հաջորդ օրն իր զորամասով շարժվեց ղեպի հյուսիս, սակայն Հրաձգությունը նրան բանտ նետելու պատճառ դարձավ: Բրիտանացիների Հրամանով՝ Դիարբեքիրի

շրջանում նա ձերբակալվեց կենտրոնական կառավարության
կողմից:

46. Բրիտանացիների ժամանումը

Հայեալի փետրվարյան կոտորածից հետո Ուրֆայում կրկին
բազմաթիվ չարաբաստիկ լուրեր տարածվեցին, բոլորն
ուղղված հայերի դեմ, և այդ լուրերն օրեցօր ավելի էին ան-
հանգստացնում վերջիններիս: Մեր կողմից տարվող փրկարար
աշխատանքներն ակամա նպաստում էին այդ լուրերին: Հաս-
կանալի էր, որ այդ աշխատանքները պիտի գրգռեին Հատկա-
պես չարակամ թուրքերին, քանի որ ողջ մնացած հայերը
նրանց համար աշխատուժ էին, որ ծառայություն էին մատու-
ցում ստրուկի կարգավիճակով: Իսկ այժմ նրանցից խլում էին
այդ ստրուկներին:

Հետեարար մենք չդարմացանք, երբ մի առավոտ քրիս-
տոնյա մի կին եկավ ու կնոջս պատմեց, որ թուրքական ակում-
բում, որտեղ Հավաքվում էին քաղաքի ամենահարուստ և
ականավոր մահմեղականները, որոշել են ինձ և զեղագործ
Գարեգինին սպանել: Եթե մեզ երկուսիս վերացնեին, պիտի
կարողանային պահպանել Հայ մարդուն որպես ստրուկ: Ոչ ոք
այլևս չպիտի Համարձակվեր Հայ կանանց թուրքերի տներից
Հանել:

Երբ լսեցի այդ մտադրության մասին, նախ ծիծաղեցի:
Որովհետև ես մահափորձերից որոշ չափով պաշտպանված էի՝
նկատի ունենալով իմ անձի Հանդեպ բնակչության բոլոր
խավերի՝ ինչպես մահմեղականների, այնպես էլ քրիստոնյա-
ների նվիրվածությունը: Իսկ եթե ակումբում քննարկել էին իմ
անձը, ապա դա ինձ Համար կարող էր լինել միայն մեղմ
նախազգուշացում:

Այս զեպքից երկու օր չանցած՝ գիշերով զեղագործին,
դուռը թակելով, քնից Հանեցին: Դուռը թակողներն իր թե
եկել էին շտապ կարգով զեղորայք գնելու: Գարեգինը արագ
Հագնվել է և ուղղվել զեպի տան դուռը տանող աստիճանները:
Մի քանի աստիճան Հաղիկ իջած, Հանկարծ նրան կասկած է
պատել՝ գնա, թե չգնա: Այսպես մի պահ մնացել է կանգնած:

Այդ ժամանակ տան առաջ արձակվել է ատրճանակի հինգ կրակոց: Այժմ պարզ էր, որ դուն առաջ կանգնած լակոտները ուղեցել են զյավուրին վախ ներշնչել, եթե ավելի վատ բան չէին ծրագրել:

Հաջորդ առավոտ Գարեգինը սովորականի պես զրադված է եղել իր դեղատանը, որը գտնվում էր տնից դուրս: Եկել է նրա կրտսեր եղրայրն ու Հաղորդել, որ տան դռան վրա պարզորոշ կերպով տեսանելի է գնդակի հինգ անցք, և որ դռան դիմացի պարսպի վրա էլ կարելի է տեսնել հարվածի բոլոր տեղերը: Այժմ պարզ էր, որ գնդակները ուղղված են եղել Հայի վրա: Եթե նա աստիճանի վրա կանգ առած չլիներ, Հաղիվ թե ողջ մնար: Կարծես Աստծու հրաշքով նա խուսափել էր մահափորձից:

Ինձ կանչեցին գործը զննելու: Հիմա Հասկացա, որ բրիտանացիներին Ուրֆա կանչելու ժամանակն է: Ինձ թվում էր նաև, որ անզիական կողմը հենց դրան էլ սպասում էր:

Տուն Հասնելով՝ թամրել տվեցի ձիս, այնուհետև նստեցի զրամերենայիս առաջ և զրեցի Հետևյալ երկտողը. «We require immediately representatives of the British because the life of Armenians is in danger.» Խնդրում ենք անմիջապես ուղարկել Բրիտանիայի ներկայացուցիչների, որովհետև Հայերի կյանքը վտանգի տակ էլ:

Ուղերձս կայարան տանող արարը իմ խիզախ մատակով
60 կմ-ը անցավ չորս ժամում:

Հաջորդ առավոտյան Հայտնվեց մի գնդապետ՝ երեք ավտոմեքենա զինվորներով: Նա իջևանեց ինձ մոտ. Սպան այցելեց նաև դեղատունը, զննեց կրակոցների վայրը: Հաջորդ առավոտյան զինվորներն ու սպան կրկին անհետացան: Հենց տեղեկացան նրանց մեկնելու մասին, չարամիտ թուրքերի մոտ ՀամբնդՀանուր ցնծություն սկսվեց: Նրանք քաղաքում լուրեր սփռեցին, որ իրը թե բրիտանացիները թուրքերից վախեցել էին, և դրա համար էլ ետ էին քաշվել: Այժմ կարելի էր անխափանորեն շարունակել Հայերի վերացման գործը:

Իսկ Հայերը, որոնք անզիացիների ժամանումով չունչ էին քաշել և ինձ մոտ եկել իրենց երախտագիտությունը Հայտնելու, այժմ լեղապատառ ինձ մոտ վազեցին և ինձ պարսպում էին, որ զինվորներին թողել էի, որ գնան: Սակայն ես ավելին զիտեի

և Հանգստացրի նրանց: Ասացի, որ Հաջորդ առավոտ նրանք խկապես ծիծաղելու խկական առիթ էին ունենալու: Սակայն երեք օր ևս անցավ, մինչև մեծ պահը Հասափ: Երրորդ օրը ևս կլինիկայում աշխատանքի էի: Ժամը տասի կողմերը Հայտնվեց մի թուրք ոստիկան և ինձ Հրահանգեց անմիջապես նահանգապետին ներկայանալ: Խոկ ես նրան ասացի, որ ուզում եմ նախ աշխատանքս վերջացնել: Պատերազմի տարիներին ինձ այնքան Հաճախ էին կանչել ոստիկանատուն, որ այս կանչը սովորականի պես ընդունեցի և շտապելու կարիքը չզգացի:

Բայց ոստիկանը պնդեց: Մտերմարար նա ինձ Հայտնեց, որ օտարներ են եկել, և նահանգապետը կամենում է, որ ես լինեի թարգմանիչը:

Հիմա զլիսի ընկա, որ այդ մարդիկ կարող էին անզլիացիները լինել: Փոխեցի Հագուստու ու Հետևեցի ոստիկանին:

Սերայի (կառավարության շենք) առաջ կանգնած էր մի ավտոմեքենա: Մտա ընդունարան: Նահանգապետի կողքին նստած էին երկու անզլիացի սպաներ, որոնք ինձ բարեկամարար ողջունեցին:

Հաջորդեց Հիշարժան, մի քանի րոպե տևող զրույց, որը վերարտադրվում է ստորև.

— Անզլերեն խոսո՞ւմ եք, — Հարցրեց սպաներից մեկը, որն ավագ լեյտենանտ էր:

— Այո՛, մի քիչ, — պատասխանեցի ես:

— Լավ է, ուրեմն խնդրում եմ Ձեզ, քանի որ Հետո թարգմանիչ չունեմ, թարգմանիչը լինեք իմ և թուրք նահանգապետի միջև: Հարցրե՛ք թուրքին, թե նա տեղեկություն ունեցե՞լ է իմ ժամանման մասին:

Նահանգապետ. — Իհակե, ես Ձեր Հեռագիրը ստացել եմ:

Անզլիացի. — Ինչո՞ւ ինձ չղիմավորեցիք:

— Հեռագրում գրված չէր, որ Դուք ինձ սպասելու եք:

Թուրքի պատասխանն արդեն վախվորած մարդու երանգներ ուներ:

Անզլիացի. — Անիծյալ լինեք, որ Դուք՝ լինելով բրիտանացիների բարեկամ և Ուրֆայի նահանգապետ, Ձեր պարտականությունը չկատարեցիք և ինձ չղիմավորեցիք:

Անզլիացու այս պատասխանը, որը ես, խոստովանում եմ, մի քիչ ավելի մեղմ ձևով թարգմանեցի, թուրքին այնու-

ամենայնիվ ուժեղ կերպով ցնցեց:

Քրիտանացին՝ պատասխանի չսպասելով, շարունակեց Հարցերը.

— Ի՞նչ նախապատրաստական աշխատանք եք կատարել իմ սպաներին և 800 զինվոր տեղափորելու համար:

— Զէի ցանկանում Ձեղ որևէ ձեռվ կանխել, իսկ տեղի պակասություն չունենք: Սպաների համար մի շվեյցարացու տուն կա ազատ, իսկ զինվորների համար Ձեր տրամադրության տակ է դատարկ մի զորանոց:

— Ասե՛ք, որ ինձ այստեղ տանեն: Դուք կմնաք այստեղ: Տեղ տեսնելուց հետո Ձեղ կտամ հրամաններս:

Կոշտ ու կոպիտ շեշտով արտասանած այս բառերով սպան ոտքի կանգնեց: Ինձ խնդրեց հետը գնալ: Նստեցինք ավտոմեքենա: Մեր շուրջն էին վաղվզում թուրք ոստիկանները: Շրջեցինք զորանոցը: Քրիտանացին քիթը կնճուտեց: Նա Հայտնեց, որ այս զորանոցը չէր կարող զինվոր բերել: Ապա ինձանից խորհուրդ հարցրեց:

Ինձ համար պարզ էր, որ բրիտանացիները հաստատ կվերցնեին նահանգապետի նշած շվեյցարացու տունը: Այն պատկանում էր բժիշկ դ-ր Ֆիշերին, որը բացակայում էր քաղաքից: Մղված վրիժառության արդարացի զգացումից՝ ես ասացի:

— Վերցրե՛ք թուրքական հիվանդանոցը, այն դատարկ է, հրաշալի դիրք ունի և ընդարձակ է:

Նորից մեքենա նստեցինք և ուղևորվեցինք թուրքական հիվանդանոց: Կարճատև ստուգումից հետո սպան նահանգապետին ուղարկեց իր առաջին հրամանը հետևյալ բովանդակությամբ. «Իմ զորամասերն անմիջապես զրադեցնելու են թուրքական հիվանդանոցը. պահանջում եմ անհապաղ հանձնում»:

— Որտե՞ղ է գտնվում շվեյցարացու տունը:

Քանի որ այդ տունը մոտիկ էր ու տեսանելի, ոտքով գնացինք այն զննելու: Այստեղ նույնպես բրիտանացին իր որոշման մեջ վճռական էր, բայց և Ռեֆայում ավելի գեղեցիկ տուն չկար: Այն բավականին ազատ տեղ ուներ, ես այնտեղ տեղափորել էի միայն կլինիկան, դեղատունը և վիրահատարանը, որոնք, բանի որ բրիտանացիները երկրում էին, առանց թուր-

քերին Հարցնելու, կարող էի կրկին մեր հիվանդանոցը փոխադրել: Կնիքները առանց այդ էլ արգեն պոկված էին, ինձ մնում էր միայն դռները բանալ:

Այդ ընթացքում ջոկատները տեղ էին հասել, բոլորն էլ Հնդիկներ: Ժամանել էր նաև մի մեծ ուղերես, ինչպես նաև մի քանի զրահատանկ՝ մի քանի բրիտանացի զինվորներով:

Ինչպիսի երջանկություն Ուրֆայի և այդ քաղաքի հայ ժողովրդի մնացորդների համար: Նաև քաղաքի մյուս քրիստոնյաների համար բրիտանացիների մուտքը մեծ ուրախություն էր: Մահվան մշտական սարսափը, որի մեջ նրանք այդքան ժամանակ ապրել էին, վերջապես պիտի իր վերջը գտներ: Դա 1919 թ. մարտի 24-ն էր:

Ասորիներն ու կաթոլիկները գալիս ու շնորհակալություն էին Հայտնում ինձ:

Բրիտանացիների մուտքի շնորհիվ շուտով Ուրֆայի երեք բարձրաստիճան պաշտոնյա աշխատանքից ազատվեց: Դրանք էին՝ նահանգապետը, ոստիկանապետը ու քաղաքագլուխը: Առաջինը ձերբակալվեց ու Կոստանդնուպոլիս ուղարկվեց: Դրա հիմքն էր Հայերին պատճառած արհավիրքները: Երբ սկսվել էր տեղահանումը, այդ պարոնը Բայրուրդի նահանգապետն էր: Նա քաղաքից դուրս հանել և մորթել էր տվել ոչ միայն Հայ տղամարդկանց, այլև Հայ կանանց ու երեխաներին: Այդ արարքից հետո պաշտոնյային տեղափոխել էին Արդանե Մաղեն քաղաքը, որի նախկին նահանգապետը Հայերի նկատմամբ եղել էր փոքր-ինչ բարեհաճ, ինչի համար նա որպես պատիժ հեռացվել էր պաշտոնից: Այստեղ նույնպես նոր տերը սրախողիսող է անել տվել բոլոր Հայերին՝ կանանց ու երեխաներին ներառյալ: Դրանից հետո է, որ այդ պիտանի պաշտոնյային Ուրֆա էին տեղափոխել: Բրիտանացիներն այժմ կարողացան նրան վնասազերծել հենց իրենց՝ թուրքերի միջոցով:

Այն օրվանից, երբ կաղին ինձ պատմել էր այդ նահանգապետի զազրելի գործերի մասին, Հաճախ ինձ Հարց եմ տվել, թե վերջինս ավելի ճիշտ չի՞ն վարվել, քան այն նահանգապետները, որոնք կանանց ու երեխաներին արտաքսել են տվել: Կանայք չէին, որ որոշ վայրերում նահանգապետներին խնդրում էին՝ իրենց արտաքսելու փոխարեն՝ տեղնուտեղը սպանեին: Ինչպիսի աննկարագրելի գողզոթայով անցան այդ

թշվառները տեղահանման ճանապարհին: Ամոթի, ստրկության և սովահարության կյանք էր վերապահել նրանց դաժան ճակատագիրը: Մյուս կողմից էլ, եթե բոլոր նահանգապետները վերջինիս պես վարվեին, ապա այսօր մեկ ու կես միլիոն հայերից, որոնք բռնի կերպով տեղահանվեցին, մոտ 200-300.000 հայ ողջ մնացած չէր լինի:

Մայիս ամսին էր, երր հանկարծ Ուրֆա քաղաքի քրիստոնյաների շրջանում մի անգամ ևս խուճապ առաջացավ: Շատերը շուկայում շտապ փակեցին վաճառատները և փախան իրենց տները: Մի կին շատ հուզված եկավ ինձ մոտ կլինիկա և գանգատվեց, որ կառավարությունը մահմեղականներին հրացաններ է բաժանում: Դժկամությամբ ես կնոջը տուն ուղարկեցի: Զէի հավատում նրան: Սակայն նրանից աղատվելը զյուրին չէր, մինչև որ ասացի.

— Նման հարցերով ես այլևս չեմ դրադվում, գնա բրիտանացիների մոտ:

Կինը գնացել էր, և որպեսզի ավելի շուտ ընդունեն իրեն. ասել էր, որ ես էի նրան ուղարկել:

Հաջորդ առավոտյան ինձ՝ քրիստոնյա բոլոր երևելիների հետ, հրավիրեցին բրիտանացի պարետի մոտ: Մեզանից ուզում էին տեղեկանալ, թե որտեղից էր առաջացել խուճապը: Իսկ ես արդեն մոռացել էի, որ մեկ օր առաջ ինձ մոտ եկած հայ կնոջը ասել էի՝ գնա՝ բրիտանացիների մոտ: Պարետը մեզ տարավ թուրք նահանգապետի մոտ, որին նա արդեն հրամայել էր՝ հարցի մանրամասն քննություն կատարել: Դրանից հետո է, որ վերջինս թափանցել էր գործի էության մեջ: Թուրքական կառավարությունը քաղաքից դուրս գտնվող մի տնից հրացաններ է տեղափոխելիս եղել: Ըստ երեսույթին, որոշ վախվորած սրտեր դա տեսել էին, և այսպիսով խուճապ էր առաջացել:

47. Հալածանքի մի վերջին ապարդյուն փորձ

Անգլիացիների հետ գրեթե միաժամանակ Ուրֆա էր ժամանել նաև մի թուրք պաշտոնյա՝ առողջապահության մի տեսուչ: 1918 թ. դեկտեմբերից ի վեր՝ հայ բժշկի Հալեպ

փախուստից հետո, քաղաքում չկար ավարտական վկայական ունեցող մեկ այլ թժիշկ, բացի մի թուրքից, որն արդեն առավոտվա ժամերից սկսած Հարրած վիճակում օրորվում էր քաղաքի փողոցներում: Սակայն նրա առավելությունն այն էր, որ նա ինձ դժվարություններ չէր հարուցում: Նրան երբեք որևէ հիվանդ իր տուն չէր կանչում: Այսպիսով ես կարողանում էի թժկության ասպարեզում իմ գիտելիքները լիովի օգտագործել: Իսկ այնտեղ ինձ սպասում էր Հսկայական աշխատանք, որը ես մենակ պետք է Հայթահարեի: Մահմեղական տներից եկած Հայերի մեծ մասը թժկի կարիքը ուներ: Գալիս էին նաև մեծ թվով մահմեղականներ: Միայն 1919 թ. առաջին հինգ ամիսների ընթացքում կյինիկայում խնամել էի ավելի քան 2000 հիվանդ: Միևնույն ժամանակ հիվանդանոցում պառկած էր ուրիշ 200 հիվանդ և առաջիկայում կային ավելի քան 100 վիրահատություններ, որոնցից մի քանիսը բավականին բարդ էին: Կառավարությունն իր հերթին ինձ հիվանդներ էր ուղարկել: Այս բոլորին գումարած, իմ ուսերին էր զրված թուրքական արհեստագործական դպրոցում թժկի պաշտոնը: Եվ երբ Ռւրֆայում մի որոշ ժամանակ մի քանի Հարյուր հեծելազորային մնացել էին առանց թժկի, նրանց նույնակես ես պետք է օգնության հասնեի:

Թող որ սիրելի ընթերցողն իմ այս բացատրությունները այնպես չմեկնարանի, որ կարծես պարծենում եմ նրանով, ինչ կարողացել եմ կատարել Աստծու օգնությամբ: Ուզում եմ միայն ցույց տալ այն ամենը, ինչը պահանջվում էր ինձանից:

Սպասելի էր, որ առողջապահության նոր տեսուչը ինձ դժվարություններ էր պատճառելու՝ ավարտական վկայական չունենալու համար: Նրանից գաղտնի չէր կարող մնալ, թե ովքեր էին վերջին ամիսներին Ռւրֆայում ինձանից թժկական օգնություն ստացել, և նա Համենայն դեպք ինձ դրա համար շնորհակալություն չէր հայտնելու:

Նախազգալով, որ իմ վրա կրկին մնշում էր գործադրվելու, դիմեցի օկուպանտ զորամասերի հետ եկած Հնդիկ թժկին: Նա ընդունեց չվեյցարական հիվանդանոցի վերահսկողությունը ստանձնելու իմ խնդրանքը: Մի քանի աշխատանքային ժամ էլ անցկացնում էր հիվանդանոցում: Մենք իրար հետ լավ էինք աշխատում:

Ինչպես և սպասում էի, Հենց մի քանի օր Հետո առողջապահության թուրք տեսուչից մի պահանջագիր ստացա, որը Հետևյալն էր ասում. եթե իր լսածն այն մասին, որ ես բժշկական վկայագիր չունեմ, Համապատասխանում էր իրականությանը, պարտավոր էի անմիջապես փակել կլինիկան ու դեղատունը:

Սակայն քաղաքի բրիտանացի պարետը, որին ցույց տվեցի դրությունը, ասաց, որ Հանգիստ շարունակեմ իմ գործը և պատասխան չտամ:

Դրանից 14 օր Հետո մեր Հիվանդանոցում արյան վարակումից մի քուրդ մահացավ: Տասը օր առաջ ես նրան վիրահատել էի Հնդիկ բժշկի ներկայությամբ:

Մահից երկու օր Հետո դատական քննիչից կոչնագիր ստացա: Թուրքական առողջապահության տեսուչը բողոքել էր իմ զեմ՝ ասելով, որ մեր Հիվանդանոցում անփութության Հետևանքով վիրահատության ընթացքում մի քուրդ է մահացել: Նա պահանջում էր դատական կարգով պատիժ, քանի որ վիրաբույժը վկայական չի ունեցել: Սակայն իմ գործը Հիմա դյուրին էր, քանի որ Հնդիկ բժշկն իմ նեցուկն էր: Իմ ցուցմունքի Հիման վրա դատական քննիչը դիմեց անզիմացի պարետին, իսկ վերջինս Հնդիկ բժշկի միջոցով պատասխանեց, որ Քյունցլերն այդ վիրահատությունը կատարել է իր ներկայությամբ և որ Հիվանդը մահացել էր ոչ թե վիրահատության, այլ արյան վարակման Հետևանքով: Առողջապահության տեսուչին բնութագրելու համար պետք է նշել, որ նա մահացածին չէր Հետազոտել: Իր մեղադրանքը նա Հիմնել էր ասեկուսեների վրա:

48. Օգնության արշավախմբի ժամանումը

Անզիմացիներից մի քանի օր Հետո Ուրֆա ժամանեց չորս ամերիկացի՝ երեք տիկին և մի պարոն, որոնք ամերիկյան Կարմիր խաչ արշավախմբի անդամներ էին: Մենք նրանց հանձնեցինք ամերիկյան Հիմնարկությունը՝ 500 որբերով ու այրիներով: Արշավախմբը իր Հետ ըերել էր այն ամենը, ինչ մենք այլևս չունեինք՝ նոր ուժեր (մեզ մոտ նրանք սպառվել

էին), դրամ, Հազուստ և օգնության այլ միջոցներ, մինչև իսկ մի բեռնատար մեքենա: Փրկության աշխատանքը մտավ մի շատ կարևոր և նոր փուլ: Մեր սկսած աշխատանքը՝ արդյունաբերական ապրանքներ արտադրելու ուղղությամբ կատարելագործեց և բազմացավ, իսկ դպրոցները ավելի լավ կահավորվեցին և ընդլայնվեցին:

Կինս ու ես շունչ քաշեցինք: Մանրությունը, որը 1916 թ. մենք մենակ էինք տանում, մեր ուսերից հանվեց: Օրեցօր ավելի մեծ թվով Հայտնվող Հայերին օգնելու գործն ստանձնեցին բրիտանացիները: Նրանք, սկզբնական շրջանում մեր օգնությամբ, սովորական բաժանեցին հաց և մի քիչ էլ դրամ՝ ամենանհրաժեշտ բաները ձեռք բերելու համար:

Ամիսներ առաջ լսել էինք, որ վերադառնալու էին բոլորին սիրելի բժիշկ դ-ր Ֆիշերն ու իր կինը, որոնց պակասը Ուրֆայում վաղուց էր զգացվում: Սակայն ամիսներն անցնում էին, իսկ նա չէր երեսում: Անձնագրային և ճանապարհորդական որոշ դժվարություններ շարունակ ձգձգում էին Շվեյցարիայից նրա ճանապարհ ընկնելը: Հենց որ նա Ուրֆա գար, միտք ունեի ընտանիքիս հետ վերադառնալ Շվեյցարիա, որպեսզի կրկին Հայրենիքի օդ չնչեինք:

Վերջապես եկավ նրա ժամանելու ուրախալի ժամը: Խիզախ զույգը երեխաներին թողել էր Բաղելում, որպեսզի բժշկի կինը նույնպես կարողանար ամբողջովին նվիրվել օգնության գործին: Այժմ մեր հիվանդանոցի աշխատանքը կարող էր նոր թափ ստանալ՝ Հաշվի առնելով նաև թուրքական օրենքների պահանջները: Բժշկի ժամանման առթիվ ուրախությունն ընդհանուր էր՝ քաղաքում թե՛ զյուղում, քրիստոնյաների թե՛ մահմեդականների շրջանում: Սակայն ամենամեծ ուրախությունը մերն էր՝ իմ կյանքի հավատարիմ ուղեկցուհունը ու իմը, որովհետև հասել էր նաև մեր փրկության ժամը:

49. Օղարակ Ուրֆայի վրա

1919 թ. մայիսին քաղաքից դուրս քարաշատ մի մեծ դաշտ պետք է մաքրվեր: Այդ աշխատանքը բաժանելու պարտականությունը բրիտանացիները կնոջս վրա դրեցին: Վերջինս

Հարյուրավոր հայուհիների գործի դրեց, ընձեռելով նրանց մի քիչ զրամ վաստակելու հնարավորություն: Այդ տարածքի վրա վայրէջք էր կատարելու Ուրֆայում առաջին օդանավը:

Երկու շաբաթ հետո եկավ մեծ պահը՝ ինքնաթիռի ժամանումը: Այն հպարտորեն սավանում էր հին Եղեսիայի վրայով: Բոլորը դուրս վազեցին կամ տանիքները բարձրացան ու զարմացան: «Ալլահ», – Հնչում էր մահմեղականների բերաններից: Իսկ երբ ինքնաթիռից մի քանի կրակոց արձակվեց, սարսուցին բոլոր նրանք, որոնց խիղճը մաքուր չէր: Իսկ քրիստոնյաներին համակեց մի հոգեկան անսահման հանգստություն:

50. Հաշվապահական Հոգսեր

Չի կարելի չանդրադառնալ մեր գործի հաշվապահական Հոգսերին: Դրանք չափից շատ ավելին էին խլում իմ մտավոր կարողությունից: Աշխատանքս, ինչպես ընթերցողը նկատել է, գնալով ավելի բազմակողմանի էր դարձել: Իմ հաշվեմատյանները պարունակում էին երկար հաշվեայունակներ, որտեղ պատերազմի տարիներին գրանցվել էին իմ ձեռքի տակով անցած միջիոնները: Հիվանդանոց, ամերիկյան միսիոններություն, Հայերի և քրդերի հետ տարփող փրկարար աշխատանք, 1916 թ. գարնանից մինչև 1918 թ. վերջը ներկայված քաղաքացիներին ցուցաբերվող օգնություն, այս ամենը պահանջում էր խստագույն հաշվապահություն: Դրան գումարփում էր նաև իմ տնային մեծ տնտեսությունը, որն աստիճարար շեյխի տան պես մի բան էր դարձել, ուր ճաշի ժամերին հայտնվում էին շատ մարդիկ, Հատկապես սովորական:

Ի դեպ, ես ամրող օրն այնքան էի զրաղված, որ հաշվելու համար ժամանակ չէր մնում: Դրանով զրաղվում էի միշտ երեկոներին, երբ մարմինս արդեն շատ հոգնած էր լինում: Այստեղից էլ հասկանալի է, որ հաշվարկներս երթեմն ճիշտ չէին լինում: Երբ զրանից գիշերն արթնանում էի և քունը աչքերից փախչում էր, վեր էի կենում և սկսում հաշվել: Ահա այդ ժամերին էին, երբ նախապես խրթին թվացող հաշիվները կարծես հստակվում էին: Հայտնի պատճառներով, զրամարկղը ստուգելու ժամանակ, մեծ մասամբ այնտեղ շատ զրամ չէր լինում:

Երբեմն նախանձում էի թուրքական հիմանդանոցի պաշտոնյաներին: Այնտեղ ելքումուտքը Հազիր թե մնանակ մեծ էր, սակայն նրանք ունեին Հատուկ կառավարիչ, Հատուկ գրագիր և Հաճախ նաև Հատուկ գանձապահ:

Իմ բոլոր ծախսերը կատարվում էին իմ ընդհանուր դրամարկղից: 1917 թ. վերջերին ինձ Հայտնի դարձավ, որ դրամարկղում կար ավելորդ մի գումար: Հակառակ իմ բոլոր պրապտումների՝ չհաջողվեց սխալը գտնել: Հավանաբար դրամամուտքերից մեկը չէր գրանցվել: Հաշվետվություններն ուղարկվում էին բազմաթիվ վայրեր՝ Շվեյցարիա, Ամերիկա, Գերմանիա: Այնտեղից, սակայն, մեծ մասամբ ինձ վավերագրեր չէին ուղարկում: Շվեյցարիա մեկնելուց քիչ առաջ Բագելի մի դրամատնից ստացա Շվեյցարիայից՝ 1916-ից ի վեր ինձ ուղարկված դրամների ընդհանուր հաշիվը: Այդ հայիւր ուսումնասիրելու ժամանակ, երբ կրկին գիշեր էր և ընտանիքին անդամները քնած էին, Հայտնարերեցի մի պաշտոն, որն իմ մատյաններում գրանցված չէր: Այս անգամ, սակայն, դրամարկղում գումարը փոքր էր, մի զգալի մաս պակասում էր: Ի՞նչ անել: Արդեն երկու տարի ի վեր, գների բարձրացման պատճառով աշխատավարձ այլևս չէր բավարարում: 1917 թ. կինս մի կողմ էր դնում այն փոքրիկ գումարը, որ ստանում էր օգնության Հանձնաժողովում իր կատարած աշխատանքի դիմաց՝ այն խնամքով թարցնելով իմ աշքից: Նա մտածում էր, որ երր վերջանար պատերազմը և մենք Շվեյցարիա մերայտանայինք, լավ կլիներ, որ մի փոքր գումար տնտեսած լինենք: Քանի անգամ Համոզում էի նրան, որ այդ դրամն ինձ տար՝ տան ծախսերի Համար, քանի որ իմ աշխատավարձը չէր բավարարում ընտանիքի ծախսերին: Բացի դրանից, նա մեր անից մի քանի իրեր էր գաճառել, և այդ գումարը նույնպես մի կողմ էր դրել: Այժմ ինձ Համար արդեն պարզ էր՝ դրամարկղի ճնշք-գածքը պիտի ծածկվեր այն գումարով, որը այդ բարեհոգի կինք այդքան խնամքով տնտեսել էր: Սակայն թե ինչպես և երբ պիտի պահանջեի այդ գումարը, առա այդ Հարցին Հարկավոր էր դիմանապիտորեն ճոտենայ: Հաջորդ օրը, պատկերացրե՛ք վիճակս, ևս ինձ ընագ յագ չէի զգում: Բարեհախտաբար խրժել էի Հակայական աշխատանքի մեջ, թեև գիտեի, որ երեկոյան դրամը ձևոքիս պիտի լինի: Կինս ուշացիր լսեց իմ Հայտնու-

թյունները: Նա նույնպես հասկացավ, որ խնայված գումարից պետք է բաժանվեր, սակայն դա իրեն համար այնքան էլ զյուրին չէր: Նա դրամը բերեց ինձ ու կտրուկ ասաց. «Ուզո՞ւմ ես շապիկս էլ վաճառել: Կարող ես վերցնել»: Ո՞վ կարող էր մեղադրել նրան, որ այդ բառերն ասելիս մի քիչ դառնացած էր: Սակայն մենք մեր ամուսնության ընթացքում միշտ ունեցել ենք մի փորձված միջոց, որը միշտ դյուրացրել է մեր հաջությունը: Առանց երեկոյան միասնական աղոթքի մենք երբեք անկողին չեինք մտնում, և քանի որ չարացած հնարավոր չէ աղոթել, վերջ էր տրվում ամեն ինչին: *Probatum est!* (Փորձված միջոց է):

51. Շրջահայաց մահմեղականներ

Մեզ՝ մարդկանց, մտածելիս հաճախ դրադեցնում է մի հարց. «ինչո՞ւ»: Նույնքան հաճախ բացակայում է և պատասխանը. «այս կամ այն պատճառով»: Երբ մարդ մտածում է այն անասելի արհավիրքի մասին, որ ապրեց հայ ժողովուրդը, կրկին հարց է ծագում. ինչո՞ւ: Կարծես թե մեզ պիտի հաջողվեր գոհացուցիչ պատասխան ստանալ: Ստորև պատմելու եմ մի դեպք, որի մեջ կարծես կարելի է գտնել մասնակի մի պատասխան:

Եվրոպա մեկնելուց մի քանի օր առաջ քաղաքից երկու թուրք հայտնվեց ինձ մոտ: Նրանք, ինչքան որ կարելի էր դատել նրանց տեսքից, արհեստավորներ էին, այսինքն հասարակ մարդիկ: Նրանք ինձ հետևյալ հարցն ուղղեցին.

— Դու կարծո՞ւմ ես, որ անգիտացիները, որոնք հիմա Ուրֆայում են, մեզ կպաշտպանեն թուրքական կառավարության հարձակումներից, եթե մենք վաղը քրիստոնյա դառնանք:

Իմ պատասխանը եղավ, որ դա ինձ հայտնի չէր, բայց որ կարող էի տեղեկանալ: Սակայն նախ նրանք ինձ պետք է ասեին, թե ինչ պատճառով էին ուզում քրիստոնյա դառնալ:

— Այդ դու ես, որ խլում ես մեզանից հայուհիներին, որոնց հետ ամուսնացած ենք: Այդ կանայք մեզ վարժեցրին այնպիսի ընտանեկան կյանքի, որպիսին մինչև օրս մենք երբեք չգիտեինք: Նրանք մեզ Աստվածաշունչ են կարդացել, այնպես են

վարել մեր տնտեսությունը, որ մենք ապշած ենք մնացել: Նրանք մեզ Համար այնքան սիրելի են դարձել, որ անկարելի է թողնել նրանց, որ գնան: Նախընտրելի է Հրաժարվել մեր Հավատքից: Եվ իմացած եղիր, որ մենք երկուսս չենք միայն, որ այս կարծիքի ենք և այդ վիճակի մեջ ենք: Կան դեռ մոտ 50 տղամարդիկ, որոնք մեզ այստեղ են ուղարկել, և բոլորն էլ պատրաստ են ընդունելու քրիստոնեական Հավատքը, որպես դի չզրկվեն քրիստոնյա կանանց հետ իրենց վայելած նոր կյանքից: Սակայն քանի որ թուրքական կառավարությունը մեզ բանտ անպայման կնետի, հենց որ քրիստոնեություն ընդունենք, ուզում ենք նախ իմանալ, թե արդյո՞ք անգլիացիները մեզ տեր կկանգնեն ու կազմատագրեն:

Երկու օր հետո այդ մարդկիկ եկան պատասխան ստանալու: Ցափոք, ես նրանց պետք է հայտնեի քրիստանացի պարետի Հայտարարությունը՝ այն է, քրիստանացիները նման Հարցերին չեն միջամտում: Սակայն ես չդիմացա և զլխիկոր հեռացող Հայցվորներին ասացի, որ Հայերը՝ ահարկու տեղահանումից ու մահից խուսափելու համար, կարող էին քրիստոնյա Հավատքը փոխարինել մահմեղականով, բայց նրանք նախընտրեցին մահը և բոլոր մնացած անասելի տառապանքները: «Եթե դուք նույնպես նման քաջություն ցուցաբերեք, անշուշտ պիտի տառապեք, սակայն հենց այդ տառապանքի մեջ դուք Հաղթող կլինեք»:

52. Հրաժեշտ

Աշխարհամարտի ընթացքում իմ ապրածի նկարագրությունը ամբողջական չէր լինի, եթե զրի չառնեի նաև Ռւրֆայից Հրաժեշտի մանրամասները: Սակայն զրիչս դիմադրում է դրան: Այնուամենայնիվ, քանի որ ես իմ տված բոլոր տեղեկություններում հենվել եմ փաստերի վրա, երևի պետք է հիշատակեն նաև Հրաժեշտը, մանավանդ որ այն կնոջս և ինձ Համար որոշ անհանգիստ պահեր ստեղծեց:

Մայրաքաղաքում վերաստեղծված Հայ աղքային կոմիտեի աշխատանքն էր՝ օգնել տուն վերադարձած զիվորներին աշխատանք գտնելու, ինչպես նաև այրիներին ու որբերին, որ-

քանով որ դա Հնարավոր էր, նախկինում իրենց ունեցածը ետ ստանալու հարցում: 1918 թ. գեկտեսմբերին այդ կոմիտեի մի անդամ ժամանեց Ուրֆա, այստեղ նույնպես մի կազմակերպություն կյանքի կոչելու: Այդ մարդու մոտ մի քանի հայ կանայք զանգատվել էին ինձանից, թեև ես նրանց ամբողջովին վճարել էի Գերմանիայից Խաչատրյան ազգանունով մի բարեկամից ստացված դրամը: Բայց քանի որ դրամատունն այդ գումարը ինձ փոխանցել էր թղթադրամով, ես չէի կարող նրանց ոսկով վճարել: Իսկ ավելի վաղ շրջանում, երբ թուրքիայում դեռ գոյություն չուներ թղթադրամը, ես այդ գումարը Խաչատրյանին ուղարկել էի ոսկու արժույթով:

Ի դեպ, միայն ինձ չէ, որ Հայերը դրամական հաշվարկների կապակցությամբ այդպես վարկարեկել էին: Դրա մասին, պատերազմի սկզբում դեռ երկրում գտնվող բոլոր ամերիկացիները պատմելու շատ բան ունեն: Երբ թղթադրամը դեռևս գոյություն չուներ, նրանց ոսկեղրամ էր Հանձնվում դրամատանը պահ զնելու համար: Հենց որ թղթադրամը շրջանառության մեջ մտավ, դրամատունն այլևս իրավունք չուներ ոսկով վճարումներ կատարելու, քանի որ ոսկին հանձնվում էր պետությանը: Թղթադրամը, սակայն, օրեցօր կրցնում էր իր արժեքը: Երբ Հայերը գալիս էին ու պահանջում իրենց դրամը, ուղում էին ամբողջը կրկին ոսկով ստանալ: Սակայն լավագույն ցանկության դեպքում էլ՝ այդ «ողորմելի» թղթադրամներից, այլ արժույթով չէին վճարում:

Հայեալից եկած Հայ ազգային կոմիտեի ներկայացուցիչը ինձ կանչեց Հարցուփորձ անելու: Սակայն նա հասկացող մարդ էր և լրիվ ըմբռնեց գործի էությունը:

Այդ կանանց հետ դրամի խնդիրն ուներ մեկ այլ կողմ ևս: Դրա մասին ես այստեղ պետք է մի քիչ ընդարձակվեմ:

Պատերազմն սկսվելուց քիչ առաջ Գերմանիայից Ուրֆա էր ժամանել Խաչատրյան անունով մի Հայ: Նա եկել էր՝ այստեղից մորք Գերմանիա տանելու, որտեղ նրա եղբայրը՝ որպես ատամարույժ, լավ դիրք ուներ: Պատերազմն սկսվեց, և նա այլևս Ուրֆայից չկարողացավ մեկնել: Երբ այնուհետև 1915 թ. գարնանը Հայերի վիճակն արդեն բավական անմիտար էր, Խաչատրյանն ինձ խնդրեց իրեն հիվանդանոցում որպես սպասավոր ընդունել: Որպես գերմաներենին տիրապետող մարդ,

նա Հաճախ իմ տան Հյուրն էր լինում, և ես կատարեցի նրա խնդրանքը:

Երբ 1915 թ. մեր Հիվանդանոցից բոլոր Հայերին տարան, Խաչատրյանն էլ նրանց հետ գնաց: Սակայն նրան չսպանեցին, այլ Հալեպ՝ զորանոց ուղարկեցին: Այստեղից նա ինձ մի բացիկ ուղարկեց, խնդրելով, որ ես՝ նրա կողմից մեր բժշկի մոտ թողած 135 ոսկեղբամները վերցնեմ և ըստ Հնարավորին հեռագրով նրան ուղարկեմ, որպեսզի նա այդ գումարը որպես փրկազին օգտագործի և ազատվի զինվորի իր կարգավիճակից:

Բժիշկը, սակայն, արդեն բծավոր տիֆով Հիվանդ՝ անզիտակից պառկած էր: Նրան փողի մասին Հարցնելն անկարելի էր, և դրա կարիքն էլ չկար: ԶԷ՞ որ մի քանի օր առաջ, երբ աշխատում էի խորհրդակցության սենյակում, մշտապես բաց գզրոցներից մեկում դեղատումսի թղթեր փնտրելիս, Հայտնաբերել էի մի փորրիկ քսակ՝ 135 ոսկեղբամով, որի վրա թանաքով գրված էր «Խաչատրյան» անունը:

Ինձ Համար պարզ էր, որ այդ դրամը պատկանում էր ընկերոջս: Թե ինչպես էր պատահել, որ նա այդ դրամը դրել էր այդ գզրոցը, չգիտեի, սակայն տեղահանումը այնքան հանկարծակի էր, մտածեցի, որ նա Հավանաբար ինքն էր շտապով դրել գզրոցը:

Այսպիսով, ես նրան հեռագրեցի, որ նա ներկայանա իմ իսկ դրամատունը, որին էլ Համապատասխանաբար Հեռագրեցի, որ Խաչատրյանի ներկայանալու դեպքում նրան վճարի 135 ոսկեղբամ:

Սակայն այդ դրամը Խաչատրյանը երբեք չգնաց ստանալու: Երկու շաբաթ հետո իմացա պատճառը. այդ ընթացքում նա մահացել էր բծավոր տիֆից: Այսպիսով դրամը մնաց դրամատանը: Ես գրեցի Գերմանիա, որ փնտրեին ու գտնեին Հանգույցալի եղրորը:

1916 թ. փետրվարն էր, երբ իմ դրամատնից ինձ Հաղորդեցին, որ վերջապես գտնվել են եղրոր Հետքերը, քանի իրենց մոտ վերջերս Հայտնվել է մեկը, որը խոսել է այդ գումարի մասին: Սակայն նա կարծես թե ենթադրել էր, որ գումարը ավելի մեծ պետք է եղած լիներ, քան ես փոխանցել էի: Դրամատունը պահանջել էր, որ Խաչատրյանն անձամբ ներկա-

յանա գումարն ստանալու, սակայն նրանց հայտնել էին, որ նա դեռ հիվանդ է: (Մինչդեռ նա այդ ժամանակ վաղուց մահացած է եղել:)

Նատ չանցած բժշկի բարեկամներից մեկը եկավ Ուրփա: Նա ինձ մոտ ուղարկեց եղրորը՝ աչքաբաց մի փաստաբանի: Հարցումիս, թե պարոնը ի՞նչ էր ցանկանում, նա պատասխանեց.

— Գիտցե՞ք, որ եղրայրս Խաչատրյանին, որը Հալեպում մահացել է, մահից առաջ 60 ոսկեդրամ է պարտքով տվել, որպեսզի նա կարողանա փրկագին վճարել: Գիտեմ, որ Խաչատրյանի դրամը գտնվում է դրամատանը: Դրամատանը Հրահանգե՞ք, որ եղրորս վճարի 60 ֆունտը:

Ես խնդրեցի փաստաբանին ցույց տալ ստացականը: Նա ասաց, որ այն Հաջորդ առավոտ կրերի, սակայն միևնույն ժամանակ սկսեց սպառնալ, որ եթե ես այդ գումարը իր եղրորը կամուլին չվճարեմ, նա իմ դեմ կառավարությանը բողոք պիտի ներկայացնի, քանի որ փաստորնեն Խաչատրյանի դրամը՝ որպես Հայի ունեցվածք, պատկանում է կառավարությանը:

— Ինչո՞ւ եք ինձ սպառնում: Մի՞թե ես Հրաժարվել եմ Ձեզ վճարելուց: Պիտի ուզեի նախ ստացականը տեսնել: Ի դեպ, Դուք կարող եք կառավարությանը իմ դեմ բողոք ներկայացնել, որովհետև, եթե կառավարությունը դրամն ստանա, ես որևէ բան կորցրած չեմ լինի: Իմ միակ ցանկությունն է, որ դրամը Հասնի օրինավոր ժառանգին:

Իմ այս խոսքերից հետո փաստաբանը ՀայՀոյելով հեռացավ: Հաջորդ առավոտյան նա բերեց մի ստացական առանց ամսաթվի և առանց դրոշմանիշի, որից երեսում էր, որ այն հենց այդ գիշեր էր լույս աշխարհ եկել: Ես էլ սակայն անգործ չէի մնացել, նույն երեկոյան հեռագրել էի դրամատուն՝ խնդրելով, որ գերմանացի Հյուպատոսին 135 Լտզու փոխանցի: Այսպիսով խնդրեցի փաստաբանին այդ նույն ստացականով ներկայանալ Հալեպում Հյուպատոսին, որին, ի դեպ, դրամը Հասած պիտք է լիներ: Զայրույթից կանաչած՝ նա մեկնեց: Պետք է նշել, որ այդ գործով որևէ մեկը Հյուպատոսին երբեք չէր զիմել, լավագույն ապացույցն այն մասին, որ միայն ափաղակներ կարող էին հետամուտ լինել Հայերի ունեցվածքին:

Իմ Հրաժեշտի օրերին մի ասորի կին եկավ կնոջս մոտ ու

պատմեց, որ քաղաքում լուրեր են շրջում, որ Հայ բժիշկը, որը ըրիտանացիների մուտքից հետո կրկին Հայտնվել է Ուրֆայում, իմ դեմ բողոք է ներկայացնելու: Դրանից մի քանի օր առաջ ես էլ էի նկատել, որ Հայ ազգային կոմիտեն իմ դեմ ինչոք բան է պատրաստում: Դրա Համար խնդրեցի այդ կոմիտեին, ինձ մոտ մարդ ուղարկել՝ տեսնելու համար, թե ինչ է խնդիրը: Սակայն ոչ ոք չեկավ: Հետազայում լսեցի, որ նրանց մտադրությունը՝ իմ մեկնելու օրը ինձ ձերբակալել կամ գոնե մեկնումս խափանել տալն էր:

Կինս, որ վայրկյանի մղումով գործող մարդու խառնվածք ունի, անմիջապես այդ կնոջ գնալուց հետո մի նամակ գրեց Հայ բժշկին՝ ասելով, որ ինքը հենց նոր է տեղեկացել այն մեղադրանքի մասին, որ իրը թե բժիշկը մտադիր էր ներկայացնել իմ դեմ: Կինս Համողմունք էր Հայտնել, որ սա անկասկած ասելուսի արդյունք պետք է լիներ, այլապես ինչպես կարող էր Հայ բժիշկը՝ իր ամուսնու երկարամյա աշխատակիցն ու բարեկամը, այժմ Հանկարծ նրա դեմ դուրս գալ: Կինս նրանից խնդրեց անհապաղ դրական կամ բացասական պատասխան, որպեսզի իր ամուսինն ու ինքը իմանային, թե լուրերի որ մասն է իրականությանը համապատասխանում:

Բժիշկը երկտողի հակառակ երեսին, առանց որևէ մի ուղերձի, գրել էր. «*You shall answer to the law, nothing with me!*» (Դուք օրենքի առաջ պատասխան կտաք, ինձ հետ գործ չունեք):

Այժմ գիտեինք, անհավատալին իրականություն էր: Բայց քանի որ ես ցանկություն չունեի վերջին օրը ձերբակալվելու, դիմեցինք բրիտանացիներին: Խնդրեցինք նրանց օգնել մեզ, Հոգ տանելով այն մասին, որ եթե մեր դեմ մեղադրանքներ կային, դրանք ներկայացվեին հիմա և ոչ թե վերջին օրը: Պարեստն անմիջապես հրաման տվեց թուրք նահանգապետին՝ պատին Հայտարարություն փակցնել, որտեղ պետք է ասվեր, որ Քյունցլերը մոտակա ժամանակում թողնելու էր երկիրը: Բոլոր անձինք, որոնք նրանից պահանջ ունեին, պետք է այն անմիջապես ներկայացնեին, քանի որ մեկնելու օրը որևէ նման փաստաթուղթ հաշվի չէր առնվելու: Նոյն օրը ոստիկանապետն ինձ իր մոտ կանչել տվեց: Բարեբախտաբար դա վերջին անգամ էր: Նա ինձ ցույց տվեց մի գրություն, որը Հայ բժիշկը

ներկայացրել էր նահանգապետին: Ես կարդացի: Այն ուներ Հետևյալ բովանդակությունը. «Քյունցիլերը 1915 թ. օգտվելով իմ հիվանդ վիճակից, իմ կողապատճենությունը գողացել է 145 ուկեղրամ, որն ինձ էր հանձնել մի ոմն Խաչատրյան, այն նկատառումով, որ երբ ինքը մահանա, դրամը պահեի ինձ և այլն, և այլն»:

Երբ փաստաթուղթը կարդացի, կարծես ամպերից ցած ընկա: Ինչպես կարելի էր նման բան: Եվ այդ մեղադրանքը գալիս էր մի բարեկամից, որն ուսանել էր գերմանացիների օժանդակությամբ, և դրանից զատ նաև քաջատեղյակ էր այդ գումարի պատմությանը: Խելքը թոցրել էր: Վստահարար, այլապես նրա արարքը ներում չուներ:

Բրիտանացիների Ուրֆա կատարած մուտքից ի վեր՝ թուրքերի կողմից վերացված կապիտույցացիաների օրենքը վերականգնվել էր: Ըստ այդ օրենքի՝ որևէ թուրք իրավունք չուներ, իմ՝ օտարերկրացուս նկատմամբ, նման մի գործով դատավճիռ տալ: Բացի դրանից, պարետը հրամայել էր, որ բոլոր բողոքներն ուղղված իմ դեմ իրեն հանձնվեն:

Ես պարետին տեղեկացրի, որ ոստիկանապետի մոտ էի կանչվել մի Հայի մեղադրանքի կապակցությամբ: Նամակներիս միջից փնտրեցի այդ դեպքին վերաբերող բոլոր փաստաթղթերն ու դրեցի պարետի առաջ:

Իմ մեկնելուց մեկ օր առաջ, երբ դ-ր Ֆիշերն արդեն Ուրֆայում էր, գործը դրվեց պարետի առաջ վիճարկման: Մենք բոլորս ներկայացրել էինք, Հայը նույնպես:

Պարետը դիմեց վերջինիս հետևյալ բառերով.

— Դուք պարոն Քյունցիլերի դեմ գողության բողոք եք ներկայացրել: Որ դուք այդ գանգատը ուղղակիորեն մեզ չեք ներկայացրել, մեղ, որոնց պարոն Քյունցիլերը Ձեր ժողովրդի պատճառով է Ուրֆա կանչել, ձեզ պատիվ չի բերում: Ինչ վերաբերում է Ձեր բողոքի բովանդակությանը, ապա մենք մեր առջև ունենք պարոն Քյունցիլերի ամբողջական գրավոր ապացույցները, և ես միայն կարող եմ ասել, որ պարոն Քյունցիլերը վարվել է կատարյալ օրինականությամբ: Նա այդ գումարը իր ժամանակին, առանց իմանալու, որ այդ դրամը կարող էր նվեր եղած լիներ Ձեզ, ուղարկել է Գերմանիա: Եթե Դուք ուզում եք գործին նոր ընթացք տալ, ապա պետք է դիմեք Գերմանիա՝

Խաչատրյանի եղբորը: Զեղանից այժմ պահանջվում է, այստեղ, իմ առաջ ներողություն խնդրել պարոն Քյունցիերից և պատռել բողոքագիրը:

Հայր պատասխանեց, որ իրեն հայտնի է, թե ինչ է կատարվել դրամի հետ: Այնուամենայնիվ, նա պնդեց, որ Քյունցիերը իրավունք չուներ այդ դրամը Գերմանիա ուղարկելու. դրա հետևանքով է, որ այդքան մեծ կորուստներ են առաջացել թղթադրամների փոխարժեքի պատճառով:

Այնուհետև նա բողոքագիրը դրեց զրապանը: Երբ մի քանի րոպե անց ներողություն խնդրելու փորձ չկատարեց, ևս ոտքի կանգնեցի և շնորհակալություն հայտնեցի պարետին՝ շեշտելով, որ չենք ուզում նրանից այլևս ժամանակ խլել:

Հրաժեշտի առավոտյան ես մեկ կոչնագիր ևս ստացա, ըստ որի՝ կեսօրից հետո պետք է ներկայանայի թուրքական դատարան և պատասխան տայի գողության համար: Հիմա ես արդեն ներքուստ հրճվանք ապրեցի: Արդեն ուշ էր: Մեկնելուս օրն էր. ո՞չ թուրքերն ինձ հետ այլևս գործ ունեին, ո՞չ էլ ես՝ նրանց հետ:

Հասկանալի է, որ այդ գործը մեզ շատ զայրույթ պատճառեց: Մարդկային սրտի հորինվածքն ու մոլուցքը ի սկզբանե չարակամ են: Անվերջ ուզում ես մեղադրել բոլոր հայերին ապերախտության մեջ: Սակայն այստեղ խոսքը մի արարքի մասին է, որ դուրս էր եկել ոչ թե ժողովրդից, թեկուզ և դրա ետևում թաքնված էր Հայ ազգային կոմիտեն: Այնուհետև երկու ուրիշ հայեր ևս կանգնեցին այդ մարդու թիկունքին և անհավատալի պահանջներ ներկայացրին անզիացիներին, որոնք սակայն մնալով առանց որևէ լուրջ հիմնավորման՝ մերժվեցին:

Ավելի շատ, քան բժշկի արարքը, որի հետ ես երկար տարիներ աշխատել էի, ինձ ցավ պատճառեց, երբ այստեղ բազմիցս հիշատակված քահանա Եփրեմը, որին ես որրանոցում հարմարավետ աշխատանքի էի տեղափորել և որի ամուսնության պատճառով հոժարաբար մեծ տհաճություններ էի ինձ վրա վերցրել և նաև որին եղրորս պես սիրել էի, չեկավ ինձ հրաժեշտ տալու: Դրանով նա փաստեց, որ նա նույնպես անցել էր զրպարտիչների կողմը:

Երբ կեսօրից հետո վերջապես Ուրֆայից դուրս էինք

գալու, մեր տան բակը լցվել էր սիրելի մարդկանցով, որոնք լացուկոծով մեզ հրաժեշտ տվեցին: Պետք է խոստովանեմ, որ ես միայն այն ժամանակ հանգիստ վերատացա, երբ թերութում նավի վրա էի: Թե չէ ո՞վ կարող էր իմանալ, թե ուրիշ ինչ տմարդի գործերի էր ունակ չարակամ հայը, քանի դեռ ես գտնվում էի թուրքական Հողի վրա:

53. Վերջարան

Իմ երկարամյա գործունեության վայրի հետ հրաժեշտը եղրափակվեց տհաճ մանրամասներով: Ենելով այն մտավախությունից, որ այդ մանրամասները հայերի նկատմամբ հակակրանք ունեցող որոշ ընթերցողների մեջ է՛լ ավելի մեծ հակակրանք կառաջացնեն, վերջում ուզում եմ իմ տեսակետը հայտնել այս ժողովրդի մասին, որը, ինչպես ոչ մեկ այլ ժողովուրդ, կրեց ամենաահավոր ու աննկարագրելի տառապանքներ և որը սարսափելի չափերով նվազեց: Թող որ սա ինձ ներվի, նկատի ունենալով, որ այդ ժողովրդի մեջ ապրել և աշխատել եմ 20 տարի: Եթե նույնիսկ հայերի մասին իմ գիտեցածը սպառիչ չհամարվի, գոնե թող ինձ իրավունք վերապահվի արտահայտելու իմ կարծիքը:

Ազատասեր ու չափաղանց խելացի մի ժողովուրդ վեց հարյուր տարի շարունակ ապրել է մուսուլմանական բռնատիրական վարչակարգի ավերիչ պայմաններում: Նա ենթարկվել է պարբերաբար կրկնվող զանգվածային կոտորածների: Նման իրավիճակների ու տառապանքների ներքո որևէ ժողովրդի նկարագիրը չի կարող բարելավվել: Բավական է գեթ մի հայցք նետել քաղաքակրթության գլուխ կանգնած ժողովուրդներին, որոնք անցան համաշխարհային պատերազմի բովով: Միթե նրանց նկարագիրն ազնվացավ: Ոչ ոք չի կարող դա լրջորեն հայտարարել: Եվ չմոռանանք, որ այդ պատերազմը տևեց «միայն» հինգ տարի: Հետևագես, կարելի՞՛ էր սպասել, որ հայերը ավելի լավ մարդիկ լինեին, քան մենք՝ եվրոպացիներա: Նրանք, որոնք դարեր ի վեր դիմադրել են խորամանկությանը, նենգությանն ու բիրտ բռնությանը:

Հայերի գործարարությունը եվրոպայում վատ համբավ

ունի: Ճիշտ է, Հային գործարար կյանքում հնարավոր չէ Հեղտությամբ խարել: Որպես կանոն դա շատ ավելի դյուրին է մահմեղականի պարագայում:

Սակայն Հայերի գործարարությունը ոչ ոք այնպես լավ չի ճանաչում, ինչպես թուրքը: Ո՞ւմ միջոցով է հարուստ թուրքը նախընտրում կատարել իր գործարքները: Հայի միջոցով: Կարելի է անթիվ օրինակներ բերել, որոնք հաստատում են, որ ունենոր թուրքը իր դրամները փաստորեն միայն Հայի միջոցով է շրջանառության մեջ դնում: Զետեղ Հայի պես մեկը, որ կարողանար հարմարվել բոլոր, նույնիսկ ամենաղեգար պայմաններին և ամեն ինչից էլ շահ ստանար: Ինչպես Հին Եվրոպայում՝ առանց իտալացի աշխատողների չկար երկաթուղային շինարարություն, այդպես էլ Արևելքում առանց Հայերի չկար որևէ առևտրական գործարք: Սակայն Հայերի միայն շատ փոքր հատված է առևտրական: Ընդհանուր բնակչության 80-90 տոկոսը զյուղացիներ են, և մի զգայի մաս՝ արհեստավորներ: Բաղդադի երկաթուղու շինարարության ամենաջանասեր աշխատողները Հայեր էին: Երկաթուղու շինարարության բոլոր պատասխանատու պաշտոնները զբաղեցնում էին Հայերը: Բաղդադի երկաթուղու զյուսավոր գանձապահը՝ զյուսավոր Հաշվետարը Հայ էր: Աներևակայելի ու անհնարին էր, որ Բաղդադի երկաթուղու շինարարության ընկերությունը մեծ ու կարևոր պաշտոնում նշանակեր որևէ թուրքի կամ այլ մահմեղականի:

Իսկ այժմ, երբ սպասումներ կան, որ Հին Արևելքը վերջապես ընդառաջ է զնալու նորոգումների, որ Արևելքի ավերակներից նոր կյանք է սկիզբ առնելու, նոր մշակույթ, նոր գործեր և արժեքներ են ստեղծվելու, ապա դրա համար անհրաժեշտ է Հայ ժողովրդի ուժն ու կարողությունը: Առանց դրա Արևելքը կմնա անապատ:

Իր «Արորի և մամլակի ետևից» գրքում, Մաքս Այտը (Max Eydt) գրում է, որ կան բաներ, որոնց մեջ Արևելքն ու Արևմտութքը իրար չեն հասկանում: Թող ինձ թույլ տրվի այդ միտքը զարգացնել, քանի որ ես երկու բան եմ նկատել:

Առաջինը վերաբերում է ճշմարտությանն ու ստին: Ինչ էլ որ մարդ Արևելքում լսի, նախ պետք է հարցնի՝ դա ճիշտ է: Արևելյան Հայտնի երևակայությունը հաճախ իրերը զարմանալիորեն ծաղկեցնում է, և ամենատարօրինակն այն է, որ այն

որևէ այլ տեղ ավելի մեծ հավատի չի արժանանում, քան Հենց Արևելքում: Բողոքական ինչ-որ համայնքի եկեղեցական մի Հոգաբարձու 18 տարի առաջ ինձ ասաց:

— Թուրքական կառավարության սահմաններում ոչ ոք չի կարող ինձ ստիպել ճշմարտությունն ասել, նույնիսկ Աստված չի կարող դա ինձանից պահանջել: Որտեղ միայն սուսոն է իշխում, ճշմարտություն չի կարող գոյություն ունենալ:

Գրեթե 20 տարի այս, ես կասեի «խարդախ» երկրում ապրելուց հետո, վերոհիշյալ խոսքին շատ ավելի մեղմ եմ նայում, քան առաջ: Հանրահայտ իրականություն է, որ ճշմարտակերպ վարմունքն ու խոսքը, ինչպես Հայերին, այնպես էլ թուրքերին, միայն չարիք ու դառը տառապանք է բերում: Անթիվ օրինակ-ներից հիշատակենք միայն մեկը:

Պետրոս անունով մի երիտասարդ Հայ գնում է Ռուսաստան՝ գտնելու իր անհետ կորած Հորը: Օրինական ճանապարհով գնալը, սակայն, ինչպես այդ անում է եվրոպացին Ռուսաստան Հասնելու Համար, Հայի Համար բացարձակապես անկարելի էր: Ուստի նա ճանապարհորդում է կեղծ անձնագրով: Հորը գտնելուց հետո վերադառնում է Թուրքիա: Մերունին շիտակ մարդ էր, որ ատում էր սուսր: Սակայն նրան ևս վերադարձը առանց կեղծ անձնագրի Հնարավոր չէր: Ուստի նա այդպիսի անձնագրով հատում է սահմանը: Միայն թե՝ Հայրենիքաղաքը Հասնելու Համար Հարկավոր էր ևս մի սուստ, այլապես կընկներ փորձանքի մեջ: Մեր Հոր մուտքը քաղաք ցերեկով պիտի Հաջողվեր, եթե նա կարողանար դարպասի մոտ կանգնած թուրք զինվորին ասել, որ գալիս է Հարևան Սևերեկ քաղաքից: Ոչ մեկը չէր կարող նրան չհավատալ: Սակայն ծեր Հայրը չի կարողանում ստել և ասում է, որ ինքը եկել է Ռուսաստանից: Այնմիջապես նրան բանտ են նետում: Այստեղ հետաքննության ժամանակ էլ նա բացահայտում է, որ իրեն բերել է իր տղան: Խսկ Հաջորդ Հարցին, թե տղան որտեղ է, նա տալիս է զյուղի անունը՝ ավելացնելով, որ տղան գիշերը քաղաք է գալու: Որդուն նույնպես բերում ու բանտ են նետում: Այստեղ երկուսով նրանք վեց ամիս շարունակ տանջանքների են ենթարկվում:

Պե՞տք է ուրեմն որ մենք քարկոծենք Արևելքի քրիստոնյաներին, որոնք անիրավություններով լի երկրում միջոցներ են

գտնում մի կերպ գոյատեղու: Նրանք ծնվել են ճահճի մեջ և այնտեղ էլ պետք է անցկացնեն իրենց ամբողջ կյանքը:

Տեղեկությունների և վկայությունների ճշգրտությունը նույնպես Արևելքի բնորոշ Հատկանիշը չէ: Խիստ դժվար է Արևելքում գտնել մարդու, որն ունի սուր դիտողականություն: Դա ծանրակշիռ թերություն է Հատկապես գործարար կյանքում: Եվրոպացի գործարարի Համար դժվար չէ պախարակել արևելցու բարոյականությունը, քանի որ վերջինիս մոտ պակասում է առողջ մտքի մարգումը: Հավատացնում եմ, որ չկա մի թուրք, որ այդ պատճառով Հային Հանդիմաներ: Թուրքը Հայից չի պահանջում ճշգրտություն, քանի որ ինքն էլ դա չգիտի: ԱՀա մի օրինակ: Իմ թուրք բարեկամներից մեկը խոշոր վաճառական էր: Նա առևտրի մի մասնայուղ ուներ Դիարբեքիրում, որն ամբողջապես գտնվում էր մի Հայի ձեռքում: Ես Հարցրի թուրքին, թե նա չի վախենում, որ Հայը կարող է խարել նրան: «Ոչ,- ասաց նա,- կարիք չունեմ վախենալու: Այո՛, եթե այդ 50 000 ֆրանկը, որ ներդրված է իմ խանութում, լիներ իմ Հավատակիցներից մեկի ձեռքում, անշուշտ պատճառ կունենայի մտահոգվելու, սակայն Հայը լավ հաշվարար է: Նա գիտի, որ եթե խանութում կորուստ արձանագրվի, ես նրան պաշտոնից կհեռացնեմ»:

Ես դրան Հակաղարձեցի. «Ինչպե՞ս կարող ես իմանալ, որ նա քեզ Համար գնումներ անելիս, օրինակ՝ ծախսած հինգ ֆրանկի փոխարեն՝ 5,50 ֆրանկ չի զրանցում: Ի՞նչ վերահսկողություն ունես»: Այդժամ բարեկամս ծիծաղեց և ասաց Հատկանշական Հետեյալ բառերը. «Այո՛, նա դրան կզնա: Համենայն դեպք նա այնքան հիմար չի գտնվի, որ ինքն իրեն վնասի: Բայց մեր առևտուրը, իհարկե, ի վիճակի է նման մանրուքների դիմանալու, այն մեր երկուսի Համար էլ բավարար շահ է բերում»: Այսպիսին է Արևելքը:

Ուրֆայում իմ մնալու վերջին օրերին մի քանի Հայի կողմից ինձ պատճառած տհաճության Համար լիովին ներում եմ նրանց: Հայ ժողովրդի մեջ կա չափազանց Հասկանալի մի թուլություն, որը տհաճորեն զրսենում է նաև իմ անձի Հանդեպ: Դա խորը նստած վրեժի զգացողությունն է՝ նրանց Հանդուրժած ամոթալի անարդարության Համար, որից և ծնվել են

մերթ ընդ մերթ զբանորվող, Հենց իրեն՝ ժողովրդի համար, վնասարար գծերը: Երանի թե կարելի լիներ յուրաքանչյուր հայ սրտի ներշնչել, որ իրենից վանի վրեժինդիր մտայնությունը: Այժմ երր, Աստծո կամոք, ստեղծվել է ազատ Հայաստան, առավել ևս կարեոր է, որ ժողովուրդը վերջ տա այդ մտայնությանը, որը խաթարում է ազգի նկարագիրը: Հակառակ դեպքում անխուսափելիորեն նոր չարիք կծնվի: Պետք է ենթադրել, որ նոր Հայաստանում միայն Հայեր չեն բնակվելու, և որ մինչ այժմ շատ ատելի դարձած քրդերի ու թուրքերի մի մեծ մաս, գոնե տարիներով, այնտեղ բնակվելու է: Եթե Հայը դեկավարվի խորքում նստած վրեժի ու Հատուցման ոգով, ապա մահմեղականը կը մրուստանա Հայի դեմ: Ազատ Հայաստանը չպետք է մոռանա, որ իր երկրի չորս բոլորը բնակվում են բազմաթիվ մահմեղականներ, և որ ինքը մի փոքրիկ ժողովուրդ է, որի հետ վերջիններս կրկին սոսկալի հաշվեհարդար կտեսնեն:

Հակառակ բոլոր տհաճությունների, որ առանձին Հայեր ինձ պատճառեցին, ես կնոջս հետ ցանկանում եմ կրկին աշխատել, ինչպես մինչև օրս, այդ խեղճ ժողովրդի համար, և իմ բաժին նպաստը բերել, որպեսզի նա՝ իր կրած սոսկալի տառապանքներից հետո, երջանիկ ժողովուրդ դառնա:

Տեղին կլիներ տարածվել նաև քաղաքական իրավիճակի վրա, սակայն ես դրանից հրաժարվելու եմ, քանի որ մի քիչ հողետեսորեն եմ նայում ապագային: Այնուամենայնիվ, ես մեծ հույսով կառչելու եմ այն հեռանկարին, որ ժողովրդի այս խեղճ բեկորներին սպասում են այնպիսի երջանիկ ժամանակներ, երբ նրանք կկարողանան մոռանալ այն բոլոր փորձությունները, որոնց նրանք ենթարկվեցին 1915-ից ի վեր:

ՎԵՐՁԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՑԻՑ¹
[«Օրիենթ» , 1925\7, գլ. 54-58, 1925\8, գլ. 59-64]

[54.] ՄԵԿ անգամ ևս Ուրֆայում

1920 թ. Հուլիսին ես մեկ անգամ ևս գնացի Ուրֆա: Ճանապարհին պետք է ստուգեի Շվեյցարիայի՝ ի նպաստ Հայերի արշավախմբի աշխատանքը, որոնց կայանը այն ժամանակ անհայտ պատճառներով Սվաղից տեղափոխվել էր Սև ծովի ափին գտնվող Սամսուն քաղաքը: Արևելյան ճեղքնթացը մի քանի շաբաթ ի վեր կրկին գործարկվում էր, և ես օգտվեցի այդ գնացքից աշխատակցիս՝ պարոն Վ.-ի հետ:

Գլուխ 26-ում Հիշատակել էինք Հիվանդ անգլիացու արտահայտությունը. «Thanks God, the whole world is now English» (Փառք Աստծո, Հիմա ամրող աշխարհը անգլիական է): Ես նրա խոսքերը հիշեցի, երբ մուտքի անցագիր չէի ստանում, քանի չունեի Կոստանդնուպոլսում բրիտանացի զիսավոր հրամանատարության համաձայնությունը, որը ստանալուց հետո միայն՝ մեզ «Թույլ տվեցին» Կոստանդնուպոլիս գնալ:

Քանի որ այս տողերի նպատակը ճանապարհորդության նկարագրությունը չէ, զերծ եմ մնում դեպի Կոստանդնուպոլիս և Սամսուն կատարած ուղևորությանս մանրամասն շարադրությունից:

Սև ծովի ափին գտնվող Սամսուն քաղաքից ճանապարհը շեղակի անցնում էր Անատոլիայով դեպի սիրիական սահմանի մոտ գտնվող Ուրֆայի շրջանը, որը դեռ պատերազմի մեջ էր ֆրանսիացիների հետ: Տեղ հասա օգոստոսի վերջերին, չորս ամիս այն քանից հետո, երբ ֆրանսիական զորքերը, որոնք քաղաքը գրավել էին 1919 թ. Հոկտեմբերին, սովահարության պատճառով ստիպված էին ետքաշվել Զերարլուգ: Սակայն զորքամասերը Զերարլուգ չհասան: Ուրֆայից երեք ժամ հեռավորության վրա կոտորվել էր 300 մարդ, իսկ մնացած 100-ը վերադարձավ Ուրֆա որպես գերի: Ֆրանսիացի պարետի

¹ Յակոբ Քյունցլերի «Արյան և արցունքի երկրում». Տպագորություններ Միջագետքից՝ աշխարհամարտի տարիներին (1914-1918) գրքի շարունակությունը:

գլուխը՝ ձողին ցցված, ցուցադրվում էր ամենուրեք փողոցներում, մուսուլման բնակչության անասելի ցնծության ներքո: Իսկ ո՞վ էր այդ ժամերին քաղաքում մահվան սարսափի մեջ ահով սպասում, որ թուրքերի թևակորպված մոլեռանդությունը կրկին կշրջի իրենց դեմ. դա Հայ բնակչությունն էր, որի թիվը 1918-ից ի վեր հասել էր 3000-ի:

90-օրյա պաշարման ընթացքում, որը նախորդել էր Փրանսիացիների նահանջին, Հայերն իրենց չեզոք էին պահել: Դրա շնորհիվ նրանց հիմա Հանգիստ էին թողել:

Պարոն և տիկին դ-ր Ֆիշերները, որոնք տարել էին Ուրֆայի պաշարման շրջանը, մայիսին մեկնել էին Հայրենիք՝ Հիվանդանոցը թողնելով Հայ բժշկին և օրիորդ Հոլմը (Caroline Mary Holmes) անունով մի ամերիկուհու: Ես ճիշտ ժամանակին էի վերադարձել, քանի որ ամերիկուհին, տեսնելով, որ ժամանակավոր վարչակարգը խեթ աչքով էր նայում Հիվանդանոցին, պատրաստվում էր այն փակել: (Դ-ր Ֆիշերի արկածները, տես «Օրիենտ», 1924, թիվ 3/4):

Ինչքան մեծ էր մեր Հայ քույրերի ուրախությունը, երբ կրկին ստանձնեցի Հիվանդանոցի ղեկը, որը պատերազմի բոլոր տարիների ընթացքում ամուր պահել էի իմ ձեռքերում: Անմիջապես ստեղծվեց Համերաշխության և Համագործակցության միջնորդություն Հօգուտ շատ Հիվանդների: Իրոք աշխատանքի պակաս չկար: Դրա երաշխիքը մոտակա ուազմանակատում Փրանսիացիների և թուրքերի միջև պատերազմական ընդհարումներն էին: Բժշկական խնամք էինք Հասցնում նաև ամերիկյան Մերձարևելյան նպաստամատույց (Near East Relief) կազմակերպության 800 Հայ որը երեխաների:

[55.] Լրտեսները

Կինս՝ Երեխաներին թողնելով Շվեյցարիայում, իմ ետևից գալու էր Ուրֆա, ըստ որում՝ նա անցնելու էր Թեյրութի և Հալեպի ճանապարհով: Իսկ Հալեպից Ուրֆա պատերազմական գոտի էր: Միայն ամերիկյան նպաստամատույցը թույլտվություն ուներ պատերազմող երկու կողմից՝ ժամանակ առ ժամանակ Ուրֆա գնալ ավտոմեքենայով: Այդպիսի մեքենայով

Էլ կինս գալու էր Ուրֆա: Ինձ հաջողվեց մի նամակ ուղարկել Հալեպ, որով նրան տեղեկացնում էի, որ Ուրֆայում աշխատանքային միջնորդությունը խաղաղ է և որ անելու շատ բան կա:

Ավտոմեքենան քաղաք հասնելուն պես, ոստիկաններն անմիջապես սկսեցին այն մանրակրկիտ խուզարկել: Հատկապես փնտրում էին նամակներ: Ընդ որում՝ իմ նամակներից մեկը, որ գտնվում էր գրի մեջ, ընկավ թուրքերի ձեռքը:

Ուրֆա հասնելուն պես՝ կինս ձեռնամուխ եղավ թուրքական Հիվանդանոցի վերականգնմանը: Այնտեղ կար ամենապետքական բաների պակասը: Պետք եղած սպիտակեղենը նա պատվիրեց Հայերի մոտ: Շուտով, արդեն մի քանի շարաթ անց, Հիվանդանոցն այլ տեսք ստացավ, և Հիվանդներն իրենց այնտեղ կրկին լավ էին զգում:

Կնոջս ժամանումից մեկ ամիս հետո Հանկարծ լուր ստացանք մեղ երկուսիս սպառնացող վտանգի մասին: Ուրֆայի զինվորական դատարանը վերը նշված նամակը թարգմանել էր տվել: Թեև այնտեղ ոչինչ չկար, որ կարելի լիներ լրտեսություն Համարել, բայց բավական էր, որ դա մի նամակ էր, որը Հալեպ էր եկել ոչ թուրքական փոստով: Եվ Հավանաբար հենց այն Հանգամանքը, որ այն ժամանակ ավտոմեքենայի զննման ընթացքում ուրիշ այլ նամակներ չէին Հայտնաբերվել, այն կասկածն էր բերել կնոջս վրա, որ նա նամակներ է թաքցրել: Մրան գումարվել էր նաև այն փաստը, որ ես Սամսունով էի երկիր մտել, իսկ նա՝ Հալեպով: Ուրեմն նվազագույնը՝ «լրտեսության մտադրությամբ»: Այդ պատճառով դատարանը որոշում ընդունեց մեղ աքսորել երկրի խորքերը: Զինադադարից հետո Ուրֆա վերադարձած կաթողիկ Հայրերն ու քոյլերը, մեծ մասը ֆրանսիացիներ, արդեն շարաթներ առաջ, նույնպես, թեպետ առանց ուազմաղատական վճոի, երկրի խորքն էին արսորվել:

Թերեւս շնորհիվ այն Հանգամանքի, որ ես շվեյցարացի էի, ինչպես նաև, որ մենք երկուսով շատ կարենոր աշխատանք էինք անում, դատավորի վճիռն իսկույն չկիրառվեց, այլ ներկայացվեց նախ Դիարրեֆիրի գլխավոր հրամանատարի դատին: Վերջինս մեր վտարումը անհրաժեշտ չհամարեց, սակայն հրամայեց խիստ հսկողություն սահմանել: Այսպիս մենք երեք շարաթ շարունակ խիստ հսկողության տակ էինք, սակայն

Երկու հիվանդանոցում էլ Հանգիստ զբաղված էինք մեր աշխատանքով: Այդ շաբաթներին տանը այցելություններով ծանրաբեռնված չէինք, որովհետև շուտով հրապարակային գաղտնիք էր դարձել, որ մենք «Հսկողության» տակ ենք: Առաջին այցելությունը, որ ունեցանք երեք շաբաթ հետո, զինվորական դատարանից մի սպա էր իր ազատարարո կնոջ հետ, առաջին «թրքուհին առանց քողի», որ շրջում էր Ուրֆայում: Մենք արագ բարեկամացանք: Ամեն շաբաթ մի երեկո մեր տանն էինք անցկացնում: Շատ հաճելի զրույցներ էինք ունենում: Շուտով պարոնի ասածներից պարզվեց, որ ինքն է եղել մեր վտարումն արգելակող պաշտոնյան: Նա նաև չթաքցրեց, որ իր ընտանիքը դժվար կացության մեջ էր՝ իր աշխատավարձի վճարումների ամիսներով ձգձգման պատճառով: Հասկանալի է, որ ես անմիջապես երախտագիտությունս ցույց տվեցի՝ օգնելով թուրքական այդ ընտանիքին (նրանք ունեին երկու երեխա) բարեկամական բավական մեծ նպաստով, որպեսզի նրանք ներկա նեղությունից դուրս գան: Մառայությունը լինում է փոխադարձ:

[56.] Հուզումներ Հայերի շրջանում

Իմ վերադարձը Ուրֆա ուրախություն առաջացրեց Հատկապես քրիստոնյա բնակչության շրջանում, ինչպես նաև բազմաթիվ մահմեղականների մոտ: Իզուր չէր, որ 20 տարուց ի վեր աշխատել էի բնակչության համար: Ինձ բարի գալուստ մաղթողների թվում էր նաև բողոքական քահանան, իսկ ավելի ուշ իմացա՝ 1919 թ. իմ հրաժեշտի առիթով նրա տարօրինակ պահպանքի պատճառը: Ի դեպ, իմացածս մեկ անգամ ևս Հաստատվեց. այն է, որ այն ժամակվա ամրող արշավը պետք էր վերագրել զերմանացիների և զերմանամետների հանդեպ ստեղծված ատելությանը: Քահանան փորձել է Հայկական կոմիտեում բարեխոսել իմ մասին, սակայն նրան սպառնացել են, որ նա կվտարվի, եթե շարունակի պաշտպանել ինձ: Այդ ժամանակ բոլորի հույսը Անտանտի վրա էր:

Ինձ ոչ մի անգամ չայցելողը՝ վերը (52-րդ գիսում) հիշատակված բժիշկն էր, որն իմ նկատմամբ վատ վերաբերմունք

Էր ցուցաբերել: Իմ զալուց կարճ ժամանակ անց նրան՝ որպես զինվոր, ուղարկեցին, որտեղից նա փախավ և Ուրֆայի զինվորական դատարանի կողմից մահվան դատապարտվեց: Քանի որ նրան ձերքակալել չհաջողվեց, բռնագրավեցին նրա ունեցվածքը: Այսօր նա դեռ ապրում է: Ավելորդ է ասել, որ ես նրան ամեն ինչի համար ներել եմ, իսկ նրա վարձունքը գրանցել եմ պատերազմի հաշվին, որի պարտքերն աշխարհում ամենուրեք պետք է մարվեն, ներվեն, մոռացվեն:

Մի հիվանդի այցելելիս տեսա մի լուսանկար: Բոլոր հայերը, որոնց ճանաչում էի, այնտեղ էին: Խմբի առջև հայերի գանգերից և մարմնի այլ անդամներից կիտված մի ըլուր կար: Այդ ոսկորները հավաքել էին անգլիացիների մուտքից Հետո Ուրֆա վերադարձած հայերը՝ որպես իրենց թանկագին հայրենակիցների չոր բեկորներ: Նկարում վերոհիշյալ բժիշկը պահել էր մի տախտակ, որի վրա գրված էին Հետեւյալ բառերը. «Թուրքական քաղաքակրթություն, 1915թ.»:

Այդ նկարն ինձ սարսափ ազդեց, և ես խնդրեցի այն անմիջապես ոչնչացնել: Զգիտեմ, նրանք դա արեցին, թե ոչ, բայց շատ հնարավոր է, որ նման այլ օրինակներ ևս գոյություն ունենային:

Գարնանը ոստիկանները մի ասորու տանը փաստաթղթերի խուզարկություն էին արել: Այնտեղ ևս հայտնաբերել էին նման լուսանկարների պատճեններ: Հետևանքը եղավ այն, որ նկարում պատկերված տղամարդկանցից ոմանց ձերքակալեցին ու նետեցին Դիարբեքիրի բանտը, որտեղից նրանք ազատվեցին միայն 1922 թ. դեկտեմբերին: Բարեբախտաբար լուսանկարում պատկերված տղամարդկանց մեծ մասը Ուրֆայից փախել էր արդեն: Ձերքակալել էին ընդամենը վեց հոգու, որոնց թվում, ցավոք, նաև վերը նշված քահանայի մնաց, և ես պետք է, ինչպես հաճախ լինում էր աշխարհամարտի ժամանակ, եկեղեցու բեմից նրանց միսիթարողը լինեի:

[57.] Արտագաղթը

Ֆրանկին-Բուլյոնյան խաղաղության պայմանագիրը վերջ դրեց ուազմական գործողություններին Թուրքիայի և Ֆրանսիայի միջև: Բաղդադի երկաթգիծը Եփրատի մյուս կողմում դարձավ Սիրիայի և Թուրքիայի միջև սահմանը: Այսպիսով, Ուրֆան բաժին ընկավ Թուրքիային և դրանով քաղաքի քրիստոնյաների, Հատկապես Հայերի, Հայացքն ուղղվեց դեպի Սիրիա: Խաղաղության հետ, սակայն, նրանց Համար մուտք չգործեց տեղաշարժման ազատությունը: Քրիստոնյաներին չէր թույլատրվում արտագաղթը, նույնիսկ գործով որևէ թուրքական գյուղ գնալ: Հենց դրա Համար նրանց՝ երկրում մնալը դժոխքի վերածվեց, և յուրաքանչյուրի ցանկությունն էր փախչել մոտակա սահմանով: Ակսվեց փոխադրման աշխայժ առևտուր: Տասը ուկեղրամի դիմաց մահմեղականները քրիստոնյաներին մութ գիշերով անց էին կացնում սահմանի վրայով: Սակայն երբեմն նման խմբերը բռնվում էին և պատժվում բանտարկությամբ: Չնայած դրան՝ Հայերի թիվը քաղաքում նվազում էր: Վերջում մնացին միայն ամերիկացիների որբերը և մի խումբ աղքատներ, որոնք փախուստի Համար վճարելու դրամ չունեին:

Ամերիկացիները 1919 թ. ընթացքում ամրող Թուրքիայից Հավաքել էին մոտ տասը Հազար որբեր՝ բոլորը երեխաններ, որոնք տեղահանության ժամանակ տարվել էին թուրքերի, քրդերի և արարների տները: Գնալով ավելի ուժեղացող քեմալական կառավարությունը շատ վայրերում դժվարություններ էր Հարուցում ամերիկացիներին՝ վերահսկելով և խոչընդոտելով նրանց աշխատանքը, նրանցից օգնություն պահանջելով նաև Թուրքիայի բազմաթիվ մուսուլման որբերի Համար: Բայց քանի որ նրանց Հատկացված գումարների վրա Հնարավոր չէր հսկողություն սահմանել, օգնության արշավախումբը որոշեց իր Հայ որբերին տեղափոխել ոչ թուրքական մի երկիր: Հարավարեւելյան Անատոլիայի Համար որպես նպատակակետ նկատի առնվեց Լիբանանը: Անգորայի կառավարությունը Հիմնականում գոհ էր, որ Հայ որբերը տեղափոխվում էին: Այնուամենայնիվ, ամեն քաղաքում, որտեղ որբեր կային, անհրաժեշտ էր տեղական կառավարությունից առանձին թույլտվություն

Խնդրել: Այդ գործեղակերպը որոշ չափով բարդացնում էր տեղափոխությունը: Ուժ ամսվա ընթացքում, ապրիլից մինչև նոյեմբեր, միայն Հարավարևելյան շրջաններից Հաջողվեց 10.000 որր տեղափոխել Լիբանան: Քանի որ կինս և ես, չնորհիվ մեր լեզվի և տեղական սովորությների իմացության, այդ աշխատանքի Համար ավելի Հարմար էինք, քան ամերիկյան նպաստամատույցի աշխատակիցները, որոնք ընդամենը մի քանի տարի էր, որ երկրում էին գտնվում, մեզ երկուսիս Հանձնարարեցին Ուրֆայի, Մարդինի, Դիարբեքիրի, Խարբերդի, Եզինի, Արարկիրի և Մալաթիայի շրջաններից մոտ 8000 երեխանների տեղափոխումը, մի աշխատառեց, որը մեզ այնպիսի ուրախություն պատճառեց, որ մենք մեր կյանքի այդ Հատվածը կարող ենք Համարել ամենազեղեցիկներից մենքը: Այդ իսկ պատճառով սիրով ուզում եմ ընթերցողներին մի քիչ էլ պահել ու նրանց մի քանի տեսարան նկարագրել այդ տեղափոխությունից:

[58.] ԲՐԵ-Ի-ԴԱՎՈ

Երեխանների առաջին խումբը ես առաջնորդեցի: Գիտեի, թե որքան կարենոր էր, որ բոլոր քրդերը, որոնց տարածքով անցնելու էինք Ուրֆայից մինչև Զերարդուզ, և որոնք երկու տարուց ի վեր իրենց շրջանում քրիստոնյա չէին տեսել, տեղեկություն ստանային, թե ինչ էր կատարվելու: Հանկարծ տեսնելով, որ կրկին իրենց երկրով մեկ ամրողջ խմբեր են անցնում, նրանց մեջ վերատին կարող էր արթնանալ այդ երեխաններից մի քանիսին գողանալու ախորժակը: Սակայն, եթե նրանք ինձ տեսնեին կանգնած տեղափոխման գլուխ, Հավատացած էի, որ Հանուն ինձ նրանց քրդական պատիվը թույլ չէր տա մեզ անհանգստացնել:

Մեր առաջ քրդական մի գյուղ կար: Երկու սայլ չէր հետեւել՝ իրար մոտ մնալու իմ հրամանին: Այդ պատճառով դրանք մեղանից առաջ էին գյուղ Հասել, երբ դեռ քնակչությունը ճանապարհորդող ամրողջ խումբը չէր տեսել: «*Wa'a sewkiet-i-gjiaure*» [Գյավուրների մի ամրողջ ցեղ] ճշալով, քրդերը կանգնեցրին սայլերն ու սկսեցին իրենց կանոնավոր թալանը: Այդ ընթացքում ես, հիմնական խմբի հետ, Հասա գյուղի

Հրապարակը: Ինձ անմիջապես ճանաչելով, «*Wa'a Yacub Effendi*» բացականչություններով թալանին վերջ տվեցին, գողացած իրերը աղջիկների կողմը նետեցին և չնայած սպասելու իմ կանչին՝ ծլկեցին զյուղի մյուս ծայրը: Ուրեմն ինձ ճանաչեցին: Ես էլ հավաքեցի զյուղի ամբողջ բնակչությանը, տեղեկացրի նրանց, որ այս երեխաները թուրքերից արտագաղթելու թույլտվություն են ստացել, և որ սա միակ խումբը չէ, այլ շատերից առաջինը, որ անցնելու էր այս տեղերով: Հոյս հայտնեցի, որ նրանք արդեն ի սեր իրենց բարեկամի, որը ես էի, Հոգ պիտի տանեին, որ երեխաներին որևէ վնաս չհասցվի: Նրանք ներողություն խնդրեցին և երդվեցին, որ երեխաներին ոչինչ չի պատահի: Այժմ արդեն այդ զյուղի համար հանգիստ էի: Այստեղ իմ խնամարկյալների հետ, մինչև տեղափոխման ավարտը, նաև երր ես խմբի հետ չէի լինելու, վատ չէին վարվելու: Եվ այդպես էլ եղավ: Ամուսն ամիսներին հազարավորներ անցան այստեղով, և ոչ մեկին վնաս չհասցվեց:

Սիֆթեկ կոչվող մեկ այլ քրդական գյուղում, որն արդեն պատկանում էր Սիրիային, մեր երեխաներին ոչինչ չէր կարող սպառնալ: Սակայն բնակչությունը զարմացել էր՝ տեսնելով ճանապարհորդող խմբին ջրհորից ջուր հանելիս: Շատերն ապշած հարցնում էին. «*Wa'a dji'e?*» (Ի՞նչ է սա:) Ես իմ հետիոտն խմբով մի քանի րոպե ուշ հասա ջրհորի մոտ: Հենց որ տեղ հասա, ինձ անմիջապես ճանաչեցին և սրտագին ողջունեցին: Նրանցից մեկը, իր ամբողջ ձայնով իմաց տվեց մի կողմ գտնվող վրանների բնակիչներին. «Մոհամեդ, Մահմուդ, Խալո, շուտ եկեք, տեսեք, թե ով է եկել: Բրկ-ի-Դավոն, Դավթի եղբայրը»: Ես, ուրեմն, Դավթի եղբայրն էի: Բայց ո՞վ էր Դավոն, չգիտեի, իսկ քրդերը ոչ մի կերպ չէին հավատում, որ ես Դավոյին չէի ճանաչում: Զէ՞ որ ես նրան ձեռքերի վրա եմ պահել, չէ՞ որ նա վեց ամիս հիվանդ պառկած է եղել Ուրֆայի մեր հիվանդանոցում, չէ՞ որ նա շատ հաճախ պատմել է իրենց, թե ինչ եմ եղել ես նրա համար, եղրորից առավել: Երբ հարցրի, թե երր է դա եղել, ասացին՝ մոտ 12 տարի առաջ: Զարմանալի չէր, որ ես նրան չէի կարողանում հիշել: Այդ ընթացքում եկել էին Մոհամեդը, Մահմուդը, Խալոն, բայց ոչ Դավոն: Վերջինս հենց նոր ուրիշ զյուղ էր գնացել: Երբ հաջորդ օրը կրկին անցնում էի այդ տեղերով, նա ջրհորի մոտ էր: Ինձ տեսնելով,

մոտեցավ ինձ Համբուրելու: Նա տղամարդ էր դարձել, մեծ և ուժեղ՝ փարթամ մորուքով և բաց, խիստ մազոտ կրծքով, ինձ լրիվ անծանոթ, քանի որ 12 տարի առաջ, երբ նա հիվանդանոցում պառկած է եղել, Հազիվ 12 տարեկան տղա կլիներ: Նա ինձ ճանաչեց, որովհետև ես Հավանաբար շատ քիչ էի փոխվել: Այնուհետև նա սրտանց Հրամեշտ տվեց իր բրեին (Եղբայր), որին սիրով պիտի ընդուներ իր տանը՝ ճաշի Հրամերով: Նա դեռ Հասցրեց ինձ ցույց տալ իր երիտասարդ կնոջն ու Հազիվ առաջին քայլերն անող երեխային, իսկ ինձ ներկայացնելիս, ասաց, որ ես իր բրեն եմ:

[59.] Խոստովանություն

Որբերի մի խմբի հետ նոր էի դուրս եկել Դիարբեքիր քաղաքից՝ ճանապարհը շարունակելու դեպի Ջերարլուգ: Դարրասի առաջ ներկա-բացակա էին անում, որը միշտ ոստիկանների գործն էր: Կարդացին անձնագրերի անունները: Այդ ընթացքում պարզվեց, որ ներկա չորս պատանիների անունները չտրվեցին: Իսկ չորս այլ անուններ տրվել էին, որոնց ոչ մեկը չարձագանքեց: Մի՞թե սա առեղծված չէր: Մարդինում, երբ ես այս խմբի հետ ճանապարհ ընկա, ներկա-բացակա չէր արվել: Մեկ անգամ ևս կանչեցին բոլոր անունները, նույն արդյունքը՝ չորս պատանու անուն չկար, չորս պատանիներն էլ, որոնց անունները կարդում էին, ներկա չէին:

— Ահ, ահ, — ասաց 10 տարեկան մի պատլիկ, — չէ՞ որ երբ Մարդինից դուրս եկանք, ինձ ասացին, որ ճանապարհին իմ անունը Ներսես է լինելու և ոչ թե Լևոն: Նույնն էր և մյուս երեքի հետ, նրանք շինծու անուններ էին ստացել: Այժմ արդեն նրանք էլ խոստովանեցին, որ ամերիկուհի օրիորդ Ֆ-ն, որը դեկավարում էր Մարդինի որրանոցը, նրանց ասել էր, որ մինչև երկրի սահմանը նոր անուն էին ունենալու, և Հենց այդ անունն էր, որ նրանք չգիտեին: Ես ծիծաղեցի խոստովանության վրա, բայց դա երկար չտևեց, քանի որ ոստիկանը Հայտարարեց, որ այդ չորս պատանիները ճանապարհը շարունակելու իրավունք չունեն, և որ նրանք պետք է խմբից ետ մնան: Ես վերադարձա քաղաք՝ ոստիկանապետի մոտ, և երբ

վերջինս էլ թույլ չտվեց երեխաներին տանել, զնացի վալիի մոտ՝ նրանից խնդրելու երեխաներին ազատ արձակել, սակայն իդուր: Այսպիսով, ստիպված եղա հետևել այդ ընթացքում առաջ շարժված խմբին՝ վատ տրամադրությամբ մեր շար բախտի համար: Ավելի ուշ, երեխաները գտան սահմանն անցնելու ճանապարհը:

[60.] Պտտահողմ

Հազիվ քառորդ ժամ կլիներ, որ հեռացել էինք քաղաքի դարպասից և ես՝ նստած ճանապարհորդական իմ սայլի մեջ, մեկ անգամ ևս աչքի էի անցկացնում երեխաների անձնագրերը, երբ հանկարծ մի պտտահողմ սկսվեց, բոլոր թղթերը սայլից դուրս թոցրեց, և սոսկալի փոշին ստիպվեց, որ մի քանի ակնթարթով աչքերս փակեմ: Իսկ երբ փոթորիկն անցավ, ու ես կարողացա կրկին աչքերս բաց անել, իդուր էի փնտրում անձնագրերը: Ո՞ւր կարող էին դրանք թուած-գնացած լինել: Հեռվում երևում էր մրրիկը, բայց ոչ թղթերը: Արագ շարժվեցի ամպի ուղղությամբ, հույս ունենալով, որ դեռ կկարողանամ գտնել ամեն ինչից ավելի կարևոր այդ անձնագրերը: Իսկապես, մի քանի հարյուր մետր հեռավորության վրա, ժայռերի արանքում, գտա հինգ թերթ՝ ամեն մեկի վրա 22 անուն, սակայն 22 անունով մեկ թերթ բացակայում էր: Ուր էլ որ նայեցի, օգուտ չուներ, այն ընդմիշտ կորել էր: Փոշու ամպն արդեն հեռու էր, շատ հեռու, վազելով էլ նրան հասնելն անհնարին էր: Ուստի ուղևորությունս շարունակեցի առանց այդ մեկ թերթի, մոտավորապես պատկերացնելով, թե ինչ դժվարությունների էի հանդիպելու մինչև Սուրուջի մյուս կողմը՝ սիրիական սահմանը հասնելու: Ոստիկանական հաջորդ ստուգումն անցնելու էի Սևերեկում: Իրոք, շուտով վրա հասան դժվարությունները: Ոստիկանները պահանջեցին ներկա-բացակա անել քաղաք հասնելուց առաջ, քանի որ հայտնել էի, որ քաղաքում՝ տեղի բացակայության պատճառով զիշերը մնալ չէինք կարող: Անմիջապես զեկուցեցի անձնագրերի հետ կապված ճախողության մասին: Թե ինձ հավատացին, թե չէ, կարևոր չէ, որովհետև ասացին, որ երեխաները, որոնց անուն-

ները չկան, պետք է երկրում մնան և որ զրա դեմ ոչինչ անել հնարավոր չէ: Գնացի քաղաք մութեսարիֆին (նահանգապետ) փնտրելու: Քանի որ ուրբաթ էր, ստիալված եղա իր տունը գնալ՝ շատ տհաճ մի բան, նկատի ունենալով, որ թուրքերը չեն սիրում օտարականներին իրենց տանն ընդունել, եթե այցելությունների համար պաշտոնական տեղ ունեն: Սակայն պարոնը սիրայիր էր, ուշադիր ինձ լսեց, բայց ափսոսանք հայտնեց, որ չի կարող այդ երեխաններին իրավունք տալ ճանապարհը շարունակելու: Ի վերջո մի քիչ կակղեց, թույլ տալով, որ բոլոր երեխաններին տանեմ մինչև քաղաքից մոտ վեց կմ Հեռավորության վրա գտնվող մի աղբյուր, մոտակայքում միակ տեղը, որտեղ կարելի էր գտնել բավականաչափ ջուր մարդկանց ու կենդանիների համար, ինչպես նաև խոտածածկ տարածություն, որի վրա կարելի էր իջևանել: Սակայն գիշերը մեր վրա ոստիկանական Հսկողություն սահմանվեց, որպեսզի մեզանից ոչ ոք չփախչի: Հաջորդ օրը եկավ ոստիկանապետն ու կրկին ներկա-բացակա արեց, որպեսզի այն երեխաններին, որոնց անունները չկային, ետ տաներ Սևերենկ: Ես տեղավորեցի նրանց երեք սայլերի մեջ ու նրանց Հետ գնացի նահանգապետի մոտ, նրան խնդրելու, որ թույլ տա նրանց գոնե մինչև Ռուբա տանեմ, քանի որ այնտեղ մեծ տուն ունեինք, իսկ այստեղ, Սևերենկում նրանց ընդունելու որևէ տեղ չկար: Ժամը 11-ին կարողացանք վերադառնալ մեզ սպասող խմբի մոտ և շարունակել մեր ճանապարհը: Հաջորդ օրը երեկոյան հասանք մեր որբանոցը, և նոր էինք բակ մտել, երբ ժամանեց ոստիկանապետը իրեն ուղեկցող երեք ոստիկանով, որոնք ներկա-բացակա արեցին: Դրանից Հետո միայն Հեռագրեցին Մարդին՝ կառավարությանը, տեղեկանալու ճանապարհ ընկած երեխանների նախնական թվի մասին, և երբ երեք օր Հետո հարցը, իմ տվյալների համաձայն, պարզվեց, թույլ տվեցին շարունակել մեր ճանապարհը:

[61.] Սայլերի ամրոցը

Խարբերդից, որտեղից նախատեսվում էր տեղափոխել մոտ 5000 երեխա, անհրաժեշտ էր Հնարավորին չափ մեծ խմբեր ճանապարհ Հանել: Դա մշտապես կապված էր պաշտոնական ընույթի, ինչպես նաև բուն ճանապարհորդությանը վերաբերող մեծ նախապատրաստությունների հետ: Մեծ մասամբ դա երեխաների 50 խումբ էր, բաղկացած 300-400 հոգուց, որոնք միասին պետք է ճանապարհ Հանվեին: Երեք ամիսների ընթացքում, որ պետք եղան տեղափոխման համար, ինձ երկու անգամ Հաջողվեց մեկ օրում 700 երեխա ճանապարհ Հանել: Մի մասը՝ սայլերով Դիարբերիրի վրայով Ձերարլուզ, մյուս մասը՝ գրաստներով Մալաթիայի վրայով դեպի Կարլսեմիս (Ձերարլուզ): Դրանք ինչ մեծ օրեր էին: Ինչպես էին փայլում ճանապարհ ընկնող երեխաների դեմքերը: Վստահաբար խրայելացիներն անգամ այնքան ուրախ չէին, երբ դուրս էին գալիս Եգիպտոսից:

Ամռան այդ ամիսներին՝ որպես գիշերելու վայրեր, օգտագործում էինք ոչ թե օթևանները, որոնց մեծ մասը շատ փոքր էին, այլ փնտրում էինք գյուղից դուրս որևէ ճամբար, որքան Հնարավոր էր ջրին մոտիկ: Սայլերով ամրոց էինք կազմում, այսինքն՝ սայլերը լայն շրջանակով այնպես էինք տեղադրում, որ մի սայլի սոնակալը հազներ մյուս սայլի ետևի մասին: Այսպիսով, 20-30 սայլ կազմում էր մի մեծ շրջան: Ապա ձիերին կապում էինք շրջանի ներսի կողմը, իսկ մեջտեղում պառկում էին երեխաները իրենց հետ բերած բրդյան ներքնակների վրա: Յուրաքանչյուր սայլին կցված առաջնորդ տղաները բաժանում էին ուտելիքը, որը միշտ սառն էր, 50 հոգիանոց, Հաճախ և ավելի փոքրաթիվ, այսպես կոչված սայլի խմբերին: Քննուց առաջ երգում էին երգեր, որոնք գիշերված մեջ հրաշալի էին Հնչում: Կարևորն այն էր, որ խումբը վերջապես Ռւրֆա Հասներ, որ այնտեղ բոլոր երեխաների համար լողարան պատրաստ լիներ, և որ փոշոտ սպիտակեղենը մաքրվեր: Այդ ամենի համար ամեն անգամ մնում էինք մեկից երկու օր: Ճանապարհն այստեղից շարունակելու դորձը կնոջս հոգածության տակ էր: Մեծ մասամբ նա երեխաների հետ գնում էր մինչև Ձերարլուզ տանող երկաթուղին:

[62.] Հույն որբերը Մալաթիայից

1920-21 թթ. ձմռանը անասանելի աղետի ենթարկվեց նաև կենտրոնական և արևմտյան Անատոլիայի ուղղափառ քնակչությունը: Զէ՞ս որ Թուրքիան պատերազմի մեջ էր Հույների հետ: Այդ ժամանակ թուրքական խորհրդարանում որոշում ընդունվեց Հույն-ուղղափառ քնակչությանը նույնպես երկրից արտաքսել: Եվ քարավանների անծայր երթերը ձգվեցին Մերսիվանից, Սվաղից, Կոնիայից գետի Խարբերդ, Դիարբեքիր և Բիթլիս: Վրա հասավ ձմեռը: Տեղահանվածների մոտ 90 տոկոսը զոհվեց ճանապարհներին: Խարբերդ կատարած իմ առաջին ճանապարհորդության ընթացքում Տավրոսի լեռներում տեսա հազարավոր զոհերի խունացած ոսկորներ: Մերձարևելյան նպաստամատույցը, որը երկրում աշխատում էր, հավաքել էր երեխաներին, Հատկապես Մալաթիայում: Ինձ ուղարկեցին նաև այնտեղ, որպեսզի այդ երեխաներին էլ, թվով 900, ճանապարհ հանեի: Ամերիկացիներին, որոնց հանձնված էին այդ երեխաները, թույլատրվում էր նրանց միայն հաց և անկողին տալ՝ վարձված մի տան մեջ: Երեխաներին զրադեցնելը արգելված էր: Ի դեպ, Մալաթիան մի վայր էր, որտեղ մոլեգնում էր դողէրոցքը (*malaria*): Ամեն օր մահանում էին երեխաներ: Մի շարաթում, որի ընթացքում ես այնտեղ էի, այդ խեղճ արարածներից մահացավ 20-ր: Ինչպես կարող եմ այս երեխաներին ճանապարհ հանել, Հարցնում էի ինքս ինձ: Տեղի կառավարությունը, որը սովորականին Հակառակ՝ իմ նկատմամբ անրարյացակամ էր, նախ պահանջեց գնացող երեխաների ցուցակը: Ըստ առողջական վիճակի, ես նրանց բաժանեցի երեք խմբի: Առողջ երեխաները, զրաստներին նատած, լեռներով շարժվելու էին դեպի Հարավ, երկրորդ՝ ավելի թույլ խմբին, Հույս ունեի սայլերով Դիարբեքիրի վրայով ուղարկել և վերջապես կիսամեռ երեխաներին ավտոմեքենաներով ճանապարհ գցել: Ինձ մեծ դժվարություն պատճառեց, Հունարենին գիտակ շինելով, յուրահատուկ անուններն արտասանելը: Մի աղջիկ կոչվում էր Նետսեմանե Խարալամբոս, մի պատանի՝ Խարալամբոս Նետսեմանոս, մեկ այլ աղջիկ՝ Նորդանե Արեստակի, մեկ այլ պատանի սակայն՝ Արեստակի Նորդանոս և այլն:

Առաջին խումբը գրաստների վրա հաջողությամբ ճանապարհությամբ ընկալվեց: Բայց քանի որ սայլերը, որոնց սպասում էինք չինքն զալիս, աշունն էլ արդեն վրա էր հասել, պետք է որոշում կայացնեի, թե երկրորդ խումբն էլ գրաստներով ճանապարհ հանեի թե ոչ: Վատն այն էր, որ երկրորդ խմբի երեխաների մեջ հիվանդներն օր օրի ավելանում էին, երրորդ խմբից էլ շատերը՝ ապաքինվում, և ես վերջիններիս, քանի որ տրամադրությանս տակ մեկ ավտոմեքենա ունեի, կցում էի երկրորդ խմբին: Այս հանգամանքը նոր դժվարություններ պիտի հարուցեր ոստիկանության հետ, որն անձնագրերը պատրաստելու իմ ցուցակների:

Բարեբախտաբար, ի վերջո, մոտ տասը սայլ ստացանք Դրանց մեջ տեղավորեցի թույլ երեխաներին և ուղարկեցի Խարբերդ: Իսկ ես հաջորդ օրը մեքենայով մեկնեցի Խարբերդ մնացած 12 երեխայի հետ: Մի փոքրիկ պատանու, որ հոգեվարքի մեջ էր, զիրկս առա, քանի որ այլևս տեղ չկար լեփ լեցուն ավտոմեքենայի մեջ: Մեկ ժամ ճանապարհ անցնելուց հետո՝ նա ծնկներիս վրա հոգին ավանդեց: Նրան դնելու տես չունենալով՝ նա սառեց իմ գրկում: Երեք ժամ ճանապարհ անցնելուց հետո հասանք Խարբերդ, որտեղ ես թոթափկեցի հազվագյուտ բեռից:

[63.] Թշնամուց բարեկամ

Մալաթիայում ես ունեցա մի այլ արտառոց արկած: Տեղամերիկան որբանոցը պատկանում էր պարոն Քրիստոֆելի (Christoffel), որն այնտեղ մինչև պատերազմի վերջը կույրեր համար մի հաստատություն էր պահում: Որպես գերմանացի հետագայում նա նույնպես թողեց երկիրը: Ամերիկացիները մտան այդ հաստատությունը և որբերին հավաքեցին-տարան Ամերիկացիների հեռանալուց հետո ինքնըստինքյան հասկանալի էր, որ թուրքերը, որոնք համարվում էին գերմանացիների սեփականության ժառանգորդները, գրավեցին գերմանացիների տունն ու ունեցվածքը: Այդ իմանալով, փորձեց թուրքերին համոզել՝ գեղեցիկ, արծնապատ մահակալներու

տունը վերածել հիվանդանոցի։ Այլապես մահճակալները պիտի գողանային։

Այդ օրերին ամերիկացիների համար աշխատում էր մի հայ, որը պատերազմի բռնկումից քիչ առաջ, որպես Ամերիկայի քաղաքացի Մալաթիա էր եկել՝ իր ծեր մորը Ամերիկա տանելու համար։ Նա չորս տարի թաքնված ապրել էր մի քարայրում, իսկ պատերազմից հետո դարձավ ամերիկացիների աջ ձեռքը։ Ամերիկացիներն այդ մարդուն՝ ընտանիքի հետ, ուզում էին Սիրիա տանել, սակայն նահանգապետը ոչ մի պայմանով թույլ չէր տալիս։ Իգուր օգտագործեցի բոլոր լծակները, որպեսզի հայի համար մեկնելու թույլտվություն ստանամ։ Այդ ժամանակ սանիտարական տեսուչն ինձ ակնարկեց, որ նահանգապետը աչք ունի իմ ձիու և կառքի վրա՝ իր նոր հիվանդանոցի համար։ Ուրեմն գնացի նրա ապարանքը, որտեղ կարող էի նրա հետ առանձին խոսել։ Երբ խոսքը հասավ ձիուն և կառին, ես նրան բացեիրաց ասեցի, որ սիրով նրան կմատուցեի այդ նվերը, սակայն դրա դիմաց որպես փոխադարձ ծառայություն նրանից կակնկալեի մեր հենց նոր հիշատակած հայի ազատ արձակումը։ Հազիվ էի դա ասել, պարոնն ընկապ կատաղության մոլուցքի մեջ։

- Ինչ է, ուզում ես ինձ կաշառե՞լ։ Ծ դուք, անիծյալ ամերիկացիներդ ու եվրոպացիներդ, դուք մեզ վատարանում եք ամբողջ աշխարհով մեկ, իսկ վատն այդ դուք եք։

Նա ինձ չթողեց մի բառ արտասանել, այլ ուղղակի վոնդեց.

- Դուքս այստեղից։

- Ինձ դուքս անելու կարիք չկա, - ասեցի ես, - ես ինքս կդնամ։

Այսպես, ես դուրս եկա այն հույսով, որ նահանգապետին, որն ինձ առանց այդ էլ քանիցս վշտացրել էր, այլևս երբեք չէի տեսնելու։

Այդ օրերին, սակայն, այդ պարոնի միակ դատրիկը ծանր հիվանդացավ։ Քաղաքի երեք բժիշկները, մեկ թուրք, մեկ հայ և մեկ աքսորյալ հոյն, շվարած կանգնել էին երեխայի մահճակալի մոտ։ Քաղաքի ոստիկանական պարետը, որ նախկինում Ուրֆայում էր, ինձ լավ էր ճանաչում, որովհետև մի անգամ Ուրֆայում բուժել էի նրա երեխային։ Վերջինս հարցրել էր նահանգապետին, թե ինչու ինձ չի կանչում իր երեխայի

Համար: Այդ ժամանակ նա պարետին բացատրել է, որ ինքն ինձ հետ չառ վատ է վարվել և որ այժմ ինձ չի համարձակվում կանչել:

- Դու նրան պարզապես չես ճանաչում, նա գոռող մարդ է, սպասի՛ր, ես նրան կկանչեմ, և վատահ եմ, որ կգա:

Այսպես էր խոսել պարետը: Այդ օրվա երեկոյան, երբ ես անցնում էի զորանոցի կողքով, պարետն ինձ իր մոտ կանչեց և եղելությունը բացատրեց: Ես էլ իմ կողմից նկարագրեցի վերաբերմունքը, որն ինձ բաժին էր ընկել, վերաբերմունքը, որ չէի տեսել թուրք պաշտոնյաների հետ 22 տարիների իմ շփումների ընթացքում: Սակայն պատրաստակամություն հայտնեցի երեխային տեսնելու, եթե նահանգապետն ինքն է զա ցանկանում: Հաջորդ օրը, վաղ առավոտյան, նահանգապետից մի երկտող ստացա, որով նա ինձ խնդրում էր, որ ես բարեհաճեմ գալ երեխային տեսնելու: Ուրեմն ես գնացի: Նախքան ինձ երեխայի մոտ ուղեկցելը, նա ինձանից ներողություն խնդրեց, իսկ ես դա նրան չնորհեցի՝ ձեռքս մենակելով: Չնայած որ ձեռքիս տակ չունեի հիվանդ երեխայի արյունը հետազոտելու հնարավորությունը, կարողացա ճիշտ ախտորոշել հիվանդությունն ու հանգստացնել վախեցած հորն ու առավել ևս վախեցած մորը: Ասացի, որ երկու օրից ջերմությունը պիտի իջնի և երեխան պիտի առողջանա: Այդպես էլ եղավ: Ճիշտ է, ես այս չգնացի նրա ապարանքը հրաֆեշտ տալու կամ հայի համար խնդրելու: Թե հիվանդին կատարած այդ այցելությանս հետևանքն էր, թե ոչ, չգիտեմ, բայց կարճ ժամանակ անց հայր կարողացել էր երկրից դուրս գալ: Բավական է, որ նա ազատվել է և այսօր ապրում է Ամերիկայում:

[64.] Ուրֆայի կայանի փակումը

1922 թ. Թուրքիայում դեռևս մնացած հայերի համար բացվեցին բոլոր դարպասները: Այժմ նրանք ազատ էին երկրից հեռանալու, նույնիսկ նրանց անվերջ հասկացնում էին, որ արտագաղթեն: Եվ երբ նրանք դա չէին ուզում հասկանալ, դրան օժանդակում էին՝ նոր հալածանքների մասին լուրեր տարածելով: Ուրֆայից արդեն հարյուրավոր հայեր նախապես

փախսել էին Սիրիայի սահմանով։ Հայ բժիշկը նույնպես, որի հետ 1920 թ. իմ վերադարձից ի վեր աշխատել եմ, փախսավ սեպտեմբերին։ 1922 թ. Համար ներկայացրածն նախահաշիվը շվեյցարական իմ կոմիտեի կողմից հավանության չարժանացավ, նյութական միջոցներ չինելու պատճառով։ Ուստի ինձ տրվել էր Հիվանդանոցը փակելու կամ պահելու ընտրությունը։ Սակայն չէի կարողանում որոշում կայացնել։ Իսկ բժիշկը չէր ուզում մինչև հիմա ստացած աշխատավարձով շարունակել աշխատանքը։ Նա մեծ ծախսերի տակ էր ընկել թուրքական զինվորական ծառայությունից ազատվելու համար և այժմ ապավինում էր իր վաստակելիք դրամին։ Մենք Համաձայնության եկանք, և նրա աշխատավարձը կրկնապատկվեց։ Գործ մենք շատ ունեինք։ Վիրահատությունների համար ավելի բարձր վճար սահմանելով՝ եղավ այնպես, որ Հիվանդանոցի դրամարկղի գումարը Հուլիսի 1-ի դրությամբ ավելի փոքր չէր, քան եղել էր Հունվարի 1-ին։ Սա Ուրֆայի Հիվանդանոցի պատմության մեջ աննախընթաց դեպք էր։ Ուրիշ տեղից, սակայն, դրամական նպաստներ մուտք չէին գործում։ Հուլիսի սկզբին ես պարտավոր եղա Խարբերդ գնալ՝ ղեկավարելու որբերի տեղափոխումը, և գրեթե միաժամանակ Հիվանդանոցի եկամուտը նվազեց։ Ուրֆայի առողջապահության տեսուչը միշտ բարեկամաբար էր տրամադրված մեր կատարած աշխատանքին նկատմամբ։ Դրա մասին էլ էի ես Հոգ տանում։ Այդ նա էր, որ ինձ Հրահրեց՝ 1920 թ. Հունվարին իմ բժշկական գործնական կարողությունների վերաբերյալ հաջող Հանձնած քննության վկայականս ներկայացնելու Անգորա, որովհետև վստահ էր, որ պիտի ստանայի բժշկական գործունեությունը շարունակելու պաշտոնական թույլտվություն՝ առանց հայ բժշկի։ Ես նրան ասեցի, որ գուցե այժմ դրա ժամանակը չէ, քանի որ գիտեի, թե Թուրքիայում ինչպիսի դժվարությունների էին բախվում ամերիկացի վկայագրված բժիշկները։ Այնուամենայնիվ, տեսուչի պնդումով վկայականն ուղարկվեց, և Խարբերդում գտնվելուս ընթացքում Անգորայից եկավ պատասխան, ըստ որի՝ ոչ մի արտասահմանցի բժշկի, որն իր ուսումը չի ստացել թուրքական Համալսարանում, չէր թույլատրվելու թուրքիայում զբաղվել բժշկական գործունեությամբ։ Նույնպես, այլևս արտասահմանցիներից քննու-

թյուններ չէին ընդունվելու, ինչպես դա մինչ այժմ կատարվել էր:

Բանը Հասավ դրան, որ Հայ բժիշկը, որը պաշտոնապես մեր Հիվանդանոցի բժիշկն էր, փախավ: Դեռ ավելին, այժմ Ուրֆայից փախչում էին բոլոր Հայերը, և ամերիկացիները կնոջս ու ինձ ևս խնդրեցին՝ ստանձնել Ղազիրի որրանոցը, այնպես որ ես, ի վերջո, ծանր սրտով որոշեցի, գոնք ժամանակավորապես, լուծարել Ուրֆայի հիվանդանոցը: Մենակ այլևս չէի կարող աշխատել, իսկ կապվել թուրք բժշկի հետ, չէի Համարձակվում: Այսպես եղավ, որ մենք 1922 թ. դեկտեմբերին վերջնականապես թողեցինք Ուրֆան: 1897-ին դ-ր Լեփսիուսի առաջին միսիոներները ժամանեցին Ուրֆա, իսկ 25 տարի հետո նրանք քաղաքից հեռացան: Արդյոք Հնարավոր կլինի՞ո երրևէ այնտեղ նորից գրան խփել: Թե՞ մեկը նոմիսիոնալ հեռու ենք մնալու այդ երկրից, որին նվիրաբերեցինք մեր կյանքի լավագույն ուժերը և մեր մեծագույն սերը: Որքան քրտինք է թափվել, քանի՛ աղոթքներ են մատուցվել այնտեղ երկրի ու ժողովրդի համար այդ 25 տարիների ընթացքում:

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ. ՆՈՐ ՓՈԽ

[«Օրիենտ», 1928/5]

Թուրքիայում եղած առաջին տարիներին, ծանոթացա մի Հայուհու Հետ, որն ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց: Սակայն նա, և ես սա ասում եմ ընդգծելով՝ «գժբախտարար», իր տեսակի մեջ միակ կինն էր: Իշարկե, նա մի քիչ տարրեր-վում էր ամերիկուհիներից: Նախատում էր նրանց և պնդում, որ ինքը՝ Հայուհին «օսմանուհի» էր, և թույլ չէր տա որևէ ամերիկուհու իրեն բան սովորեցնել: Եթե ես թուրք լինեի, այդ կինն ինձ Հրճվանք պիտի պատճառեր: Եվ այսօր Համարձակ-վում եմ Հավաստիացնել, որ եթե Հայուհիների մեջ ավելի մեծ լիներ նման կանանց թիվը, որոնք, լինելով օսմանական պե-տության Հպատակներ, իրենց մի քիչ օսմանուհիներ զգային, այսօր չինք ունենա այս սարսափելի երկապառակությունը թուրքերի և Հայերի միջն: Երբ այստեղ խոսում եմ Հայերի մասին, նկատի ունեմ այն Հայերին, որոնք թուրքական կամ օսմանյան պետության Հպատակներ էին: Ցավալին այն է, որ այդ այրի կինն այսօր Եգիպտոսում է անցկացնում իր ծերու-թյան օրերը՝ որպես վտարանդի: Ի դեպ, նա մինչև պատերազ-մի վերջը Կոստանդնուպոլսում էր և Եգիպտոս գնաց միայն, որովհետև նրա դուստրն այնտեղ էր: Եվ երբ ես մեկ տարի ա-ռաջ խոսեցի նրա Հետ, նա դեռ շարունակում էր թուրքերին թեկ տակ առնել և այն կարծիքը Հայունել, որ իր ազգակից-ները՝ Հայերը, նույնպես ճիշտ չեն վարվել թուրքերի Հանդեպ: Սա խոստովանանքի պես մի բան է, որը թեև մերթընդմերթ, սակայն դեռ ոչ բավարար Հաճախականությամբ, կարելի է լսել Հայ վտարանդիների շրջանակներում: Ինչքան շատ լինեն նման խոստովանողներ, այնքան ավելի արագ իրար կմոտե-նան թշնամի երկու եղբայրները: Ի՞նչ եմ ասում, եղբայրները: Թուրքը և Հայը եղբայրները: Այո՛, եղբայրներ, եղբայրներ Հա-կառակ սոսկալի վիճին, որը 1860 թ. սկսեց բացվել նրանց միջև, և Հակառակ 1915-1916 թթ. և դրանից Հետո տեղի ունեցած զարհուրելի իրադարձություններին: Այդ նրանք չե՞ն, որ մուտ մեկ Հազարամյակ իրար Հետ Հաց են կերել, միմյանց վրա Հոյս-դրել, և որ ամենակարևորն է՝ իրար Հետ լավագույն Հասկաց-

վել, չնայած կրոնների տարրերության: Իհարկե, դարերի ընթացքում հաճախ են հայերը թուրքերի կողմից մնշման ենթարկվել: Սակայն մնշումը մեծ մասամբ չի եկել վերևից, այլ սնուցվել է փոքրողի մարդկանց կողմից, որոնք չեին հանդուրժում հնարամիտ, խելացի, ամեն տեսակի աշխատանքի մեջ նարտար հայերին: Ինչպես ցուց է տալիս պատմությունը, իրադրությունը փաստորեն վատթարացավ միայն վերջին հարյուրամյակում: Շատ ժողովուրդներ, որոնք մինչ այդ օսմանյան տիրապետության տակ էին, անկախացան, այսպես ազատագրվեցին Ռումինիան, Սերբիան, Բուլղարիան և Հռոմանաստանը: Անշուշտ այդ ժողովուրդների անկախության հասնելը նպաստեց այն բանին, որ Հայ ժողովրդի մեջ վերստին գորացավ՝ 11-րդ դարում օսմանների տիրապետության տակ անցնելուց ի վեր, ազատ Հայաստանի երրեք չխամրած փափազը: Իսկ Հայերը մինչև օրս մյուս բոլոր ոչ մահմեղական ժողովուրդների թվում թուրքերի նախասիրած տարրերն էին: Եթե դրսից, Հատկապես Ռուսաստանից եկող, փոքրիկ կայծները Հայերին չբորբոքեին, չեին լինի 1895-ի, 1909-ի և 1915-ի սոսկալի իրադարձությունները: Զե՞ս որ այսօր էլ կա Հայերի, թեև նվազող, մի խումբ, որը, ինչպես վերևում նշվեց, խոստովանում է. «Եթե մենք 1914-ին Հավատարմորեն թուրքերի կողմը բռնեինք, այսօր մենք թուրքերի սիրելիները կինեինք: Սակայն Հավատարմորեն թուրքերի կողմը բռնելու փոխարեն, նրանց, որոնց մենք դարեր ի վեր պատկանել ենք, մենք եվրոպացիներին լսեցինք, որի հետևանքով գրեթե ամբողջովին ընածնջվեցինք»:

Աշխարհամարտից հետո՝ նրան մասնակցող ժողովուրդներին ոչինչ այնքան չի գրգռել, որքան մեղավորության հարցը: Սակայն ժողովուրդների հաշտեցմանն էլ ոչինչ այնքան չի նպաստի, որքան մեղքի մասին հարցադրումին անկանխակալ պատասխան տալը և դրա հետ կապված անհրաժեշտ մեղքի ձանաչումը: Այդ իսկ պատճառով Հայերի համար էլ այնքան ցավոտ չպետք է լիներ՝ խոսել մեծ իրադարձություններին ունեցած իրենց որոշ մեղակցության մասին: Եկեք ընդունենք, որ պատիվը միշտ վայել է ճշմարտությանը, ինչքան էլ որ այն դառը լինի: Ապենցելերցին շատ դիպուկ կերպով ասում է «Zom Zanke tönd zwee seeh.» (Վեճը պետք է երկու կողմ ունենա):

Այսինքն՝ երկու կողմն էլ մեղավոր է: Նույնը վերաբերում է և այս երկու ժողովուրդներին, որոնց համաշխարհային պատերազմն անսահմանորեն իրարից հեռացրեց: «Թող Հայերը մտնեին թուրքերի դրության մեջ և իրենք իրենց հարց տային, թե ի՞նչ կանեին \ կենաց ու մահու պայքարում՝ իմանալով, որ իրենց սեփական ժողովրդի մի հատվածը՝ մոտ երկու միջյուն թուրք, պահանջում էր ոչ այլ ինչ, եթե ոչ Հայերի կործանումը»: Սակայն վերը նշված խոստովանությունը պետք է զանակ թուրքերի կողմից: Դեռ աշխարհամարտի ընթացքում շատ թուրքեր ինձ ասում էին, որ պատիմը չափից գուրս դաժան էր: Եվ եթե մենք այսօր մեզ հարց տանք, թե այդ ինչպես պատահեց, որ մահվան դատապարտված այդ արտորյաններից այսօր մոտ 80.000 կին ու երեխա ողջ է մնացել, ապա մենք պարտավոր ենք և իրավունք ունենք դա վերագրելու մահմեղականներին, իսկ նրանց թվում ոչ միայն քրդերին ու արարներին, այլև Անատոլիայում ապրող Հազարավոր թուրքերին: Նրանք պարզապես ի վիճակի չէին և չէին կամենում կատարել զեկավարների խիստ հրամանները և որոնելով փրկության ուղիներ՝ ներս էին առնում և թաքցնում վտարանդիններից, ում որ կարողանում էին: Սա նույնպես հարկ է երախտազիտությամբ ճանաչվի Հայերի կողմից: Նման ճանաչում իր հերթին ճանապարհ կհարթի Հաշտեցման համար: Հազարավորների փրկությունը մահմեղական բնակչության կողմից մի արարք է, որը ցույց է տալիս, որ նրանք գիտակցորեն ընդունում էին Հայ ժողովրդին պատուհասած անարդարությունը: Սակայն Հաշտեցման կամ փոխարմբունման հասնելու համար, իրենք՝ ժողովուրդների զեկավարները և ոչ միայն ստորադրյալները, պետք է դառնան իրենց մեղքը ճանաչողները: Կա՞ն նրանց մեջ այնպիսինները, որոնք պատրաստ են խոստովաններու: Դժվար է թուրքիայից դուրս գտնվելով ասել, թե այդ իմաստով ինչպիսին է Հավանականությունը թուրք առաջնորդների շրջանում:

Քանի որ 1922/23 թի. Մուստաֆա Քեմալի վարչակարգի օրոք, թեկուղ փախուստի ձևով, տեղի ունեցավ Հայերի արտագաղթը, նրան անհնարին է դասել այն առաջնորդների թվին, որոնք կարգադրել են Հայ ժողովրդի տեղահանումն ու ոչնչացումը: Այլապես Փրանսիացինների հեռանալուց հետո նա թուրքական տարածքներում հեղտությամբ կարող էր հայերին

վերջին հարգածը հասցնել: Բայց նա դա չարեց: Սակայն նա նրանց արտագաղթել տվեց: «Թող գնան, եթե չեն ուզում օսմաններ լինել»: Թուրք-սիրիական-իրաքյան և պարսկական սահմանի երկայնքով մեր վերջերս կատարած ճանապարհության ընթացքում շարունակ լսում էինք, որ թուրքական տիրապետության տակ գտնվող քրդերին ներում է շնորհվել, որ նրանց թույլատրվում է պահել իրենց լեզուն և իրենց գլխանոցը (շատ կարևոր): Եթե սա իրողություն է, ապա պետք է մտածել, որ թուրքական քաղաքականությունը վերափոխման չափազանց մեծ կարիք ուներ, քաղաքականություն, որն ուզում էր երկիրը վերակառուցել, սակայն կառուցելու փոխարեն շարունակ քանդում էր (օրինակ՝ ոչ զուտ թուրքական տարրերի բացառումը երկրից): Այդ դեպքում երկու տարրերի՝ թուրքերի և Հայերի, վերահաշտեցմանը այլևս շատ բան չի խանգարի: Թեև լսում եմ թուրքերի հետևյալ խոսքերը. «Մենք Հայերին այլևս չենք ուզում, հիմա որ նրանք արդեն դրսում են, որքան էլ որ նրանց կարիքն ունենք մեր ամայացած երկիրը վերակառուցելու համար. չէ՞ որ, միևնույն է, նրանք շարունակելու են մեկ աչքով դեպի Եվրոպա նայել և այնտեղից օգնություն սպասել, որն ուղղված կլինի մեր վարչակարգի դեմ»: Սա մեզ Հանգեցնում է մեկ այլ խնդրի, որն անպայման պետք է Հայթահարվի, եթե մեր նպատակը փոխըմբռնումն է: Հայացքի մշտական ուղղումն է դեպի Եվրոպա, Ամերիկա, ինչպես նաև այն Հույսը, որ Հայ ժողովուրդը 1860 թ. ի վեր դնում է Եվրոպայի վրա: Օգնի՛ր ինքդ քեզ, և Աստված քեզ կօգնի: Բայց օգնությունն մի՛ փնտրիր մեծ տերությունների մոտ: Սպասելի էր, որ դրանից Հայերը վերջապես բուժված պետք է լինեին: Մի՞թե դա այդպես է:

1902 թ. էր: Ամերեկից Խարբերդ տանող ճանապարհի վրա էի: Մեծ քարավանի մեջ կային նաև Հինգ Հայեր, որոնք բոլորն էլ լավ անզլերեն էին խոսում: Դրա վրա դարմացած՝ ես նրանց Հարցը, թե որտեղից էին գալիս և ուր էին գնում: Նրանք վերադառնում էին Ամերիկայից, որտեղ անց էին կացրել վերջին տասը տարին: Նրանք գնում էին իրենց Հայրենիքը, Խարբերդ:

- Ի՞՞նչ է, - ասացի ես, - վերադառնում եք այդ ազատ պետությունից, որտեղ ամեն օր կյանքի ապահովություն եք

1. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
2. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
3. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
4. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
5. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
6. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
7. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
8. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
9. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
10. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
11. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
12. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
13. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
14. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
15. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
16. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
17. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
18. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
19. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*
20. *Contra* *adversarios* *deinde* *ad* *propositum* *de* *rebus* *publicis*

քիան պետք է որ ի վիճակի լիներ այն բավարարել, թե կուզ իր սեփական օգտի համար: Սակայն որտեղ էլ որ Հարցնում եմ, թե ինչպես էին Հայերն իրենք պատկերացնում իրենց ապահովությունը, միշտ դեմ էի առնում հին չարիքին. մարդիկ չեն ուզում, չեն կարող թուրքերին վստահել, և միայն եթե մի մեծ տերություն երաշխավորեր իրենց ապահովությունը, սիրով կվերադառնային: Ինչպիսի անմիտմար վիճակ: Մի՞թե Հայերը դեռ չեն բուժվել այդ խենթ պատկերացնումից, թե մեծ տերությունների կողմից կարելի է ինչ-որ բան սպասել: Բնական է, որ ով այդ մտքից չի կարող հրաժարվել, նոր Թուրքիայի ներսում անելիք չունի: Թող նա մնա դրսում և մաշվի Հայրենիքի կարուտից:

Իսկ եթե Հայը սթափվի, հիշի այն տարիները, երբ նա «եղբայրաբար յուա էր գնում» թուրքերի հետ, հիշի, որ ինքը, ինչպես ուրիշ ոչ մեկը, Հարյուրամյակներ շարունակ կարողացել է թուրքի հետ լեզու գտնել: Եթե Հայն այսօր էլ դա անելու ի վիճակի լիներ՝ ամբողջովին ձերբագատվելով դրախ ժողովուրդների վրա ունեցած վնասակար հույսից, նա կլիներ նոր Թուրքիայի մարդը: Այնժամ կարելի պիտի լիներ իրական ձեռվ կրկնել 1908 թ. կատարվածը, երբ սահմանադրության ընդունման ժամանակ թուրքերն ու Հայերը գրկախառնվեցին: Սակայն անսահման դժվար է մոռանալ դաժան տառապանքները, որ ապրեց ժողովուրդը, վստահելով թուրքի՝ մի ինչ-որ պահին տված խոստումին, «Որ նման բան այլևս երթեք տեղի չի ունենա, որ Հայի կյանքը նույնքան ապահով կլինի և կմնա, ինչպես ամեն օսմանցունը»: Իհարկե, մոռանալու համար նախ պետք է ներել: Իսկ դա շատ դժվար է որևէ մեկի համար, ով չի առաջնորդվում աստվածային կամքով:

Քանի՞ անգամ պետք է ներեմ իմ եղրորը, յոթ անգամը բավական է: Այս Հարցը տվեցին աշակերտները Տիրոջը, և մենք գիտենք պատասխանը. ոչ թե յոթ, այլ յոթանասուն անգամ: Որտեղ մուտք է գործում ներումը, այնտեղ սկիզբ է առնում մոռացումը, իսկ որտեղ ծայր է առնում մոռացումը, այնտեղ կարող է սկիզբ առնել նոր վստահությունը: Իսկ մոռանալը պիտի դյուրին է, եթե մարդ ինքն իրեն կարողանա ասել՝ ես նույնպես մեղսակից եմ մեզ բաժին հասած դժբախտությանը: Ո՞վ է ուզում այսուհետև առաջնը մեկնել, օսման քրիս-

տոնյա՞ն, թե՞ օսման մահմեղականը: Երկուսդ էլ իրար ձե՞ռք
մեկնեք, իրար հետ համաձայնվե՞ք ու վերստին գտեք միմյանց,
որպեսզի ավերակներից նոր կյանք բարձրանա և որպեսզի
անարդարությունն էլ շտկվի:

Կարմիր մահիկի օգտին

[«Քրիստոնյա Արևելքը», 1920]

Երբ պատերազմը բռնկվեց և Թուրքիան նույնպես ներքաշ-
վեց նրա մեջ, կինս որոշեց Ուրֆայի կանանց շրջանում ի
նպաստ «Կարմիր մահիկի» դրամահավաք կազմակերպել:
«Կարմիր մահիկը» միջազգային Կարմիր խաչի մի ճյուղն է:
«Խաչ» բառը գրեթե ատելի է մահմեղականի համար, քանի որ
այն քրիստոնյաների խորհրդանիշն է: Դրա համար մահմեղա-
կաններն իրենց Կարմիր խաչի հաստատությանը տվել են
«Կարմիր մահիկ» անունը: Կանանց շրջանակներում նման
դրամահավաքը Ուրֆայի համար բոլորովին նոր, չլաված բան
էր: Կնոջս համար պարզ էր, որ նա մենակ ի վիճակի չէր լինելու
այցելել քաղաքի բոլոր կանանց. ուստի նա դիմեց մի քանի
երեսելի Հայ կանանց: Նրանք էին, որ անցկացրին դրամահա-
վաքը քրիստոնյա կանանց շրջանում: Իսկ մահմեղական կա-
նանց, դա ակնհայտ էր, կինս պիտի այցելեր, եթե նրանցից
ընդհանրապես կարելի էր ի նպաստ դրամահավաքի ինչ-որ
բան ստանալ: Կասկած չկա, որ բնիկ քրիստոնյա կանայք
մահմեղականների դռներից պիտի վոնդվեին:

Սակայն բոլոր մահմեղականների տները հասնելու համար,
կինս պետք է փնտրեր երեսելի և Հայտնի մի թրքուհի: Այդպի-
սին էր Էմինե խանումը, որը չորս օր շարունակ առավտոյան
ժամը ութից մինչև երեկոյան ժամը վեցը նվիրվածությամբ
ուղեկցեց կնոջս տուն: Զմեռ էր և անձրեսների ծանր
շրջան: Այդ երկու կանայք կեսօրվա կողմը արդեն թրջված էին
լինում: Տներից մեկում նրանց փոխելու համար տաք գուլպա-
ներ էին տվել, իսկ թացերը չորացրել էին ածուխի վառարանի
վրա:

Առաջին օրն իսկ պարզվել էր, որ Էմինե խանումը ոչ բոլոր

մուսուլմանական տներն էր ճանաչում. այդ իսկ պատճառով ժողովրդի միջից մի արար կին ներգրավվեց: Այնուհետև ավելացավ նաև Հոգեպես կիսահիվանդ մի քրդուհի, որի մասին ստորև գետ կանդրադառնանք: Այսպիսով, չորս կանայք շրջում էին տնից տուն և ծեծում դռները՝ ի նպաստ «Կարմիր մահիկի»: Շատ տներում անմիջապես Հասկանում էին նրանց գալու նպատակը: Արևելքի սովորության Համաձայն կինս չատ զովսասանքներ էր լսում. չէ՞ որ նման բան ղեռ ոչ մի կին չէր Համարձակվել անել, մանավանդ մի օտար կին, որը, ըստ իրենց տեսակետի, կապ չուներ թուրք զինվորների հետ: Շատ կանայք էլ բացեիրաց իրենց ասելիս են եղել, որ իրենք ոչինչ չէին տալու, եթե կինս Համոզիչ ձեռվ չերաշխավորեր, որ վիրավոր զինվորների Համար Հավաքված գումարը տեղին էր օգտագործվելու:

Տներից մեկում աղքատ մի թրքուհի մեծ ոգևորությամբ կանանց սուրճ և թխվածք է Հյուրասիրել: Դրա հետ մեկտեղ Կարմիր մահիկին նաև մի փոքրիկ նվիրատվություն է արել:

Որոշ տեղերում կանանցից որևէ բան ստանալու համար, Համոզարարություն էր պահանջվում: Ստիպված էին նույնիսկ դիմել տհաճ վկայակոչումների, ինչպես օրինակ. «Դուք պատերազմում որդի չունե՞ք: Ի՞նչ, եթե նա վիրավորվի և նրան վիրակապելու ոչինչ չինի»: Նման ակնարկներից հետո պատահում էր, որ կանայք սարսափելի անեծքներ էին թափում պատերազմի, նույնիսկ սուլթանի և գերմանացիների կամ պարզապես թշնամու հասցեին: Ուրիշ կանայք էլ կարծում էին, որ դրամահավաքը գերմանացիների Համար է և չէին ուզում աջակցել: Կամ էլ պահանջում էին նվիրատուների ցուցակը տեսնել և Հավաստիանալ, որ այն ներկայացվելու էր նահանգապետին, որի դեպքում վատ տպավորություն կթողներ, եթե նրանց անունն այնտեղ չիներ:

Էմինե խանումը ձգտում էր նաև ապացուցել, որ ինքը Հավաստացյալ մահմեղական էր, որովհետև նա երբեք ճաշի և ետճաշի աղոթքները բաց չէր թողնում: Պատահում էր, որ այցելած մեկ տանը ջուր էր խնդրում և իր լվացման արարողությունն էր կատարում, իսկ մյուս տանը աղոթքն էր անում:

Տներից մեկում տեղեկանալով, թե ինչ էին ուզում այդ կանայք, նրանց սոսկալի անեծքներով դուռն են ցույց տվել:

Սակայն կինս այն մարդկանցից չէր, որ իրեն որևէ տեղից վոնդեին: Այստեղ նա ասել է. «Hitsch olmass 'sa bir kahwe werin!» (Չկա, չկա, գոնե մի բաժակ սուրճ տվեք:) Սուրճը մերժել չեն կարողացել, իսկ սուրճ խմելիս, այցելության նպատակի մասին լրացուցիչ կարևոր բացատրություններ ստանալուց հետո, այստեղ նույնպես, մյուս տների նման, ընդունել են, թեկուզ և բավական փոքր, նվիրատվություն:

Քանիցս եղել է, որ այցելու կանայք օրհնենքի խոսքերով են ողողվել: Նվիրատուններից ոմանք որդիներ ունեին պատերազմի դաշտում, և Հաճախ նվերը Հանձնելու պահին մայրերի այտերով արցունքներ են գլորվելիս եղել:

ԱմենաՀարուստ, սակայն ոչ ամենաՀարգարժան տներից մեկում տանտիրուհին դժկամորեն մեկ ֆրանկ է նվիրել: Կինս դրամը վերադարձրել է Հետևյալ բառերով. «Սա շատ քիչ է. դուք Ռերֆայի ամենաՀարուստներից եք, ձեզ Համար ինչ պիտի լիներ մեկ ուկեղրամ տալը վիրավոր զինվորների օգտին»: Այդ պահին վրա է Հասել թուրք ամուսինը: Նա ՀայՀոյել է կնոջս, ասելով. «Geberesin!», այսինքն՝ «Գնա՛ սատկիր»: Կինս պատասխանել է նրան. «Եթե Դուք դրանով նկատի ունեք մեռնել, ապա մտածեք այն մասին, որ դուք ծեր մարդ եք և գուցե ինձանից առաջ Ձեր հերթը Հասնի: Սակայն ես Ձեզ մահ չեմ ցանկանում, այլ երկար կյանք, որ դուք կարողանաք նման նպատակների օգտակար լինել, քանի որ դեռ ժամանակ կա ողորմածության Համար»: Գյավուր ամբոխի Հասցեին ՀայՀոյանք թափելով, մարդը երկու ֆրանկանոց է նետել կնոջս ոտքերի առաջ: Քրոյւհին վերցրել է ստակը և այն իրեն պահել, քանի որ կինս չի ցանկացել այդ դրամը դնել մյուսների Հետ:

Այդ շրջագայությունների ընթացքում կնոջս Համար բարոյական Հենարան էր դարձել Հատկապես վերոհիշյալ քրդուհին, որի անունը Զուրհա էր: Նա՛ իր մտավոր կարողության Հաճախակի խանգարումների պատճառով, մահմեղականների շրջանում Համարվում էր մի տեսակ սուրբ, ինչպես նրանք ընդհանրապես բոլոր Հոգեկան Հիվանդներին էին դիտում որպես սրբություն: Զուրհան այրի էր, չուներ իր սեփական երեխաները: Սակայն նա ներս էր առնում օտար երեխաների: Հաճախ փոքր երեխաներին լրում են մզկիթների բակերում: Զուրհան դառնում էր այդ երեխաների մայրը: Այդ օրերին նա այդպիսի

Երեք երեխա ուներ, այդ թվում մի ծծկեր, որին նա՝ Կարմիր մահիկի օգտին ընթացող դրամահավաքի ժամանակ իր Հետ էր տանում: Նա երեխային կերակրել էր տալիս մեկ այս, մեկ այն կնոջ մոտ, ինչպես ընդհանրապես բոլոր երեխաների համար ուտելիքն և հագուստը մուրալով էր հայթայթում: Ով Կարմիր մահիկի դրամահավաքին քիչ էր տալիս, նա նրա վրա ֆշացնում էր և հանդիմանանքով ասում, որ ալլահը նրան ժլատության համար անպայման կպատժի, և քանի որ հատկապես կանայք էին վախենում սուրբ Զուրհայից, նվիրատվության գումարն ավելացնում էին:

Այդ դրամահավաքի մասին պետք է ասել, որ այն բավականին լավ արդյունք ունեցավ: Մենք կարողացանք դրանով 1500 ֆրանկի վիրակապ և դեղորայք գնել և 1914 թ. վերջերին դրանք ձիերով հասցնել Վանի ռազմաճակատ: Մեզ հայտնի չէ, թե ուրիշ քաղաքներում էլ կանայք կազմակերպել են դրամահավաք՝ ի նպաստ Կարմիր մահիկի: Կինս, սակայն, շատ գուշ էր դրամահավաքի ընթացքում հավաքած փորձից և կատարած դիտարկումներից: Նա հարուստ պատկերացում կազմեց թուրքական հարեմների մասին, իսկ մահմեդական կանանց համար քրիստոնյա մի կնոջ կատարած այդ գործը մի բան էր, որ նրանք դեռ երկար պիտի հիշեն:

Բազել, Շյոնբայնշթրասե 36, 26 ապրիլի, 1920 թ.

Պարոն դ-ր Յոհ. Լեփսիուսին
Պոտսդամ

Սիրելի, Հարգարժան պարոն դոկտոր,


Ահա զրի եմ առել իմ «Տպավորությունները» և ուղարկել թեմիկել հրատարակչություն: Քանի որ մինչև օրս դեռ երեք զիրք չեմ հրատարակել, Ձեզ եմ դիմում խնդրելով օգնություն և խորհուրդ: Հաճեցե՞ք մեկ անգամ կարդալ ձեռագիրս: Կարծում եմ, որ դրա մեջ շատ բան կլինի, որ ձեզ մեծապես կհետաքրքրի: Թե դրանից հետո ինչպես կհրատարակվի այս փոքրիկ աշխատությունը, Դուք ամենից լավ կիմանաք: Թե դա կլի-



Նկար 1. Ուրֆան 20-րդ դարի սկզբին՝ Ակարված Քալեի կողմից: Ահետքոնում՝ Հայ Առաքելական եկեղեցին, Ակարի աջ անկյունում՝ Ուլու Զամի աշտարակը (անցյալում՝ Սուրբ Սունիփաննոս եկեղեցի): Բողոքականների նկեղեցու աշտարակը Ակատելի է ձախ կողմի նույնում:



Նկար 2. Երիտասարդ Յակոր Քյունցլերը Ուրֆայի միսիոներական Բիկվանդանոցում արար բնդվիճին Էլեկտրական հոսանքով բուժություն անցկացնելու ժամանակ:



Նկար 3. Որփա քաղաքի հատակագիծը 1900-ական թթ.: Հիմ Որփան
շրջապատված էր պարիսպներով, որոնք ունեին վեց դարպաս: Սամսատի
դարպասն առաջնորդում էր դեպի հյուսիս՝ «արդիական քաղամասների»
արվարձանը, որտեղ դարասկզբին միախնդրական զանազան շնչեր են
կառուցվել: Հայ Առաքելական մեծ եկեղեցին (K) գտնվում էր նոյն Զամիրից
(Dj.=մզկիթ) հարավ-արևելքը: Գերմանական գորգագործարանից (Teppich-
fabrik) արևմտուր ձգվում էր Հայկական քաղամասը, որը հասնում էր մինչև
քաղաքի արևմտյան ծայրը: Այստեղ էր գտնվում նաև բողոքականների
եկեղեցին (P) և երան անմիջապես կից՝ Ամերիկյան առաքելությունը: Հայ-
կական քաղամասից արևելք մասմասականների քաղաքամասն էր, որն ընդ-
գրկում էր նաև ասորիների քաղաքը: Հարավ-արևելքում՝ շուկային (Bazar)
կից, մրեաների տներն էին (Ըստ Սամոնի Գյալքի, Samuel Guyer, Reisen in
Mesopotamien, in: Dr. A. Petermanns Mitteilungen, Gotha 1916):



Նկար 4. Հիվանդների տեղափոխում Ռիֆա՝ միսիոներական հիվանդանոց (1912 թ.): Հիվանդները բուժվելու էին գալիս՝ կտրելով մինչև ութ օրվա ճանապարհ:



Նկար 5. Միսիոներ բժիշկ Անդրեաս Ֆիշերի՝ հիվանդների ընդունելության օրվա մի պահ Բայլական Գարմուջ գյուղի նկնդեցում (1909 թ.):



Նկար 6. Քյունցինքի և Ֆիշերի հավատարիմ ծառա Ալին (1909 թ.): Պատերազմի ընթացքում տեղափոխման ծառայությունները մասուցելով՝ Ալին փրկել է բազմաթիվ հայերի կյանքը և ոչ ոքի չի մատնել՝ շնայած թուրքական իշխանությունների կողմից կրած խոշտանգումներին:



Նկար 7. 1915 թ. աշնանը թուրքական զինված ուժերի կողմից քարուքանդարված արված՝ Ռիֆայի Հայկական թաղամասը, որը նետագա տարիներին նաև ամրողջովին թալանվել է:



Նկար 8. Ռուբայլի Ծվեյցարական միսիոներական Բիբանդանոցի մի քանի
հայ Բիբանդանը (1919 թ.):

–որու համեմատած և պատճեն քառակի բառական ան առաջ առաջ գումարը



Նկար 9. 1922-ին «Մերձարևելյան ճագատամատույց» (Near East Relief) կազմակերպության Բանձնաբարությամբ Յակով Քյոնցլերը կազմակերպեց մոտ 8000 ոռացած քրիստոնյա երեխաների տեղափոխումը Միհրի՝ արևելյան և կենտրոնական Թուրքիայից, որտեղ ազգայնական աշխարհազորն անցկացրել էր «Էքնիկ մաքրագործումներ»։ Նկարում՝ երեխաների ջորիներով տեղափոխումը գնտակի վրայով։



Նկար 10. Բնումասար մեքենաներով կուլյոների և անդամակույժների տեղափոխումը (1922 թ.)։



Նկար 11. Ուրֆայի որբանոցի 130 տղաների ու աղջիկների մի խումբ՝ դեպք
Հալեպի արտօգաղթելիս: Երկու օրվա ճամապարհ անցնելուց հետո կնոօրվա
դադար ջուր նղած մի վայրում:




Նկար 12. Որրուկների մի խումբ իրենց առաջին կանգառի ժամանակ Ուր-
ֆայից Բարազ-արևմուտքում գտնվող Սուրուց քրդական գյուղի մի իշխա-
նատան առջև (4 ապրիլի, 1922):

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՎԱՏԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



Նկար 13. Մեծ մայրիկ Ծղիսաբեթ և մեծ հայրիկ Յակոբ Քյունցլեր-Բենդեր-
Շերը իրենց թոռնիկի և շվեյցարացի հյուպատոս Կառլ Լուցի (Carl Lutz) ու
նրա տիկնոց՝ Գերտրուդի հետ, Զաֆայում (Պաղեստին, 1937 թ.): Յակոբ
Քյունցլերը Կառլ Լուցի համար օրինակ է ծառայել ցեղասպանության պայ-
մաններում պատասխանատվություն ստանձնելու հարցում: Հետագայում
Կառլ Լուցը հայտնի դարձավ 1944-ին տասնյակ հազարավոր հումքարացի
Բրենեների փրկության համար ծավալած իր խիզախի գործունությամբ: Յակոբ
Քյունցլերն ու Կառլ Լուցը հայրենակիցներ են. նրկում էլ սերում են Ապենցել
կանոնի Վալցենհամառուցեն գյուղից (Walzenhausen in Appenzell):



նի գրքույկի, թե՞ գրքի տեսքով, թե ի՞նչ գնով կվաճառվի, թե Հրատարակությունը կստանձնի ծախսերը, թե՞ ես եմ նախ հոգալու ամբողջ ծախսը և այնուհետև դրամական մուտքը կփոխանցվի ինձ, այս ամենը բաներ են, որ ես չգիտեմ: Այդ բոլորը Զեզ եմ թողնում, քանի որ Դուք հիրավի այդ գործում մասնագետ եք: Նատ պիտի ցանկանայի ինքս մտցնել տպագրության համար վերջնական ուղղումները՝ նախքան Արևելք մեկնելս: Մեկնելու եմ հունիսի սկզբին: Դա պետք է նկատի առնվիտ: Կամ էլ ուղղումներով պետք է գրաղվի մեկ ուրիշը, մի բան, որ գրքում տեղ գտած բազմաթիվ անունների պատճառով շատ աննպաստ պիտի լիներ:

Հուսով եմ, Դուք լավ եք: Արդյոք կրկին Շվեյցարիա կդա՞ք: Վստահարար ոչ, քանի մենք երկրից դուրս ենք: Ներկայումս կինս և ես պարտավորվել ենք ստանձնել ազատ Հայաստանում որբերի հետ տարվող աշխատանքների շվեյցարական հաստատության հիմնումը: Առաջարկել եմ այնտեղ ներառնել նաև հողագործություն, գյուղատնտեսություն և արդյունաբերություն: Կստանամ անհրաժեշտ աշխատումը: Սակայն ինքս գործը միայն ղեկավարելու եմ, և կինս է, որ ստանձնելու է աշխատանքի առյուծի բաժինը, քանի որ ես ավելի քան երրոք հավատարիմ եմ մնալու բժշկական մասնագիտության: Բայց որտե՞ղ է լինելու ազատ Հայաստանը: Հուսով եմ մոտակա օրերին հանդիպել Ահարոնյանին¹ և նրա հետ քննարկել ամեն ինչ:

Սաֆեղում անզլիացիները խլել են քենուս՝ տիկին Մաասի տունը:

Ապագայում հետևելու եմ նաև Արևելքում Զեր ձեռնարկած աշխատանքներին և որտեղ կարող եմ, դրանց աջակցելու եմ: Ես դա Զեզ հավաստիացնում եմ:

Մեր որդուն տեղափորել ենք Շիրսի ուսումնադաստիարակչական հաստատության մեջ, որտեղ նա նախ կավարտի ուսալական դպրոցը, ապա կանցնի տեխնիկական դասընթաց-

¹ Ավետիս Ահարոնյան (1866-1948), բանաստեղծ և բժիշկ, Հայաստանի Հանրապետության (1918-1920) ըրջանում պետական գործիչ: Մահացել է վտարանդիության մեջ:

Ները և դրանք ավարտելուց հետո կընդունի Ցյուրիխի պոլի-
տեխնիկականը:

Գրում եք, որ մտադիր եք դառնալ Ռուֆայում դ-ր Ֆիշերի
և իմ տան գնորդը: Սակայն դա Հանձնարարելի պիտի լիներ
միայն այն դեպքում, եթե վստահ լինեիր, որ Զեր աշխատանքն
այնտեղ շարունակելու Հնարավորություն կունենաք: Դրանում
Համոզվելու համար երկար ժամանակ է պետք: Մինչև աղաս
Հայաստանի ստեղծումը, կարելի է ենթադրել, որ Ռուֆայում
Հայերի միայն Հետքեր մնացած կլինեն, որոնց Հետ այլևս
անկարելի է գորգագործություն զարգացնել: Իսկ մուտքման
ընակլությունն այն աստիճան է կրճատվել, որ գործարանային
աշխատանքի համար շատ քիչ ուժեր են մնացել:

Նաև պետք է հաշվի առնեք, որ գորգարդունարերության
վերսկումն այնտեղ մեծ դրամագլուխ կապահանջի: Երանի
թե ես այդ ամենը կարողանայի տեսնել ավելի պայծառ գոյ-
ներով:

Ես նախ գնալու եմ Ռուֆա՝ այնտեղ պետք է լուծարեմ Հի-
վանդանոցը և ապա Հնարավորինս չուտ Հայաստան մեկնեմ:
Սակայն թե ուր, ինչպես նշել էի, դեռ Հայտնի չէ: Խաղա-
ղության պայմանագրի կնքումը միայն պիտի կարողանար
որոշ լուս սփոռել մեր գնալիք տեղի վրա: Եթե Հնարավոր է, դա
պետք է լինի մի վայր, որտեղ ներկայումս չկա և հետագայում
էլ չի նախատեսվում ավետարանական մեկ այլ միսիոներու-
թյուն:

Ինձ Հետ կտանեմ Գրիգոր Գրիգորյանին²: Նա մեր աշխա-
տանքում հարկավոր կլինի:

Զերմ, սրտագին ողջույններ կնոջս կողմից և Զեր նվիրյալ

եղ[բայր] Յակոբ Քյունցլերից

² Ռոդին հայ ավետարանական հոգևորական Պետրոս Գրիգորյանի, որը
Ռուֆայում աշխատել է որպես որբանոցի վերակացու և նահատակվել 1915
թ., Գրիգոր Գրիգորյանի մայրը և քույրերից մեկը տեղահանվել են: Առաջին
աշխարհամարտից առաջ Գրիգոր Գրիգորյանը գնացել է Գերմանիա՝ Բրես-
լաուտմ մեքենաշինություն սովորելու: Պատերազմի ընթացքում ուսումն
ընդհատելուց հետո՝ ստիպված է եղել ապրուստը Հայթայթել որպես գործա-
վոր: Զպետք է շփոթել «Գերմանական առաքելություն Արևելքում» կազ-
մակերագության հետ առնչվող՝ Բուլղարիայի պատվելի Գրիգորյանի հետ:

ՅԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐԻ Մատենագրության ընտրանի

Քյունցլերի մանրամասն, թեմաներով դասավորված մատենագրությունը բերված է «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» աշխատության մեջ (Երևան, 2008, էջ 90-97): Քյունցլերի շուրջ 160 հրապարակումները ամբողջությամբ ներկայացված են Լեփսիուսի պարբերաթերթերում և «Գերմանիան, Հայաստանն ու Թուրքիան 1895-1925, Մյունխեն, 1998» աշխատության մեջ (Հր. Մայսներ, Արսել, էջ 554-556, 569, 577, 595, 614, 616 և 620 = (Lepsius-Zeitschriften, Hermann Goltz, Axel Meissner, Hg. Deutschland, Armenien und die Türkei 1895-1925, München 1998, S. 554-556, 569, 577, 595, 614, 616, 620): Պետք է նշել չորս պարբերաթերթ՝ «Der Christliche Orient», «Mitteilungen aus der Arbeit» և «Der Orient», «Orient im Bild» (այստեղ տեղ են գտել նաև Քյունցլերի կնոջ և նրա դուստր Մարիայի K. G. Saur հրատարակչության կողմից:

“Allerlei Reiseerlebnisse” [Ճանապարհորդական դանազան արկածներ], in: Der Christliche Orient, 2. Jg., Potsdam 1901, S. 136-140.

“Ein Nomadenfürst Mesopotamiens” (der Kurde Ibrahim Pacha) [Միջազնաքի վրանարնակ իշխանը (Քուրդ Իբրահիմ Փաշան)], in: Der Christliche Orient, 2. Jg., Potsdam 1901, S. 65-70.

“Die neue Zeit” [Նոր ժամանակները], in: Der Christliche Orient, 12. Jg., Potsdam 1911, S. 24-29.

“Die Türkei und Armenien” [Թուրքիան և Հայաստանը], in: Neue Schweizerische Zeitung, 1. Jg., Nr. 104, 20.1919.

“Beobachtungen über Kriegskrankheiten in Mesopotamien” [Դիտարկումներ Միջազնաքում տարածված պատերազմի հիվանդությունների մասին], in: Die ärztliche Mission, 10. Jg., Heft 2, 1919, S. 33-45.

"Aufteilung der Türkei" [Թուրքիայի մասնատումը], in: Appenzeller Zeitung, 1. Jg., Nr. 104, 20. 12. 1919.

"Allerlei Reiseerlebnisse" [Զանազան ճանապարհորդական արկածներ], in: Der Christliche Orient, 2. Jg., Potsdam 1901, S. 136-14-.

"Reiseerlebnisse in Mesopotamien" [Ճանապարհորդական արկածներ Միջազգետքում], in: National Zeitung, Basel Nr. 287-297, 1920.

Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges [Արյան և արցունքի երկրում. Տապահություններ Միջազգետքից Համաշխարհային պատերազմի ժամանակ], Potsdam 1921.

"Letzter Bericht über das Spital in Urfa" [Մի վերջին գեկուցագիր Ուրֆայի հիվանդանոցի մասին], in: Der Orient, Potsdam 1925, S. 60-64.

"Letzte Erlebnisse in der Türkei" [Վերջին տպապություններ Թուրքիայից], in: Der Christliche Orient, 2. Jg., Potsdam 1901, S. 136-14.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանս-Լուկաս Քիզեր. ՑԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐ. «ԱՐՑԱՆ ԵՎ ԱՐՑՈՒՆՔԻ ԵՐԿՐՈՒՄ» ԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՄԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ.	5
Քյունցլերի ուղին դեպի ճգնաժամից ցնցված թուրքիան	6
Հայերի ցեղասպանության ժամանակակից վկան	12
Նոր մոտեցումներ և Հուսախարություններ	19
Սույն հրատարակության ու նրա լրացումների մասին	21
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	23
 ՑԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԼԵՐ. ԱՐՑԱՆ ԵՎ ԱՐՑՈՒՆՔԻ ԵՐԿՐՈՒՄ.	
Տպագրություններ Միջազգետքից՝ աշխարհամարտի տարիներին (1914-1918)	25
 1. Պատերազմի սկիզբը	27
2. Դիվանագիտության հետքերով	32
3. Բռնագրավումներ	35
4. Մռայլ հեռանկարներ	36
5. Օրհասական ժամեր	40
6. Աշխատանքային գումարտակների մաքրագործումը	44
7. Օգոստոսի 19-ը	49
8. Տարագիրներ հյուսիսից	53
9. Անդորր փոթորկից առաջ	62
10. Մահվան սարսուռ	64
11. Գերմանական արդյունաբերական տարածքի գրավումը	66
12. Ամերիկան միախոներական կայանը	68
13. Դիմադրության ջախջախումը	70
14. Անձնատուրություն	72
15. Հակոբ	74
16. Թուրքական խոստումներ	75
17. Պարոն Լեսլիի մահը	76
18. Ռազմադատական հետաքննություններ	82
19. Տարհանում	84
20. Գլխացավանքներ	87
21. Սփոփանք	88
22. Թուրքական որրանոց	89

23. Դավաճաններ	90
24. Զանազան ապաստարաններ	91
25. Լուծարման Հանձնաժողով	94
26. Բրիտանական Հոգեգարություն	96
27. Բժիշկ առանց վկայագրի	97
28. Գերմանական միախոներական Հիվանդանոցի փակումը	98
29. Տեղահանումներից վերջինը	101
30. Կարապետ Գարագալջյանի ճակատազրի խաղերը	103
31. Քրդերի տեղահանումները	104
32. Ռազա	107
33. Զանազան փրկարար աշխատանքներ	112
34. Քննություն	114
35. Կառապան Էլիսար	117
36. Մարտիրոս	118
37. Գերմանա-թուրքակա՞ն, թե՞՞ թուրք-գերմանական	120
38. Գերմանացիները Ուրֆայում	121
39. Դրամանիչը	125
40. Սննդամթերքի գները	127
41. Լուսարաց	128
42. Ավերված թաղամասը	133
43. Զանգի Հնչյուններ և այլն	136
44. Դավաճանի մահը	138
45. Ալի Ահան փաշա	140
46. Բրիտանացիների ժամանումը	141
47. Հայածանքի մի վերջին ապարդյուն փորձ	147
48. Օգնության արշավախմբի ժամանումը	148
49. Օդարավ Ուրֆայի վրա	149
50. Հաշվապահական Հոգսեր	150
51. Շրջահայաց մահմեղականներ	152
52. Հրաժեշտ	153
53. Վերջարան	160
ՎԵՐՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՑԻՑԻՑ՝ [«Օրինաթ» , 1925\7, գլ. 54-58, 1925\8, գլ. 59-64]	165
[54.] Մեկ անգամ ևս Ուրֆայում	165
[55.] Լրտեսները	166
[56.] Հուզումներ Հայերի շրջանում	168
[57.] Արտագաղթը	170
[58.] Բրն-ի-Դավո	171
[59.] Խոստովանություն	173
[60.] Պտտահողմ	174

[61.] Սայերի ամրոցը	176
[62.] Հովն որբերը Մալաթիայից	177
[63.] Թշնամուց բարեկամ	178
[64.] Արքայի կայանի փակումը	180
ԹՌԻՐՔԻԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ. ՆՈՐ ՓՈՒԼ	
[«Օրիենտ», 1928/5]	183
Կարմիր մահիկի օգտին	
[«Քրիստոնյա Արևելքը», 1920]	189
Բազել. Շյոնբայնչթրասե 36, 26 ապրիլի, 1920 թ.	192
ՅԱԿՈԲ ՔՅՈՒՆՑԵՐԻ. Մատենագրության ընտրանի	195

Ժամանակակից առաջնային պատմություններ
 մասնաւուն. Թ. Լ. Կապուտիկ առաջ
 նայողն. Ա. Ջ. Պատուհանի ամեն
 մասնաւուն. Ա. Ջ. Պատուհանի
 պատմական առաջ առաջնային պատմություններ
 մասնաւուն առաջ պատմական պատմություններ
 մասնաւուն առաջ

Ա. 1920, 11 10 համբարձում չ համբարձում
 պատմ. Ա. Դ. առաջ պատմ. պատմ. Ա. Դ. առաջ պատմ.
 պատմ. պատմ. Ա. Դ. առաջ պատմ. պատմ. Ա. Դ. առաջ
 պատմ. պատմ. Ա. Դ. առաջ պատմ.

1 ժամանակակից առաջնային պատմություններ 198

2 ժամանակակից առաջնային պատմություններ 199

ՑԱԿՈՐ ՔՅՈՒՆՑԼԵՐ

ԱՐՑԱՆ ԵՎ ԱՐՑՈՒԽՆՔԻ ԵՐԿՐՈՒՄ

**ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԳԵՏՔԻՑ ·
ԱՇԽԱԲՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1918)**

**Վերահրատարակեց՝
ՀԱՆՍ-ԼՈՒԿԱՍ ՔԻԶԵՐ**

**Կազմի ձևավորումը՝ Դ. Սաքայանի
Հրատ. խմբագիր՝ Լ. Գ. Մանուկյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Զ. Բղոյան
Սրբագրիչ՝ Վ. Վ. Դերձյան
Համակարգչային շարվածքը՝ Մարօ Մանավեանի
Համակարգչային ձևավորումը՝ Մարօ Մանավեանի,
Աննա Աղուզոմցյանի**

**Ստորագրված է տպագրության՝ 01.11.2011թ.
Չափսը՝ 60x90 1/16; Թուղթը՝ օֆսեթ; Հրատ. 11.5 մամուլ,
տպագր. 12.5 մամուլ + 10 էջ ներդիր = 11.6 պայմ. մամուլի:
Տպագրանակ՝ 300; Պատվեր՝ 64:**

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արտվան 52

